Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Լաւ
604

2009

ԸՆՏԻՐ

ՄԱՏԵՆԱԳԻՐՔ

ԵՂԻԶԷ

ԵՂԻՇԷԻ ՍՐԲՈՅ

Յաւել

Հանրագիտելի Հայրաբանութեան

ՄՈՍԿՎԱ
1863.

Լաս
604
18 AUG 2006
Ա յ.

ԵՎԴՈՔԻ ՎԱՐԴԱՊԵՏԻ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

ՎԱՐԴԱՆԻ

ԵՒ

ՀԱՅՈՑ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՀԱՄԱՐ

№ 5050 ա.
№ 5/05 տ.

Հեղինակեալ Յովհաննէս Բ. Քաջունեանցի
ձախտով։

ՄՈՍԿՎԱ
Լազարեանց Ճեմարանի տպարանումը
1868

БИБЛІОТЕКА
СПЕЦІАЛЬНЫХЪ КЛАССОВЪ
КАЗАРЕВСКАГО ИНСТИТУТА
ВОСТОЧНЫХЪ ЯЗЫКОВЪ

Одобрено Цензурою, 8 Октября, 1862 года. С.-Петербургъ

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՔԱԹԱՆԵԱՆՑԻՆ

ԵՒ

ՅՈՎՍԷՓ ԻԶՄԻՐԵԱՆՑԻՆ

ԽՈՆԱՐՀԱԲԱՐ ՆՈՒԻՐՈՒՄԷ

ԹԱՐԳՄԱՆԻՉԸ։

Гос. Публ. Библиотека
Ленинград
им. А. Жданова
в Ушаковском доме

(1247
32)

604-2009

№ 602

ԹԱՐԳՄԱՆՉԻ

ՑԱՌԱՋԱԲԱՆ։

Ազգերի պատմական կեանքի մէջը պատահումն այնպիսի միջոցներ, երբ մի ազգի մտաւորական, բարոյական և ֆիզիքական զօրութիւնները միասին զուգաւորված՝ հանդէս են գուրս գալի և իւրեանց մէջը պատկերացրած ցոյց են տալի այդ ազգի կեանքը իւր բազմակողմանի յատկութիւններովը։

Այդպիսի կենդանական միջոցներիցը մինը, մեր ազգի պատմական կեանքի մէջը, ներկայանում է մեր առաջև հինգերրորդ դարը, որտեղ հանդէս է գուրս եկել Եղիշէի նկարագրած Վարդանանց պատերազմը, որ մենք նիւթ ենք վերցրել մեր թարգմանութեան համար։

Հայոց այդ դարին և այդ անցքին աւելի մօտ ծանօթանալու համար, պէտք է փոքր ինչ յետ գնալ ժամանակի մէջը և որոնել այն հանգամանքները, որոնք ունեցելեն ներգործութիւն հինգերրորդ դարի Հայոց կեանքի վերայ, որոնել այն սերմերը, որտեղից գուրս են ծլել Հայոց կեանքի այդ

կենդանական նիւթերը, որ յառաջացրելեն Վարդանանց պատերազմը։ Որովհետև այդ ներգործող հանգամանքների գլխաւորը եղել է քրիստոնէութիւնը, այս պատճառով կամինք փոքր ինչ ծանօթութիւն տալ այդ մասին։

Քրիստոնէութիւնը, այդ բարձր բարոյական օրէնքը մարդկային խորդակված իրաւունքը և արժանաւորութիւնը վերականգնելու համար՝ առատ զոհեր էր բերում ազգերի փրկութեան սեղանի վերայ։ Արևմտեան աշխարհներում նա բաւականի տեղեր շառաւիղներ էր արձակել, արդէն հին մարդկութեան պատերազմը սկսվել էր նոր մարդկութեան հետ։ Ֆիզիքական զօրութիւնները դիպչելով քրիստոնէութեան բարոյական զօրութեան հիմնաքարին, օրէցօր փշրվում և խորդակվումէին։ Արևմտեան ազգերի դոյն միջոցի եռացող կեանքը աւելի ընդունակ գտանվեց ազատամիտ կրօնի օրէնքները ընդունելու, որովհետև նորա մտաւորական աճեցմունքը աւելի առոյգ և զվարթ էին, քան մարմին դարձած արևելքի, որտեղ վաղուց էրթառամել այդ կենդանական զվարթութիւնը։

Ասիայի մեծամարմին հողի վերայ քրիստոնէութիւնը իւր համար յաղթութեան ասպարէզ գտաւ Հայաստանը, որ իւր՝ աշխարհագրական դրութեամբը, իբրև արևմուտքի և արևելքի միջնակապ, կարծես թէ, պէտք էր քրիստոնէութեան լուսաւորութեան պտուղները մատակարարէր Ասիային։ Եւ արդարև նա իւր առաջին քայլափոխումը քրիստոնէական ասպարիզի մէջ՝ փայլեց մի այդպիսի մեծ յոյս, բայց նորա աշխարհագրական դրութիւնը, քաղա-

քական փոթորիկները, որոնք զօրացան դոյն միջոցին և այլ շատ պատճառներ թոյլ չտվեցին այդ յոյսերի իրագործվելուն։

Քրիստոնէութիւնը Ս. Գրիգորի ձեռքովը մտնելով Հայաստան, գտաւ նորան այն դրութեան մէջը, երբ Արշակունեաց կռապաշտական ֆանատիկոսութիւնը օրէ ցօր աճելով՝ աւելի զօրանում էր երբ Բագրատունի իշխանները իւրեանց ճշմարիտ աստուածպաշտութեան համար անխնայ զոհվումէին, երբ Տրդատ Արշակունին Դիոկղեդիանոս քրիստոնէութիւնը հալածող կայսրիցը ստանալով իւր հօր թագը՝ վերադարձելէր Հայաստան և հրատարակել իւր երկու հրովարտակները դէպի բոլոր նախարարութիւնները կռապաշտութիւնը պինդ պաշտպանելու համար։ Երբ Արևմտեան բռնակալները իւրեանց զոհերը ուղարկում էին արևելք և Հայաստանը իւր կոշտացած դաշտերը ջրումէր նոցա արիւնովը։

Քրիստոնէութիւնը իւր սարսափելի զոհաբերութեամբը փառաւոր յաղթութիւն գործելով Արշակունեաց հպարտութեան դէմ՝ նստեց Հայաստանի թագաւորական գահի վերայ։ Բայց այդ տակաւին այն բարձրութիւնը չէր որ տալիսէր քրիստոնէական ուսումը։ Ժողովրդի հոգին և մարմինը դարերով կրթված կռապաշտութեան խստութեան մէջ՝ կարօտումէր քրիստոնէական մշակութեան։ Սեծ Գրիգորիոսը, ինչքան կարողէր առնել մի նորապէս մեծ տղամարդի ոյժ, կատարեց այդ առաքելութիւնը։ Նա Կեսարիայումը ստանալով կաթուղիկոսութեան աստիճանը Ղևոնդիոսի

ձեռքեցը՝ իւր հետ շատ ուսեալ քրիստոնեայ մարդիկ բերեց Հայաստան և Տրդատ թագաւորի դրամական և այլ կերպի օգնութիւններովը քրիստոնէական ուսումնարաններ կարգեց և կրթել տվեց Հայոց մանուկներից առաւելապէս քուրմերի որդկերանցից քրիստոնէութեան ուսումի վարդապետներ։ Ինքը Ս. Գրիգորը, իբրև մի կենդանի ուսումնարան՝ քրիստոնէութեան ուսումը սովորցնումէր ժողովրդին։

Այց տակաւին Ս. Գրիգորի և Տրդատի կենդանութեան ժամանակը կռապաշտութեան և քրիստոնէութեան սկզբունքները Հայաստանի զանազան անկիւններումը և նոյնիսկ քրիստոնեայ դարձած նախարարներից շատերի սրտերումը պատերազմումէին։ Հայաստանի կռապաշտութեան քուրմերի զաւակները, որոնք մինչեւ օր առաջ քարոզումէին կռապաշտութեան օրէնքներ, յետոյ դառնալով քրիստոնէական ուսումի վարդապետներ, շատ բնականէ, որ երբեմն խորթութեամբ էին նայում այդ պաշտօնի վերայ, որովհետև քրիստոնէութիւնը խլումէր նոցանից շատ կրքերի գործադրութիւններ և դորանով բորբոքումէր հոգևոր պատերազմը։ Տրդատը տակաւին իւր կենդանութեան ժամանակը տեսնելով այդ բաները անապատներն էր քաշվում, մինչև որ վերջապէս զոհ դարձաւ դոցա՝. գուցէ Գրիգոր լուսաւորչին ևս այդպիսի հանգամանքներ էին ստիպում անապատները քաշվելու, որ իւր նոցա մէջը երբեմնական երևալովը՝ աւելի ներգործի նոցա վերայ։

Գրիգորիցը յետոյ նորա փառաւոր որդիքը և

թոռները մինը միւսի քամակից զոհ դարձան այդ քրիստոնէական պատերազմումը։ Նորա որդի Արիստակէսը, որ իւր հօր կենդանութեան ժամանակը կաթուղիկոս էր կարգված՝ սպանվեց Ծուիաց գաւառումը Արքեղայոսի ձեռքովը. որովհետև Ս. Արիստակէսը յանդիմանումէր Նորա անիրաւութիւնները ասելով՝ որ քրիստոնէութեան օրէնքը արգելումէ այնպիսի անիրաւութիւններ, որ կռապաշտութիւնը թոյլէր տալի։

Արիստակէսից յետոյ քրիստոնէութեան սեղանի վերայ զոհ դարձաւ Նորա եղբօր որդի Գրիգորիսը որին Տրդատը իւր կենդանութեան ժամանակն ուղարկել էր Փայտակարան, որովհետև ասումէին գուցէ Գրիգոր լուսաւորչի թոռնիցը ամաչեն. բայերը Տրդատը զոհ եղաւ նախարարների կրքերին, նոյն մեջոցին շարժվեցին կռապաշտական կրքերը և այն տեղի նախարարների մէջ։ Ս Գրիգորիսին ձիերի ոտների տակը ձգելով ջարդեցին։

Մինև նոյն դարանագործութեան հարվածներից հազիւ կարողացաւ ազատվել Գրիգորիսի հայր Վրթանէսը, որին Տարօնումը կամենումէին սպանել։ Տրդատին յաջորդեց Խոսրով, որ շատ թոյլ մարդէր, յետոյ Տիրանը, որ նոյնէս թոյլ հոգւով և հաւատով. նա սպանել տվեց Վրդանիսի որդի Ցուսիկին, որ չէր թոյլ տալի Նորան Ցունաց Ցուլիանոս ուրացող կայսրի պատկերը քրիստոնէական եկեղեցումը կախել և երկրպագութիւն տալը նոյնպէս զոհեց Դանիէլ ծերունի քահանային, որ Գրիգոր լուսաւորչի աշակերտն էր և Տիրանին

յանդիմանումէր նորա այսպիսի չարագործութեան համար։

Ա. Յսպէս Գրիգոր Լուսաւորչի որդիքը փառաւոր զոհեր դառնալով Հայաստանի քրիստոնէութեան համար, հասցրին նորան մինչև Վրթանիսի թոռը Ներսէս մեծի կաթուղիկոսութեան աթոռի վերայ նստելը։ Ներսիսի օրովը քրիստոնէութիւնը իւր մէջ-քը բաւականի պնդացրեց Հայաստանում։ Ներսէսը սնված լինելով Բիւզանդիոնում և յետոյ Կեսարիայում, երբ նստեց կաթուղիկոսութեան աթոռի վերայ՝ տեսաւ որ քրիստոնէութեան դաստիարակութիւնը պակասէ գտանվում ժողովրդի մէջը. շատ հարկաւորութիւն է կան լրացնելու։ Նա այդ բանի վերայ հոգս քաշեց և շատ դժվարութիւնների յաղթելով կռվեց կռապաշտական մնացորդների հետ և քրիստոնէութիւնը գործքով սկսեց արդիւնաւոր կացուցանելու ժողովրդի համար։ Խսկոյն ընդհանուր ժողով քաղմելով աշխարհականներից և հոգևորականներից՝ ողորմածութիւն հաստատեց կռապաշտական խիստ սովորութեանց ընդդէմ։ Որովհետև, ինչպէս խորենացին պատմում է, բորոտներին, ինչպէս օրէնքներից պիղծ մարդկերանց, հալածումէին, որոնք անապատ տեղերումնէին իւրեանց համար բնակութիւն հաստատում, ոչնք չէր մխիթարում նոցա թշվառ վիճակը, անդամալոյծներին չէին խնամում և անծանօթ հիւրերին և օտարականներին չէին ընդունում։

Ա. Այս բոլոր բաները, որոնք այժմ քրիստոնեայ Հայոց մէջը շատ քրիստոնէութեան ընդդէմ բաներ են համարվում ցոյց են տալի, որ կռապաշտական

սովորութիւնները այն ժամանակը տակաւին չէին կորցրել իւրեանց քրիստոնէական հոգւոյն ընդդէմ նշանակութիւնները և քրիստոնէական մարդասէր օրէնքները տակաւին խորը չէին գրոշմվել սրտերի վերայ։ Ներսէս մեծը այս կռապաշտական սովորութիւնների դէմ պատերազմելով՝ կարողացաւ նոցանից շատերը ջնջել և նոցա հակառակ Հայոց կոշտ կեանքի մէջը ներս մտցնել քրիստոնէական մարդասէր ուսման գործադրութիւնը։ Նա հրամայեց իւրաքանչիւր գաւառում շինել աղքատանոցներ, որոնց վերայ վերակացու կարգեց իւր խաղ սարկաւագին։ Հրամայեց նոյնպէս իւրաքանչիւր գիւղում օտարականների, որբերի, չքաւորների և ծերերի համար կերակրելու տեղեր պատրաստել։ Անապատներումը շինել տվեց եղբայրանոցներ և մենաստաններ։ Այսպէս մեծ Ներսիսի օրովը Հայաստանի բարբարոսական կեանքը ստանում էաւելի քրիստոնէական մարդասիրութիւն և բարքերի համեստութիւն։ Ներսիսի կեանքը ըստ մեծի մասին անցկենալով Արշակ երկրորդի ցանցաւ թագաւորութեան ժամանակը, քրիստոնէական խաղաղութիւն ձգելով նախարարների և թագաւորի մէջը՝ ինչքան հնարաւոր էր խաղաղացնում էր աշխարհը, մինչև անգամ իրրև խաղաղութեան դեսպան գնալով Յունաց Վաղէս կայսրի մօտ՝ աքսորվեցաւ և ութ ամիս նաւաբեկութեամբ միաբնակ կղզու մէջ ապրեց։ Թէոդոս կայսրի օրովը աքսորանքիցը վերադառնալով և Արշակի որդի Պապին թագաւորեցրած՝ Ներսէսը ոտը դրեց Հայաստանի վերայ. ինչքան կորողէր բարեկարգեց

նորա վիճակը, որ իւր բացակայութեան միջոցին բաւականի աւերվելէր։ Վերջապէս նա ևս Պապ թագաւորի զաղրագործ կրքերին զոհ եղաւ թունալից բաժակը նորա փառաւոր կեանքին ևս վախճան դրեց։ Որովհետև նա թագաւորին և նախարարներին ցոյցէր տալի, որ պէտքէ հաւատոյ համեմատ ունենալ գործք, չզրկել և չանիրաւել, այլ սիրել։

Ներսէս մեծի թունաւորվելիցը փոքր ինչ յետոյ բացվումէ այն լայն մտաւորական ասպարէզը, որտեղ իբրև պարագլուխ Հայկական լուսաւորութեան հանդէս են դուրս գալի նորա որդի և ձեռնատուն աշակերտ Սահակ մեծը և իւր լծակից Մեսրոպ Մաշտոցը նոյնպէս Ներսէս Մեծի աշակերտը։ Այս երկու տղամարդկերանց բարոյական բարձրութիւնը և հայրենասիրական ոյժը դնումէ Հայաստանի մէջը այն կենդանական սերմերը, որոնք ծլելով և վերաճելով մտաւորական և բարոյական կենդանութիւն են տալի Հայկական սերունդին։ Երբ Հայաստանի քաղաքական միութիւնը երկու մասը բաժանված ճնշվումէր Պարսից բռնութեան և Յունաց օգտածարաւ և անմարդասէր լծի տակը, երբ այդ երկու տիրապետող ազգերի միմեանց հակառակ քաղաքական մտքերը արձագանք գտանելով Հայոց նախարարների մէջ, սկսումեն աւելի թշվառացնել Հայաստանի քաղաքական դրութիւնը. Երբ Պարսկական բռնաւորի ձեռքը կամենումէր քանդել և աւերել այն բարոյական զօրութիւնը և ոյժը, որ Ներսէս մեծը և նորա նախորդները դրել էին Հայաստանի մատաղ քրիստոնէից սրտերումը. ազգի այդ մտաւորական

և քաղաքական տարտամ միջոցումը փայլումէ Սահակ Պարթևի մեծ հոգին և երկաթէ կամքը, որ իւր հրաշագործ մեծութեամբը ցոյց է տալի կամքի յաղթող զօրութիւնը և նորա բարոյական և աղգասիրական մեծութիւնը։

Սահակ վերջին Պարթև կաթուղիկոսը, գրիգոր լուսաւորչի վեցերրորդ սերունդը, 390 թուականին նստելով Կաթուղիկոսական աթոռի վերայ՝ իսկոյն քննելով իւր ժողովրդի դրութիւնը, տեսանելով և լաւ նկատելով նորա բարոյական ցաւերը, հմուտ բժշկի պէս վերահասու եղաւ և իմացաւ, որ աղգի տարտամ դրութիւնը ամրացնող և զվարթացնող միայնակ հնարքէ ուսումն և քրիստոնէական դաստիարակութիւնը. նա լաւ ճանաչեց, որ մի աղգի բարոյական և մտաւորական զօրութիւն տալու համար, պէտքէ ներգործել սրտի և հոգու վերայ. իմացաւ, որ միայն ֆիզիկական կոշտ զօրութիւնը առանց ներքին համոզական շարժմունքի շատ դիւրաբեկէ. ներքին համոզմունքն է, որ կենդանութիւն և ամրութիւն է տալի ֆիզիքական զօրութեանը։ Սահակը աղգին բարոյական զօրութիւն տալու համար ընտրեց եղական միջոց ուսումը։

Որովհետև Հայկական գրականութեան գլխաւոր յառաջ շարժող մեքենան Հայկական տառերի գիւտն էր. այս պատճառով կամինք փոքր ինչ ծանօթութիւն տալ մեր ընթերցողներին դորա մասին։

Մեսրոպ մաշտոցը Տարօնի գաւառիցը Հացեկայ գիւղեցնէր. որ քարտուղարութեան պաշ-

տօն վարելով Վռամշապուհ թագաւորի մօտ, բաւականի ժամանակից յետոյ այդ պաշտօնը թողեց և գնաց Գողթն գաւառը միայնակեցութիւն անելու։ Նորա ժամանակը հեթանոսութիւնը, որ Տրդատի ժամանակից մինչև այդ միջոցը այդ գաւառումը ծածկած մնացելէր, այդ միջոցին երբ Արշակունեաց տէրութիւնը սկսեց աւելի և աւելի թուլանալ և վատթարանալ, երբ քրիստոնէութիւնը շատերի մտածութեան առարկայ չէր դարձած, սկսեց դուրս երևալ։ Մեսրոպը իւր առաքելական աշխատութեամբը դոյն գաւառի Շաբեթ իշխանին իւրեան օգնական վերցրած՝ ջնջեց այդ հեթանոսական աղանդը։ Բայց նորա առաքելական պաշտօնը դորանով չէր վերջանում, նորա առաջև բացվումէր նոր դաշտ մշակութեան։ Սիւնեաց նահանգը, որ իւր աշխարհագրական դրութեամբը աւելի մօտիկ է պարսից սահմանագլխին. նոյնպէսիւր ծոցումը թաքէր կացրել կռապաշտական աղանդի մնացորդքը։ Մեսրոպը Սիւնեաց Վաղինակ իշխանի օգնութեամբը դուրս հալածեց և ջնջեց հեթանոսութիւնը և նորա տեղը կանգնեց փրկական խաչը։

Ինչպէս հարկաւորութիւնը ծնումէ յայտնագործութիւն, նոյնպէս այն հարկաւորութեան ծանր բեռը, որ դրածէր Մեսրոպի ուսերի վերայ՝ նորան տուեց միտք հնարել Հայկական լեզուի տառերը. որովհետև նա իւր քարոզութիւնների ժամանակը հարկադրածէր կարդալ Ասորերէն կամ Յունարէն և միևնոյն ժամանակը ժողովրդին բացատրէր Հայ լեզուով, բայց որ աւելի դժուարէր,

երբ ինքը ժողովրդի մօտ չէր գտանվում սուրբ գրքերը բոլորովին անհասկանալի էին մնում նոցա։ Մեսրոպը իւր բոլոր ուշադրութիւնը դարձրեց այս մեծարդիւն բանի վերայ, որ պէտք է դառնար հայկական լուսաւորութեան հիմնաքարը։ Երբ Սահակ մեծը նստեց Հայրապետական աթոռի վերայ, Մեսրոպը հայկական տառերի գիւտի համար գնաց նորա մօտ և տեսաւ որ այդ միևնոյն գործի գիւտը աւելի է գրաւել նորա միտքը։ Այնուհետև Հայոց տառերի գիւտը դարձաւ այդ երկու հոյակապ մարդկերանց մտածութեան նիւթը։

Այդ միջոցումը Պարսից Վռամ թագաւորը պատերազմ բանալով Յունաց Արկադիոսի դէմ, հրամայեց նոյնպէս մեր Վռամշապուհ թագաւորին գնալ միջագետքը խաղաղացնելու և կարգի բերելու։ Երբ նա գնաց, շատ նեղութիւն էր կրում քարտուղարի մասին այն օրից, երբ Մեսրոպը նորանից հեռացել էր, որովհետև արքունական գործքերը լինելով Պարսկական լեզուով՝ նորա դպրապետներից չկային այնպէս հմուտ մարդիկ ինչպէս Մեսրոպը, այս պատճառով մի Հաբէլ անունով ասորի քահանայ թագաւորին ասեց, որ նա կարող է ձեռք բերել նորա համար հայկական տառերը, որ հնարել է իւր բարեկամ Դանիէլ եպիսկոպոսը. թագաւորը անուշադիր եղաւ այս բանին, բայց երբ վերադարձաւ Հայաստան, տեսաւ որ Սահակ և Մեսրոպ բոլոր եպիսկոպոսներին հաւաքած մտածումն տառերի գիւտի վերայ։

Երբ թագաւորը այս բանը լսեց նոցա յայտնեց Հաբելի առաջարկութիւնը, որոնք շատ ուրախա-

ցան և թագաւորին խնդրեցին շուտով հոգս քաշել այս բանի վերայ։ Ուստիմնասէր Վռամշապուհը իսկոյն Վահրիճ Խաղունի պատուական տղամարդին, որ նոյնպէս շատ ցանկանումէր տառեր հնարելուն, ուղարկեց Միջագետք Հաբէլի մօտ. որ նորա հետ միասին գնաց Դանիէլիցը լաւ տեղեկանալով և սովորելով՝ կարգեցին Յունական տառերի ձևով և բերին Սահակ մեծի և Մեսրոպի մօտ։ Նոքա իսկոյն գործ դրեցին այդ տառերը և միքանի տարի Հայոց տղաներին սովորցնելով տեսան, որ շատ թերութիւններ կան տակաւին լրացնելու։ Հայրենասէր Մեսրոպը տեսանելով այս թերութիւնքը, ինքը անձամբ իւր աշակերտների հետ միասին ճանապարհորդեց դէպի Միջագետք՝ յուսալով նոյն Դանիէլի օգնութեամբը այդ պակասութիւնները լրացնելու, բայց նորա մօտ աւելի ոչինչ չգտնելով, անցկացաւ գնաց Եդեսիա քաղաքը մի Պղատոս անունով ճարտասան հեթանոսի մօտ, որ Եդեսիայի դիւանի գլխաւորն էր, բայց երբ Պղատոսը ևս երկար մտածելից և աշխատելիցը յետոյ՝ չկարողացաւ ոչինչ բան յառաջացնել՝ Մեսրոպին ասեց, որ նա ունեցելէ մի վարժապետ Եպիփան անունով, որ Եդեսիայի դիւանիցը շատ ուսումնական գրեանք վերցնելով՝ գնացելէր և քրիստոնէութիւնը ընդունել. խորհուրդ տվեց Մեսրոպին նորան գտնելու, ասելով որ նա կարողէ նորա ցանկութիւնը կատարել։

Մեսրոպը Բաբելոս Եպիսկոպոսի օգնութեամբը Փունիկէիցը անցկենալով՝ դիմեց դէպի Սամոս կղզին, որովհետև Եպիփանը մեռնելով թո-

ղելէր մի աշակերտ Հռոփանոս անունով, որ շատ ճարտար էր Հելլենացւոց լեզուի մէջ. նա միացնացելէր Սամոս կղզին։ Մեսրոպը դիմելով նորա մօտ, երբ նորանից ևս օգնութիւն չկարողացաւ գտնել, սկսեց իւր անձը նուիրել աղօթքների և Հոգւոյն սրբոյ շնորհքովը ստացաւ Հայկականեօթը ձայնաւոր տառերը, որ յետոյ նոյն Հռոփանոս Յոյնի օգնութեամբը ձևակերպեց Հայոց բոլոր տառերը։

Երբ տառերը պատրաստ էին, Մեսրոպը իսկոյն ձեռք զարկեց թարգմանելու սուրբ գրքի թղթերիցը, որոնց գործակից եղան իւր աշակերտ Յովհան եկեղեցականը և Յովսէփ Բաղնացին։ Նա Վռամշապուհ թագաւորի և Սահակ Մեծի յանձնարարութեամբը ժողովեց Հայոց ընդունակ մանուկներին, դպրոցներ կարգեց Հայոց Պարսից մանի գլխաւոր գաւառներումը, բացի Յունաց բաժնիցը, որտեղ Հայերը գործէին ածում միայն Յունարէն լեզուն։

Սորանից յետոյ ընդունակ Մեսրոպը հնարեց նոյնպէս Վրաց, Աղուանից և Գարգարացւոց համար տառեր։ Նոցա թագաւորների օգնութեամբը նոյն տեղերումը դպրոցներ հաստատեց և իւր աշակերտներիցը վերակացուներ կարգելով վերադարձաւ Հայաստան։ Սահակ մեծը ևս այս միջոցին անգործ չէր մնացել. նա պարապումէր աստուածաշնչի թարգմանութենովը Ասորոց լեզուիցը. որովհետև Պարսկաց բաժնումը Հայերին արգելածէր Յունարէն գրեանք և լեզու գործ ածել. բացի դորանից աղգադաւան Մերուժան Արծրունին, որ

Շապուհի բռնութեան մտրակն էր դարձել Հայոց համար, բոլոր Յունարէն գրերը այրել էր և ոչնչացրել։

Վռամշապուհի մեռնելը շատ դժվարացրեց Սահակի և Մեսրոպի լուսաւորութեան գործքերը. նորանից յետոյ կապած խոսրովի երկրորդ անգամ մի տարի թագաւորելից և մեռնելիցը յետոյ՝ Սասանեանց Յազկերտ առաջինը՝ կամենալով Հայերի համակրութիւնը և մտերմութիւնը դէպի քրիստոնեայ Յոյները բոլորովին կտրել. և Զրադաշտական օրէնքը վերականգնել իւր բաժնի Հայոց մէջը՝ Արշակունեաց ցեղից թագաւոր չդրեց, այլ թագաւորեցրեց իւր որդի Շապուհին, որ նախարարներին և ժողովրդին զեղխութեան, արբեցութեան և զբօսարաններին մէջ պահելով՝ թուլացնի նոցա քաղաքական կենդանութիւնը և փոքր առ փոքր ներս մտցնի Պարսկական սովորութիւնները և կրօնը։

Սահակ մեծը երբ տեսաւ այս բոլոր անկարգութիւնները, որ լինումեն Պարսից բաժնի մէջը և խափանումեն լուսաւորութեան գործը, գիմեց դէպի Յունաց բաժինը, յուսալով այնտեղ աւելի ազատաբար ներգործել. բայց Յոյների վերակացուքը ևս, որոնց կայսրը կարգումէր իւրեանց բաժնի մէջ՝ այնքան մարդասէր չէին դէպի Հայք, որքան ծարաւ իւրեանց օգտին։ Նոքա Սահակին շատ սառը ընդունեցին և թոյլ չտուին Հայկական տառերի գործադրութիւնը իւրեանց բաժնումը։

Սահակը ստիպվածէր Մեսրոպին իւր թոռը Վարդանի հետ ուղարկել Բիւզանդիոն Թէոդոս

կայսրից թղթատվութիւն խնդրելու այդ մասին։ Կայսրը, որ մի ամենաչնչին պատճառով, այնէ որ Մեսրոպը տաւերի գիւտի համար չէր դիմել դէպի Յունաստան, այլ Միջագետք, կամեցելէր արգելել այդ գործը, Մեսրոպի խօսքերից և պատճառներից համոզված նոցա պատվով ընդունեց և թղթատվութիւն արեց իւր բաժինը վարդապետելու։ Այսպէս Մեսրոպը և Վարդանը յաջողութեամբ վերադարձան Հայաստան Սահակի մօտ, որ սկսեց հայրական խնամակալութեամբ ուսուցանել արևմտեան մասը և հեթանոսական աղանդի մնացորդքը ջնջել այն տեղերից։

Երբ այդ միջոցին քաղաքական պահանջմունքները Սահակին տարել էին Պարսից բաժինը՝ Մեսրոպը այդ կողմերը անխոնջ մշակութեամբ վարդապետելով՝ գնաց Շատգոմք և այնտեղ իւր առաջնադաս աշակերտներին առաքելաբար ուսուցանելով և պատրաստելով թողեց այնտեղ վերակացու։ Սպեր գաւառումը Ղևոնդին և Ենովքին. Դերջանումը Գնելթ եպիսկոպոսին, Եկեղեաց գաւառումը Դանանին, ինքը դիմեց Պարսից բաժինը Գողթն գաւառը, որովհետև հեթանոսական աղանդը անիշխանութեան և իւր բացակայութեան միջոցին կրկին սկսելէր դուրս երևալ։ Մեսրոպը վերոյիշեալ Շաբիթ իշխանի Գիւթ որդւոյ օգնութեամբը բոլորովին սրբելով այդ աղանդը, իսկոյն իւր ընթացքը ուղղեց դէպի Բաղասական կողմերը, որտեղ հեթանոսութիւնը նոր զօրութեամբ դուրսէր երևացել։ Մեսրոպը, այդ քրիստոնէութեան արժանաւոր մշակը, այնտեղ շատ մոլորվածների

բերելով դէպի ճշմարտութեան ճանապարհը՝ այն-
տեղ վերակացու կարգեց Մուշէ անունով Եպիս-
կոպոսին և ինքը շտապեց դէպի Գարդմանացւոց
կողմը, որտեղ քրիստոնէական կրօնի յաղթող
դրօշը կանգնեցրեց հեթանոսականների սրտերի
վերայ նոցա Խուրա անունով իշխանի ձեռնտվու-
թեամբը։ Երբ Մեսրոպը այդտեղ տակաւին մշա-
կումէր քրիստոնէութեան օրհնութիւնաբեր ան-
դաստանը՝ հրաւէր ստացաւ Գուգարաց Աշուշայ
իշխանից, որ գնայ իւր Տաշրաց գաւառը նոյն ա-
ռաքելական գործի համար, որտեղ Մեսրոպը ոտ
դնելով՝ ճնշեց հեթանոսութեան հետքը։

Երբ Սահակը և Մեսրոպը աւետարանական
քարոզութիւնը բաւականի տարածեցին Հայաս-
տանի երկու բաժնումը ևս, այն ժամանակը իւրեանց
աւագ աշակերտներից երկուսին — Յովսէփին և
Եղնիկ կողբացուն ուղարկեցին Եդեսիա քաղաքը,
որ այնտեղ գտանված սուրբ Հայրերի գրվածքը հայ-
երէն թարգմանեն և բերեն իւրեանց մօտ, որ յե-
տոյ նոցա Բիւզանդիոն ուղարկեն։ Երբ նոքա գնա-
ցին Եդեսիա լսելով իւրեանց վարդապետները
կամենումեն այլ աշակերտներ ուղարկել Բիւզան-
դիոն, բարի նախանձով վառված՝ այնտեղից
գնացին Բիւզանդիոն, նոցա հետևեցին Յովհան և
Արձան, որոնց ուղարկելէին Սահակը և Մեսրոպը։
Այսպէս Հայաստանի մեղուները իւրեանց վարդա-
պետների հոգովը թևաւորված՝ դիմումէին դէպի
գիտութեան ծաղիկները։ Բիւզանդիոնի Մաքսիմի-
անոս Եպիսկոպոսը նոցա լաւ ընդունելութիւն ա-
րեց։ Այդ միջոցումը եղաւ Եփեսոսի ընդհանրական

ժողովը, որտեղ նզովեցին Նեստորի աղանդը. Հայոց այդ վերոյիշեալ երիտասարդ թարգմանիչները իւրեանց հետ բերելով այդ ժողովի կանոնները՝ տվեցին Սահակին և Մեսրոպին, որոնք այդ ժամանակը գտանվումէին Տարօնումը. նոքա տվեցին նոցա նոյնպէս այն թղթերը, որ Կիւրեղ Աղեքսանդրացին, Պրօկլ Կոստանդնուպօլսեցին և Ակակ Մելիտինի Եպիսկոպոսը գրելէին նոցա՝ զգուշացնելով ազատ մնալու Նեստորականների գրքերից, յայտնելով որ Նեստորի վարժապետ Թէոդորոս Մամուեստացւոյ և նորա աշակերտ Թէոդորի գրերը անցեն կացել Հայոց աշխարհը։ Սահակը և Մեսրոպը միանգամ թարգմանածը ստիպված էին երկրորդ անգամ թարգմանել իւրեանց աշակերտների հետ այն ստոյգ օրինակից, որ ուղարկելէր Մաքսիմիանոս եպիսկոպոսը։

Երբ Սուրբ գիրքը և եկեղեցու հայրերի թղթերից շատերը արդէն թարգմանած էին՝ Սահակը և Մեսրոպը վաթսունի չափ ընդունակ և ուսմանը բաւականի ծանօթացած երիտասարդներ ուղարկեցին զանազան քաղաքներ գիտութեանց այլևայլ բաժինները սովորելու և կատարելագործվելու։

Այ՝ աղուց արդէն Աթէնքումը ժողովուելէին Ասիայի զանազան կողմերից ուսանող երիտասարդներ Յուլիանոսի մօտ, որոնք էին Ասորեստանից, Հայաստանից և այլ տեղերից։ Եպիփանի մօտ ժողովուել էին Բաղեստինից, Դիոսքորոսի մօտ Արաբիայից. իսկ Պոնտացիք, Բիւթանացիք և Փոքր Ասիայի միւս կողմերից ժողովվումէին Պրոերե-

սիայի մօտ, որ ազգով Հայ լինելով համարվում-
մէր նոցա Հայրենակից, նորա Բիւստը դրածէր
Հռովմումը։ Նորան անվանում էին «Ճարտասա-
նութեան թագաւոր»։ Գրիգոր աստուածաբանը,
որ նոյնպէս նորա աշակերտնէր այս բանը Հաստա-
տումէր ասելով. «ով իմանումէր Ամէնքը, նա
լսումէր և խօսում մեր դաստիարակիչների վերայ»։

Հայոց ընդունակ երիտասարդները Ամէնքի ճե-
մարանումը սովորելով և այն ժամանակվայ փիլի-
սոփայական սովորութեանց պէս զանազան Հարց-
մունքներ առաջարկելով և ինքեանք առաջար-
կածը լուծելով՝ շատ անգամ Յունաց ուսանող-
ների նախանձը շարժումէին իրեանց վերայ և
ենթարկվումէին Հալածանքների։ Գրիգոր աստ-
վածաբանը, որ Բասեղ Կեսարացու Հետ միասին
ուսանումէր Ամէնքումը Հայոց երիտասարդների
Հետ, ահա ինչպէս է խօսում այս բանի մասին
Բասեղի, արձանական ճառումը։ «Հայերիցը
ոմանք, որոնք աւելի ծանօթ և բարեկամ էին
Բասեղին, տակաւին Հայրերի և պապերի ընկե-
րակցութեամբը, որոնք սովորումէին մի ուսում-
նարանում, գալիսեն նորա մօտ բարեկամաբար և
առաջարկումեն նորան աւելի Հակաճառական,
քանթէ խելացի Հարցմունքներ։ Նոքա վաղուց
իմանալով Բասեղի ձիրքը և նախանձվելով նորա
այն ժամանակվայ փառքին՝ ալէոպուսէին տուչ անգ-
դեցը նորան էրբանց գալը նվաճել.... Բայց ես լինելով
Ամէնքին սիրող և անհեռատես, երբ նոքա սկ-
սեցին թուլանալ և փախչել, նախանձեցի Ամէն-
քի փառքին և որպես զի այդ գործը նոցա բացակայու-

ՌԵՄՔԸ վայր ընկնի և լոպով անդրէվ, ես բանախօսութիւնը նորոգելով՝ պաշտպանեցի ջահել երիտասարդներին և իմ բանախօսութեան մէջը խառնվելովը նոցա կշիռ տալով՝ հաւասար ոյժ ձգեցի կռվի մէջը»։ Երբ յետոյ Գրիգոր աստվածաբանը միացաւ Բարսեղի հետ, Հայոց երիտասարդները նորան իբրև մատնիչ նախատելով ասումէին, որ Գրիգորը Մոդնէց ոչ դոյն նոցա, այլ և նոյն ինքն Ամէնքը»։

Գրիգոր աստվածաբանի այս խօսքերիցը երևումէ թէ ինչ նշանակութիւն ունէին Հայոց երիտասարդ ուսանողները Ամէնքումը։ Որովհետև նոցա բացակայութիւնը համարվումէր Ամէնքի փառքի վայր ընկնիլը և անարգվիլը և թէ նոցա մատնել նշանակումէր մատնել նոյն իսկ Ամէնքը։ Մանաւանդ որ նոքա կամենումէին առաջի անգամիցը իւրեանց ներգործութեան տակը նվաճել Բարսեղ մեծի պէս երևելի տղամարդին։ Զնայելով որ Գրիգոր աստվածաբանը իւր սիրելի Բարսեղի փառքը նորա արձանական ճառի մէջը կամենումէ աւելի մեծացնել Հայոց երիտասարդների բանախօսութեան մէջ, այնու ամենայնիւ կարելիէ եզրակացնել այս վերոյիշեալ խօսքերիցը, որ Սահակեան և Մեսրոպեան սաները մեծ նշանակութիւն ունէին Ամէնքումը։

Այս Հայոց փառաւոր երիտասարդները, որոնք կատարելապէս պահեցին իւրեանց վերակացու և Հայր — Սահակի և Մեսրոպի յոյսը, գիտութեանց զանազան ճիւղներումը կատարելագործվելով վերադարձան դէպի Հայաստան, բերելով իւրեանց

հետ ուսման օրհնութենաբեր պտուղները. նոցա մէջը աւելի յայտնիեն իւրեանց գրականական վաստակներովը Մովսէս Խորենացին, Եշիշէն, Ղազար Փարպեցին, Կորիւն աքանչելին, Դաւիթ անյաղթ Փիլիսոփան, Եզնիկ կողբացին, Բամբրէ վերծանող, Խոսրովիկ, Յովսէփ, Ղևոնդ և այլք։

Այս միջոցումը Հայաստանի քաղաքական դրութիւնը օրէ ցօր վատթարանումէր և նախարարների թշնամական յարաբերութիւնները դէպի վերջին Արշակունի Արտաշիր թագաւորը բաղմանում։ Արտաշիրը իւր երիտասարդական անառակ վարքովը շարժելէր իւր վերայ նախարարների ընդհանուր ատելութիւնը, որոնք ժողովուելով Սահակի մօտ, նորան հրաւիրումէին որ իւրեանց հետ միասին բողոքի նորանից Պարսից Վռամ թագաւորին, որ նորան գահից վայր ձգեն և փոխանակ Արշակունի թագաւորների Պարսիկ Մարզպան դնեն Հայաստանի վերայ։ Այս քաղաքական փոթորիկը և Հայոց նախարարների անհնազանդութիւնը նոր հալածանք է վերկացնում հաստատակամ Սահակի դէմ։ Սահակը որ աւելի հեռուէր նայում բանի վերայ քանթէ Հայոց նախարարները, չէ համաձայնում նոցա առաջարկութեանը ասելով «Ինչպէս կարելիէ փոխեմ իմ հիւանդ ոչ խարը առողջ գազանի հետ, որի առողջութիւնը մեզ համար պատուհաս է»։ Այս մեծախորհուրդ խօսքերից յետոյ՝ Սահակը իւր վերայ շարժելով Արտաշրի վերայ բարկացած նախարարների ատելութիւնը, Արտաշրի հետ միասին կանչումէ Վռամի մօտ և բանդ դրվում։ Վռամը քաջ ճանաչե-

լով Հայոց կաթուղիկոսի մեծ նշանակութիւնը քաղաքական գործքերի մէջ՝ կամենումէր և աշխատում նորան որ և իցէ հանրքով համոզել Արտաշիրը ամբաստանելու. իւր Հաղարապետի միջնորդութեամբը, որ նորան խօստանումէր, որ եթէ նա այս բանը յանձն առնի, թագաւորը նորան շատ պարգևներ կտայ և նորա թոռը Վարդանին թագաւորի հաւատար պատիւ և իշխանութիւն կպարգևի, բայց նա՝ որ իւր փառքը, պատիւը, հանգստութիւնը և կեանքը վաղուց էր վայր դրել Հայաստանի փրկութեան սեղանի առաջև՝ Հաղարապետին պատասխանեց «Ինչ՞ պէս փուչ փառքի և իշխանասիրութեան համար չարախօսութիւն անեմ իմ ընկերներիցը»։ Նորա կայքը և կաթուղիկոսական աթոռի սեփհականութիւնքը թագաւորական շինեցին։

Հայոց կաթուղիկոսական աթոռի վերայ նըստումն Վռամի ձեռքովը նախ՝ ազգակործան Սուրմակը, յետոյ Բրիշքոյ ասորին, որոնց անառակ, յափշտակիչ և աւերիչ կեանքն ու վարքը ստիպումն նախարարներին, որոնք փորձի զառը զաւազանովը խրատված, թէ քաղաքական և թէ հոգևորական կառավարութեան կողմանէ, խնդրումն Պարսից թագաւորիցը այլ կաթուղիկոս, իսկ մի մասը, որոնց գլխին կանգնած էին Ապահունեաց Մանէճ նախարարը, Արշարունեաց Սպանդարատ նախարարը և Ս. Մեսրոպը իւր հոգևորական դասովը, ուղարկեցին Վանանդացի Տիրուկ քահանային Սահակին խնդրելու։ Վռամը նոցա երկու կողմի խնդիրը ևս կատարելով արձակումէ Սահակին իւր հայրենական ժառանգութենիցը տալով նորան մի-

քանի գիւղ և նշանակումէ Շմուէլին նորան հակառակաթոռ, որ Սահակի իշխանութիւնը նորանով սահմանափակվի և մինչև անգամ նա չկարողանայ առանց Շմուէլի յօժարութեան քահանայք ձեռնադրելու։ Բայց Սահակը մեծ էր և իւր իշխանութեան և իրաւունքների ճնշված ժամանակը ևս. նա ձեռքի ձեռք տված իւր սիրելի Մեսրոպի հետ՝ սկսումէ ուսուցանել և հայրաբար խրատել ժողովրդին։ Նա Մեսրոպին թողելով Վաղարշապատ քաղաքումը՝ ինքը գնաց Բագրևանդ գաւառը։

Շմուէլ Սահակի հակառակաթոռ կաթուղիկոսը ևս գողի և աւազակի պէս յափշտակեց մեռած եպիսկոպոսների վիճակները և իւր շռայլ և անկարգ վարքովը վերջացրեց իւր կեանքը հինգ տարի այդ պաշտօնը պղծելուցը յետոյ։ Հայոց նախամարները վերջապէս միաբան խմանալով իւրեանց սխալանքը՝ աղաչեցին ծերունի Սահակին յանձն առնելու կաթուղիկոսական աթոռը. Սահակը մարգարէական նախազգացութեամբ լցված հրաժարվեց այդ առաջարկութիւնից և փոքր ժամանակից յետոյ կնքեց սուրբ մահվամբ իւր բազմաչարչար և օրհնութիւնաբեր կեանքը, լուսաւորութեան սերմերը խոր արմատ դնելով Հայաստանի պտղաբեր մանուկ սրտերի մէջը, որոնցից դուրս են աճում Հայկական հինգերորդ դարու գրականութեան ծաղիկները՝ իւր հզօր հոգւովը կառավարելով կաթուղիկոսութեան աթոռը 51 տարի, սկսած Հայոց խոսրով երրորդի թագաւորութեան երրորդ տարուցը մինչև Պարսից թագաւոր Յազկերտ երկրորդի երկրորդ տարին։ Նորա պատմական մար-

մինը նորա սարկաւագ Երեմիան և նորա հարս Վարդան Մամիկոնեանի կին Դստրիկը տարան Տարօնի գաւառը և իւրեանց Աշտիշատ գիւղումը հանգիստ տվին։ Վեց ամսիցը յետոյ իւր փառաւոր կեանքը սուրբ մահվամբ կնքեց նոյնպէս Մեսրոպը Վաղարշապատ քաղաքումը և թաղվեց Օշական գիւղումը։ Կաթուղիկոսութեան աթոռի տեղապահութիւնը յանձնելով իւր աշակերտ Յովսէփ քահանային, որ Վայոց Ձորից էր։

Մեսրոպի Հայոց տառերի հնարելը յառաջացրեց ազգային լեզուի այն հարուստ գրականութիւնը, որ նոյա աշակերտները — Հայոց հինգերորդ դարու գրականութեան վարդերը և ինքն Սահակը և Մեսրոպը տուին քրիստոնեայ Հայաստանին։ Տառերի գիւտը Հայերի համար — Ասիական բարբարոս և քրիստոնէութեան թշնամի ազգերի մէջ, որպես է մեր ազգը, համարվումէ նոյն իսկ ազգայնութեան պահպանիչ հնարք, առանց որի այդ քրիստոնէութեան անդաստանը կարողէր ըստ ոլորովին Սասանեանց ֆանատիկոս բռնակալութեան ճնշողութեան տակը կորցնել իւր լեզուն և միանալ նորա, կամ որ և իցէ միայլ ազգի հետ, որ Հայաստանի տարաբաղդութեներից նորա քրիստոնեութեան ընդունելից յետոյ մէկը մէկի ետևից կոխումեն այդ երկիրը։ Բայց միայն եզականապէս Հայոց տառերի գտնելը չէր նորա գրականութեան և մտաւորական բարեկենդանութեան պատճառը. այս բանը մեզ ապացուցանումէ ազգային կեանքի այն երկարժամանակեայ փորձը երբ կային տառերը, կար գրականութիւն, կային երգեցիկ և այնպիսի մի-

ջոցներ Հայոց քաղաքական կեանքի մէջ, որ աւելի յաջող և ձեռնտու էին նորա գրականութեան աճեցութեան մտաւորական յառաջադիմութեանը քան Սահակի և Մեսրոպի ժամանակը. բայց ինչպէս ասվում է հասարակութեան մէջը «Չկար այն աչը, որ բռնի այն խաչը». որ վերցրելէին իւրեանց ուսերի վերա Սահակը և Մեսրոպը։ Այն իսկ նոքա էին Հայոց ազգի բարեբարքը, նորա բաղդի աւետարեր հրեշտակները, որոնց նախախնամութիւնը պարգևելէր Հայաստանին, նորա մտաւորական և կենդանական ոյժը և զօրութիւնը բարձրացնելու և տալու այն քրիստոնէական մշակութիւնը, որէ օրէն քիրոյ, գիտութեան և եղբայրութեան, որ առանց այդ փոքրաւոր և երկրպագելի նահատակներին կարողէր ճնշվել։ Հայոց հինգերրորդ դարը իւր բոլոր բարութիւններով պարտականէ այդ ազգասիրութեան հերոսների մեծ հոգուն։

Երբ Արշակունեաց ցեղի Պարսկաստանումը գահից վայր ձգվելը և Սասանեանց թագաւորական գահի յափշտակելը օրէ ցօր աւելացնումէր ատելութիւն դէպի բոլոր Արշակունեաց ցեղը, Հայոց տէրութեան երկու մասը բաժանվելը Սասանեանց և Յունաց իշխանութեան տակը միմեանց հակառակ բաժիններ էր պատրաստում Հայաստանի հողի վերայ. երբ այդ երկու հարևան հզօր տէրութեանց դէպի միմեանց ատելութեանց կրքերը շարժվելով մէջ տեղը զոհվումէր Հայաստանը իրրև դոցա կռվի խնձոր. երբ Հայի մի բաժնին իւր հողի վերայ արգելածէր սովորել Յունարէն, իսկ միւս բաժնին սովորել Պարսկերէն. այդ միջոցին Մեսրոպ

բոպեան տառերի գիւտը և Սահակի ջանեցողու-
թիւնը միայն կարողացան աղատել Հայաստանի
որդկերանցը այդ ստիպողական և դժոխային դժվա-
րութիւններից, նոքա կարողացան այդ երկու հա-
կառակ կողմերի ատելութիւնը դէպի Հայոց մանուկ-
ների կրթութիւնը հաշտեցնելու և աղատելու այդ
զօրաւոր բռնաւորների ներգործութիւնից նոցա լե-
զուի և բարքի վերայ, որոնք պէտք է մի կողմից
քրիստոնէական, իսկ միւս կողմից Զրադաշտա-
կան կրօնների ներգործութեան տակը մուտք գոր-
ծէին Հայաստան և մնաս բարև ասէին նորա գրա-
կանական լեզուին, ազգային առանձին յատկու-
թեանցը և սովորութեանցը։

Սահակի և Մեսրոպի մեծ անձնազոհ աշխատու-
թիւնքը բոլորովին հաստատաբար ապացուցանու-
մն այն մեծ նշանակութիւնը հայկական — ազգայ-
ին տառերի, որ նոքա պէտք է տային Հայաստա-
նին և այն ազգակործան վնասները, որոնցից պէտ-
ք է ազատէին նորան։ Այդ հոյակապ ամոլները լաւ
հեռատես աչքով նկատել էին այդ ապագան և
այս պատճառով յանձնէին առել այն ամեն բազ-
մաչարչար դժվարութիւնքը, որ մեզ ներկայացնում է նոցա շատավաստակ կեանքը։

Նոքա քրիստոնէութիւնը ամրացնելով Հայ-
աստանի մէջ, շարժելով և քանդելով հեթանո-
սական մեացորդների արմատը, տալով ազգային
լեզուի տառերը, իրենց կենդանի օրինակներովը
շարժելով հայ երիտասարդների վառվռուն եռանդը
և հոգին, սնանելով նոցա իրենց մայրական
թևերի տակը՝ ուղարկեցին մեզ ուների պէս գիտու-

թեան ծաղկոցները, պատրաստելով ազգի համար մի կենդանի և պանծալի ապագայ։

Սորանից յետոյ Տօնելի Սահակ Պարթևացին և Մեսրոպ Մաշտոցը բոլորովին խաղաղ հոգւով կարողէին ննջել յաւիտենական հանգստութեան մէջ՝ ասելով «Ազգի հովիւն ենք, ինչոր պէտքէր մեզ առնել՝ արինք»։

Նոցա մեծ յոյսը ստանում է իւր փայլուն պսակը. նոցա ցանած սերմերը իսկոյն վերեն աճում և տալիսեն այն պտուղները, որոնք բոլորովին վարձադրումեն իւրեանց մեծ դաստիարակիչների վաստակը և դրոշմումեն նոցա փառաւոր ճակատները անմահութեան ոսկեայ տառերով։

Շնորհակալ Հայաստանը դրոշմելուէ և այսուհետև իւր անմահ արձանների վերայ այնպիսի փառաւոր անուններ, որպիսի են Գրիգորիոսի, Ներսէս մեծի, Սահակ Պարթևացու, Մեսրոպ Մաշտոցի, Ներսէս Շնորհալու և այլն. Այո՛ և առանց շանթահար կայծակներ արձակելու չէ թողելու իւր ազգակործան Վասակների Մեհրուժանների, սևահոգի և սևադէմք Վեստ և անվեստ Սարգիսների գլխին, որոնց ջանքը եղելէ այսպիսի հոյակապ մարդկերանց ազգասիրական շինվածքները աւերել և նոցա կեանքի ընթացքը դառնացնել կամ բոլորովին վերջացնել մատնողութեամբ և թիւնաւորելով, որոնք ազգը կործանելեն և նորա արիւնը ծծելեն նորա տիրող բռնաւորների ցածահոգի վերակացուների օգնութեամբը. Բայց ինչոր ստացան այդ ազգակործանները ազգի և նորա անմահ պատմու-

թեան առաջև, նոյնը աւելի մեծ չափով ստանալու են այսուհետև նոցա շար սերունդները։

Սահակեան և Մեսրոպեան տաները, որոնց նոքա ուղարկել էին Աղէքսանդրիա, Եդեսիա, Աթէնք և Կոստանդնուպոլիս՝ ունենք նոցա կենդանութեան ժամանակը և ունենք նոցա մեռնիլեցը յետոյ ոտեն դնում Հայաստանի հողի վերայ՝ բնուանաւորված գիտութեան գանձերով և իւրեանց դաստիարակիչների դրած հիմնաքարի վերայ պատրաստումեն Հայերի համար այն բարոյական մեծութիւնը և զօրութիւնը, որոնք պէտքէ փշրէին Սասանեանց ֆանատիկոսութեան դաւազանը և ազատէին Հայաստանը և Ասիայի քրիստոնէութիւնը Պարսկական կրակապաշտութենից, որոնք պատրաստումեն այն բարոյական բարձրութիւնը, որ գործքով ցոյց տալի իւր համեստ գերազանցութիւնը բռնութեան կրակոտ շանթերից։

Սահակի և Մեսրոպի աշակերտներից, որոնց թիւը հասնումէր բաւականի մեծ բազմութեան՝ յառաջ բերենք միքանիսը, որոնք էրրև թարգմանիչներ, հեղինակներ, վարժապետներ, եպիսկոպոսներ, քահանայք և այլն, երևելի եղան Հայկական գրականական լեզվի մշակութեան և այլ յարաբերութեանց մէջ՝ պատրաստելով մի եռեկող խմոր ժողովրդի ապագայ կենդանութեան համար։ Նոքա են։

Յովսէփ Վայոց Ձորեցը, որ Մեսրոպի հրամանովը Սահակի մահեցը յետոյ յաջորդեց կաթուղիկոսութեան աթոռը և Յաղկերտ երկրորդի օրովը ղոհ դարձաւ Վարդանանց պատերազմի ժամանակը

քրիստոնէութեան կրակապաշտութեան դէմ ա-
րած կռիւը։

Յովսէփ Բաղնացին, որ Ս. Մեսրոպի հետ գնաց
Սամոս եւ օգնական եղաւ նորան սուրբ գրքերի
թարգմանութեանց մէջը. Սա միւս աշակերտների
հետ ուղարկուեց Եդեսիա քաղաքը և յետոյ Կոնս-
տանդնուպոլիս։

Յոհան Եկեղեցացի, որ Բաղնացու ընկերն էր
և նոյնպէս օգնական Մեսրոպին նորա թարգմանու-
թեանց մէջը։

Ղևոնդ երեցը Վանանդեցի, որ իւրեան անձը
երևելի շինեց Յունաց, Հայոց և Պարսից մէջը և
նահատակուեց նոյնպէս Վարդանանց պատերազ-
մումը։

Ընանիա, որին Ս. Մեսրոպը Սիւնեաց եպիս-
կոպոս ձեռնադրել տուեց։

Թոմիկ՝ Բասենի եպիսկոպոսը, որ նահա-
տակուեց Ասորեստանումը Վարդանանց պատե-
րազմի ժամանակը։

Աբրահամ՝ որ Ս. Ղևոնդի հետ գնաց Պրոկլի
մօտ։

Տէր Խորձենացի. Սա նախ Հայաստանի և
յետոյ Վրաստանի գպրոցներումը վարժապետ
կարգուեց։ Սորա հետ էր նոյնպէս Մուշէ Տարօ-
նացին։

Գնուք, որ նախ Աղուանից մէջը ուսուցիչ
կարգուեց՝ յետոյ Հայաստանումը Յունաց բաժ-
նումը Ղևոնդի հետ միասին։ Սորա բոլոր գործ-
քերումը ընկերակցէր Դանիելը։ Յովնաթան՝ որ
Աղուանից թագաւորի մօտ երէց կարգուեց։

Երեմիա՝ սա էր Ս. Սահակի սարկաւագապետը և նորա ձեռի տակը մեծացած աշակերտը։

Ագան Արծրունի՝ որ Յովհան Եկեղեցու հետ ուղարկվեց Կոստանդնուպոլիս թարգմանութեան համար։

Ենձակ՝ սորան ուղարկեցին Բաղեստին թարգմանութիւններ անելու համար. սորա հետ ընկեր էր այս գործումը Խոսրովը։

Ղազրիկ նոյնպէս թարգմանիչ՝ որին ուղարկեցին Միջագետք թարգմանութեան համար։

Խաչիկ՝ Սահակի և Մեսրոպի մահից յետոյ՝ քարոզութիւններով էր պարապում Հայաստանի այլ և այլ տեղերումը։

Վիւտ Տայոց աշխարհից՝ որ յետոյ Հայոց կաթուղիկոս դարձաւ։

Յովհան Մանդակունի՝ որնոյնպէս կաթուղիկոս դարձաւ։

Եզնիկ Կողբացի՝ որ Սահակի և Մեսրոպի գլխաւոր աշակերտներից միններ էր, քաջ, հմուտ Յոյն և Ասորի լեզուներին և զօրաւոր իւր գրութեանց մէջը։ Սա բացի իւր միւս գրաւոր աշխատութիւնները, գրեց «Եղծ աղանդոց» անունով գիրքը, որտեղ նա հերքում է Պարսից և Մանիքեցւոց աղանդները և այլ։ Սա Բագրեւանդայ և Արշարունեաց եպիսկոպոս դարձաւ և Վարդանանց պատերազմի ժամանակը գտանվեց Արտաշատի ժողովումը, որ հաւաքվեց Յովսէփ կաթուղիկոսի առաջնորդութեամբը Յազկերտ երկրորդի նամակին պատասխանելու։

Կորիւն, որ անվանվում է աբանչելի. Սա բացի

թարգմանութիւններից, գրեց Մեսրոպի կենսագրութիւնը և եպիսկոպոս ձեռնադրվեց Վրաց աշխարհի կողմերումը գտանված Հայերի վերայ։

Եղիշէ Վարդապետ՝ որ Վարդան Մամիկոնեանի դպիրն էր և ազգականը. Սա գրեց խրատական կանոններ։ Արեց ծննդոց, Յեսուայ, Դատաւորաց և Հայրմերի մեկնութիւնները։ Գրեց Քրիստոսի չարչարանքի, թաղման և յարութեան վերայ ճառեր և Միանձանց զարմանալի խրատը։ Իբրև ականերևս վկայ գրեց Վարդանանց պատերազմի հռչակաւոր պատմութիւնը, որ մենք մեր թարգմանութեան նիւթ վերցուցանք։ Եղիշէն յետոյ կարգվեց Ամատունեաց եպիսկոպոս և ներկայ գտանվեց Արտաշատի ժողովքումը։

Մովսէս Խորենացի. Սա Ս. Մեսրոպի քրոջորդին էր մի իմաստուն և հիմնաւոր ուսումնական անձը. որին անվանումեն քերթողահայր։ Սա իւր ծերութեան ժամանակը Սահակ Բագրատունի սպասելի խնդրքովը գրեց Հայոց պատմութիւնը սկսած նորա տէրութեան Հայկի ձեռքովը հիմնվելուցը մինչև Մեսրոպի մահը. Որի աշխարհաբար թարգմանութիւնը շուտով կտանք մեր ազգին։ Նա գրեցէ նոյնպէս մի աշխարհագրութիւն։ Սահակ Արծրունոյ խնդրքովը գրեց աստվածամօր կենդանակիր պատկերի պատմութիւնը։ Նա գրեց «Պիտոյից» անվանեալ գիրքը Թէոդորի խնդրքովը, որին համարումեն նորա աշակերտ։ Բացի դոցանից շարադրեց շատ գեղեցիկ շարականներ, ներբողներ, որոնց միններ ներբող դէպի Ս. Հռիփսիմէն և արեց այլ թարգմանութիւններ։ Եղնիկի մահվանցը յետոյ՝

Մովսէս Խորենացին Բագրևանդի և Արշարունեաց եպիսկոպոս ձեռնադրվեց. սորա աշակերտն էր Եզրասը Անգեղ տանից, որ ճարտասանութիւն էր ուսուցանում Հայաստանումը։

Ամբրէ վերծանող, որ Մովսէս Խորենացու կրտսեր եղբայրն էր. Սա, բացի զանազան թարգմանութիւններից՝ գրեց մի ճառ Քրիստոսի Երուսաղէմ գնալու վերայ և այլ բաներ։

Ստեփանոս՝որ իւր աշակերտակից Անանիա եպիսկոպոսիցը յետոյ՝ Սիւնեաց եպիսկոպոս ձեռնադրվեց. Սա շարադրեց ութ գեղեցիկ շարականներ Քրիստոսի յարութեան վերայ։

Դաւիթ՝Խորենացու քրոջ որդին Հարքայ գաւառիցը Ներքինայ գիւղիցը, որ գտանվում է Տարօնի սահմանումը. Նա փիլիսոփայութեան մէջ ջօրաւոր լինելու համար անվանվեց անյաղթ։ Սա շինեց քերականութիւն, Սահմանաց և Էակաց գրքերը, Արիստոտելի գրքերիցը միքանի մեկնութիւններ. թարգմանեց Պորփիւրի ներածութեան գիրքը. յօրինեց ներբողական ճառ Քրիստոսի ծնունդի վերայ և «Բարձրացուցէ.քը» Քրիստոսի խաչի վերայ, որ գերազանցվում է իւր բանաստեղծական արժանաւորութիւնովը։

Ղազար Փարպեցին՝ որ Աղան Արծրունու աշակերտն էր. Սա Վահան Մամիկոնեանի մարզպանութեան ժամանակը կրօնաւորների վերակացու կարգվեց։ Սորա գրվածներիցը աւելի յայտնիեն Հայոց պատմութիւնը սկսած թագաւորութեան բաժանվելուցը մինչև իւր ժամանակը. և իւր թուղթը դէպի Վահան Մամիկոնեանը։

Երբ Հայոց հոգևորական դասը զարգանում էր քրիստոնէական դաստիարակութեամբ Սահակեան և Մեսրոպեան վարժարանում, երբ նա ընդունում էր իւր յառաջադէմ հոգևորական որդկերանցը իւր եպիսկոպոսական, վարդապետական, վարժապետական, մատենագրական և այլ ուսումնաբարդ գիտութեանց աթոռների վերայ, նոյն միջոցում աշխարհականները ևս հեռու չէին մնում այդ լուսաւորութեան գաղափարներից և քրիստոնէական դաստիարակութիւնից։ Սահակեան և Մեսրոպեան ուսումնարաններից նոյնպէս դուրս եկան և պատրաստվեցան ազգութեան և քրիստոնէութեան սեղանի զոհեր աշխարհական տղամարդկերանցից, որոնք ապդ և կրօն ասելով՝ Հայ և Հայութիւն կոչելով՝ իւրեանք ընկան փառքի դաշտի վերայ, որ բարձրացնեն իւր ընկած հայրենեաց փառքը և նորա սուրբ կրօնը, որ աղբիւր էր եղել նոցա այդ բարոյական դաստիարակութեան։

Նոյն ինքը Վարդան Մամիկոնեանը իրրև մի կենդանի օրինակ՝ կանգնած է ազգասէր և կրօնասէր պարակից Հայ երիտասարդների գլխին, որոնք բաժին էին ստացել Սահակեան և Մեսրոպեան լուսաւորութեան սեղանից։

Արդեհաև Եղիշէի մեր թարգմանած պատմութեան մէջ, Վարդան Մամիկոնեանը մեզ ներկայանում է իրրև գլխաւոր հերոսը այդ ազգային առաքինութեան՝ այս պատճառով աւելորդ չէր լինիլ երկու խօսք ասել նորա մասին։

Ա. Վարդան Մամիկոնեանը Համազասպ Մա-

միկոնեանի որդին էր և Սահակ Պարթևի թոռը, որովհետև Վարդանի մայրը Սահակի դուստրն էր։ Երբ Հայոց սպարապետ Սահակ Բագրատունին մեռաւ՝ Սահակ Պարթևացին Հայոց թագաւոր Վռամշապուհը խնդրեց իւր փեսայ Համազասպին Հայոց սպարապետ կարգելու. բայց որովհետև Վռամշապուհ յանձը չառաւ այս բանը անելու առանց Պարսից Արտաշիր թագաւորին՝ այս պատճառով Սահակը իւր աղջկայ խնդրելովը անձամբ գնաց Արտաշրի մօտ և խնդրելով նորանից յետ դարձնել Հայոց նախարարների հայրենական իշխանութիւնները և կալվածները, որ Արտաշիրը յափշտակել էր նոցա Յունաց բաժինը գնալու պատճառով՝ խնդրեց նոյնպէս Համազասպի մասին։ Արտաշիրը Ս. Սահակի բոլոր խնդիրքը կատարելով՝ Համազասպին տվեց սպարապետութիւն և Մամիկոնեանց ցեղը, որ մինչև այն ժամանակը նախարարների կարգումը ստոր էր, բարձրացրեց և հինգերրորդ տեղը տվեց։

Համազասպի որդի Վարդանը մեծանալով իւր պապ Սահակի մօտ՝ նորա աշակերտների հետ ուսանում էր Մեսրոպի խնամակալութեան տակը։ Երբ Սահակը Մեսրոպին ուղարկեց Յունաց Կայսրի մօտ, ինչպէս վերևը ասացինք, Վարդանը ևս նորան ընկերակցելով՝ ներկայացաւ Թէոդոս կայսրին և նորանից ստացաւ Ստրատելատութեան պատիւ։ Վարդանը միանգամ ևս Սմբատ թագաւորի ասպետի հետ գնաց Պարսից Վռամ թագաւորի մօտ դաշնադրութեան մասին, որտեղ Վռամը Արտաշիր վերջին Արշակունուն թագաւոր դրեց Հայոց վե-

րայ։ Վարդանը երկրորդ անգամ Սահակի հետ գնաց Վռամի մօտ. երբ Ս. Սահակը Արտաշիր թագաւորի հետ միասին կոչվեց Պարսկաստան և բանդարկվեց։ Ինչպէս պատմութիւնից երևում է Վարդանը ևս արգելվեց Պարսկաստանումը իւր պապի հետ միասին և նորա հայրենական ժառանգութիւնը նորանից խլվեց. երբ յետոյ Վռամը Սահակին արձակեց, արձակեց նոյնպէս նորա թոռը Վարդանին։ Խորենացին ասում է «կրկին անգամ նորա թոռը Վարդան ստրատելատին կարգելով իւր Մամիկոնեան տէրութեան մէջը, ուղարկեց Հայաստան»։ Վարդանը իւր Համազասպ հօր մահից յետոյ Հայոց սպարապետ կարգվեց և այս պաշտօնի մէջէր նա, երբ յանձն առաւ իւր արիւնով պաշտպանելու ազգի կրօնը և իրաւունքը։

Մինչդեռ Պարսկաստանի թագաւորական գահի վերայ նստումէին Արշակունեաց ցեղի թագաւորները, որոնք մեր թագաւորների ազգակիցներն էին, այդ միջոցին Հայաստանի քաղաքական դրութիւնը աւելի ապահով էր իւր արևելեան կողմից իւր համար դաշնակից ունենալով Պարսկաց թագաւորութիւնը. բայց երբ Արշակունեաց թագաւորող ցեղը Պարսկաստանումը վայր ընկաւ Ստահրացի Արտաշիր Սասանի ձեռքովը, այդ ժամանակը Պարսկաստանը դարձաւ Հայաստանի համար մի աւելի զօրաւոր և վնասակար թշնամի։ Արտաշիրի Զրադաշտական օրէնքի վերականգնելը և Քրիստոնէութեան այդ միջոցին Հայաստանի մէջ ներքսածութիւնը, այս երկու միմեանց հակառակ սկզբունքը աւելի զէնք տվեցին Սասանեանց բռնակալ

ատելութեանը։ Ինչպէս տեսանք վերջին Արշակունի թագաւորների թուլութիւնը Հայաստանի գահի վերայ, որ ինչքան յառաջ էր գալի իւրեանց սեփհական թուլութենից, այնքան ևս արտաքին թշնամեաց արևելեան, արևմտեան և հիւսիսային կողմերում զօրանալուցը, որոնք այդ միջոցումը Կովկասեան սարերից հեղեղի նման թափումէին նորա գաւառների վերայ և աւերում։ Այս բոլոր պատճառները Հայաստանի քաղաքական զօրութիւնը օրէ ցօր քանդումէր, մինչև որ նորա երկու կողմի զօրանող թշնամեաց բռնութիւնը նորան երկու մասը ճեղքեց։

Արշակ երրորդի ժամանակը Հայաստանը երկու մասը բաժանվեց. աւելի մեծ մասը ընկաւ Պարսից լծի տակը, իսկ միւսը Յունաց։ Այս բանը մեծ հարված տվեց նորան։ Հայաստանը այս երկու զօրաւոր տէրութեանց մէջ տեղը իւր աշխարհագրական դրութեամբը տրորվումէր արևելքից և արևմուտքից։ Պարսիկը Յունաց դէմ գնալիս Հայաստանն էր տրորում, Յոյները Պարսից վերայ գնալիս Հայաստանն էին կոխում։ Երբեմն Հայերը ստիպված էին լինում օգնելու միևնոյն ժամանակը երկու հակառակ կողմերին և մեմեանց արիւնը թափել կամ մի և կամ միւս բռնաւոր տէրութեան փառքը մեծացնելու համար։

Ինչպէս տեսանք վերևումը Զրադաշտական կրօնի պատերազմը Հայաստանի քրիստոնէութեան դէմ աւելի զօրացաւ Շապուհի և Յազկերտ առաջինի ժամանակներումը. մինչևոր մեր վերջին Արշակունի Արտաշիր վայր ձգվեց իւր նախնեաց փա-

ռաւոր գահիցը Վռամ երկրորդի ձեռքումը և Հայաստանի կառավարութիւնը անցկացաւ Պարսից մարզպանների ձեռքը։

Ցոյները և ս Հայոց համար քրիստոնեայ եղբայրներ չէին, այլ օգտածարաւ թշնամիք. նոքա և ս Հայաստանի արիւնիցը իւրեանց համար բաժին էին վերցնում։ Սահակի նոցա բաժնումը անարժան ընդունելութիւնը քրիստոնէական դաստիարակութիւն տալու համար, արդէն ցոյց էր տալի նոցա անբարոյական վարմունքը դէպի հայերը։ Նոքա իւրեանց բաժնումը աւելի շուտով անարգեցին Արշակունեաց թագը, քան թէ Պարսիկները։

Ա.յդ միջոցին Զրադաշտական կրօնի ֆանատիկոսութիւնը դուրս կանչեց քրիստոնեայ Հայաստանին այն ասպարէզը, որտեղ քրիստոնէութիւնը Ասիայի հողի վերայ կատարեց իւր փառաւոր յաղթութիւններիցը մինը իւր սուրբ նահատակների արիւնովը, որովհետև Պարսից Յազկերտ երկրորդը յաջորդելով իւր հայր Վռամ երրորդին՝ իսկոյն քանդեց իւր հօր Ցունաց հետ դրած դաշը՝ պատերազմ բացեց նոցա դէմ և աւերեց նոցա երկիրները մինչև Մծբին քաղաքը։ Նա այս յաղթութեամբը հպարտացած՝ աւելի մեծ համարձակութեամբ կամեցաւ յառաջ տանել իւր նախորդների մտքերը. այսինքն ջնջել քրիստոնեութիւնը Հայաստանիցը և նոցա դարձնել դէպի Զրադաշտական օրէնքը՝ որ կարողանայ նոցա կրօնական մերձաւորութիւնը դէպի Ցոյները կտրել և աւելի ազատաբար տիրել նորան։ Այս պատճառով Յազկերտը իւր խորհրդակից մոգերիցը և իւր Մի-

հրներսէհ Հազարապետիցը գրգռված մի հրովարտակ ուղարկեց Պարսից տէրութեան բոլոր քրիստոնեայ ազգերին՝ գլխաւորապէս Հայոց, Վրաց և Աղվանից։ Այդ նամակի մէջը նա բացադրումէր Զրադաշտական օրէնքը և ստիպումէր թողել քրիստոնէութիւնը և իւրեանց կրօնը ընդունել։ Երբ այդ հրովարտակը հասաւ Հայոց աշխարհը, թէպէտ նորա թագը, գահը և գայսօնը փշրած դրած էին պարսկական բռնութեան և Յունական խորամանկ քաղաքականութեան կեղտոտ ոտների տակը, բայց, ինչպէս տեսանք, Հայաստանը արդէն բաւականի պնդացրելէր իւր մէջքը իւր կրօնի գօտիովը և ազգութեան արիւնը տակաւին եռէր գալի Վարդանանց և Ղևոնդեանց երակների մէջը։ Սահակեան և Մեսրոպեան ճրագները տակաւին պայծառութեամբ լոյս էին տալի Հայաստանի աշտանակների վերայ։ Արդէն բացայայտ երևումէր թէ ինչ հոգւոյ և ինչ քրիստոնէական եռանդի պէտք էր հանդիպէր այն կրօնական բռնաւորը, որ կամենումէր իւր արիւնոտ ձեռները մխել Հայի կրօնին, այն Հայի՝ որ կարելի է ասել իւր թագը զոհելէր իւր կրօնին, այս պատճառով Հայոց նախարարները և հոգևորականները Վարդան սպարապետի և Յովսէփ եպիսկոպոսի առաջնորդութեամբը մի ընդհանուր ժողով արեցին Արտաշատ քաղաքումը և թագաւորի նամակը հերքելով պատասխան գրեցին։ Այս տեղից սկսվումէ վարդանանց պատերազմը, որի համառօտ միտքը աւելորդ չենք համարում գրելու եղիշէի կարդացողների հեշտութեան համար։

Այդ ազգային ժողովի մէջը ներկայ գտանվեցան Հայաստանի բոլոր եպիսկոպոսները, վարդապետները, քահանայքը և այլ կարգի հոգևորականներ, որոնք գլխաւորապէս Սահակի և Մեսրոպի ուսումնարանից էին դուրս եկել։ Նոցանից գլխաւորներն էին՝ Յովսէփ եպիսկոպոսը Այրարատի. Սահակ եպիսկոպոսը Տարօնի, Մելետ եպիսկոպոսը Մանազկերտի. Եզնիկ Եպիսկոպոսը Բագրեւանդի, Սուրմակ եպիսկոպոսը Բզնունեաց. Տաճատ եպիսկոպոսը Տայոց. Թաղիկ եպիսկոպոսը բասենի. Քաւու եպիսկոպոսը Տուրուբերանի. Երեմեա եպիսկոպոսը Մարդաստանի. Եւշաղ եպիսկոպոսը Մարդաղուց. Անանիա եպիսկոպոսը Սիւնեաց. Մուշէ եպիսկոպոսը Արծրունեաց, Սահակ եպիսկոպոսը Ռըշտունեաց, Բասիլ եպիսկոպոսը Մոկաց. Գադ եպիսկոպոսը Վանանդի. Եղիշէ եպիսկոպոսը Ամատունեաց, Եղբայր եպիսկոպոսը Անձևացեաց և Երեմիա եպիսկոպոսը Ապահունեաց։ Երեցներից գլխաւորներն էին Ղևոնդ, Խորէն, Դաւիթ և այլն։ Աշխարհականներից միայն աւագ նախարարներ էին հետևեալք։ Վասակ Սիւնեաց նախարարը, Արծրունեաց Ներշապուհ նախարարը, Վրիւ մաղխազ. Մամիկոնէից Տէր և Հայոց սպարապետ Վարդանը. Վահևունեաց Գիւտ նախարարը. Մոկաց Արտակ նախարարը. Անձևացւոց Շմաւոն նախարարը. Ապահունեաց Մանէճ նախարարը, Վանանդի Առաւան նախարարը, Արշարունեաց Արշաւիր նախարարը. Ամատունեաց Վահան նախարարը. Գնունեաց Առամ նախարարը. Պալունեաց Վարազշապուհ նախարարը.

Աշոցաց Հրահատ նախարարը. Դիմաքսենից Հմայեակ նախարարը. Աբեղենից Գաղրիկ նախարարը. Առևեղենից Փապագ նախարարը և Վրէն՝ ձիւնականը և այլն։

Գեղեցիկ էր այն օրը, երբ Արտաշատ մայրաքաղաքը իւր ծոցն էր ընդունում իւր հոգևորական և աշխարհական իշխաններին, որոնք ձեռք ձեռքի և սիրտ սրտի տված գնում էին նորա բաղդի հարցմունքը վճռելու, նորա կրօնի և ազգի թշնամուն իւրեանց կուրծքերովը հանդիպելու, գրելով իւրեանց գրօշակների վերայ «Ազգ և կրօն»։

Երբ Յազկերտը Հայերիցը պատասխան ստացաւ՝ իւր մոգերիցը գրգռված՝ հրամայեց Հայոց, Վրաց և Աղվանից բոլոր նախարարներին իւր մօտ կոչել, որոնք շուտով գնացին Պարսկաստան նորա մօտ։ Թագաւորը նոցա շատ սառնութեամբ ընդունեց և ստիպեց քրիստոնէութիւնը ուրանալ և ընդունել Զրադաշտական օրէնքը։ Վարդան Մամիկոնեանը յառաջ կանգնեց և նորան պատասխանեց միւս նախարարների հաւանութեամբը, որ այդ բանը անկարելի է. ազգային եկեղեցին նոքա չեն փոխել ոչմի այլ կրօնի և փառքի հետ։ Յազկերտը նախարարների հաւատի պնդութիւնը տեսնելով նոցա յայտնեց բարկութեամբ, որ եթէ այս բանը յանձը չառնեն՝ նոցա բոլորին միւս օրը կկոտորի և մեծ զօրք կուղարկի Հայաստանը քանդուքար անելու։ Նախարարները երբ իմացան նորա մտադրութեան հաստատութիւնը իւրեանց մէջը խորհուրդ արեցին, որ առերես քրիստոնէութիւնը ուրանան, մինչև որ ոտերը դնեն Հայաստանի հողի

վերայ, որ կարողանան ազգը և եկեղեցիքը պաշտպանել։ Նոքա ուխտ դրեցին և Աւետարանով երդում կերան մինչև ի մահ քրիստոնէութեան մէջը պինդ մնալու։ Երբ Յազկերտին յայտնեցին որ նոքա մոգութիւնը ընդունումեն, նա շատ ուրախացաւ, նոցա տվեց մեծ զօրք և ահագին բազմութիւն մոգերի և մոգպետների, որ գնան և փոքր միջոցումը Արտակապաշտութիւնը տարածեն Հայաստանումը։ Երբ նոքա հասան Հայաստան, Հայոց քահանաները, վարդապետները, ժողովուրդը, տղամարդիկը, կանայքը, աղջկերք և երեխայքը շիմանալով Հայոց նախարարների ծածուկ միտքը՝ երբ այս բաները տեսան Աւետարանով, փայտով և կրակով դուրս եկան նոցա դէմ և Ղևոնդեանց գաւազանները շարժելով մոգերի գլխին լեռդապատառ հալածեցին Հայաստանիցը, որովհետև նոքա արդէն սկսելէին ձեռք ձգելու եկեղեցիները կողոպելու։ Այնպէս նեղ տեղն ընկան մոգերը, որ գրեցին Պարսկաստան «Եթէ մեր ատվածները անգամ՝ գան անհնար է սոցա յանդուգը յարձակմանը ընդդիմանալ»։ Նախարարները իսկոյն թողեցին մոգերին և միացան Հայոց ժողովրդին։ Բայց Վասակը, որ քրիստոնէութիւնը սրտանց ուրացելէր, կանգնեց մոգերի կողմը, աշխատելով կրապաշտութիւնը տարածել։ Նա մի պատերազմում՝ Հայերիցը սատիկ ջարդվելով գերի ընկաւ և Աւետարանով երդում ուտելով որ քրիստոնէութեան մէջը հաստատ կմնայ՝ ազատութիւն ստացաւ։

Այս միջոցին Ազվանից երկրիցը համբաւաբեր հասաւ Հայաստան, թէ Պարսից զօրքը յար-

ձակվելով նոցա երկիրը եկեղեցիքը այրեց և ժողովրդին գերի արաւ։ Վարդան Մամիկոնեանը նոցա օգնական գնալով՝ ջարդեց Պարսից զօրքերին՝ և յաղթութեամբ վերադարձաւ։ Վարդանի բացակայութեան ժամանակը Վասակը իւր երդումը ստելով՝ կրկին անցկացաւ Պարսից կողմը և սկսեց աղմկել Հայոց երկիրը։ Պարսիկները այս անյաջողութիւնները տեսնելով մեծ զօրքերով և փղերով լցրին Հայաստանը, ազգակործան Վասակը ևս նոցա հետ։ Վարդանի Աղուանից երկրումը արած յաղթութիւնից յետոյ՝ Հայերը մարդ ուղարկեցին Յունաց կայսրի մօտ օգնութիւն խնդրելու, բայց Մարկիանոսը մերժեց նոցա խնդիրքը։ Հայերը ապաւինելով միայն իւրեանց վերայ, Վարդանի առաջնորդութեամբը, դուրս եկան Պարսից դէմ։ Տղմուտ գետի մօտ սկսվեց ընդհանուր ազգային պատերազմը, որտեղ մասնակից էին, աշխարհականներ, հոգևորականներ, տղամարդիկ և կանայք։ Սաստիկ պատերազմելից և թշնամեաց գնդերին ջարդ տալից յետոյ, Հայոց քաջերը, որոնց մէջը՝ և Վարդան Մամիկոնեանը փղերի կատաղի յարձակմունքների մէջը՝ տացան նահատակութեան պսակը։

Ազգուրաց Վասակը՝ որ յոյս ունէր Հայաստանի աւերակների վերայ կանգնել իւր փառքը՝ սկսեց խարէութեամբ և սուտ խօսքերով բնակիչներին ամուր բերդերից հանել և գերի անել։ Նա Յովսէփ Եպիսկոպոսին և Ղևոնդ երէցին ևս միւս շատ գերիների հետ կապեց և ուղարկեց Պարսկաստան։ Հայոց միւս կենդանի մնացած

նախարարները ևս Ցաղկերտիցը նամակ ստանալով խաբէութեամբ կոչվեցին Պարսկաստան և բանդը դրվեցան։ Ղասակը՝ որ համարվումէր վնասակար ինչպէս Հայոց նոյնպէս Պարսից՝ Ցաղկերտիցը պատժապարտ մեռաւ։ Ղևոնդեանք Նիւշապուհ քաղաքումը նահատակվեցին իւրեանց կրօնի համար, իսկ նախարարները Ցաղկերտի որդի Պերոզի ժամանակը իւրեանց երկարժամանակեայ բանդարկվելեցը յետոյ՝ արձակվեցան և պատվով վերադարձան կարգի բերելու իւրեանց սիրած Հայաստանը և շինելու եկեղեցիքը, որոնց համար զոհ էին գնացել։

ՄԱՐՏԻՐՈՍ ՍԻՄԷՕՆԵԱՆՑ։

ԵՂԻԾԻ ՎԱՐԴԱՊԵՏԻ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

ՎԱՐԴԱՆԻ

ԵՒ

ՀԱՅՈՑ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՀԱՄԱՐ,

Որ գրեալ է Մովսէսէն Դարոնեցւոյ Երեցի Խորենացւոյ։

ԱՅՆ գործը, որ յանձնեցիր ինձ կատարեցի, ով քաջ, զոր հրամայեցիր գրել Հայոց պատերազմը, որոյ մէջ շատերը առաքինացան։ Ահա գրեցի եօթը բաժանման մէջ։ Առաջինում՝ ժամանակները։ Երկրորդում՝ արևելեան իշխանի ձեռով պատահած անցքերը։ Երրորդում՝ եկեղեցւոյ ուխտի միաբանութիւնը։ Չորրորդում՝ ոմանց երկպառակութիւնը և բաժանումը նոյն ուխտիցը։ Հինգերրորդում՝ արևելեան ազգերի յարձակումները։ Վեցերրորդում՝ Հայերի պատերազմով ընդդիմանալը։ Եօթներրորդում՝ կռվի շարունակութիւնը։

Այս եօթը գլխի մէջ կարգով գրեցի սկիզբը, մէջը և վերջը, որ միշտ կարդալով՝ լսես առաքինի մարդկերանց քաջութիւնը և յետ մնացածների վատթարութիւնը. ոչ այն պատճառով, որ դու քո երկրաւոր առատ գիտութեան պակասութիւնը լրացնես, այլ աստանես երկնային կառավարութիւնը, որ իւր նախագիտութեամբը տալիս է երկու կողմին ևս իւրեանց հատուցումն, որ ցոյց տայ և բևեռի բաներովը աներևոյթ բաները։

Այլդու, ով մեծդ Աստուծոյ գիտութեան մէջ. ինչի՞ համար ես արդեօք հրամայում, կամ գուցէ քեզ հրամայում են աւելի լաւերը։ Բայց ինչպէս երևում է ինձ և նոցա, որոնք պարապում են իմաստութեամբ, այս երկնաւոր սիրոյ նշան է քո մէջ և ոչ երկրաւոր փառասիրութեան. ինչպէս և ոմանք քաջ պատմագրներից ասացին «Միութիւնը մայր է բարութիւնների, անմիաբանութիւնը ծնող է չարութիւնների։ Ինչպէս և մենք նայելով քո հրամանի սուրբ սիրոյ վերայ՝ չ'վախեցինք մեր տգիտութեան պատճառով։ Որովհետև սրբութիւնը շատ օգնական է լինում տկարութեանը, ինչպէս աղօթքը գիտութեանը՝ և սուրբ սէրը հասարակաց օգուտին։ Որ և մենք ընդունելով քո հրամանի հետ, յօժարութեամբ յանձն առանք այն գործը, որ մխիթարութիւն է սիրելիների համար և յոյս յուսացողների համար, քաջալերութիւն՝ քաջերի համար, որոնք իւրեանց կամքով յարձակվում են մահուան վերայ. աչքի առաջև ունենալով յաղթութեան զօրագլխին, որ ոչ ոքի ոտի տակ չէ զարկում թշնամութեամբ, այլ բոլորին ուսուցանում

է իւր անյաղթելի զօրութիւնը։ Եւ ահա՛, ով կամենում է՝ ընդունում է նորան ինչպէս առաքինի՝ հատակ։ Եւ որովհետև առաքինութիւնը շատ մասներ է բաժանվում, այս պատճառով և նա բազմատեսակ շնորհներ պարգևեց ամենին, որոց մէջ ամենից գլխաւորն՝ է սուրբ սէրը պարզ մտքից բղխած։

Այս պարզութիւնը երկնային նմանութիւն ունէ, որ և մենք տեսանելով քո մէջ՝ մոռացանք մեր տկարութիւնները։ Եւ ահա քեզ հետ թռչելով բարձրանում ենք և բարձրաթռիչների հետ անցնենք կենում մրրկալից օդերի սահմաններից, որ փոքր՝ի շատէ ծծելով անվնասակար օդից, գիտութիւն ստանանք մեր անձանց փրկութեան և ամենայաղթ եկեղեցւոյ փառքի համար։ Այս պատճառով շատ սուրբ պաշտօնեայք ուրախութեամբ կատարելով իւրեանց պաշտօնը բոլորի՝ Հօր փառքի համար, կուրախացնեն սուրբ երրորդութիւնը նորա անտրտում գոյութեան մէջ։

Եթէպէտ և չ՝կամէինք ողբալ մեր ազգի թշուառութիւնը, բայց որովհետև ընդունեցինք քո բարի և աննախանձ բնութեան պատուէրը, ուրեմն ասկըսենք՝ ինչտեղից արժան է սկսել։

Ահա ակամայ և արտասուալից աչքերով գրում ենք այն շատ կոտորուածքը, որ մենք ինքներս պատահեցինք և անձամբ տեսանք։

Ա. ԳԼՈՒԽ

ԺԱՄԱՆԱԿՆԵՐԸ։

Երբ Արշակունեաց ազգը վերջացաւ, Հայոց աշխարհին տիրեց Սասանեայ Պարսկի ցեղը, որ կառավարում էր իւր իշխանութիւնը մոգերի օրէնքով և շատ անգամ պատերազմում էր նոցա հետ, որոնք չէին հնազանդվում այս օրէնքին։ Սկսած Տիրանի որդի Արշակ թագաւորի ժամանակից՝ կրում էր մինչև Վռամշապուհի որդի Հայոց Արտաշէս թագաւորի վեցերրորդ տարին։ Երբ նորան ևս զրկեց թագաւորութիւնից, այն ժամանակը նախարարներն էին կառավարում թագաւորութիւնը. և թէպէտ հարկ էին տալի Պարսից, բայց պատերազմի մէջ բոլոր զօրքին իրենք էին առաջնորդում։ Այս պատճառով և ասոյածպաշտութիւնը օրէցօր աւելի ծաղկում էր Հայոց մէջ, սկսած թագաւոր Շապուհի գահակալութենից՝ մինչև Վռամայ որդի թագաւորաց թագաւոր Յազկերտի երկրորդ տարին, որին սատանան ընտրեց իւր գործա-

կից և բոլոր ժողոված թոյները թափեց նորա մէջ, ինչպէս մահաբեր նետեր կապարճի մէջ։ Եւ սկըսեց հպարտանալ անօրէնութեամբ և գոռալով հող հանել երկրի շորս կողմումը. բոլոր քրիստոնեաներին համարում էր իւրեան թշնամի և հակառակորդ, անխաղաղասէր կեանքով նեղանում, անհանգիստ էր լինում։ Որովհետև շատ սիրելի էին նորան արիւնհեղութիւնը և աղմուկը, այս պատճառով նա իւր մէջ տարուբերվում էր, թէ ո՞ւմ վերայ թափէ արդեօք իւր դառը թոյները կամ ո՞ւմ վերայ յարձակէ իւր բազմաթիւ նետերը։ Եւ յիմարութիւնից շարժված կատաղի գազանի պէս յարձակվեցաւ Յունաց աշխարհի հերայ, յաղթեց մինչև Մծպին, քանդեց Յունաց շատ գաւառներ, բոլոր եկեղեցիները կրակի կերակուր շինեց, ժողովեց աւար և գերիներ և ահ ձգեց այն կողմի բոլոր զօրքերի վերայ։

Իսկ երանելի Թէոդոս կայսրը իբրև խաղաղասէր քրիստոնեայ, չ՝կամեցաւ նորա դէմ պատերազմ գուրս գալ, այլ ուղարկեց նորա մօտ իւր աբեղեան զօրքի հրամանատար Անատոլիային շատ ընծաներով։ Անատոլը այն բոլոր մարդկերանցը, որոնք քրիստոնէութեան համար Պարսկաստանից փախել էին Կոստանդնուպոլիս, բռնել տուեց և ուղարկեց նորա մօտ և նորա բոլոր պահանջմունքները կատարելով՝ նորա բարկութիւնը հանգստացրեց և վերադարձաւ կրկին իւր Դիզբոն քաղաքը։

Երբ անօրէն թագաւորը տեսաւ, թէ իւր չարութիւնը յաջողութիւն գտաւ, սկսեց այլ խորհուրդ ևս մտածել, վառված կրակի փայտեղէններու-

թը աւելի շատացնելով։ Որովհետև ինչտեղից փո-
քրը ինչ կասկածանք ունէր, այնտեղից բոլորովին
ապահովացաւ, այս պատճառով շատերին զրկեց
իւրեանց քրիստոնէական սուրբ ուխտից, ոմանց
երկիւղ տալով և ոմանց կապանքներով և տան-
ջանքներով։ Ոմանց դառը մահուամբ էր սպանել
տալի և նոցա կայքը և վաստակները յափշտակում
և մեծ անպատուութեամբ չարչարում ամենին։

Երբ տեսաւ քրիստոնեաներից շատերը ցրուե-
ցան զանազան երկիրներ, խորհուրդ էր անում իւր
կողմնակիցների հետ, որոնք կռապաշտութեան
անկտրելի կապով միացած՝ վառվում էին ինչպէս
հնոց եկեղեցւոյ սուրբ միաբանութիւնը այրելու
համար։

Այնպիսի մարդկերանց համար իւրեանց կեան-
քը թանձր խաւար է, իսկ հոգիները կապուած իւ-
րեանց մարմնի հետ, ինչպէս կենդանի՝ գերեզմա-
նումը, որոց համար Քրիստոսի լուսոյ սուրբ ճառա-
գայթը երբէ՛ք չէ ծագում։

Ահամերձ արջերը իւրեանց վերջի շունչը ար-
ձակելիս ամենասաստիկ կերպով են կռվում, իսկ
խնաստուն մարդիկը հեռանալով՝ փախչում են նո-
ցանից։ Այսպէս է հասանում թագաւորութեան
վերջը, եթէ ջարդվում են՝ չեն զգում, եթէ ջար-
դում են՝ չեն խմանում, իսկ եթէ դրսից թշնամի
չէ լինում՝ իւրեանց անձի հետ են կռվում։

Հատ յարմար է մարգարէի ասածը այսպիսի
մարդկերանց համար «Քաղցած մարդը այս կողմ և
այն կողմ թափառելով կուտէ իւր մարմնոյ կէսը»։
Գեղեցիկ է ասում և Քրիստոս «Ամենայն տուն և

թագաւորութիւն եթէ բաժանվի իւր մէջ՝ չէ կա-
րող հաստատվել»։ Ուրեմն, ո՛վ թագաւոր, ինչի՞ ես լաց լինում, ինչի՞ ես կռվում, ինչի՞ ես այրվում, ինչի՞ ես բորբոքվում, ինչի՞ ես հանգչում, ինչի՞ ես խորհուրդ կոչում նոցա, որոնք անապական հոգիդ քեզանից հանելով՝ ապականում են՝ իսկ ապականած մարմնիդ մեռելի դիակի պէս դուրս են ձգում։ Դու կամենում ես քո ամբարիշտ խորհուրդները ծածկել, բայց երբ որ կ՚յայտնուին, այն ժամանակը կ՚տեսնես դոցա վերջը։

Ա՞ոգերը ասում էին Յաղկերտին «Քաջ թագաւո՛ր, աստուածները՝ որոնք քեզ տուեցին թագաւորութիւն և յաղթութիւն, չեն կամենում քեզանից ո՛չ մի երկրաւոր փառք, բայց միայն դարձնել դէպի մի օրէնք այն բոլոր ազգերին, որոնք գտանվում են քո իշխանութեան տակ, այն ժամանակ և Յունաց ազգը քեզ հնազանդվելով՝ կ՚ընդունի քո օրէնքները։ Ուրեմն այս բաները շուտով կատարիր, թագաւո՛ր, ժողովիր բոլոր ազգերը, զօրք կազմիր և գնա Քուշանաց աշխարհը, անցկացրու նոցա Պահ դունովը և դու այնտեղ բնակվիր։ Երբ դու բոլորին կ՚արգելես և կ՚փակես հեռու օտարութեան մէջ, այն ժամանակ կ՚կատարուին քո բոլոր խորհուրդները և ինչպէս մեր մոգութիւնը վկայում է, դու կ՚տիրես Քուշանաց երկրին և Յոյներն անդամ կը-հնազանդեն քո իշխանութեանը։ Բայց միայն քրիստոնէից աղանդը վերացրու։

Այս խորհուրդը հաճոյ թուեցաւ թագաւորին և իւր բոլոր խորհրդականներին։ Նա սատիկ հրամայեցաւ ուղարկեց իւր տէրութեան բոլոր կող-

մերը, որոյ պատճէնը այս է։ «Իմ՝ տէրութեան բոլոր ազգերին, Արեւաց և Անարեւաց մարդասիրութեան ողջոյն հասանի մեզանից։ դուք ողջ կացէք և մենք աստուածների օգնութեամբը ողջ ենք։ Առանց ձեզ նեղացնելու՝ մենք գնացինք Յունաց աշխարհը և առանց պատերազմի՝ սիրով և մարդասիրութեամբ նուաճեցինք բոլոր երկիրը մեր իշխանութեան տակ։ Դուք բարի մտածեցէք. թող ձեր ուրախութիւնը անվերջ լինի, միայն ինչ որ այժմ ասում եմ ձեզ՝ շուտով կատարեցէք։ Դուք երբ այս հրովարտակը ստանաք, իսկոյն ձիաւոր զօրք ժողովեցէք և եկեք ինձ հանդիպելու Ապար աշխարհումը, որովհետև մենք խորհուրդ արինք անպատճառ գնալ արևելեան աշխարհը և աստուածների օգնութեամբը՝ նուաճել Քուշանաց տէրութիւնը։

Այս հրովարտակի պատճէնը հասաւ Հայոց, Վրաց, Աղուանից, Լիւնաց, Ծոդէից, Կորդուաց, Աղծնեաց աշխարհը և շատ հեռաւոր տեղեր, որոնք մինչև այն ժամանակը պարտաւորված չէին գնալու այնպիսի տեղեր։ Հայերը զօրք հաւաքեցին իշխաններից, ազնուականներից և թագաւորական ցեղի անուանի մարդերից. մի և նոյնը արեցին Վրացիք, Աղուանք, Լիւնացիք և հարաւային բնակիչներից շատերը, որոնք բնակվում էին Տաճկաստանի և Յունաստանի սահմաններումը, նոյնպէս հաւաքեցին Կորդուաց, Գէլաց, Ծոդէից և Արշնարզիւն երկրներից, որոնք բոլորը հաւատում էին մի, կաթուղիկէ և առաքելական եկեղեցի։ Նոքա անմեղութեամբ չմտնալով թագաւորի երկդիմի միտքը՝ իւրաքանչիւր աշխարհից գնացին մեծ ուրա-

խութեամբ, պարզամտութեամբ և տիրասիրութեամբ, կատարելով զինուորութեան բոլոր կարգը աներկմիտ խորհրդով։ Շատ քահանայք և եկեղեցւոյ պաշտօնեայք ևս միացան նոցա հետ սուրբ կտակարանները ձեռքերնին։ Նոքա կարգադրութիւն արեցին իւրեանց երկրումը, յանձնելով միմեանց իւրեանց անձը, որովհետև իմանում էին, որ իւրեանց աւելի մահ է սպասում՝ քան թէ կեանք։ Թէպէտ թագաւորի դիտաւորութիւնը նոցա յայտնի չէր, բայց նոքա կասկածում էին իւրեանց մտքումը։ Մանաւանդ երբ տեսան, որ Յունաց զօրութիւնը ջարդուել է Յազկերտի առաջը, նոցա սրտերը շատ վիրաւորվեցան։ Բայց որովհետև նոքա պահպանում էին Աստուծոյ սուրբ կտակարանի պատուէրները, վասնորոյ միշտ իւրեանց միտն էին բերում Պօղոս առաքելոյ պատուէրը թէ «Ծառայք, հնազանդ եղէք ձեր մարմնաւոր տէրերին ինչպէս Աստուծոյն, սրտով և ոչ ստութեամբ և երեսպաշտութեամբ ինչպէս մարդկերանց, որովհետև զորա փոխարէնը կ՚ստանաք Աստուածանից»։ Եւ այսպէս բարեմտութեամբ ճանապարհ ընկնելով՝ իւրեանց յանձնեցին Սուրբ Հոգոյն և շուտով կատարելով բոլորը թագաւորի հրամանին համաձայն՝ ներկայացան նորան։ Թագաւորը երբ տեսաւ շատ ուրախացաւ, կարծելով թէ իւր խորհուրդները կատարուեցան։ այս պատճառով սկսեց նոցա հետ այնպէս վարուիլ՝ ինչպէս նորան խրատում էին իւր ամբարիշտ խորհրդակիցները։ Եւ այսպէս, երբ թագաւորը տեսաւ օտարազգի զօրքերի այնքան բազմութիւնը, որոնք յօժարութեամբ եկել էին իւր հը-

բանները կատարելու, աւելի ուրախացաւ իւր իշխանների և զօրքերի առաջև։ Նա իւր դիտաւորութիւնը ծածկելով նոցանից, ակամայ շատ պարգևներ էր տալի նոցա։ Նա գնաց պատերազմ Հոնաց դէմ, որոնք անուանվում էին նմանապէս Քուշանք, և երկու տարի կռուելով նոցա հետ՝ ոչինչ յաջողութիւն չունեցաւ։ Յետոյ զօրքերին արձակեց իւրեանց երկիրները և նոցա փոխանակ այլ զօրք հաւաքեց իւր մոտ, մի և նոյն պատրաստութեամբ։ Յազկերտը իւր ընակութեան համար քաղաք շինելով, սովորութիւն արաւ իւրաքանչիւր տարի զօրք հաւաքելու, սկսած իւր թագակալութեան չորրորդ տարուցը մինչև տասն և մի երրորդ տարին։

Յազկերտը երբ տեսաւ, որ Յոյները հաստատ պահեցին իւրեանց դաշը և Խալիֆաները դադարեցին յարձակվելու իւր երկրի վերայ ճորայ անցքերից, և իւր երկիրը խաղաղութիւն գտաւ ամեն կողմից, սկսեց նեղացնել Հոնաց թագաւորին քանդելով և աւերելով նորա շատ գաւառները։ Ուրախութեան դեսպան ուղարկեց իւր աշխարհի բոլոր կրակատուները, առատութեամբ զոհ մատուցանելու կրակին՝ ոսկեայ եզներ և երկարամազ այծեր։ Եւ իւր պերճ պաշտօնը առատութեամբ կատարելով՝ մեծ փառքի և պատուի արժանացրեց շատ մոգերի և մոգպետների։ Բացի սորանից հրամայեց յաւիշտակել բոլոր կայքը և սեփհականութիւնքը այն քրիստոնեաների, որոնք ընակվում էին Պարսկաստանումը։

Այսպէս հպարտանալով և մեծամտելով՝ աւելի էր վիքվում քան մարդկային բնութիւնը, ոչ միայն

պատերազմների մէջ, այլ և իւրեան աւելի մեծ էր համարում քան իւր նախնիքը։ Այս դիտաւորութեամբ շատ անգամ կեղծաւորութեամբ թաք էր կենում իւր հպատակներից և ինչպէս իմաստունները նկատում էին, նա իւրեան դնում էր անմահների կարգումը։ Նա շատ բարկանում էր, երբ լսում էր, որ Քրիստոս տանջուեցաւ, խաչուեցաւ, մեռաւ և թաղուեցաւ։

Երբ այսպէս իւրաքանչիւր օր Քրիստոսի անունը լսելիս ցնորվում էր բարկութիւնից՝ մի անգամ Հայոց պատանի իշխաններից մինը պատասխանեց նորան։ «Թագաւո՛ր, դու ի՞նչ տեղից ես իմանում խօսել այդպիսի բաներ Քրիստոսի վերայ»։ Թագաւորը պատասխանեց «Ձեր մոլորութեան գրքերը կարդացին ինձ մօտ։ Պատանի իշխանը կրկին պատասխանեց նորան։ «Թագաւո՛ր, ինչի՞ միայն այդ քան կարդալ տուիր, հրամայիր կարդալ դորանից աւելի, այն ժամանակը կ՚լսես Քրիստոսի յարութիւնը, շատ մարդկերանց երևիլը, երկինք համբառնալը, Հօր Աստուծոյ աջ կողմումը նստելը, իւր երկրորդ անգամ աշխարհ գալու խօստումը, բոլոր ենջեցեալներին հրաշափառ յարութիւն տալը և նոցա արդար դատաստանի համառօտ հատուցումը»։ Երբ թագաւորը լսեց այս խօսքերը շատ նեղացաւ և հեգնարար ծիծաղելով ասաց։ «Այդ բոլորը խաբէութիւն է»։ Բայց Քրիստոսի զինուորը աներկիւղ շարունակեց։ «Թագաւո՛ր, եթէ դու հաւատում ես նորա երկրաւոր շարչարանքը՝ աւելի պէտք է հաւատաս նորա երկրորդ ահաւոր գալուստը»։ Երբ թագաւորը այս

բանը լսեց, բարկութիւնից վառվեց Բաբիլոնի հը-
նոցի նման, այնպէս որ իւր բոլոր մերձաւորները ևս
քաղդէացւոց պէս պրվում էին։ Այն ժամանակը
իւր բոլոր բարկութիւնը թափեց մի երանելի իշ-
խանի վերայ, որի անունը Գարեգին էր։ Երկու
տարի ոտները և ձեռները կապած՝ չարչարանքներ
տալով, իւր իշխանութիւնից զրկեց և սպանել
տուեց։

Բ. ԳԼՈՒԽ

ԱՐԵՒԵԼԵԱՆ ԻՇԽԱՆՒ ՁԵՌՔՈՎ ՊԱՏԱՀԱՆԾ ԱՆՑՔԵՐԸ։

Որոնց հոգիքը զերկուած են երկնաւոր առաքինութիւնից, նոցա անձը մեծ երկիւղի մէջ է լինում, ամեն քամուց շարժվում է, ամեն խօսքից վախենում, և ամեն բանից դողում։ Այնպիսի մարդոյ կեանքը անց է կենում երազի նման և իւր մահուան ժամանակը ուղարկվում է դէպի անդառնալի կորուստը։ Ինչպէս մինը հին ժամանակումը ասեց «Եթէ մարդ իմանում է, թէ ինչ է մահը, այն ժամանակը մահը անմահութիւն է, իսկ եթէ մարդը չէ ճանաչում նորան, այն ժամանակը նա իսկապէս մահէ։ Ով չէ իմանում, թէ ինչ է մահը՝ նորանից վախենում է, իսկ ով իմանում է՝ նորանից չէ վախենում։ Եւ այս բոլոր թշուառութիւնքը պատահում են մարդուն իւր տգիտութիւնից։ Այրը զերկվում է արեգակի ճառագայթներից, իսկ տգէտը

կատարեալ կեանքից։ Լաւ է կոյր լինել աչքերով՝ քան մտքով։ Ինչպէս հոգին մեծ է քան մարմինը, այնպէս մտքի տեսութիւնը աւելի է քան մարմնոյ։ Եթէ ոք շատ հարուստ լինի աշխարհի մեծութիւններով, իսկ մտքով աղքատ, նա շատ ողորմելի է, ինչպէս տեսնում ենք այս բանը ոչ միայն հասարակ մարդկերանց մէջ, այլ և նորա՝ որ մեծ է քան ամենը։ Այն թագաւորը, որ իմաստութեանը իւրեան աթոռակից չէ շինել, չէ կարող իւր գրութեան մէջ յաջողութիւն ունենալ։ Եթէ այս բանը աշխարհային գործքերի մէջ այսպէս է, ի՞նչքան աւելի հոգևոր գործքերի մէջ։ Մարմնոյ կենդանութիւնը հոգին է, իսկ հոգւոյ և մարմնոյ կառավարողը միտքն է, այս բանը ինչպէս մի մարդոյ համար, այնպէս և բոլոր աշխարհի համար է։ Թագաւորը, ոչ միայն իւր համար պէտք է պատասխան տայ, այլ և նոցա համար՝ որոց կորստեան պատճառ է եղել։ Թէպէտ մենք չունինք հրաման բամբասել մեր իշխանին, բայց մենք չենք կարող գովել նորան, որ վեր է կենում Աստուծոյ ընդդէմ։ Ես պատմում եմ Յաղկերտի գործքերը սուրբ եկեղեցւոյ դէմ, և պարտք եմ համարում պատմելու բանի ընթացքը ամենայն ճշմարտութեամբ և անկողմնապահութեամբ, ոչ ինչպէս կարծիքաւոր և ուրիշից լսած բաներ, այլ այն հանդուկն խօսքերը, որոց ես ինքս անձամբ պատահելով ներկայ գտանվեցայ, տեսայ և լսեցի, որոնք շարժում էին և տատանում իւր անթիւ զօրքերը ինչպէս սաստիկ քամի, որ խփում է ծովի երեսին։

Նա քննել էր տալի իւր աշխարհի բոլոր կրօն-

ները և ուսումը և համեմատում էր մոգութիւնը աստեղաբաշխութեան հետ, կեղծաւորութեամբ նմանապէս մէջ էր բերում և քրիստոնէութիւնը, բարկութեամբ ասելով՝ «Հարցրէք, քննեցէք, տեսէք, որ կրօնը լաւ է՝ այն ընդունենք, բայց աշխատում էր իւր մտքումը դրածը կատարել։ Զանազան երկրներից եկած քրիստոնեայքը, որոնք ծառայում էին զօրքի մէջ, իմացան այն խորհուրդը, որ ծածուկ վառվելով Յաղկերտի սրտումը՝ կամենում էր այրել առհասարակ սարերը և դաշտերը։ Ուրեմն նոյնպէս վառուեցան անհանգչելի կրակով և սաստկութեամբ պատրաստուեցան ծածուկ մէքենայի փորձութեան դէմ։ Սկսեցին այնու հետև բարձր ձայնով սաղմոններ, հոգևոր երգեր ասել, և քաջալերել տալ գլխաւոր բանակի հանդէպ։ Եւ ով գլենում էր նոցա մօտ աներկիւղութեամբ և յօժարութեամբ ուսուցանում էին։ Աստուած յաջողում էր քրիստոնեաներին զանազան հրաշքներով, որովհետև հեթանոսների զօրքից շատ հիւանդներ բժշկվում էին։

Ինչպէս թագաւորը երբ իմացաւ, թէ իւր խորամանկութիւնը և պատրաստած կրակը առանց մի մարդոյ վնասելու, յայտնուեցաւ քրիստոնեաներին՝ սկսեց ծածուկ նետերով խոցոտել իւր չար միտքը և անբժշկելի ցաւերով վիրաւորել իւր հոգին և մարմինը։ Երբեմն թունաւոր օձի նման իւրեան շանթում էր, ոլոր ոլոր գալի, երբեմն գոռում էր բարկացած առիւծի նման, տրորվում էր և գլորվում՝ երկու մտքի մէջ ընկած՝ և կամենում էր իւր սրտի խորհուրդը կատարել։ Եւ որովհետև նա

չէր կարողանում քրիստոնեաներին ձեռք ձգել, պատճառ որ բոլորը միատեղ նորա մօտ չէին, այս պատճառով՝ սկսեց այնուհետև փոքրերին աւելի արտօնութիւն և պատիւ տալ մեծերից, անարգներին պատուականներից, տգէտներին գիտուններից, տըկարներին քաջ տղամարդերից։ Ինչի՞ համար մի մի համարում, ամեն արժանաւորին յետ էր տանում, իսկ անարժաններին՝ յառաջ, մինչև անգամ հօրը և որդուն միմեանցից բաժանում էր։

Եւ էպէտ Յաղկերտը ամեն ազգերի հետ այսպիսի անկարգութիւններ էր անում, բայց առաւել Հայերի հետ էր կռվում, որովհետև տեսանում էր, որ նոքա աւելի ջերմեռանդ են աստուածպաշտութեան մէջ, մանաւանդ նոքա, որոնք Հայոց նախարարների ցեղից էին և հարազատութեամբ պահում էին առաքեալների և մարգարէների քարոզութիւնները։ Նոցանից ոմանց խաբում էր ոսկով և արծաթով և շատերին այլ առատ պարգևներով, ոմանց կալվածներ և գիւղեր տալով, ոմանց մեծամեծ պատիւների և իշխանական աստիճանների արժանացնելով, իսկ ոմանց տուտ յոյսերով։ Ահա այսպէս էր յորդորում և խաբում նոցա։ Ասում էր «Եթէ միայն մոգութեան օրէնքը կընդունէք և ձեր մոլորութեան տեղ ուղիղ սրտով կընդունէք մեր երևելի Աստուածների ճշմարիտ օրէնքները, ձեզ իմ նախարարներին հաւասար աւագութեան աստիճանի կհասցնեմ և նորանցից աւելի պատուի կարժանացնեմ։ Այսպէս կեղծաւորութեամբ իւրեան խոնարհեցնում էր ամենի առաջև, խօսում էր նոցա հետ սիրով, որ կարողա-

նայ խորամանկութեամբ նոցա իւր կողմը քաշել. ինչպէս նորան պատուիրել էին իւր խորհրդակից-ները։ Նա վարվում էր Հայոց հետ այս եղանակաւ, սկսած իւր թագաւորութեան չորրորդ տարուցը՝ մինչև տասն և մի երրորդ տարին։

Երբ տեսաւ, որ իւր ծածուկ հնարագիտութիւնը ոչինչ յառաջադիմութիւն չունեցաւ, այլ շատ բան նորա հակառակ էին գործում, որովհետև տեսնում էր, որ քրիստոնէութիւնը օրէցօր աւելի է տարածվում բոլոր այն հեռաւոր կողմերումը, որտեղից ինքն անց էր կենում, սկսեց աւելի մաշվիլ, տրտմիլ և հառաչելով հոգոց քաշել։ Ակամայ յայտնեց իւր սրտի ծածուկ խորհուրդները և յայտնի այսպիսի հրաման արձակեց։ «Ամենայն ազգ և ժողովուրդ, որոնք իմ իշխանութեան տակն են, թող ձեռք վերցնեն, դադարեն իւրեանց մոլոր օրէնքներից ու երկրպագութիւն տան միայն Արեգակին, նորան զոհ մատուցանեն և Աստուած անուանեն և ծառայեն կրակին. բացի սորանից, մոգութեան բոլոր օրէնքները անթերի կատարեն։ Այս բանը նա քարոզում էր բոլոր բանակի մէջ և ամենին ստատիկ հրամայում էր. և շտապով դէսպան էր ուղարկում իւր իշխանութեան ստորադրուած բոլոր հեռաւոր երկիրները այս հրամանը հաղորդելու։ Այս պատճառով իւր թագաւորութեան տասն և երկրորդ տարու սկզբումը շատ զօրք հաւաքեց և յարձակվեցաւ Խորասական երկրի վերայ։ Երբ Քուշանաց թագաւորը այս բանը տեսաւ, վախեցաւ, չ՝կամեցաւ պատերազմ դուրս գալ նորա դէմ, այլ իւր զօրքի հետ հեռացաւ ամուր տեղեր

և ապրում էր ծածուկ։ Բայց Ցազկերտը քանդելով և աւերելով Նոյա գաւառները և տեղերը՝ տիրում էր շատ քաղաքների և բերդերի, վերցնում էր շատ գերիներ և աւարներ և ուղարկում Պարսկաստան։ Այնուհետև հաստատվելով իւր մոլոր կարծիքի մէջ ասում էր ամբարտաւանութեան պաշտօնեաներին։ «Մենք ի՞նչ ընծայենք աստուածներին, այս մեծ յաղթութեան փոխանակ, որ ոչոք չէ կարողանում պատերազմ դուրս գալ մեր դէմ։» Այն ժամանակը բոլոր մոգերը և քաղդէացիք ձայն տուին և ասացին Նոյան «Այն աստուածները, որ քեզ տուեցին տէրութիւն և յաղթութիւն քո բոլոր թշնամեաց վերայ՝ քեզանից ոչինչ չեն պահանջում, բայց միայն ջնջել մարդկանց բոլոր մոլորութեան ուսումն և դարձնել նոցա Զրադաշտական օրէնքին։ Այս բանը շատ հաճելի եղաւ թագաւորին և Նոյա բոլոր նախարարներին և գիտնականներին։ Խորհուրդ արեցին, որ Պահ դուռան մէջ փակեն Հայոց, Վրաց, Աղուանից և բոլոր միւս քրիստոնէից զօրքերը։ Այս պատճառով զոնապաններին սաստիկ հրամայեցին, որ բոլոր Արևելքից դէպի Հարաւ եկողներին թողեն, իսկ Հարաւից դէպի Արևելք գնացողների առաջև դռները փակեն։

Երբ Նոյա փակեց ամուր և անել որոգայթի մէջ, որ իրաւամբ են կոչում ամուր և անել, որովհետև այն տեղ փախչելու և թագ կենալու տեղ չկայ, պատճառ որ չորս կողմում թշնամիք են բընակուած, այն ժամանակը սկսեց զանազան մեծամեծ չարչարանքներով և սաստիկ տանջանքներով նեղացնել Նոյանից շատերին և ստիպել, որ ու-

բանան ճշմարիտ Աստուծոյն և երևելի տարերքը պաշտեն։ Բայց բոլոր զօրականները գեղեցիկ խորհրդով և քաջ զօրութեամբ միաբան ձայն էին տալի և ասում էին «Ահա՛ այս են երկինքը և երկիրը, որ մեք ոչ մի ժամանակ թուլութիւն և անհարազատութիւն չենք ցոյց տուել թագաւորի ծառայութեան մէջ, և մեր քաջութեան մէջ վատութիւն չենք խառնել. այս չարչարանքները, որ մեզ տալիս են իզուր են։ Այս աղաղակի ձայնը օրէցօր աւելանում էր, մինչև թագաւորն ինքը ականատես էր լինում այս յանդիմանութեանը, բայց նա երդվում էր թէ «Զեմ թոյլ տալ ձեզ, մինչև չ՚կատարէք իմ հրամանը»։

Հրամայեց իւր չար ծառաներին տանջելու չորս գլխաւոր և անուանի զօրապետների։ Շատ չարչարելուցը յետոյ, նոցա դրեցին խաւար բանդի մէջ, բայց միւսներին առ ժամանակ առ երեսս թողութիւն տալով, բոլոր վնասների պատճառը կապուածների վերայ ձգեց. այս բոլոր բանը նա կատարում էր սատանայի խրատովը։

Տասն և երկու օրից յետոյ, նա հրամայեց սովորականից աւելի ճոխ և առատ՝ սեղան պատրաստել և կանչեց քրիստոնեայ զօրապետներից շատերին։ Հացկերոյթի ժամանակ նոցա նստացնել տուաւ իւրեանց նշանակեալ տեղերում։ Խօսում էր նոցա հետ սիրով և խոնարհութեամբ, որ գոնէ նոքա ուտեն այն կռապաշտութեան զոհերի մսից, որ քրիստոնեաներին արգելուած էր ուտել։ Երբ որ նոքա յանձն չ՚առան ուտելու, աւելի չ՚ստիպեց նոցա, այլ հրամայեց սովորական կերակուր տալ և

գինուն ուժ տալ։ Երբ նոքա սեղանը վերջանալուց յետոյ՝ դուրս եկան թագաւորական դահլիճը, նոցա մի քանիսին կանգնեցրեցին, ձեռները քամակումը կապելով և խունջաններըը պնդացնելով՝ գրեցին բանդի մէջ, զգուշութեամբ պահեցին, ոմանց երկու օր, իսկ ոմանց երեք։ Այս օրինակ շատ անարժան շարչարանքներ էին տալի, որ արժանի չըհամարեցինք գրել։ Նորանցից շատերին զրկելով իւրեանց աստիճանից՝ աքսորեցին։

Արկին անգամ քրիստոնէից զօրքը բաժանում էին գունդ գունդ և ուղարկում անապատների մէջ գտնուած հեռաւոր երկիրները, թագաւորի թշնամեաց դէմ պատերազմելու։ Նոցանից շատերը այն տեղ սրի կերակուր դարձան։ Նոցա ռոճիկները պակասեցնում էին, քաղցած և ծարաւ շարչարում էին։ Նոցա համար ձմերոց էին նշանակում սարսափելի անապատները և ամեն ազգերի մօտ անարգ և վատթար էին ցոյց տալի նոցա։ Բայց նոքա Քրիստոսի սիրոյ համար, մեծ ուրախութեամբ էին ընդունում այս բոլոր շարչարանքները և համբերում էին այն մեծ յուսով, որ պատրաստած է պատուիրանքները կատարողների և համբերողների համար։ Ինչքան չարութիւնը շատացնում էր անարգութիւն, նոքա այնքան աւելի զօրանում էին Քրիստոսի սիրոյ մէջ, մանաւանդ, որ նոցանից շատերը, մանկութենից ուսել էին սուրբ գրերը, իւրեանց մխիթարում էին, ընկերներին քաջալերում և յայտնի կատարում իւրեանց աստուածպաշտութիւնը։ Այս պատճառով հեթանոսներից շատերը քաջալերում էին նոցա, որոնց ախորժ և քաղցը

էին թվում նոցա խօսքերը և մխիթարում՝ ասելով այս խօսքերը։ «Լաւ է մարդոյ մինչև 'ի մահ համբերել, քան այդպիսի օրէնքը ուրանալ»։

Եվ էպէտ նոքա Քրիստոսի սիրոյ համար շատ ուրախանում էին հոգով, բայց նոցա արտաքին դրութիւնը շատ ցաւալի էր օտարութեան մէջ։ Քրիստոնէից փառաւոր զօրքը հասել էր անպատիւ անարգութեան և հայրենական ազատութիւնը չարաչար ընկել էր մարդասպան բռնաւորի ծառայութեան տակը, որ իւր արիւնհեղութեամբը հեթանոսների օրէնքներից գերազանցվում էր և բոլորովին չէր մտածում, թէ կայ երկնքումը վրեժխնդիր այս բոլոր չարութիւնների։ Նա չէր յարգում ոչ ոքի երկրաւոր աշխատութիւնը, և որ աւելի մեծնէ աշխարհի կարգերի մէջ չէր յարգում բարեկամութիւնը, որովհետև աւելի սաստիկ էր հալածում այն նախարարներին, որոց մայրերը իւրեանց ծծերի կաթով մեծացրել էին նորա եղբայրներին։

Յաղկերտը այս բոլոր չարութիւնների վերայ մի այլ խորամանկութիւն ևս յաւելացրեց։ Իւր հաւատարիմ ծառաներից մինին դենշապուհ անունով ուղարկեց Հայոց երկիրը, որ թագաւորի հրամանով հասանելով այն տեղ և ողջոյն բերելով մեծ թագաւորի կողմից, խաղաղասէր կեղծաւորութեամբ աշխարհագիր էր առնում բոլոր Հայոց երկիրը, իւր թէ հարկը պակասացնելու և զօրքի դրութիւնը թեթևացնելու համար։

Եվ էպէտ նա առ երես կեղծաւորութեամբ էր վարվում, բայց նորա չարութեան ծածուկ խորհուրդները իսկոյն երևում էին։ Նախ՝ եկեղեցու

ազատութիւնը ծառայութեան տակ ձգեց. երկրորդ՝ բոլոր միայնակեցներին, որոնք բնակվում էին վանքերի մէջ մի և նոյն աշխարհագրութեանը ենթադրեց. երրորդ՝ Հայոց աշխարհի հարկը աւելի շատացրեց. չորրորդ՝ խորամանկութենով նախարարներին միմեանց թշնամի շինեց և ամեն տան մէջ անհամաձայնութիւն ձգեց։ Այս բոլորը այն դիտաւորութեամբ էր առնում, որ գուցէ նորանով կարողանայ նոցա միաբանութիւնը քանդել և եկեղեցու ուխտը ցրուել, վարդապետներին փախցնել և հասարակ ժողովրդի կայքը փչացնել, որ սաստիկ աղքատութենից ստիպուած՝ ակամայ ընդունեն մոգութեան օրէնքը։ Բայց աւելի չար էր Դենշապուհի հինգերրորդ խորամանկութիւնը, նա զրպարտութիւն յարուցանելով Հայաստանի կառավարիչ Վահան Ամատունի վերայ, որին աշխարհականները ընդունում էին իբրև հասարակաց վերակացու հայր, զրկեց իւր պաշտօնից և նորա տեղը կարգեց մի Պարսիկ իշխան Մուշկան անունով, և մի մոգպետ, որ դատաւոր լինի Հայոց աշխարհումը, Հայոց եկեղեցու փառքը խաւարեցնելու համար։

Թէպէտ այս բոլոր գործքերը անտանելի էին, բայց տակաւին ակն յայտնի ձեռք չէին տուել եկեղեցուն, այս պատճառով ոչ ոք ընդդէմ չէր կենում նորան, չնայելով որ հարկի ծանրութիւնը անտանելի էր։ Որովհետև որտեղից պէտք էր ստանալ հարիւր արծաթ, նոքա պահանջում էին երկու այնքան։ Նմանապէս պահանջում էին եպիսկոպոսներից և քահանաներից և ոչ միայն շէն երկրնե-

րից, այլ և աւերակներից։ Բայց ո՞վ կարող է պատմել այն հարկի ծանրութիւնը, որ նա դնում էր եկամուտքի, ստանալիքի, սարերի, դաշտերի և հովիտների վերայ։ Նոքա հաւաքում էին ոչ այնպէս, ինչպէս արժան էր թագաւորին, այլ աւազակի պէս յափշտակում էին. ինքեանք ևս զարմանում էին թէ ի՞նչ տեղից է դուրս գալի արդեօք այսքան փողը, կամ ինչպէս կարողէ տակաւին շէն մնալ Հայոց աշխարհը։ Երբ տեսան նոքա, որ այսպիսի բաներով չ՝կարողացան զզուեցնել, այն ժամանակը յայտնապէս հրաման տուին մոգերին ու մոգպետներին գրել իւրեանց մոլոր դաւանութեան համեմատ մի նամակ, որոյ բովանդակութիւնը այս է։

«Մի հրներսէհ վազիր, կառավարիչ (իրանի և տաներանի) Հայոց երևելի մարդկերանցը շատ ողջոյն։ Իմացէ՛ք, որ ամէն մարդ, որ բնակվում է երկնքի տակը և չունի Մազդիշաց օրէնքը, նա խուլ է, կոյր է և խաբուած է Հարևմանի դևերից։ Որովհետև քանի որ տակաւին չ՝կային երկինքը և երկիրը, Զրուան մեծ Աստուածը հազար տարի խաղաղութիւն էր առնում, ասելով, ։-էէ է ինձ որդի ծնվի Որմիզդ անունով, որ կ՝ստեղծէ երկինքը և երկիրը։ Նա յղացաւ երկու որդի, մինը հաշտութիւն առնելու համար, իսկ միւսը ։-էէ է խօսքի համար։ Երբ որ իմացաւ թէ երկուսն են փորումը, ասեց, որը շուտով դուրս գայ, նորան կ՝տամ բոլոր թագաւորութիւնները։ Բայց որը թերահաւատութիւնից էր յղացել, փորը պատռեց ու դուրս եկաւ։ Զրուանը ասեց նորան, «Դու ո՞վ ես», նա պատասխանեց «Ես քո որդի Որմիզդն եմ»։ Զրուա-

նը ասեց իմ որդին լուսաւոր է և անուշահոտ, իսկ դու խաւարային ես և չարասէր։ Երբ որ նա շատ աղիողորմ լացելաւ, հայրը տուեց նորան թագաւորութիւնը հազար տարի ժամանակով և անվանեց նորան Արհմն։ Երբ որ ծնվեց միւս որդին, նորա անունը դրեց Որմիզդ և թագաւորութիւնը իշխելով Արհմնիցը՝ տուեց նորան և ասեց, մինչև այժըմ ես էի քեզ համար խաղաղութիւն առնում, այժմ դու արա ինձ համար։ Որմիզդը ստեղծեց երկինքը և երկիրը, բայց Արհմ նորա ընդդէմ չարութիւն ստեղծեց։ Այսպէս են բաժանվում արարածները. Հրեշակները Որմիզդի ստեղծածն են, իսկ սատանայքը Արհմնի, և բոլոր բարի բաները, որոնք երկնքումն են և երկրումը Որմիզդն է ստեղծել, իսկ բոլոր վնասակար բաները, որոնք երկնքումն են և երկրումը՝ Արհմնո։ Նմանապէս ինչ որ բարի բան կայ երկրումս, այն Որմիզդն է ստեղծել, իսկ ինչ որ չար է Արհմն։ Մարդին Որմիզդը ստեղծեց, բայց հիւանդութիւնը ցաւը և մահը Արհմը։ Ամեն թշվառութիւնները և պատահմունքները, դառը պատերազմները, չարութեան աղբիւրին են ստեղծուած։ Բայց յաջողութիւնները, տէրութիւնները, փառքը, պատիւը, մարմնի առողջութիւնը, դէմքի գեղեցկութիւնը, խօսքի ճարտարութիւնը, երկար ապրիլը՝ բարութեան աղբիւրին են յառաջանում, և ամեն բան, որ բարի չէ, նորա մէջը չարի ստեղծած կայ խառը։

Այն ամեն մարդիկը մոլորված են, որոնք աստուած են, թէ մահը Աստուած ստեղծեց և թէ չարը ու բարին նորանից են յառաջանում, մանաւանդ

ինչպէս քրիստոնեայքն են ասում, թէ Աստուած նախանձոտ է, ծառիցը մի թուղը ուտելու համար, Աստուած մահ ստեղծեց և մարդին նորանով պատժեց։ Այդպիսի նախանձ մարդը անգամ չունէ դէպի մարդը, ուր մնայ, որ Աստուածը դէպի մարդիկը։ Ով որ այս ասում է, նա խուլ է և կոյր և Հարամանի դևիցը խաբուած։

Բայց մի այլ մոլորութիւն ևս պատմում են։ Այն Աստուածը, ասում են, որ երկինքը և երկիրը ստեղծեց, նկաւ և մի կնկանից ծնվեց, որի անունը Մարիամ էր և մարդի անունը Յոսէփ։ Շատ մարդիկ մոլորվել են այսպիսի մարդից։ Եթէ Յունաց երկիրները իւրեանց մեծ յիմարութեամբը տգիտաբար մոլորվել են և զրկվել մեր կատարեալ կրօնիցը, իւրեանց անձին են վնաս պատճառում, դուք ևս ինչի էք նոցա մոլորութեան հետ ցնորվում, այլ ինչ օրէնք, որ ձեր տէրը ունէ, մի և նոյնը դուք ընդունեցէք, մանաւանդ որ Աստուծոյ առաջև պետք է համար տանք ձեզ համար։

Մինք հաւատալ ձեր առաջնորդներին, որոնց նաղովլեցի էք անվանում, որովհետև շատ խաբեբայ մարդիկ են, ինչ որ խօսքով սովորցնում են, գործքով չեն կարող կատարել։ Ասում են միս ուտելը մեղք չէ, բայց ինքեանք չեն ուտում. ասում են կին առնել հարկաւոր է, բայց իւրեանք նոցա վերայ նայել անգամ չեն կամենում։ Ով որ հարստութիւն է ժողովում, ասում են շատ մեղք է, բայց աղքատութիւնը չափից դուրս գովում են։ Յարգում են թշուառութիւնքը և անպատվում յաջողութիւնքը, ծաղրեն անում բաղդի վերայ և

ծիծաղում են փառաւորութեան վերայ, սիրում են հասարակ շորը, և յարգում են անարգ բաները աւելի, քան պատուականները։ Գովում են մահը, անարգում են կեանքը, անարգում են մարդոյ ծընունդները, գովում են անորդիութիւնը։ Եթէ մարդ լսէ դոցա և կնոջ չմերձենայ, շուտով աշխարհը կ՚վերջանայ։

Եւ չ՚կամեցայ ամեն բան մանրամասն գրել ձեզ, ինչ որ ասում են դոքա, որ աւելի վատ են, քան ինչ որ գրել ենք։ Նոքա քարոզում են թէ Աստուածը մարդկերանցից խաչվել է, մեռել է, թաղվել է և յետոյ յարութիւն է առել և վերացել է երկինքը։ Մի՞թէ արժան չէր, որ դուք ինքներդ դատապարտէք այդպիսի անարժան ուսումը։ Դևերը, որ չար են, մարդկերանցից չեն բռնվում և տանջվում, ուր մնայ Աստուածը, ամեն բանի ստեղծողը, որ ձեզ ամօթէ այդպէս ասել և մեզ շատ անհաւատալի բան։ Այժմ երկու ճանապարհկայ ձեր առաջև, կամ այս նամակիս շուտով մանրամասնաբար պատասխան տուէք կամ շուտով եկէք թագաւորի դուռը, ներկայ գտնուելու այն մեծ դատաստանին, որ սպասում է ձեզ։

Այն եպիսկոպոսների անունները, որ պապոսխանէին այն նամակին։ Այրարատայ Յովսէփ եպիսկոպոս, Տարօնի Սահակ եպիսկոպոս, Մանազկերտի Մելիտ եպիսկոպոս, Բագրևանդայ Եզնակ եպիսկոպոս, Բզնունեայ Սուրմակ եպիսկոպոս, Տայոց Տաճատ եպիսկոպոս, Բասենոյ Թաթիկ եպիսկոպոս, Տարուբերանի Քաւու եպիսկոպոս, Մարդաստանի Երեմիա եպիսկոպոս, Մարդուզոյ Եղշալի եպիսկոպոս, Սիւ-

նեաց Անանիա եպիսկոպոս, Արծրունեաց Մուշէ եպիսկոպոս, Ռըշտունեաց Սահակ եպիսկոպոս, Մոգաց Բասիլ եպիսկոպոս, Վանանդայ Գագիկ եպիսկոպոս, Ամատունեաց Եղիշայ եպիսկոպոս, Անձևաց Եղբայր եպիսկոպոս, Ապահունեաց Երեմեա եպիսկոպոս։

Այս բոլոր եպիսկոպոսները և շատ քորեպիսկոպոսներ և պատվական քահանայք զանազան տեղերից եկեղեցու սուրբ միաբանութեան հետ միաբան և միասիրտ ժողովեցան Արտաշատ թագաւորանիստ քաղաքումը և մեծամեծ նախարարների և բոլոր ժողովրդի համաձայնութեամբ պատասխան գրեցին այն վերոյիշեալ նամակին։

ՅՈՎՍԷՓ եպիսկոպոսը բոլոր միաբանութեան հետ միասին մեծիցը սկսած մինչև փոքրը, խաղաղասէր մտքով ողջունում է Պարսից և Հպատակ ազգերի Մի Հրներսէհ հաղարապետիդ և Պարսից բոլոր քաջ զինվորականներին։ Մենք սովորութիւն ունենք մեր նախնիքներից Աստուածադիր պատուիրանին համաձայն, աղօթել թագաւորի համար, միշտ Աստուածանից խնդրել, որ դորան երկար կեանք պարգևեն, որ խաղաղութեամբ կառավարէ այն տիեզերական իշխանութիւնը, որ Աստուած յանձնել է դորան, որ և մենք դորա երկարատև խաղաղութեան մէջ առողջութեամբ և աստուածպաշտութեամբ վերջացնենք մեր կեանքը։

Այն նամակին, որ դուք գրել էիք, կարող ենք պայպէս պատասխանել։ «Արդէն բաւականի ժամանակ առաջ, ձեր մոգպետներից մինը, որ աւելի կատարեալ գիտէր ձեր կրօնը և դուք նորան մարդ-

կային բնութիւնից բարձր էիք համարում, հաւատաց երկրի և երկնքի ստեղծող կենդանի Աստուծուն և մանրամասնաբար բացադրեց և ցոյց տուեց ձեզ ձեր օրէնքները։ Երբ որ չ՝կարողացան պատասխանել, Ովմիզդ թագաւորը քարկոծելով սպանել տուեց նորան։ Եւ եթէ կամենում է.ք մեր խօսքերը լսել, կարդացէ.ք նորա գրքերը, որոնցից ձեր կողմերումը շատ կան և կ՝տեղեկանաք այն տեղից։

Իսկ ինչ որ վերաբերում է մեր կրօնին, նա մի ծածուկ և մասնաւոր աշխարհի աղանդ չէ, այլ ընդհակառակը տարածված է աշխարհի բոլոր կողմերը, ծովի, ցամաքի և կղզիների վերայ, ոչ միայն Արևմտքումը, այլև Արևելքումը, Հիւսիսումը, Հարաւումը և բոլոր տեղերքը լինեն քրիստոնէից բազմութեամբ։ Մեր կրօնը մարդկային օգնութեան չէ կարօտ, որ նորանով տարածվի աշխարհի վերայ, այլ նորա հաստատութիւնը իւր մէջն է։ Զէ թէ այլ դաւանութիւնները վատեն, այդ պատճառով նա լաւ է երևում, ոչ, նա երկնքիցն ունէ իւր անսուտ օրէնսդրութիւնը և ոչ մարդկային միջնորդութեամբ, որովհետև Աստուած մի է և բացի նորանից ոչ ոք չկայ, ոչ մեծ և ոչ փոքր։ Ո՛չ թէ ուրիշներն է առել իւր սկիզբն և դարձել Աստուած, այլ ինքը ըստ ինքեան մշտնջենաւոր է, ոչ թէ բարունակվում է տեղի մէջ, այլ ինքը իւր համար տեղի է, ոչ ժամանակի մէջ, որովհետև ժամանակները նորանից են ստեղծվել։ Ոչ միայն առաջ է եղել քան երկինքը այլև անհասանելի է մարդկանց և հրեշտակների մտքին։ Նա չէ ձևանում տարրերէն տեսիլքով, ոչ մի աչք նորան չէ կարող տեսա-

նել, ոչ մի ձեռք նորան չէ կարող շոշափել և ոչ մի մարդկային և հրեշտակային միտք չէ կարող հասանել նորան. իսկ եթէ ինքն Աստուած կամենում է, յայտնվում է իւր արժանաւորների մտքին, բայց առանց մարմնաւոր աչքին երևելու. և երևում է ոչ երկնաւորների մտքին, այլ նորանց, որոնք ճըշմարտութեամբ հաւատացել են Աստուծոյն։

Նորա անունը երկնքի և երկրի Արարիչ է, բայց երկնքի և երկրի ստեղծելուց յառաջ, նա ինչպէս ինքնագոյ էութիւն ինքնանուն է։ Ինքն անժամանակ է, բայց երբ կամեցաւ՝ արարածներին սկիզբը տուեց՝ ոչ թէ ընչից, այլ ոչընչից, որովհետև միայն նա էինչ, իսկ բոլոր բաները նորանից գոյացան։ Ո՛չ թէ յետոյ իմացաւ և ստեղծեց, այլ քան նոցա ստեղծելը իւր նախատես գիտութեան մէջ տեսանում էր արարածներին. ինչպէս և այժմ, քանի որ մարդ տակաւին չէ գործել չար կամ բարի՝ Աստուծոյն յայտնի են մարդկերանց տակաւին չ՝գործված գործքերը։ Այսպէս և այն ժամանակը, քանի որ դեռ ստեղծված չէին արարածները, Աստուած իմանում էր, ոչ թէ խառն 'ի խուռը, այլ իւրաքանչիւր մասների տեսակները կարգով և յարմարած դրուած էին նորա առաջև, թէ մարդկերանց, թէ հրեշտակների, և բոլորը ինչ որ այդ տեսակներից պէտք է ստեղծվէին։

Որովհետև Աստուած ստեղծող զօրութիւն է, այս պատճառով մեր չարութիւնը չէր կարող խափան լինել նորա բարերարութեանը, ինչպէս և եղաւ իսկ. մեր գատաւորը ստեղծող Աջնէ։ Այն ձեռքերը, որ երկինք և երկիր հաստատեցին, նոյն

ձեռքերը քարեղէն տախտակների վերայ փորագրեցին խաղաղական և փրկաւէտ օրէնքներ, և տուեցին մեզ սովորելու, որ ճանաչենք մի Աստուած երևելի և աներևոյթ արարածների ստեղծող, ոչ այլ և այլ Աստուած, մինը բարի, իսկ միւսը չար, այլ մի և նոյն և բոլորովին բարի։ Բայց եթէ դու կարծում ես, թէ Աստուծոյ արարածների մէջ կան և չարերը, համարձակ ասա, որ կարողանաս իմանալ ճշմարիտ բարին։ Ասում ես գևերը չար են, կան և բարի գևեր, որոնց դուք և մենք հրեշտակներ ենք անվանում. եթէ գևերը կամենան կարող են բարի լինել և եթէ հրեշտակները կամենան կարող են չար լինել։ Այդ բանը տեսնում ենք մարդկանց մէջ ևս և աւելի մի հօր որդիքների մէջ։

Կայ այնպիսի որդի, որ իւր հօրը հնազանդ է, կայ և այնպիսին, որ աւելի չարէ քան սատանան։ Նաև մի և նոյն մարդը երևում է երկու բաժանված, երբեմն չար և երբեմն բարի։ Նա, որ բարի էր՝ չարացաւ, եկաւ ժամանակ, որ կրկին բարի դարձաւ, բայց բնութիւնը մնաց մի և նոյն։

Բայց որ ասում ես, թէ Աստուած մի թզոյ համար մահ ստեղծեց, պատասխանում եմ, մի կըտոր մսագաղաթը աւելի հնչին բան է քան թռչունը, բայց երբ թագաւորի խօսքը նորա վերայ գրվում է, այն ժամանակը ով որ նորան պատառում է՝ մահու պատուհաս է ընդունում։ Բայց կարելի՞ է ասել թագաւորին չար, քաւ լիցի, ես չեմ ասում։ Աստուած այն ժամանակը կ՚լինէր նախանձոտ, եթէ չ՚էր պատվիրել չուտել այն ծառիցը. բայց երբ նա առաջուց զգուշացրեց, դորանով բնական սիրոյ

գութը ցոյց տուեց մարդուն, բայց մարդը արհամարհելով նորա գութը՝ ընդունեց մահու պատիժ։

Այն՝ որ ասում ես, թէ Աստուած կնոջից ծընվեց, քեզ արժան չէր այդ խօսքից զզուել և փախչել, որովհետև ահա Արհմն և Որմիզդը հօրից ծընվեցան և ոչ մօրից, որ եթէ դու ինքդ լաւ մտածես, չես հաւատալ։ Բայց մի աւելի ծիծաղելի բան ևս պատմում է.ք։ Ասում է.ք Մի՛հր Աստուածը կնկանից ծնվեց, մի՞թէ կարելի է որդուն ծնողի հետ ունենալ ամուսնական յարակցութիւն։

Բայց եթէ փոքր ժամանակ մի կողմ դնէիր .քո իշխանութեան մեծութիւնը և ընկերաբար վիճէիր մեզ հետ, գիտեմ, թէպէտ այլ միւս բաներով դու աւելի իմաստուն ես, բայց Քրիստոսի ծնվիլը սուրբ կուսից՝ աւելաբանութիւն չէիր համարիլ, այլ աւելի .քան աշխարհի ոչնչից ստեղծվիլը, վերջին փրկութիւնը և մարդոյ Աստուծոյ բարութեամբ մեղքից ազատուիլը կ՚համարէիր։

Երբ ասում ենք թէ Աստուած բոլոր աշխարհը ստեղծեց ոչընչից, կամենում ենք ասել, որ արարածները նորա խօսքի ծնունդներն են։ Բայց Աստուած, որ այս մեծ մարմինը առանց չարչարանքի ծնեց ուրեմն ինչպէս հայր գութ ունի սորա վերայ։ Որովհետև նա որ անապական է, աշխարհը ևս անապական ծնեց. բայց մարդը իւր կամքով գլորվեցաւ, ընկաւ ապականութեան մէջ և չեր կարողանում առանց օգնութեան վերատին կանգնել։ Եւ որովհետև ստեղծված էր հողից, վասն որոյ կըրկին հող դարձաւ. այս պատիժը մարդը ընդունեց ոչ թէ մի այլ չար զօրութենից, այլ իւր ծոյլու-

թենից, որ չ՝լսեց իւր բարերարի պատուիրանը, նորա ծառայական մասը պատժվեցաւ մահով՝ որ իւր մէջը ունէր։

Եթէ մահը չար Աստուածը ստեղծեց, ի՞նչ է ուրեմն մահու գոյութիւնը, տեսանելի բան է արդեօք, ՝ի հարկէ ո՛չ, բայց բարի Աստուծոյ արարածներին ոչընչացրեց։ Եթէ այդ բանը այդպէս է, ուրեմն նորան չէ կարելի բարի ասել, այլ կիսագործ մահկանացու։ Այն Աստուծոյ ստեղծվածները, որ ապականելի և անցաւոր են, նորան չէ կարելի անմահ ասել։ Տի՛ օն անդր, թողէ՛ք ձեր յիմարութեան խօսքերը։

Ա՞ի աշխարհում երկու տիրապետող չէ լինում, և ոչ մի արարածի համար՝ երկու Աստուած։ Եթէ յանդգնին և երկու թագաւոր նստեն մի աշխարհում, աշխարհը կաւերվի և թագաւորութիւնները կ՝քանդվին։ Աշխարհը նիւթեղէն է և նիւթերը միմեանց հակառակ որոշ որոշ բաներ են։ Հակառակ նիւթերի ստեղծողը մին է, որ նոցա պահպանում է ներդաշնակութեան մէջ։ Ինչպէս կրակի տաքութիւնը չափաւորվում է օդի զօրութենով և օդի յանդուգնատանութիւնը կրակի ջերմութենով, այսպէս և մանր փոշի դարձած հողը ջրի նամութենից շաղախվում է, բայց ջրի յեղ յեղուկ բնութիւնը հողի հետ խառնվելով պընդանում է։

Եթէ տարերքը միաբանվէին, կարելի է կարծամիտներիցը մինը նորանց Աստուած համարէր և Արարիչը թողած՝ արարածներին երկրպագութիւն տար, այս պատճառով նա՝ որ սոցա ստեղծեց,

առաջուց զգուշացաւ, որ մարդիկ նայելով ապա-
կանացու տարերքների հակառակ ներգործու-
թեանց վերայ, միայն նոցա կառավարողին համար
են անապական էակ և այն՝ մի և ոչ երկու։ Ճանա-
չէին նոյն ստեղծողին չորս նիւթերի, որոնցից ա-
մեն բան ծնվում է իւրեանց Արարչի հրամանով։

Չորս եղանակները շրջան կատարելով բաղ-
կացնում են տարի, նայելով իւրեանց Արարչի հր-
րամանին, որ նոցա իրրև անզգայ տարերքներ գործ
է դրել իւրեանց պաշտօնը կատարելու, առանց մի-
մեանց կարգի պատիւը յարիշտակելու։

Ահա պարզ լուսաւորութիւն, որ հեշտ կարող
են լսել ամենի ականջները։ Կրակը իւր զոյութե-
նով և զօրութեամբ խառնված է միւս երեք տա-
րերքների հետ. շատ տաքութիւնը գտանվում է քա-
րերի և երկաթների մէջ, իսկ փոքր տաքութիւնը
օդի և ջրի մէջ, բայց ինքը տաքութիւնը առանձին
ոչ մի տեղ չէ երևում։ Իսկ ջուր կայ իրրև առան-
ձին մարմին, կայ նմանապէս բաղկացած միւս երեք
մասներից. նորա մեծ մասը գտնվում է բոյսերի
մէջ, իսկ փոքր մասը օդի և կրակի։ Օդը մտնում
է կրակի և ջրի մէջ և ջրի հետ մտնում է աճեցա-
կան կերակուրների մէջ։

Այսպէս տարերքը միմեանց հետ խառնվելով
բաղկացնում են մի մարմին, չեն կորցնում իւրեանց
սեփական յատկութիւնները և երբէք մինը հա-
կառակելով չէ բաժանվում միւսից, կատարելով
այն անխառն իշխողի հրամանը, որ խառնված բա-
ները յարմարեցնելով պատրաստում է ամեն կեն-

դանեաց բնակութեան համար և բոլոր աշխարհի գեղեցկութեան համար։

Եթէ Աստուած անբան աշխարհի համար այսպէս հոգս է քաշում, ո՞րչափ աւելի հոգս է քաշում բանաւոր աշխարհների համար, այսինքն մարդկերանց։ Ձեր քաջ իմաստուններից մինը ասեց, թէ Մինչ Աստուածը ծնվել է կնոջից, որ մարդկային ցեղից է, բայց թագաւոր է, Աստուծոյ զաւակ և քաջ ընկեր եօթներորդ կարգի աստուածների։ Եթէ դուք արժան է.ք համարում հաւատալ այն առասպելաբանութեանը, որ կայ ձեր կրօնի մէջ և գործով ևս կատարում է.ք, մենք բոլորովին չենք հաւատում, որովհետև մենք Մովսէս մեծ մարգարէի աշակերտներն ենք, որի հետ Աստուած խօսեց Սինայումը մորենու միջից, և որի յանդէպը գրեց օրէնքներ և տուեց նորան ցոյց տալով, որ նիւթեղէն աշխարհը արարած է. իսկ իւր աննիւթ էութիւնը բոլոր նիւթերի ոչընչից ստեղծող է։ Աստուած ցոյց տուեց նորան երկիրը երկրային բաներովը, իսկ երկինքը երկնային բաներով, որ նորա ստեղծվածներն են։ Երկնքի բնակիչները հրեշտակները են, երկրի բնակիչները մարդիկ, բանաւոր միայն մարդիկ են և հրեշտակները, բայց Աստուած անչափ բարձր է երկրիցը և երկնքիցը։

Մեն արարածները անխոտ կատարում են Աստուծոյ հրամանը, երբէ.ք չեն դուրս գալի իւրեանց նշանակեալ սահմանից, բայց մարդը և հրեշտակը ազատ թողած են իւրեանց կամքին, որովհետև խելք ունին, եթէ կ՚կատարեն նորա հրամանը՝ կըլինին անմահ և Աստուծոյ որդիք։ Բոլոր արարած-

ները տվել է ծառայութեան համար, երկիրը տուել է մարդկերանցը, իսկ երկինքը՝ հրեշտակներին։ Եթէ չ՝լսեն և չ՝կատարեն Աստուծոյ հրամանը և նորա ընդդէմ գործ կատարեն, ամենը կ՝զրկուին իւրեանց պատուիցը, որ երևի նորա տէրութիւնը արդար, իսկ մեղաւորները երևին ամօթալից։

Բայց եթէ դու տգիտութեան մէջ մոլորվել ես, ես որ հաստատ իմանում եմ ճշմարիտն, չեմ կարող քո մոլորութեանը հետևիլ։ Եթէ լսեմ քո անուսումնականութեանը, երկուսս ես միասին անտառնալի կորստի մէջ կ՝ընկնինք, բայց ես քեզանից աւելի՝ որովհետև վկայ ունիմ Աստուծոյ սասած խօսքը։ «Այն ծառայն, որ չէ իմանում իւր տիրոջ կամքը և ծեծվելու արժանի գործ է կատարում, փոքր ծեծ կուտէ, բայց նա՝ որ իմանում է իւր տիրոջ կամքը և չէ կատարում, շատ կ՝տանջուի եթէ բարեխօս չունենայ։

Այժմ աղաչում եմ քեզ և բոլորին, որոնք քո իշխանութեան տակ են, ո՛չ դու ինձ հետ շատ տանջվիր և ոչ ես քեզ հետ փոքր տանջվիմ, այլ ես և դու և քո բոլոր մարդիկը քաջ թագաւորի հետ միասին հետևենք աստուածային գրքերին, որ ազատուինք տանջանքիցը, արհամարհենք դժոխքը, ազատվենք անհանգչելի կրակիցը, ժառանգենք արքայութիւնը և անցաւոր կեանքով՝ անանցանելի մեծութիւնը ձեռք բերենք։ Բայց ինչից որ դու վախում ես, ընդունիր նորան և շուտով կ՝հետևիս ճշմարտութեանը։

Երեշտակներից մինը ամահների ժողովրդիցը ապստամբվելով՝ երկնքիցը հեռացաւ, եկաւ մեր

աշխարհը, խաբեբայ խօսքերով և սուտ խոստմունքներով անլինելի յոյսեր տվեց անփորձ և անկիրթ նորաստեղծ մարդին, նորա միտքը համոզեց ինչպէս մի մանուկ երեխայի, որ եթէ ուտէ այն ծառի պտուղից, որին Աստուած արգելել էր մօտենալու, իսկոյն Աստուած կդառնայ։ Մարդը մոռանալով Աստուծոյ պատվիրանը և լսելով նորա մոլոր խաբէութիւնը, կորցրեց այն անմահութեան փառքը, որ ունէր և չ՝հասաւ իւր երազայոյս ակնկալութեանը։ Այս պատճառով արտաքսելով դրախտից, ընկաւ այս ապականելի աշխարհը, որի մէջ ընակված է.ք այժմ և դուք և ցնորված մոլորվում է.ք նոյն չար խրատ տվողի խօսքովը, ոչ թէ արգելված ծառի պտուղը չ՝ուտելով՝ այլ արարածներին Աստուած կոչելով՝ անբան տարերքներին երկրապագութիւն տալով՝ անփոր գևերին կերակուր տալով և բոլոր բաների ստեղծողից չընդունելով։

Չար խրատ տվողը չէ դադարում, այլ կամենում է մարդկերանցը աւելի չարացնել .քան ինքը, որովհետև գևերը մարդուն բռնութեամբ չեն տանում դէպի կորուստը, այլ մեղ.քերը .քաղցր բաներ են ցոյց տալի նորան։ Եւ անուսումն մարդկերանցը աղաչելով խաբում են, ինչպէս շատ մարդիկ իւրեանց ընկերներին համոզում են դէպի գողութիւն և աւազակութիւն, ոչ թէ բռնութեամբ են գործել տալի չարութիւն այլ սուտ խաբէութեանով ոմանց դէպի կախարդութիւն շարժելով, ոմանց դէպի պոռնկութիւն և ոմանց դէպի շատ անթիւ կեղտոտ բաներ։ Եւ արդար դատաւորները նոցա պատժում են մահով, բայց ոչ թէ բարի Աստուծոյ ըս-

տեղծված դատաւորները բարի են, իսկ չար Աստուծունը՝ չար, ոչ, որովհետև շատ անգամ բարի մարդիկ չարանում են, իսկ չարերը կրկին կատարեալ բարի դառնում։

Այն ճշմարիտ դատաւորները, որ պատժում են չարագործներին, ոչ թէ չար և չարչարող մարդիկ են, այլ շատ բարի և բարեգործ։ Նոցա բնութիւնը մի է և ոչ երկու, բայց այն մի բնութենից դուրս են գալի երկու տեսակ գործեր, ոմանց սատկեցնող, իսկ ոմանց պարգև տուող։ Եթէ մարդիկ այս բանը կատարում են թագաւորի հրամանով նորա տէրութիւնը լաւ կառավարելու համար, ինչքան աւելի կ'կամենայ խնամ տանել բոլոր աշխարհին այն Աստուածը, որ ամենի ապրիլն է ցանկանում և ոչ թէ մահը։ Որոնք շատ մեղքեր գործեցին ամենին մահով պատժեց, իսկ որոնք հնազանդութիւն ցոյց տուին նոցա ընծայեց անմահութեան պարգև։

Նա է ճշմարիտ Աստուածը և մեր բոլորի Արարիչը, որին դու անսանձ բերանով, անահ և աներկիւղ, համարձակ հայհոյում ես։ Թողելով «Յիսուս Քրիստոս» փրկական անունը, Բանթորակայ որդի ես անվանում նորան և համարում ես մոլորեցնող մարդ, արհամարհում ես և անարգում երկրաւոր փրկութիւնը քո անձի և այս աշխարհի կորստի համար։ Աստուծոյ անանցանելի վրէժը, նորա փոխարէնը կպահանջէ քեզանից, և քո բոլոր առաջին, միջին և վերջին գործակալներից ըստ պառնացող գեհենի անհանգչելի կրակի մէջ։

Բայց մեք այսպէս ենք ճանաչում Աստուծուն և սորան աներկբայ հաւատում ենք։

Նա՝ որ ստեղծեց աշխարհը, առաջուց յայտնըվեց մարգարէից և եկաւ ծնվեց սուրբ կոյս Մարիամիցը առանց որ և իցէ մարմնաւոր ներգործութեան։ Ինչպէս ոչընչից ստեղծեց այս մեծամարմին աշխարհը, այնպէս առանց որ և իցէ մարմնային միջնորդի առաւ անփորձ կուսիցը ճշմարիտ մարմին և ոչ ըստ երևութին։ Նա ճշմարիտ աստուած էր, դարձաւ ճշմարիտ մարդ։ Ոչ մարդ դառնալու ժամանակը կորցրեց իւր աստուածութիւնը և ոչ Աստուած մնալու ժամանակը ոչընչացրեց իւր մարդկութիւնը, այլ նոյն է և մի։

Բայց որովհետև չէինք կարող տեսանել անտեսանելուն և մօտենալ անմօտենալուն, վասն որոյ եկաւ մեր մարդկութեան մօտ, որ մենք ևս գնանք նորա աստուածութեան մօտ։ Նա անպատվութիւն չ'համարեց հագնելու իւր ստեղծած մարմինը, այլ պատվեց նորան ինչպէս իւր աստուածաստեղծ գործ։ Ո՛չ թէ փոքր առ փոքր պարգևեց նորան անմահութեան պատիւ, ինչպէս անմարմին հրեշտակներին, այլ միանգամայն բոլոր բնութիւնը մարմնով, շնչով և հոգով հագաւ և միաբանեց աստուածութեան հետ, և եղաւ միութիւն և ոչ երկութիւն և այսպէս մի աստուածութիւն ենք ճանաչում, որ կար աշխարհիցը առաջ և որ կայ այսօր։ Այս Յիսուս Քրիստոսը, որ իւր մարմնովը փրկեց բոլոր աշխարհը, իւր կամքովը եկաւ մեռնելու և ինչպէս ինքը աստուածութիւնը կամեցաւ, այնպէս թանձրացաւ անարատ կուսիցը,

ծնվեց, խանձարուրի մէջ պատվեց, դրվեց մսուրի մէջ, շարժեց մոգերին արևելքից գալ Իւրեան երկրպագութիւն տալու, ինչպէս երեխայ սնունդ առաւ կամաց, զարգացաւ, մեծացաւ երեսուն տարի և մկրտվեցաւ ամուլորդի Յովհաննէսից Յորդանան գետումը։ Մեծամեծ հրաշքներ գործեց Հրէից մէջ, մատնվեց քահանաներից և դատապարտվեց Պօնդացի Պիղատոսից։ Խաչվեց, մեռաւ, թաղվեց, երրորդ օրը յարութիւն առաւ, երևեց իւր տասներկու աշակերտներին և միւս շատերին, որոնք հինգ հազարից աւելի էին։ Եւ քառասուն օր նոցա հետ շրջեց յետոյ երկինքը վերացաւ Զիթենեաց սարից իւր աշակերտների առաջև, բարձրացաւ և նստեց իւր Հայրական աթոռի վերայ։ Խօստացաւ երկրորդ անգամ գալ, ահաւոր զօրութենով՝ վերկացնելու մեռածներին, նորոգելու բոլոր աշխարհը, արդար դատաստան առնելու արդարների և մեղաւորների մէջ, պարգև տալու արժանաւորներին և պատժելու այն չարագործներին, որոնք այս բոլոր բարերարութիւններին չեն հաւատում։

Ո՛չ ոք չէ կարող մեզ հեռացնել այս հաւատից, ո՛չ հրեշտակները, ո՛չ մարդիկ, ո՛չ տուրը, ո՛չ կրակը, ո՛չ ջուրը և ոչ մի դառը չարչարանք։ Մեր բոլոր կայքը և ստացվածքը քո ձեռին են և մեր մարմինները քո առաջև, ինչպէս կամենում ես այնպէս արա։ Եթէ այս հաւատի մէջ կ'թողես մեզ, երկրի վերայ քեզ այլ տիրոջ հետ չենք փոխիլ և երկնքում էլ այլ Աստուած չենք փոխիլ Յիսուսի Քրիստոսի հետ, բացի որից Աստուած չ'կայ։

Իսկ եթէ այս մեծ վկայութենից յետոյ՝ այլ բան կ՚հարցանես, մենք պատրաստ ենք մեր բոլոր մարմինները տալ քո ձեռը, շուտով արա՛ այն, ինչ որ կամենում ես։ Քեզանից տանջանք, մեզանից յանձնառութիւն։ Քեզանից սուր, մեզանից պարանոցներ։ Մենք մեր նախահայրերիցը լաւ չենք, որ այս վկայութեան համար վայր դրեցին իւրեանց ստացվածքը, կայքը և մարմինները։

Եթէ մենք լինէինք նաև անմահ և հարկ լինէր Քրիստոսի սիրոյ համար մեռնել՝ արժան էր. որովհետև նա ևս անմահ էր, բայց այն քան սիրեց մեզ, մինչև մահ յանձն առաւ, որ մենք նորա մահովը յաւիտենական մահից ազատվինք։ Եւ եթէ նա իւր անմահութիւնը չինայեց. մենք որ կամաւ մահկանացու դառանք, կամաւ կ՚մեռնենք նորա սիրոյ համար, որ նա կամաւ ընդունի մեզ իւր անմահութեան մէջ։ Կ՚մեռնենք ինչպէս մահկանացու, որ ընդունի մեր մահը ինչպէս անմահների մահ։

Բայց դու այս բոլոր բաների համար մեզ կրկին մի հարցանել, որովհետև մեր հաւատոյ դաշը մարդոյ հետ չէ, որ երեխայի պէս խաբվենք, այլ Աստուծոյ հետ անխզելի կերպով, որին անհնար է կտրել և դուրս գալ, ոչ այժմ, ոչ յետոյ, ոչ յաւիտեան և ոչ յաւիտենից յաւիտեան։

Բոլոր բազմութիւնը, մեծերից սկսած մինչև փոքրերը միաբանվեցին անսուտ երդումով վկայութիւն տուեցին, կեանքով և մահով հաստատուն մնալ այս վկայութեան մէջ։

Երբ որ այս նամակը հասաւ Պարսից արքայաբանը և կարդում էին մեծ դահլիճի մէջ բանակի բոլոր բազմութեան առաջև, նոցանից շատերը, երբ լսում էին զովում էին այն պատասխանները։ Եւ թէպէտ վախենում էին տէրութեան ահից, բայց ծածուկ միմեանց հաղորդում էին այս զովութիւնը, և աւելի զարմանում էին աներկիւղ համարձակութեան վերայ քան ճարտարութեան։ Շատերը վախեցած քրիստոնեաներից, սկսեցին կրկին քաջութեամբ զինվորվիլ։ Մի և նոյն շշնջիւնը լսվում էր ամենի բերանից։

Բայց չարասէր մոգպետը մեծ հաղարապետի հետ միասին դուրս ցայտքեց իւր չարախօսութիւնը և վառեց թագաւորին անհանգչելի կրակի պէս։ Սկսեց կրճտեցնել ատամները ինչպէս մահի դուռը հասած վիրաւոր. և յայտնի ձայն տվեց մեծ հրապարակի մէջը՝ ասելով «Ես իմանում եմ մարդկերանց բազմութեան չարութիւնը, որոնք չ՝հաւատալով մեր օրէնքներին, անդառնալի մոլորվել են կախարդութիւններից։ Ես իմ մտքումն դրել եմ ոչ ոքի չ՝ազատել մեծամեծ տանջանքներից, մինչև ակամայ չ՝հեռանան այնպիսի սուտ օրէնքից։ Եթէ նոցանից ոմանք շատ մերձաւորներիցս էլ լինին, մի և նոյն կերպով կ՝վարվիմ և նոցա հետ։

Այն ժամանակը մի ծեր բարկացած ասեց թագաւորին. «Ինչի՞ համար ես այդքան տրտմում, եթէ նոյն իսկ Յունաց կայսրը չ՝է դուրս գալի քո հրամանից և Հոները քո իշխանութեան տակն են, ինչ մարդ երկրի վերայ կարէ ընդդիմանալ քո հրամանին։ Իշխանաբար հրամայիր քո տէրութեան

մէջը և ինչ որ կամենաս շուտով կ՚կատարվի։ Իսկոյն թագաւորը ներս կանչելով իւր գրագրին՝ հրամայեց մի հրովարտակ գրել, ոչ սովորական կերպով, այլ բարկութեամբ իւր ատելի և անպիտան մարդկերանց մօտ. բոլորովին չ՚յիշելով տիրաւէր մարդերի մեծամեծ աշխատութիւնները, այլ միայն հրաման տվեց կոչել անուն անուն այն մարդկերանցը, որոնց ինքը ճանաչում էր։ Նոցա անունները սոքա են։ Սիւնեաց ցեղիցը Վասակ, Արծրունեաց ցեղիցը Ներշապուհ, Ռշտունեաց ցեղիցը Արտակ, Խորխոռունեաց ցեղիցը Գաղէշոյ, Մամիկոնեանց ցեղիցը Վարդան, Մոկայ ցեղիցը Արտակ, Ապահունեաց ցեղիցը Մանէճ, Ամատունեաց ցեղիցը Վահան, Վահեւունեաց ցեղիցը Գիւտ, Անձևացւոց ցեղիցը Շմաւոն։

Այս նախարարներին անուն անուն կոչեցին թագաւորի դուռը։ Նոցա կէսը արդէն նորա մօտ էր բանակի մէջ, ոմանք հիւսիսային կողմերումն տէրութեան սահմանը պահպանում էին Հոներիցը, իսկ ոմանք մնացել էին Հայոց երկրումը։

Իսկէստ նոքա բոլորը միասին չէին, բայց առաջուց իմանալով չար բռնաւորի խորհուրդները, հեռաւորներին ևս համարում էին միատեղ և միմեանց մօտ։

Նոքա Յովսէփ եպիսկոպոսի ներկայութեամբ մի և նոյն ուխտի մէջը հաստատվելով՝ զանազան տեղերից գնացին թագաւորական դուռը։ Շատ շտապում էին տեսանելու իւրեանց եղբայրներին, որդկերանցը և սիրելի դահեկանունդ բարեկամներին, որոնք մեծ նեղութեան մէջ չարչարվում

էին։ Այս պատճառով Նոքա իւրեանց անձը մատ-
նեցին մահու, բոլորովին չ՝վախելով տկար թու-
լասիրտների նման, այլ մեծ քաջութեամբ զօրաց-
նում էին իւրեանց անձը, որ գուցէ կարողանան նո-
ցա փրկել մեծամեծ տանջանքներից։ Երբ որ հա-
սան Նոքա արքայարանը, զատկի մեծ շաբաթ օրը
ներկայացան մեծ թագաւորին։

Եվ էպէտ Նոքա տեսանում էին իւրեանց եղբայր-
ները մեծամեծ նեղութեանց մէջ, որ Քրիստոսի ա-
նուան համար քաջութեամբ տանում էին, բայց
բոլորովին իւրեանց չէին ցոյց տալի ժողովրդին
տրտում և տխուր։ Եւ ինչքան որ Նոքա զուարթ
էին երևում ամենի առաջև, այնքան չաթաէրները
զարմանում էին։

Առաջվայ ժամանակից սովորութիւն էր, երբ որ
Հայոց երկրից հեծելազօր էր գալի թագաւորա-
կան դուռը, թագաւորը ուղարկում էր մի պատուա-
ւոր զօրավար նոցա առաջը, որ հարցանում էր Հա-
յոց աշխարհի ողջութիւնը և խաղաղութիւնը, այս
բանը կրկնում էր երկու կամ երեք անգամ և զօրքի
հանդէսը ինքը թագաւորն էր կատարում։ Եւ նախ
քան նոցա պատերազմ դուրս գնալը, իւր մօտ գալը
ևս մեծ շնորհակալութիւն էր համարում։ Իւր ա-
ռաջակիցների և բոլոր մեծամեծ իշխանների առա-
ջև գովում էր նոցա, յիշում էր նոցա նախահարց
աշխատութիւնները և պատմում էր իւրաքանչիւր
մարդու քաջութիւնը, բայց այն օրը ոչ մինը սո-
ցանից չյիշեց, այլ ինչպէս մի չար դև չէր դադա-
րում ձմեռվայ բուքը վերկացնելուց և շարժելուց,
ինչպէս իսկ նման էր ծովի ալեկոծ կատաղութեանը

ոչ թէ փոքր ինչ վայր 'ի վերոյ շարժվելով, այլ նոյն իսկ անդունդիցը բարձրանալով, փրփրալով, ալիք բարձրացնելով, գազանի պէս գոչելով, դողացնել էր տալի իւր ընդարձակ տէրութիւնը, ինչպէս ովկիանոսը փրփրած տարածվում է բոլոր տարերի, փոսերի, ձորերի վերայ, ապականելով միանգամայն վայելուչ ընդարձակ դաշտերը։ Թագաւորն մնչելով ձայն էր տալի և ասում։ «Երդվում եմ մեծ Աստուած Արեգակովը, որ իւր ճառագայթներովը լուսաւորում է բոլոր աշխարհը և իւր տաքութիւնով կենդանացնում է բոլոր արարածներին, եթէ էգուց առաւօտը սքանչելի արեգակի ծագելու ժամանակը ամէն միներ ձեզանից ինձ հետ միասին ծունր չի դնիլ՝ նորան և Աստուած չի խոստովանիլ, բոլորովին չեմ թողլ տալ ձեզ, չարչարանքների բոլոր նեղութիւնները ձեզ ցոյց կտամ, մինչև որ ակամայ կատարէք իմ հրամանը։ Բայց հաւատացեալները հաստատվելով Քրիստոսի վերայ, ոչ ձրմռվայ ցրտից էին մտում, ոչ տօթի տաքութենից էին այրվում, ոչ ահագին ձայնից էին սարսափում և ոչ տանջանքի երկիւղից էին վախում, այլ դէպի երկինք նայելով տեսանում էին՝ որ Քրիստոսի զօրութիւնը եկել է իւրեանց օգնելու՝ զուարթ դէմքով յառաջ էին գալի և համեստ խօսքերով պատասխանում էին թագաւորին այսպէս։ «Խնդրում ենք քեզանից, քա՛ջ թագաւոր, ականջ դիր մեր փոքր խօսակցութեանը և քաղցրութեամբ լսի՛ր այն, ինչ որ պատմելու ենք։ Միտդ բեր թագաւորաց թագաւոր Շապուհի ժամանակը, որ քո պապ Յազկերտի հայրն էր։ Աստուած տվեց նորան

Հայոց երկիրը ժառանգելու այն օրէնքներովը, որոնցով և մենք այժմ կառավարվում ենք։ Մեր հայրերը և մեր հայրերի պապերը կացան նորա ծառայութեան մէջ, սիրով կատարում էին նորա հրամանը և շատ անգամ նորանից մեծամեծ պարգևներ էին ընդունում։ Այն ժամանակներից մինչև քո հայրենական աթոռի վերայ նստելը, մինչև ես մի և նոյն ծառայութիւնը արեցինք, բայց քեզ առաւելութեամբ, քան քո նախորդներին»։

Այս ասելով ցոյց էին տալի իւրեանց աւելի քաջ լինելը զինվորական գործի մէջ քան իւրեանց նախնիքը։ Յիշեցնում էին թէ ինչպէս նորա պահանջմունքները և հարկը աւելի ծանր են, քան նորա նախնեաց ժամանակը։ «Նաև Քրիստոսի տուրը եկեղեցին, որ սկզբումը ազատ էր հարկից հարկի տակ ձգեցիր։ Մենք քո տէրութեան սիրոյ համար ոչինչ ընդդիմութիւն չըցոյց տուինք քեզ։ Այժմ ինչու է վերկացել քո բարկութիւնը մեր վերայ, դու ասա՛ մեզ վնասի պատճառները, մի՞թէ մեր օրէնքները խափան են լինում քեզ ծառայելու»։

Թագաւորը ինչպէս չար գև, երեսը մի կողմ դարձնելով, ասեց։ «Նաս եմ համարում ընդունել ձեր աշխարհի հարկը թագաւորական գանձի մէջ և անօգուտ եմ համարում ձեր արիութեան քաջութիւնը։ Որովհետև տգիտաբար մոլորվել է՛ք մեր ճշմարիտ օրէնքներից, աստուածներին անպատվում է՛ք, կրակին սպանում է՛ք, ջրերը պղծում է՛ք և մեռածներին հողի մէջ թաղելով ապականում է՛ք երկիրը. և չ՚կատարելով մեր ծեսերը, զօրութիւն է՛ք տալի Հարամանին. բայց որ

ամենից գլխաւորն է կանանց չ՝էք մօտենում, դեւերի համար մեծ ուրախութիւն է լինում, երբ դուք չէք խրատվում և չէք պահում մոգերի բոլոր կարգերը։ Ես տեսնում եմ ձեզ ինչպէս անապատում մոլորված և ցրված ոչխարներ և շատ ցավում եմ, որ չ՝լինի թէ աստուածները ձեր պատճառով բարկանան և մեզանից վրեժխնդիր լինին։ Իսկ դուք եթէ կամենում էք ապրել և ազատել ձեր անձը և պատվով յետ դառնալ, ինչ որ ասեցի, էգուց շուտով կատարեցէ՛ք։

Այն ժամանակը երանելի նախարարները բոլորը միասին բարձր ձայնով ասեցին ամենի առաջև։ «Զէ, թագաւոր, այդ բանը միւս անգամ մի՛ ասիլ մեզ, որովհետև եկեղեցին ոչ մարդոյ շինված է և ոչ արեգակի պարգև, որին դու սխալուելով աստուած ես կարծում. արեգակը ոչ միայն աստուած չէ այլ և կենդանի չէ։ Բայց եկեղեցիները ոչ թագաւորների պարգևներ են, ոչ ճարտարութիւնների արուեստ, ոչ իմաստունների գիւտ, ոչ զինուորների քաջութեան աւար և ոչ գևերի սուտ խաբէութիւն։ Մի խօսքով եկեղեցին չէ այն բանը, ինչ որ երկրաւորներից, երկնաւորներից կամ վատթարներից է։ Եկեղեցին Աստուած է պարգևել ոչ թէ մի քանի մարդկանց, այլ բոլոր խելօք ազգերին, որոնք բնակվում են արեգակի տակ։ Նորա հիմքը դրված է հաստատ քարի վերայ, ոչ երկրաւորները կարող են շարժել, և ոչ երկնաւորները կարող են աւերել։ Եւ այն բանին, որին երկինքը և երկիրը չեն կարողանում վախեցնել, ոչ ոք մարդկերանցից չ՝պարծենայ՝ թէ կարող է յաղ-

թել։ Ուրեմն ինչ որ կամենում ես առնել՝ արա՛, մենք ամենքս պատրաստ ենք տանելու քո մեքենաների բոլոր տանջանքները, որով աչ էիր տալի։ Պատրաստ ենք, ո՛չ միայն չարչարվել այլև մեռնել, իսկ եթէ կրկին մի և նոյն բաները կ՝հարցանես պատասխանը զորանից աւելի մանրամասնաբար կ՝լսես։

Այն ժամանակը թագաւորը զառնացած աւելի քան լեղի պատառում էր փորի մէջ իւր կամաւոր մաղձի ծովը. քթիցը և բերանից առ հասարակ տաք գոլորշի էր դուրս գալի, ինչպէս սաստիկ հընոցից թանձր ծուխ։ Եւ արտի չհանդարտելուցը թուլանում էր նորա մարմնոյ զօրութիւնը։ Նա ծակոտում էր իւր խորհրդների լիքը պահարանը, ցըրում էր և տարածում իւր չարութեան բոլոր մտքերը։ Եւ այն բաները, որ առաջ ծածկում էր նաև իւր սիրելիներիցը, այժմ ակամայ բոլորը կարգով պատմում էր Քրիստոսի ծառաների առաջև։

Երեք և չորս անգամ կրկնում էր իւր անտուտ երդումը արեգակի անունով և ասում էր։ «Զէ՛ք կարող քանդել իմ վճռի պնդութիւնը, ես չ՝եմ թողել ձեզ շուտով մեռանել ինչպէս ցանկանում է՛ք. այլ ձեր բոլորին և նոցա, որոնք այս տեղ զօրքի մէջն են, պինդ կապանքներով կհրամայեմ տանել Սագաստան վայրենի տեղերով, որ ձեզանից շատերը գնալու ժամանակը տօթիցը մեռանեն, իսկ մնացեալը ընկնեն ամուր բերդերի և անել բանդերի մէջ։ Անթիւ զօրք կ՝ուղարկեմ ձեր աշխարհը, փրղերի հետ միասին. ձեր կանայքը և որդիքը Խուժաստան քշել կ՝տամ, ձեր եկեղեցիները, վկայա-

բաները կ'քանդեմ, և աւերակ կդարձնեմ, իսկ ով որ կրկին անգամ ընդդիմութիւն ցոյց կ'տայ, գազանների ոտի տակը անողորմ կմեռնի։ Այս բոլոր ասածս կ'առնեմ և կ'կատարեմ ձեր երկրումը մընացած մարդկերանց վերայ։

Յաղկերտը հրամայեց շուտով հեռացնել պատուական նախարարներին իւր աչքի առաջից, և պատուէր տվեց դահճապետին, որ զգուշութեամբ առանց կապանքի պահէ նոցա առանձին սենեակներումը, իսկ ինքը սիրտը կոտրած և անմխիթար տրտմութիւնով լցուած՝ յետ դարձաւ իւր օթեւանը հանգստանալու։

Բայց Քրիստոսի ճշմարիտ հաւատացեալները երկմտութեամբ չէին թերահաւատում իւրեանց սուրբ վարդապետների առաջին խրատիցը, այլ տակաւին հնարք էին մտածում թէ ինչպէս իւրեանց անձը և սիրելիներին ազատեն մեծ նեղութիւնից։ Շատ անգամ աշխատում էին և այն երեւելի մարդկերանցը որոնք թագաւորի մօտ նոցա օգնում էին շատ յոյսեր էին տալի և մեծ մեծ փող էին ծախս անում նոցա վերայ։

Երբ որ ամեն կողմից փակեցին նոցա անել բանդի մէջ, այն ժամանակը նոքա Աբրահամի խօսքը կրկնելով, բարձրաձայն ասում էին իւրեանց սրտի խորքիցը։ «Տէր Աստուած, մենք ամենքս նուիրելով մեր եղբայրները, որդիքը և բոլոր սիրելիքը, կապած դրել ենք Յահակի նման քո սուրբ սեղանի վերայ, ընդունիր մեր կամաւոր պատարագը և մի թողիր, որ քո եկեղեցին դառնայ այս անօրէն իշխանի ծիծաղելու առարկայ»։

Թագաւորի ներքին խորհրդակիցներից մինը, որ ծածուկ պահում էր Քրիստոսի անքակտելի սէրը, որովհետև արդէն մկրտվել էր կենդանի աւազանի մէջ, մեծ հոգս էր տանում բանդարկվածների կեանքի համար։ Երբ որ ճշմարտապէս իմացաւ, թէ թագաւորը, ինչ չարութիւն սպառնացել է, կամենում է բոլորը կատարել Հայոց աշխարհի վերայ, նոցանից մի քանիսին հնարք սովորացրեց, որ առ ժամանակ իւրեանց անձը այն նեղութիւններից ազատեն։

Եւ մինչդեռ զօրք էին պատրաստում, որ նոցա քշեն դէպի անդառնալի օտարութիւն, ինչպէս քշել էին շատ նախարարներ Վրաստանից, յանկարծ մի բօթաբեր հասաւ Քուշանաց երկրից և պատմեց, թէ թշնամեաց զօրքը յարձակվեցաւ և քանդուքար արեց թագաւորական շատ գաւառներ։ Այս համբաւը նոցա համար մի երկնային օգնութիւն եղաւ։ Անօրէն թագաւորը սրտապատառ լինելով՝ շտապում էր հեծելազունդը յառաջ ուղարկել, և ինքը շուտով նոցա ետևից գնալ։ Այս վատ համբաւը խափան եղաւ նորա խորհուրդներին և ցրվեց նորա հաստատ երդումը։ Երբ Աստուծոյ երկիւղածները այս բաները տեսան, մեծ յոյսով աղօթում էին և միաբան ասում։ «Դո՛ւ ամենայնի Տէր, որ իմանում ես մարդկերանց սրտի բոլոր ծածուկ և աներևոյթ խորհուրդները, Դո՛ւ, որ ոչինչ վկայութեան կարօտ չես, Դո՛ւ, որ տեսնում ես տակաւին չ'գործված գործքերը, Քո առաջն ենք թափում մեր աղաչանքը։ Ընդունիր Տէր, մեր ծածուկ աղօթքը և արա՛ մեզ այնպէս, ինչպէս քո

կամքն է, որ ամաչի այն չարը, որ հպարտացած կռվում է մեզ հետ անօրէնի իշանութեամբը։ Տէր, շարժիր ներնգաւորի կամակոր խորհուրդները, խափանիր նորա անիրաւ կամքը և խաղաղութեամբ յետ դարձրու մեզ կրկին մեր սուրբ եկեղեցին, որ յանկարծ թշնամիները քանդուքար աւերակ չը-դարձնեն»։

Այսպիսի անքակտելի ուխտ դնելով Աստուծոյ հետ, որ հաստատ մնան իւրեանց առաջին խորհուրդների վերայ, նոքա իւրեանց խրատ տվողին պատկամաւոր ուղարկեցին թագաւորի մօտ, իբր թէ կ՚կատարեն նորա անօրէնութեան կամքը։ Երբ թագաւորը այս բանը լսեց, շատ ուրախացաւ, կարծելով թէ չ՚աստուածները նորան օգնութիւն հասանելով՝ փոխեցին և աւերեցին Աստուծոյ ծառաների հաստատ խորհուրդները։ Որովհետև նախարարները մոգութեան բոլոր օրէնքները կատարելով երկրպագութիւն էին տալի արեգակին և զոհ էին մատուցանում նորան։ Ցնորված թագաւորը չ՚կարողացաւ հասկանալ, որ արդարութեան արեգակի անտուեր լոյսը մաշում էր և ոչնչացնում նորա խաւարային խորհուրդները, ապականում նորա բոլոր ձախուծուռ կամքը։ Նա կուրանալով ճշմարիտ յայտնութենից, չ՚իմացաւ այն խաբէութիւնքը, որով նորան խաբեցին։ Առատութեամբ դընում էր նոցա առաջև երկրաւոր պարգևներ և վերբստին ամենի պատիւ և արժանաւորութիւնը վերականգնում էր, յառաջ մատուցանելով նոցա և երևելի ցոյց տալով իւր բոլոր ընդարձակ տէրութեան մէջ։ Մեծ առատութեամբ, նոցանից իւրա-

քանչիւրին թագաւորական արտեր և գիւղեր էր ընծայում. սիրելի և բարեկամ էր անվանում և իւր մտքի կամակոր հպարտ յանդգնութեամբը կարծում էր թէ ճշմարտութիւնը կ՚փոխվի ստութեան հետ։

Ալեքսէս պատիւ տալից յետոյ, պատրաստում էր մեծ հեծելազօր, շատ մոգեր և եօթը հարիւրից աւելի վարդապետներ ուղարկելու նախարարների հետ. Հայաստան մի մեծ իշխանի ևս մոգպետ էր կարգում նոցա վերայ, խոնարհվում էր և աղաչելով պատվէր էր տալի, թէ մինչև իմ պատերազմից խաղաղութեամբ յետ դառնալը, ամեն բան կատարէք իմ ցանկացածի պէս։ Ալեքսէս հանդիսով և պատվով ճանապարհ էր ձգում նոցա մինչև Հայոց սահմանը։ Ուրախութեան աւետիս էր ուղարկում շատ կրակատուններ, գրում էր և ցուց էր տալի մոգերին և մոգպետներին և իւր տէրութեան բոլոր կողմերի մեծամեծ մարդկերանցը, թէ ինչպէս չ՚աստուածների օգնութեամբը իմ քաջութեան գործը յառաջ տարայ։ Գարշելի մոգերը այնուհետև դուրս գալով զանազան խաւարային թաքստից, ցանկանում էին թագաւորի հրամանը շուտով կատարել, ձայն տարածեցին հեռաւոր աշխարհներ գնալու արևմտեան երկիրը։ Եւ տակաւին Հայոց երկիրը չ՚հասած մոգերը վիճակ էին ձգում, թէ ի՞նչ լեզու, ո՞ւմ կ՚յանձնվի իւրեանց ուսումը սովորցնելու համար։ Որովհետև նոքա հրաման էին ստացել թագաւորից, ոչ միայն Հայոց աշխարհի վերայ, այլև Վրաց, Աղուանից, Լինաց, Աղձնեաց, Կորդուաց, Ծոդէից և Դարսան երկրների և բոլոր նո-

ցա վերայ, որոնք Պարսից իշխանութեան մէջ զանազան տեղեր ծածուկ պաշտում էին քրիստոնէական հաւատը։

Այնուհետև ինչպէս գևեր միմեանց պատահելով և անզգայութեամբ յառաջ վազելով, շտապում էին սուրբ եկեղեցիների գանձերը յափշտակելու։ Ժողովվեցաւ մեծ բազմութիւն զօրքերի և չարաչար սատանայն երևում էր նոցա մէջ ինչպէս զօրավար և անդադար նոցա խրախուսելով շտապեցնում էր։ Նոքա շտապում էին և շտապեցնում էին Թագաւորի հրամանովը հասանել Հայաստան նշանակեալ ժամանակը-վեցերորդ ամսումը։

Թագաւորը նոցա ասել էր Նաւասարդ ամսից մինչև միւս Նաւասարդ ամիսը ամեն տեղ, որ գըտանվում է մեծ Թագաւորի իշխանութեան տակը, վերցրէք եկեղեցու կարգերը, փակեցէք և կնքեցէք տաճարների դռները, սուրբ սպասները հաշվով և համարով ընդունեցէք Թագաւորական գանձարանը, լռել տվեցէք սաղմոսների ձայնը և դադարեցրէք մարգարէների գրվածները։ Քահանայք չ՝համարձակվին իւրեանց տներումը քարոզել ժողովուրդներին։ Քրիստոսի հաւատացեալ մարդիկը և կանայք, որոնք բնակվում են վանքերումը, փոխեն իւրեանց շորերը և աշխարհականի շոր հագնեն։

Նախարարների կանայք ընդունին մոգութեան ուսումը։ Ազատ մարդկերանց և գիւղականների տղերքը և դստերքը ուսանին մոգերից։ Փոխվին և արգելվին ամուսնութեան սուրբ օրէնքը, որ նոքա ունէին իւրեանց նախնիքներից քրիստոնէ-

ութեան կարգով, այլ մի կնոջ փոխանակ շատ կանայք առնեն, որ Հայոց ազգը զարգանալով շատանայ։ Աղջկերքը պսակվին իւրեանց հայրերի հետ, քոյրերը եղբայրների, մայրերը որդկերանց և թոռները պապերի։

Ուտելու կենդանիքը չ՝մորթուին առանց զոհվելու, թէ ո՛չխար լինին, թէ այծ, թէ եզը թէ թռչուն և թէ խոզ։ Առանց խաշի խմոր չանեն։ Քաքորները և աղբիւրը կրակի մէջ չ՝ածեն. ձեռները առանց կովմիզի չ՝լուանան։ Ջրաշները, աղվէսները և նապաստակներ չ՝սպանեն։ Օձերն, խլեզները, գորտերը, մրջիւններն և միւս բազմատեսակ ճիճուները սպանել։ Եւ նոցա չափն քաշել թագաւորական կշռով և համարը գրել։ Նըմանապէս գրել զոհաբերութեան միւս կարգերը մորթելու, տօների կարգերը, տարեկան թվականը և մոխրի չափը։ Այս ամենը, ինչ որ ասեցինք մինչև տարվայ վերջը ամենն կատարեն, իսկ միւս մնացեալ բաները յետոյ կ՝պատրաստեն։

Մոգերը և մոգպետները ընդունելով այս բոլոր հրամանները, գիշեր ցերեկ շտապում էին շուտով հասանել Հայոց աշխարհը և շատ ուրախութենից բոլորովին չ՝էին վաստակում ճանապարհի երկարութենից։

Գ. ԳԼՈՒԽ

ԵԿԵՂԵՑՒՈՑ ՍՈՒՐԲ ՈՒԽՏԻ ՄՒԱԲԱՆՈՒԹԻՒՆԸ։

Բ ԷՊԷՏԵԻ կարող չենք պատմել այն բոլոր թշվառութիւնները, որ կրեց Հայոց զօրքը Պարսից բանակի մէջ, բայց չենք կամենում նմանապէս լռել, ծածկելով նեղութեան ցաւերը. այլ պատմենք փոքր ինչ, որ ձայնակից լինինք նոցա, որոնք մեզ դառնապէս ողբում էին, որովհետև երբ դու լսես, փոքր արտասուք չես թափիլ Հայոց աղգի թշվառութեան վերայ։

Պարսից մեծ բանակի մէջ, այն ազգերը, որոնք հաւատացել էին Քրիստոսի սուրբ Աւետարանին, երբ տեսան Հայոց չար յանձնառութիւնը, շատ թուլացան հոգւով և վայր ընկան իւրեանց երեսի վերայ։ Նոցանից շատերը ծանր սգի մէջ, թուլացած զօրութեամբ, աչքերը դառն արտասուքով լեր՝ եկան շատ յանդիմանեցին նախարարներին և

անպատվեցին նոցա հետի քահանաներին, այսպէս խօսելով «Ի՞նչ կանէք սուրբ կտակարաններըը, ո՞ւր կտանէք Աստուծոյ սեղանի զարդարանքները. մի՞թէ կ՝մոռանաք ձեր հոգևոր օրհնութիւնները, կամ մի՞թէ լռելով կդադարեցնէք մարգարէի ձայնը, թէ «Դուք փակեցիք ձեր աչքերը, որ չ՝կարդաք և խցեցիք ձեր ականջները, որ չ՝լսէք։ մի՞թէ ձեր խղճմտանքի ձայնը կ՝մեռցնէք։ Ի՞նչ կառնէք Աստուծոյ պատվէրը թէ «Ով որ կ՝ուրանայ ինձ մարդկերանց առաջև, ես ևս նորան կ՝ուրանամ իմ երկնային հօր և սուրբ հրեշտակների առաջեւ։ Դուք առաքելական քարոզութեանց վարդապետներ էիք, այժմ աշակերտ պէտք է դառնաք մոլար խաբէութեան։ Ճշմարտութեան ուսուցիչներ էիք, այժմ պէտք է մոգերի սուտ խաբէութիւնը սովորցնէք։ Աստուածային զօրութեան քարոզներ էիք, այժմ տարերքները աստուած է՝ ընդունում։ Սուտիւնը յանդիմանում էիք, այժմ ստից աւելի սո՞ւտ պէտք է լինիք։ Հոգով և կրակով էիք մկրտվել, այժմ մոխրի և ծխի մէջ պէտք է գլորվէք։ Կենդանի մարմնով և անմահ արիւնով էիք մեծացել, այժմ կռապաշտութեան զոհերի խուզի և կեղտոտ արիւնի մէջ պէտք է թաթախվիք։ Հոգոյն սրբոյ տաճարն էիք, այժմ դեւերի զոհարան պէտք է լինիք։ Ձեր մանկութենից յարգել էիք Քրիստոսի փառքը, այժմ նորա փառքից մերկանալով, դեւերի պէս արեգակի առաջը պէտք է պար գաք։ Արքայութեան ժառանգներ էիք, այժմ դուք ինքներդ ձեզ շինեցիք դժոխքի ժառանգ։ Անհանգչելի կրակը նոցա էր սպառնում, ինչի՞ դուք

և նոցա հետ կամենում է.ք այրվիլ։ Նոցա համար է պարարտանում անմահ որդը, այժմ դո՞ւք է.ք պարարտացնում ձեր մարմինները նորա համար կերակուր։ Դժոխքի թանձր խաւարը նոցա էր ըսպասում, դուք լուսաւորներդ ինչի՞ է.ք ուղղեկից լինում նոցա մի և նոյն խաւարի մէջ։ Նոքա արդէն վաղուց էին կուրացել, դուք ևս կոյրերի հետ կուրացա՞ք։ Անդունդը նոցա համար էր բացվել, ինչի՞ դուք ինքներդ նոցանից յառաջ լցրի՞ք։ Ի՞նչպէս պէտք է տոմարէ.ք նոցա այն ատուածների անունները, որոնցից ո՛չ մինը չկայ։

Ազատեցել էի՞ք ծանր բեռներից, կրկին մըտա՞ք նոցա տակը, ազատվել էի՞ք ձեր մանկութեան ժամանակից ծառայութենից, այժմ աւելի շարաչար մտա՞ք անազատելի ծառայութեան մէջ։

Եթէ իմանայի՞ք և ձեզ յայտնի երևէր, կըտեսանէի՞ք, որ սուզ արաւ երկինքը ձեր վերայ և արտաքոց երկիրը ձեր ոտների տակ։ Հրեշտակները վերևից են ձեզ վերայ բարկացել, մարտիրոսները երկրից են նեղացել։ Խղճում ենք, խղճում ենք ձեր սիրելիների վերայ և աւելի խղճում ենք ձեր անձանց վերայ։ Եթէ մարդ փրկած լինէր ձեզ ծառայութենից և դուք ձեր կամքովը մի այլ մարդոյ ծառայութեան տակ ընկնէի՞ք, շատ կ՚բարկացնէի՞ք ձեր առաջի տիրոջը։ Բաց այժմ ի՞նչ կառնէ.ք այն ատուածատատ հրամանը. թէ «Ես եմ Ատուած, բացի ինձանից այլ Ատուած չ՚կայ և չի լինիլ. ես նախանձոտ Ատուած եմ, հայրերի մեղքերի պատիժը որդկերանցը կ՚հատուցանեմ մինչև եօթը զար։ Եթէ անմեղ որդիքը հայրերի մեղքե-

րի համար պատժվում են, ուրեմն, երբ որդիքն ինքեանք ևս մեղք գործեն, ո՞չ ապա՞քէն կրկնակի կպատժվին։

Դո՛ւք էիք մեր ապահովութեան ամուր պարիսպը, երբ որ մեզ այս տեղ վտանգ էր պատահում, հանդարտութեամբ դիմում էինք ձեզ մօտ. այժմ այդ մեծ պարիսպը հիմն'ի վեր քանդվեցաւ, Դո՛ւք էիք մեր պարծանքը ճշմարտութեան թրշնամու առաջև, այժմ դուք էք մեր նախատինքը մի և նոյն թշնամու մօտ։ Մինչև այժմ ձեր ճրշմարիտ հաւատի համար, մեզ փոքր ինչ խնայում էին, բայց այժմ ձեր պատճառով, մեզ ևս անողորմաբար կպատժեն։ Դո՛ւք ո՞չ միայն ձեր անձի համար պէտք է հաշիւ տաք Աստուծոյ ահեղ դատաստանի առաջ, այլև այն բոլորի համար, որոնց ձեր պատճառով պէտք է չարչարեն։

Այս բաների հետ միւս այլ շատ բան ևս ասեցին նախարարներին և նոցա ցաւի վերայ ցաւ յաւելացրին։ Նախարարները իրենց խորհուրդը յայտնել և ցոյց տալ չէին կամենում, իսկ լռել և պատասխան չ'տալ անհնար էր։ Շունչերը կտրված դառն արտասուք էին թափում։ Նոցա հետ միասին և բոլոր լսողները և տեսնողները անմխիթար սգում էին։

Այն ժամանակը այն քահանայքը, որ նոցա հետ զօրքի մէջն էին, սրտի բարկութեանը չը համբերելով ջոկվեցան նախարարներից և բոլոր բազմութենից և շուտով ուղարկեցին Հայոց աշխարհը մի ձիաւոր լրատար, որ սուգ անելով և շորերը պատառելով հասաւ եպիսկոպոսների ժողովը,

պատմեց չարչարանքների բոլոր անցքերը, բայց նախարարների սրտի ծածուկ խորհուրդը չէր յայտնում։

Եպիսկոպոսները այս բանը լսելով տարածվեցին դէպի իւրեանց վիճակները, ուղարկեցին ըստորին եպիսկոպոսներին գիւղերը, դաշտերը և լեռնային գաւառների բերդերը։ Վերկացրեցին, ժողովեցին մեծ բազմութիւն մարդկանց և կանանց գիւղացիներից և աղնուականներից, քահանաներից և վարդապետներից, խրատ տուին, պնդեցրին և բոլորին Քրիստոսի զինուոր շինեցին։ Խորհրդի առաջին խօսքը այս էր «Եղբօր ձեռքը բարձրանայ իւր հարազատ եղբօր վերայ, եթէ նա ուրացել է Աստուծոյ պատուիրանը, հայրը չ'ինայէ որդուն և որդին հօր պատվին. կինը կռվի իւր ամուսնոյ հետ, ծառայն իւր տիրոջ հետ։ Աստուծոյ օրէնքները թագաւորեն ամենի վերայ, և մեղաւորները իւրեանց դատապարտութեան պատիժը այն օրէնքներից ստանան։

Երբ որ խորհուրդը հաստատվեցաւ, բոլորը, ոչ միայն քաջ տղամարդիկ, այլև մարդատէր կանայք երևեցան զինուորուած, սաղաւարտները գլխներին, սրերը մէջքերին և վահանները ձեռներին։

Բայց Հայոց զօրքը բոլոր օգնականների և մոգերի բազմութեան հետ չորրորդ ամսումը հասան Հայոց աշխարհումը մի մեծ գիւղաքաղաք Անգղ անունով։ Ամեն կողմից ժողովեցին նորա շուրջը, բանակ դրեցին, տեղաւորվեցան և մի անթիւ բազմութիւն կազմեցին։ Քսան և հինգ օրից յետոյ,

երկու շաբթի օրը, ինքը մոգպետը կամելով գործի առաջին փորձը առնել, մոգերի հետ միասին մեծ զօրքով գնաց եկեղեցու դռները քանդելու։ Բայց սուրբ Ղևոնդ էրէցը գլխաւոր խորհրդականների և շատ հոգևորականների հետ միասին նոցա հանդիպելով թոյլ չտվեց։ Թէպէտ նա չէր իմանում բոլոր նախարարների միտքը և մոգպետի զօրութեան ոյժը, սակայն չսպասեց բոլոր եպիսկոպոսներին և չկարողացաւ համբերել անօրէն իշխանին, այլ մեծ աղմուկ ձգեց զօրքի և մոգերի մէջ։ Որով հետև քարերով և փայտերով մոգերի և մոգպետի գլուխները ջարդելով փախցրեցին իւրեանց բանակը, և իւրեանք յետ դառնալով եկեղեցին, կատարում էին տէրունական պաշտօնը մինչև կիրակի երեկոյ։

Երբ այս աղմկի համբաւը տարածվեցաւ, հասան այն տեղ Հայաստանի բոլոր կողմերից շատ տղամարդիկ և կանայք։ Նրա մեծ տարակուսանքի աղետալի տեսարան էին ներկայացնում, ոմանք իւրեանց աչքերից աղբիւրի պէս արտասուք էին թափում, միւսները բարձր աղաղակով կարծես երկինքն էին թնդացնում, իսկ մնացեալները քաջութեամբ դիմելով դէպի զէնք, մահը լաւ էին համարում քան կեանքը։ Հոգևորականներից ոմանք Աւետարանը ձեռներին բռնած՝ աղօթում էին Աստուծոյն, իսկ միւսները ցանկանում էին երկրի պատուվը, որ իւրեանց համար զերեզման դառնայ։ Այսպէս սարսափ էին ձգում մոգպետի վերայ։ Նա շատ անգամ խնդրում էր իւր կողմնակիցներին, որ կարողանան նորան մահից ազատել և կրկին թագաւորի դուռը հասցնել։

Դա այս գործի մասին, որոյ համար եկել էր, ասխատում էր նոցա, ասելով «Թող գրեմ թագաւորին, որ ձեռք վերառնէ այսպիսի առաջարկութենից, որովհետև ինչպէս ես եկեղեցու միաբանութեան առաջին փորձն առայ, եթէ նոյն իսկ մեր աստուածները զան մեզ օգնելու, չէ կարելի մոգութեան օրէնքը Հայոց մէջ հաստատել։ Եթէ մեր աշխարհի բոլոր զօրքերը մոգեր լինէին, սոքա չէին խնայել նոցա սատկացնելու և ոչ միայն օտարներին, այլև իւրեանց եղբայրներին, որդկերանցը, բոլոր ազգականներին և նոյն իսկ իւրեանց անձը։ Այն մարդիկը, որոնք ոչ կապանքից են վախում, ոչ տանջանքից, ոչ մեծ պարգևներով են կաշառվում, և որ ամենից վատն է մահը կեանքից լաւ են համարում, ո՞վ կարէ նոցա ընդդէմ կենալ։

Ես լսել էի մեր նախնիքներից, թէ թագաւորաց թագաւոր Շապուհի օրերումը, երբ սկսեց քրիստոնէութեան ուսումը աճել և շատանալ և լցվել Պարսից բոլոր երկիրը և անցանել աւելի դէպի արևելք, մեր օրէնքների վարդապետները յորդորեցին թագաւորին, որ մոգութեան օրէնքները աշխարհիցը բոլորովին չ՝վերջանալու համար՝ սաստիկ հրաման տայ, որ քրիստոնէութիւնը դադարի։ Դա ոչքան կամեցաւ արգելել՝ նոքա աւելի և աւելի շատացան և հասան մինչև Գուշանաց երկիրը և այն տեղից հարաւային կողմերը, մինչև Հնդկաստան։

Նոքա այնպէս աներկիւղ և համարձակ էին Պարսից աշխարհումը, մինչև որ ամեն քաղաքներում՝ շինեցին եկեղեցիք, որոնք իւրեանց պայծա-

ուխտեամբը գերազանցվում էին թագաւորական պալատներիցը։ Շինում էին վկայարան անուանեալ տներ և եկեղեցական մի և նոյն զարդարանքներով նոցա զարդարում էին և ամէն շէն և անապատ տեղերում միայնանոց էին շինում։ Ոչ մի տեղից յայտնի օգնութիւն չէին ստանում նոքա, բայց օրէցօր աճում շատանում և մարմնաւոր մեծութիւններով մեծանում էին։ Նոցա հարստութեան պատճառները մեզ անյայտ էին, միայն այս էինք իմանում, որ բոլոր աշխարհքը նոցա ուսմանն էր հետևում։

Թէպէտ թագաւորը խստութեամբ իւր զօրութիւնը շարժեց նոցա վերայ և նոցանից շատերին բռնեց և չարչարեց, աւելի շատերին ևս մահով սպանեց, դառնացաւ, նեղացաւ, բայց չ'կարողացաւ նոցա բազմութիւնը պակսացնել։ Վերջապէս, թէպէտ հրամայեց փակել և կնքել բոլոր եկեղեցիների դռները, որոնք Պարսից տէրութեան մէջն էին, բայց նոքա ամէն տուն եկեղեցի շինեցին և ամէն տեղ իւրեանց օրէնքներն էին կատարում։ Իւրեանց անձը վկայարան էին համարում և մարդկեղէն շինուածքը հոգեղէնից լաւ էին կարծում։ Սպանողների սրերը բթեցին, բայց նոցա վզերը չըզզվեցին։ Նոցա կայքը յափշտակողները վատակեցին, բայց նոցա հարստութիւնը օրէցօր շատացաւ։ Թագաւորը նեղացել էր և բարկութեան դահիճները շատ դառնացել, բայց նոքա զուարթ և ուրախ դէմքով ընդունում էին տանջանքների բոլոր հարուածները և սիրով նայում էին իւրեանց կայքի յափշտակութեան վերայ։

Նորը թագաւորը տեսաւ, որ նոքա միաժողով դիմում են դէպի մահ, ինչպէս սուրը գառներ դէպի երկնաւոր աղը, արգելից և վերացրեց նոցանից տանջանքի հարուածները և հրաման տուեց մոգերին և մոգպետներին, որ ո՛չ ոք չ՝դիպչի նոցա, այլ թոյլ տան անարկիւղ հաստատ մնալու իւրաքանչիւրը իւր ուսման մէջ, թէ մոգը, թէ Անդիկը, թէ Հրէայն, թէ քրիստոնեայն և թէ միւս այլ դաւանութիւն ունեցողները Պարսկաստանի զանազան կողմերումը։ Յետոյ երկիրը հաստատ խաղաղութիւն գտաւ և լռելով դադարեցին բոլոր ալեկոծութիւնների շփոթութիւնները, որովհետև մեր աշխարհի շարժվելու ժամանակը, արևմտեան աշխարհները ևս շարժվեցան նոցա հետև բոլոր Տաճկաստանը ալեկոծվեցաւ։

Ա.յն իրողութիւնը միայն լսելով ենք իմանում, բայց այս, որ ես իմ աչքովս տեսայ, ինձ այնպէս է թվում, որ առաջվանից սաստիկ կ՝լինի։ Դու որ Մարզպան ես այս աշխարհում, պէտք է հոգս քաշես, գրես և ցոյց տաս թագաւորին այս բռնութեան միաբանութիւնը, թէ ինչպէս նոքա անարկիւղութեամբ ո՛չինչի տեղ չի դրին թագաւորի հրամանները։ Եթէ մենք չէինք աշխատել փախչելու մեզանից ոչ մինին սաղ չէին թողել։ Եթէ անդէն մարդիկ այսպէս բռնացան, եթէ յանկարծ զինվորներին ևս իւրեանց հետ միաբանեն, այն ժամանակը ո՞վ կարէ դուրս գալ դոցա յանդուգն յարձակման առաջ։ Ես տեղեակ չ՝էի եկեղեցու ուխտի միմեանց հետ անքակտելի լինելուն, որովհետև այլ է, որ մարդ լսում է և այլ է, որ իւր սեփ-

հական աչքերովը տեսնում է։ Դու, որ մանկութեանցը այդ օրէնքի մէջ մեծացել էիր և իսկապէս իմանում էիր այս մարդկերանց պնդութիւնը, որ գոքա առանց շատ արիւն թափելու մեզ չ'են թող տալ ձեռը մեկնել դէպի եկեղեցիները, ինչի՞ համար այդ բոլորը բացարձակ չ'ասեցիր թագաւորին։ Որովհետև բոլոր նախարարների գլխաւորը դու էիր, և բոլոր աշխարհը քո մարդպանութեանն էր յանձնած, ինչի՞ մեծ հոգս չ'քաշեցիր քո համար։ Մի՞ւս ժամանակները ես իմանում էի, որ դու խմաստուն էիր, բայց այս գործը խմաստութեամբ չ'գործեցիր։ Իսկ եթէ ո՛չ, երևի դու ես նոցա հետ համաձայն ես և քո խորհրդովը այս անց.քը իմ՛և զօրքի գլխին բերեցին։ Եթէ այս է պատճառը, և դու չես կամենում մոգութիւն ընդունել, բոլորովին մի ամաչիր թագաւորի առջև, ես կ'գրեմ և ցոյց կ'տամ մոգպետների մոգպետին, գանձապետին և մեծ հազարապետին, որ նոքա թագաւորի առաջվայ միտքը փոխեն, որ նա քրիստոնեաներին իւրեանց կամքին թողէ, որ միտքը առ միտքը ծանօթանան մեր մոգութեան օրէնքներին. որովհետև այն ժամանակը մեր մոգութեան օրէնքները ընդունողները գոնէ սիրով կ'կատարեն թագաւորի հրամանը։

Որովհետև այս աշխարհը հեռու է, կարելի է, եթէ նոցա վնասեն, նոքա ցրվեն օտար երկիրներ։ Իսկ երբ որ այս աշխարհը բնակիչներից դադարի՝ վի, այն ժամանակը քեզ մեծ վնաս կ'հասանի թագաւորի կողմից։

Մարզպանը պատասխանեց մոգպետին։ Այդ խրատները, որ ասեցիր, բոլորը ճշմարիտ են, բայց

նոցա յարձակումը ես չ՝էի իմանում, իսկ այժմ տեսնելով, իմացայ և շատ զզջացի։ Բայց այժմ ինչ որ ասելու եմ. քեզ ախորժ կթվի կատարիր. և առ ժամանակ. քո խորհուրդները շատերին մի յայտնիր, այլ միայն նոցա յայտնիր, որոնց ես կասեմ, մինչև որ այժս շատացնեմ զօրք ժողովելով, որ գուցէ տակաւին կարողանամ եկեղեցոյ միաբանութիւնը երկու մասը պատառել։ Եթէ այս բանը ղուխ բերեմ, գիտեմ, որ այն ժամանակը թագաւորի հրամանը կարող եմ կատարել։

Այս պատճառով Ղասակը զօրք պահանջելով Սիւնեաց աշխարհից, իւր զօրաբաժինը շատացրեց և օգնութիւն տվեց մոգերին և մոգպետներին։ Յետոյ ասեց մոգպետին. դու այժմ մի հրովարտակ գրիր կատարութեանը, որ այն տասը հազար զօրքը, որ այժմ Աղուանատան են, ուղարկեն Հայաստան ձմեռը անցկացնելու. երբ որ նոցա մեր ձեռի տակ կ՝ձգենք, ոչ ոք չէ կարող թագաւորի հրամանը հրաժարել։ Մոգպետը պատասխանեց Մարզպանին։ Այդ խորհուրդը կրկին իմ խօսքերին ընդդէմ է, որովհետև, եթէ մենք բռնութեամբ կռվենք այս աշխարհի հետ, աշխարհը կաւերվի և մենք պատժից չ՝ենք ազատվիլ։ Մեր անձին կլինի վնաս և թագաւորութեանը մեծ կորուստ։

Մարզպանը չ՝կամեցաւ բոլորովին ականջ դնել նորան, որովհետև սրտանց ընդունել էր Պարսից օրէնքը։ Սկսեց այնուհետև խաբել ոմանց կաշառով, ոմանց աղաչանքով, իսկ ռամիկների սրտերը երկիւղական խօսքերով սարսափ ձգելով։ Նա օրէցօր եկեղեցիների ռազմիկը շատացնում էր և ու-

բախական երգերով էր պարապացնել տալի նոցա ամբողջ գիշերները անցկացնելով արբեցութեան, երգերի և անառակ պարերի մէջ։

Եթանոսական երաժշտութեան կարգերը և երգերը քաղցր էր ցոյց տալի ոմանց առաջև և շատ գովում էր Թագաւորի օրէնքները։ Կառավարութենից ստացել էր շատ գանձ, որով նոցա առանձին կաշառում էր, իբր թէ պարգև է տալի և շատ խորամանկութեամբ անմեղ մարդկերանցը խաբում էր և իւր կողմն էր քաշում։

Երբ որ այս բոլոր բաները տեսան սուրբ եպիսկոպոսները, աւելի քաջութեամբ հաստատվեցին մի և նոյն միաբանութեան մէջ, և հնարագիտութեամբ երկու մասը բաժանեցին բանակը։ Մանաւանդ, երբ նոքա հաստատ իմացան, թէ Սիւնեաց անօրէն իշխանը մահացուցիչ վերքեր է ստացել իւր հոգւոյ մէջ, խրտնեցին, հեռացան և փախան նորանից։

Մի գիշեր բոլոր միաբանութիւնը խորհուրդ առնելով, կոչեցին նմանապէս Վարդանին, որ զօրքերի սպարապետն էր, հարցրեցին, քննեցին և տեղեկացան նորա մտքի անշարժութեանը, որ ամենևին չէր օտարացել Քրիստոսի սիրուցը։ Միաբան աղօթք արին նորա վերայ, կրկին ընդունեցին նորան իւրեանց միաբանութեան մէջը։ Եւ նորանով իւրեանց կողմը քաշեցին շատերին, որոնք չէին բաժանվել առաջվայ միաբանութենից։ այսպէս ժողովեցան բաւականի զօրքեր։ Եւ աւելի հեռացան մոգերից, մոգպետից և անօրէն Վասակից։

Դայց Վասակը այնքան յիմարացրեց մոգպե-

տին, որ նա չ՝կարողացաւ իմանալու գործի հետեւանքը։ Սկսեց մոգերին տեղաւորել նախարարների տանը և մեծ ռոճիկ նշանակել նոցա համար, կենդանիք զոհել և բռնութեամբ ստիպել քրիստոնեայ մարդկերանցը կռապաշտութեան զոհի միս ուտել և երկրպագութիւն տալ արեգակին։ Երբ որ այսպիսի պիղծ խառնակութիւնը սկսեց շատանալ բոլոր աշխարհումը, թիկնապահ զինուորականների կանայքը ևս յանդգնեցին մի կիւրակի օր մտնել եկեղեցին, ջահերը հանգցնել և կոյսերի շորերը պատառել։

Այս աղմուկի գաւը համբաւը երբ լսեցին բոլոր սուրբ եպիսկոպոսները, աւետարանը ձեռներին բռնած, առանց հարցնելու, գնացին հասան սպարապետի բնակարանը, ուր ժողոված էին Հայոց զօրքերը, ասեցին, աղաչում ենք ձեր բոլորիդ այս սուրբ աւետարանովը, եթէ մարզպանը և մոգպետը այս բոլոր անօրէնութեան վնասները ձեր խորհրդովն են գործում, առաջ մեր վզերը կտրեցէք և յետոյ եկեղեցոյ վերայ ձեռք բարձրացրէք, իսկ եթէ առանց ձեր խորհրդի են անում նոքա այդ չարութիւնը, այսօր պէտք է վրէժխնդիր լինել նոցանից։

Սպարապետի մօտ բոլոր ներկայ գունդերը կանգնեցին, միաբերան բարձրացրին իւրեանց ձայնը դէպի Աստուած ասելով։ «Դու Տէր, որ ճանաչում ես ամեն մարդոյ սիրտը, քեզ հարկաւոր չ՝են վկայութիւնք մարդկերանցիցը, եթէ սրտով մոլորվել ենք քեզանից, դու ինքդ լաւ գիտես, այսօր իսկ պատժիր մեզ մեր մեղքի համար, իսկ

եղիծ հաստատ ենք տուրը Աւետարանի ուխտի մէջ, զոր տէր, օգնիր մեզ այսօր և ճշմարտու թիւն թըշնամիքը տուր մեր ձեռքը, որ վարվենք նոցա հետ, ինչպէս կամենում ենք»։

Երբ որ այս խօսքերը վերջացրին, ծունր դրին, համբուրեցին աւետարանը և եպիսկոպոսներին։ Բայց նախարարներից մինը, որ այն տեղ էր և համաձայն էր Վասակի խորհուրդներին, չմիաբանեց նոցա ուխտի հետ, վասն որոյ իսկոյն քարկոծեցին նորան այն տեղ։ Այս բանը ահ ձգեց ամենի վերայ։

Այն ժամանակը բոլորը բարկութիւն նախանձով վառվեցին, այնպէս որ ամենայն մարդոյ սիրտ դող էր ընկնում, երբ տեսանում էր, որ արհամարհեցին թագաւորի պարգևները և ոտի տակ տվին նորա հպարտ հրամանները։ Շուտով վազեցին նորա զէպի զէնք, զինվորվեցին, պատրաստվեցին բոլոր գիշերը և արեգակի ծագելու ժամանակը զօրքը երեք մասը բաժանելով, յարձակվեցին Պարսից բանակի վերայ։ Առաջի զօրաբաժինը արևելեան կողմից, երկրորդը արևմտեան, իսկ երրորդը յիւսիսային կողմից։ Զորս կողմից շրջապատելով Պարսից բանակը կոտորեցին և շատ երևելի մարդկերանց կապեցին և իւրեանց իշխանութիւն տակ գտնված ամուր բերդերի մէջը ձգեցին։ Եւ բանակի բոլոր աւարը մի տեղ ժողովելով պահում էին իրը թէ թագաւորի հրամանով։

Բայց Վասակը գերի ընկնելով երդումով միաբանվում էր նոցա հետ, որ հաստատ մնայ նոցա ուխտի մէջ, զղջալով իւր առաջվայ ուրացութիւնը։ Ապաշխարելով ընկնում էր տուրը եպիսկո-

պոնների ոտները և աղաչում էր, որ նորան իրեանցից չ՝հեռացնեն։ Երկու և երեք անգամ անուտ երգում էր ուտում Աւետարանով բոլոր բազմութեան առաջև, գրում էր երգումը, կնքում էր և կապում էր սուրբ աւետարանիցը, որ նոքա մարդկաւարար չ՝սատկացնեն իրեան, այլ աղաչում էր որ Աստուծոյ վրէժխնդրութեանը թողեն։

Նախարարները թէպէտ հաստատ իմանում էին նորա խաբեբայ կեղծաւորութիւնը, իմանում էին նոյնպէս, որ խաբէութեամբ կրկին յետ կը-դառնայ իւր հին մոլորութեան մէջ, բայց չ՝էին կամենում պատժել նորան իւր առաջվայ յանցանքի համար, այլ սուրբ աւետարանի դատապարտութեանը յանձնեցին։ Նոքա, որ եկել էին կողոպտել սուրբ եկեղեցւոյ գանձերը, ակամայ իրեանց անձը և կայքը դրեցին սուրբ եպիսկոպոսների և բոլոր զօրքի առաջև։ Այսպէս թագաւորի հրամանը ոչնչացաւ։

Աստուծոյ զօրութեամբը այս կերպի յաջողութիւն գտնելով, տղամարդիկը, կանայքը և բոլոր ռամիկների բազմութիւնը Աստուծուց շնորհակալ լինելով ասում էին «Պատրաստ ենք շարշարվելու, մեռնելու և ամենայն նեղութիւն կրելու Աստուծոյ սուրբ եկեղեցիների համար, որ մեր նախահայրերը աւանդել են մեզ Տէր Յիսուս Քրիստոսի գալըստեան զօրութեամբը, որով երկրորդ անգամ ծրնվեցինք հաւատոց յուսովը, Յիսուս Քրիստոսի անուամբ մկրտվելով. նորա պէս կամենում ենք շարշարանքով և արիւնով նորոգել մեր անձը։ Որովհետև մեր հայրը սուրբ աւետարանն է և մեր մայրը

առաքելական կաթուղիկէ եկեղեցին, ո՛չ ոք չար բաժանորդ չ՝գառնայ մեզ նորանից հեռացնելու։

Այնուհետև պարոնը չ՝էր երևում մեծ իր ծառայիցը, փափկակեաց ազնուականները՝ նեղացած գիւղականներիցը և մինը միւսից նուազ չ՝էր երևում քաջութեան մէջ։ Թէ տղամարդկերանց, թէ կանանց, թէ ծերերի, թէ ջահիլների, միով բանիւ բոլոր քրիստոնէից միաբանութեան սրտերը մի յօժարութեան կապով էին միացած։ Որովհետև տըղամարդիկ և կանայք բոլորը դէպի մի պատերազմ պատրաստվեցան, Քրիստոսի պատվիրանների մի և նոյն վահանովը զրահավորվեցան և մի և նոյն ճշմարտութեան զօտիով պնդացրեցին իւրեանց մէջքը, այնուհետև ոսկին և արծաթը ոչինչ յարգ չ՝ունէին, ոչ ոք չ՝էր վերցնում նոցա իւր սեփհականութեան համար, պատուական զարդարանքի շորերը արհամարհված և անարգված էին։ Ամեն սեփհականութիւն ոչինչ բանի տեղ էին համարում։ Տեսնում էին իւրեանց անձը ինչպէս մեռած մարմինները և ամեն մարդ իւր գերեզմանը ինքն էր փորում։ Նոքա իւրանց կեանքը մահ էին համարում, իսկ մահը՝ պատուական կեանք։

Բոլորի բերանիցը շուտ շուտ այս խօսքերն էին կրկնվում։ «Միայն քաջութեամբ մեռնենք, միայն անուն և հոգի ժառանգենք, որ Քրիստոս կենդանի լինի մեր մէջ, որի համար հեշտ է կրկին անգամ նորոգել հողիցը մեզ և առաջվայ մեռածներին և հատուցանել ամենին իւր գործքերի համեմատ»։

Այս խօսքերի հետ և միւս շատ խօսքեր ասելով՝ իւրեանց անձը և միմեանց մխիթարելով, կրկին

անգամ պատրաստեցին իրեանց զէնքերը։ Աղօթողները անդադար աղօթք էին անում և պաս պահողները քաջութեամբ շարունակում էին իրեանց պաս պահելը։ Հոգևորականները ցերեկ և գիշեր անդադար սաղմոս էին ասում. Ասուածային կըտակարանների կարդալու ձայնը երբէք չէր լռվում. մեկնիչները նմանապէս չ՝էին դադարում ժողովրդին մեկնաբանելուց երկնաւոր ուսման միտքը բացադրելով։

Այն միջոցին Հայոց զօրքերը կրկին անգամ յարձակվեցան այլ բերդերի և գիւղերի վերայ, որ Պարսիկները ունէին Հայաստանում զանազան տեղեր և քանդելով աւերեցին նոցա բնակութիւնները։ Առաջի անգամը վեր առան Արտաշատ մեծ քաղաքը իւր գիւղերով և անմատչելի բերդերովը, Գառնի քաղաքը, Անին և Արտագերսը իրեանց գիւղերով, Երկայնորդ և Արհնին քաղաքները իրեանց գիւղերովը, Բարձրաբուղ, Խորանիստ, Ծխանիստ, անմատչելի Ողակաները իրեանց գիւղերովը։ Արփանեալ քաղաքը և Վան գիւղաքաղաքը իւր գիւղերով, Գռնեալ, Կապոյտ, Որոտ և Վաղարշապատ քաղաքները։

Այս բոլոր քաղաքները իրեանց գիւղերովը, արտերովը, զօրքերովը, զօրապետներով այն մի և նոյն տարին առան, քանդեցին և գերի արեցին տղամարդկերանցը և կանանց իրեանց կայքովը, սեփհականութեամբը, մեծ մեծ գանձերով և գահ և կարասիքներովը։ Աւերում էին, քանդում էին նոցա շինութիւնները, այրում էին և մոխիր էին դարձնում կրակատները։ Արլում էին կուապաշ-

տութեան պղծութիւնը, վերցնում էին կրակի տաճարների գահ և կարասիքը, բերում դնում էին սուրբ եկեղեցու մէջ և քահանայքը գործ էին ածում տէրունական սեղանի համար։ Այն սուտ պաշտամունքների փոխանակ, որ նոքա ջնջեցին կռապաշտների մէջ, Քրիստոսի փրկական խաչն էին կանգնեցնում, ամենասուրբ սեղան էին շինում և կենդանարար խորհուրդն էին կատարում սրբութեամբ, պաշտօնեայք և քահանայք կարգելով այն տեղերումը։ Այսպէս առհասարակ բոլոր երկիրը մեծ յոյսով ուրախանում էր։

Եւ մինչդեռ նոքա այսպիսի մեծ քաջութեամբ նահատակութեան գործքեր էին կատարում, Աստուածային հոմանաւորութիւնը տարածվում էր ամենի վերայ։ Որովհետև Հայոց զօրքերիցը ոմանք առանց սպարապետի հրամանի, արևելեան կողմիցը յարձակվեցին Ասորեստանեան աշխարհի վերայ և շատ վնաս հասցրին, շատ կրակատներ առան, աւերեցին և քանդեցին։

Իսկ այն զօրքին, որ յարձակվեցաւ մեծ բերդերի վերայ, խաչանիշելով ուղարկեցին։ Երկու մեծ բերդերի պարիսպներ առանց մարդոյ մօտենալու քանդվեցին. այս մեծ հրաշքիցը բոլոր բնակիչները ահի մէջ ընկնելով իւրեանք իւրեանց ձեռով իւրեանց կրակատունները այրում էին և մոգութեան օրէնքը ուրանալով հաւատում էին սուրբ Աւետարանին։

Այոց զօրքերը միւս շատ յաջողութիւններ ևս կատարում էին, որովհետև այն տեղերը, ուր յոյս չկար գտնելու այնպիսի մարդ, որ Աստուծոյ

անունը յիշէ, մեծ ահ էր ընկնում նոցա վերայ և ամէն մարդ պատմում էր իւր ընկերին նոր նոր և զարմանալի հրաշքներ։ Նոյնպէս աստղերը երկնքումը աւելի պայծառ էին փայլում քան յառաջ և բոլոր երեխայքը քաջ տղամարդկերանց պէս էին պատերազմում։

Ռաւականի ժամանակից յետոյ, Ղվանից հազարապետը այն տեղի եպիսկոպոսի հետ միասին եկաւ Հայոց զօրքի մօտ և շտապեցնում էր նոցա ասելով։ «Պարսից զօրաբաժինը, որ Հոնաց կողմերումն էր, յետ դարձաւ և մտաւ մեր աշխարհը, եկաւ նմանապէս շատ հեծելազօր տէրութեան կողմից։ Բացի սորանից, երեք հարիւր ուսուցիչ մոգեր ընկան իւրեանց հետ, որոնք երկու մասը ճեղքեցին մեր աշխարհը և ոմանց իւրեանց կողմը ձգելով, կամենում էին ձեռը բարձրացնել եկեղեցու վերայ և թագաւորի հրամանով ամենին ստիպում էին ասելով։ «Եթէ ձեր կամքովը կընդունէք մոգութեան օրէնքը, պատիւ և պարգևներ կ'ստանաք թագաւորից և կառավարութիւնը կազատէ ձեզ հարկատվութենից, իսկ եթէ ձեր յօժարութեամբը չէք ընդունիլ, մեզ հրամայած է գիւղերի և քաղաքների մէջը շինել կրակատուներ և վառմական կրակը մեջերը դնել, մոգեր և մոգպետներ կարգել ձեր բոլոր աշխարհումը օրէնքներ դնելու համար։ Եթէ մինը համարձակվի ընդդիմանալ՝ մահու պատիժ կընդունի և նորա կինը և որդիքը աքսորվելով իւրեանց ընիկ երկրից թագաւորական գերի կըդառնան։

Երբ որ Հայոց զօրքերը լսեցին այս դառը համ-

բաւը, չ՝թուլացան բոլորովին իւրեանց քաջութիւնից, այլ կրկին մի ընդհանուր ժողով կազմեցին բոլոր երկրումը, այդ բանի համար մի հնար գտնելու։ Եւ լրաբերներին քաջալերելով՝ խորհուրդ տվեցին, որ նոքա գնան մի փոքր միջոց նոցա սուտ խոստմունքներով պահեն, որ նոքա ձեռք չ՝տան եկեղեցու սուրը ուխտին, մինչև Աստուծոյ զօրութեամբ խորհուրդ անելով՝ մի հնարք գտնեն։

Այն ժամանակը մեծ նախարարներից մինին, որ Գնունեաց ցեղից էր Ադամ անունով, շտապով ուղարկեցին արևմտեան երկիրը, որ յայտնի կայսերը արևելեան իշխանի այս չար խորհուրդը, նմանապէս պատմի իւրեանց այն քաջութիւնը և արիութիւնը, որ գործով ցոյց տվեցին, ոտի տակ տալով Պարսից թագաւորի ահեղ հրամանը և մեծ ջարդ տալով մոգերին, խնդրէ նորանից օգնութիւն և եթէ կամենայ իւր հովանաւորութեան տակը ընդունէ նոցա։ Ահա նոցա նամակի պատճէնը, որ նոքա գրեցին Թէոդոս կայսրին։

ՅՈՎՍԷՓ եպիսկոպոս իմ բոլոր եպիսկոպոսներով և Հայոց բոլոր զօրքովը, Վասակ մարզպանը և Ներշապուհ Ռըմբոսեանը Վարդան սպարապետի և բոլոր մեծ նախարարների հետ միասին ողջոյն ենք նվիրում Մեծանուն Թէոդոս Կայսրիդ և քո բոլոր զօրքին, որ ձեր խաղաղասէր մարդասիրութեամբը տիրում էք ծովին և ցամաքին և երկրաւորներից ոչ ոք չ՝կայ, որ ընդդէմ կենայ ձեր զօրեղ տէրութեանը։

Մենք ունինք ճշմարիտ աւանդութիւններ ձեր առաքնի նախնիքների վրայ, որ տիրելով Եւրոպային,

անցան արևելք, տիրեցին Ասիացւոց երկրներին, Սերաց սահմաններից սկսած մինչև Գադերոնի սահմանը և ոչ ոք չ՝համարձակվեցաւ ընդդէմ կենալ նոցա։

Այն չափ մեծ իշխանութեան մէջ Հայոց աշխարհը անվանում էին մեծ և սիրելի երկիր։ Այս պատճառով և մեր նախահայր Տրդատը յիշելով ձեր առաջվայ սէրը, որ տղայութեան ժամանակը փախցնվելով իւր Հայրասպան հօրեղբարց մարդասպանութենից, ապրեց և մեծացաւ ձեր աշխարհումը և ձեզանից ընդունելով թագաւորութիւնը, տիրում էր Հայրենի երկրին. նմանապէս ընդունելով քրիստոնէական սուրբ հաւատը, լուսաւորեց Յիսուսի խաւարային կողմերը, որ այժմ արևելեան խաւարասէր որդիքը կամենում են մեզանից յափշտակել։

Մենք յուսալով ձեր անյաղթելի քաջութեան վերայ, արդէն բաւականի ընդդիմութիւն ցոյց տըվինք նոցա, բայց այժմ մեզ սպասում է աւելի մեծ գործ։ Մենք լաւ համարեցինք աստուածպաշտութեամբ մեռանել, քան ուրացութեամբ ապրել. եթէ դուք մեզ ձեր հովանաւորութեան տակը ընդունէք, մենք կրկին կեանքի կ՝հանդիպենք և ոչ մի անգամ մահու։ Իսկ եթէ փոքր ինչ ուշանաք, կարելի է այս կրակի լոցը հասանի և միւս շատ աշխարհներ»։

Այսր ուղարկած մարդիկը ներկայացան մեծ թագաւորին և կարդացին Հայոց աշխարհի աղաչանաց նամակը, բերել տուեցին նոյնպէս շատ հին յիշատակարանների մատեաններ և գտան նոցա մէջ

նոյն հաստատութեան ուխտը։

Եւ մինչդեռ երանելի Թէոդոս կայսրը խորհուրդ էր հարցնում բոլոր սինոդականներից և կամենում էր մի խաղաղութեան հնար գտնել և մեծ յօժարութեամբ հոգս էր քաշում, որ արևելեան եկեղեցիքը չ'աւերվին հեթանոսներից, նոյն միջոցին յանկարծ մահը վերայ հասնելով կտրեց նորա կեանքի թելը և շատ մեծ արգելք եղաւ օգնութեան գործին։

Թէոդոսին յաջորդեց Մարկիանոս կայսրը, որի խորհրդականներն էին Անատոլիայ սպարապետը և մի Եփլարիոս անունով Ասորի, երկուքը էլ անարգ, վատթար և միանգամայն անաստված մարդիկ էին։ Թագաւորը նոցա խելով չ'էր կամենում լսել հաւատոց միաբան ուխտին, որ իւրեանց բոլոր ուժովը ընդդէմ էին կացել հեթանոսների չարութեանը։ Այս վախկոտ կայսրը լաւ էր համարում դաշը պահել կուսակցաների հետ մարմնական խաղաղութեան համար, քան պատերազմակից լինել քրիստոնէից միաբանութեանը։ Այս պատճառով ըշտապեց շուտով նոյն Եփլարիոսին դեսպան ուղարկեց Պարսից թագաւորի մօտ և հաստատութեան դաշը կապել, որ չ'օգնէ Հայերին ո՛չ զօրքով, ո՛չ զէնքերով և ո՛չ այլ բանով։

Երբ որ գործը այսպիսի կերպարանք ստացաւ և Հայերի յոյսը հատաւ մարդկերանց օգնութենից, եպիսկոպոսները կրկին անգամ սկսեցին քաջալերել միմեանց և Հայոց զօրքերին։ Թէպէտ նոքա տեսնում էին իւրեանց փոքրութիւնը և երկու թագաւորների միաբանութիւնը, բայց բոլորովին վախ-

կոտրելեամբ չէին գոլում, այլ առաջվայ պէս քաջութեամբ ասում էին «Մենք պատրաստ ենք մեռցնել և մեռնել։ Աստուծոյ համար հեշտ է փոքրը մարդկերանցով շատ մարդկերանց գործ կատարել և անարգներովը մեծ մեծ գործեր գլուխ բերել։

Թէպէտ Հայերը չունէին թագաւոր, որ իւրեանց առաջնորդէր և ոչ դրսից օգնական մարդ, բայց իւրեանց առաքինութեամբը և տուրբ վարդապետների միխիթարութեամբը, բոլոր նախարարները իւրեանց զօրքերովը իւրաքանչիւր երկրներից միագունդ հավաքվելով շուտով գալիս հասանում էին և մի տեղ ժողովվում։ գալիս էին նմանապէս շատ ճիւաւոր զօրքեր, որոնք Հայոց թագաւորների ցեղից էին։

Բոլոր զօրքը երեք մասը բաժանեցին։ Առաջին զօրաբաժինը յանձնեցին Ներշապուհ Ռըմբուանանին, որ պաշտպանի Ատրպատական աշխարհի կողմերը։ Երկրորդ զօրաբաժինը յանձնեցին Հայոց Վարդան զօրավարին, որ անցանելով Վրաստանից գայ ճորայ մարզպանի վերայ, որ եկել էր Աղուանից եկեղեցիները աւերելու. իսկ երրորդ զօրաբաժինը յանձնեցին Սիւնեաց Վասակ իշխանին, որ սրտանց չէր հեռացել հեթանոսաց ուխտից։ Վասակը ընտրեց և վերցրեց իւր հետ այնպիսի մարդիկ, որոնց հաւատց թուլութիւնը իմանում էր։ Որոնք էին. Բագրատունեաց իշխանը իւր զօրքով, Խորխառունեաց իշխանը իւր զօրքով, Ապահունեաց իշխանը իւր զօրքով, Գաբեղենից իշխանը իւր զօրքով, Ուրծայ իշխանը իւր զօրքով և այլ շատ զօրքեր, որոնք էին թագաւոր-

ների ցեղերը, նմանապէս մի քանի հեծելա-
զունդ ազնուականներ երևելի ցեղերից։ Եւ խորա-
մանկ խաբէութեամբ քաշվեց իւր աշխարհի բեր-
դերի մէջ կեղծաւորվելով, իբր թէ կամենում է նեղ
ճանապարհներով յարձակվիլ Պարսից զօրքի վե-
րայ և հալածել Աղվանից աշխարհիցը։

Բայց Վասակը այն ծածուկ անկիւնից շտապով
դեսպան ուղարկեց Պարսից զօրավարի մօտ յայտ-
նելով, թէ ահա քանդեցի Հայոց ուխտի միաբա-
նութիւնը և զօրքը բաժանելով երեք կողմի վերայ
ուղարկեցի։ Առաջի զօրաբաժինը ուղարկեցի Հե-
րայ և Զարևանդայ կողմերը. Երկրորդ զօրաբա-
ժինը իմ իշխանութեան տակն է, որոնց թոյլ չեմ
տալ վնասելու թագաւորական զօրքերին։ Բոլոր
միւս պատերազմող մարդկերանցը, որ գտնվում էին
այս տեղ, ցրեցի զանազան կողմերի վերայ։ Բայց
երրորդ զօրաբաժինը, որ աւելի փոքրաթիւ էր,
Վարդանի առաջնորդութեամբը ուղարկեցի Աղվա-
նից աշխարհը։ Համարձակ գնա՛ս արի Նորա դէմ
և բոլորովին մի երկնչիլ պատերազմ տալուց, ես
գիտեմ, որ նոքա քո մեծ զօրութեան առաջև կը-
յաղթվին։

Այս բանը գրեց և յայտնեց Սերուխտ մարզ-
պանին։ Նա երբ լսեց Վասակի պատգամի քաջա-
լերութիւնը, և ճշմարիտը իմացաւ, որ Վարդանը
փոքրաթիւ զօրքով է գալի իւր վերայ, չ'մնաց ճո-
րայ սահմաններումը, այլ ժողովեց իւր զօրքի բո-
լոր բազմութիւնը, շուտով անցաւ Կուր մեծ գետը
և պատահեց Նորան Վրաստանի սահմանումը,
Խաղխաղ քաղաքի մօտ, որ Աղվանից թագաւոր-

ների ձմերոցն էր։ Իւր բոլոր զօրքով բանակ դնելով, բոլոր ընդարձակ դաշտը ծածկում էր զօրքերով ամեն պատրաստութեանով զրահաւորված պատրաստ պատերազմ տալու Հայոց զօրքի հետ։

Բայց քաջ Վարդանը և իւր բոլոր զօրքը, երբ որ տեսան Հեթանոսների զօրքի մեծ պատրաստութիւնը, նայեցին իւրեանց սակաւութեան վերայ, թէպէտ շատ փոքր էին նոցանից, բայց բոլորովին չ՝վախեցին նոցա մեծ բազմութենից, այլ բոլորը միաբան իւրեանց ձեռները դէպի երկինքը բարձրացնելով աղաչում էին դէպի Աստուած ասելով։

«Տէր, դատապարտիր նոցա, որոնք մեզ դատապարտում են, կռվիր նոցա հետ, որոնք մեզ հետ կռվում են, օգնիր մեզ քո զէնքերով և վահանով։ Շարժիր և սարսափ ձգիր անօրէնների բազմաթիւ զօրքերի վերայ, ցրի և ոչնչացրու քո թշնամեաց շար միաբանութիւնը, քո փրկական մեծ նշանի առաջև և մեզ փոքրերիս տուր քաջ յաղթութիւն թշնամեաց անթիւ բազմութեան վերայ։ Մենք չենք աղաչում անօգուտ վաստակի և ունայն փառաւորութեան պարծանքի համար, ոչ ընչասիրութեան ագահութեան համար, որ անցաւոր մեծութիւն ձեռք բերենք, այլ ամենը, որոնք հնազանդվում են սուրբ Աւետարանի քարոզութեանը, ճանաչեն և իմանան, որ դու ես կեանքի և մահու տէրը և քո ձեռինէ յաղթութիւնը և պարտութիւնը։ Մենք պատրաստ ենք մեռնելու քո սիրոյ համար, իսկ եթէ նոցա կ՝սպանենք, այդ ժամանակը ճշմարտութեան վրէժխնդիրներ կ՝լինինք»։

Այսպէս աղօթելով միախումբ յարձակվեցին

թշնամեաց վերայ և զօրքի աջ թևը ջարդելով և ձախու թևի վերայ փախցնելով՝ բոլորին սրի կերակուր շինեցին պատերազմի դաշտումը, իսկ մնացեալներին փախցրին անտառային պինդ տեղեր Լոփնաս գետի խորը ափերի մօտ, ուր մի քանի բաղատական թագաւորազունքներ, Հայոց նախարարներից մինին Մուշեղ անունով Դեմաքսենից գնդիցը վայր ձգեցին ձիուցը և սպանեցին, իսկ գազրկին վերաւորեցին։

Այն միջոցին Արշաւիր Արշարունին այս բանը տեսանելով, ձայն տվեց առիւծի պէս, յարձակվեց վարազի պէս, խփեց սպանեց Լփնաց թագաւորի եղբայր քաջ Վուրկին և նորա թիկնապահներիցը շատերին։ Այսպէս ամենը իւրեանց ախոյեաններին երկիր էին գլորում։ Այսպիսի շատ սաստիկ յարձակմունքներից թշնամեաց շատերը գետի մէջ էին խեղդվում, քան թէ սրով սպանվում։ Սպանվածների մարմինների շատութենից գետի պարզ ջուրը արիւն դարձաւ. ոչ ոք նոցանից չ՝ազատվեց դաշտերի թանձր անդառների մէջ թաց կենալով։ Թշնամու զօրականներիցը մինը զէնքը ձեռքին ձիու վերայ նստելով՝ անցաւ մեծ գետը և հաղիւ կարողանալով ազատվել պատերազմիցը՝ բօթը հասցրեց մնացած զօրքերին, որոնք այս լսելով փախան գնացին մեծ Շահաստանը։

Այն ժամանակը Հայոց զօրքերը վերջացնելով մեծ պատերազմը, յետ դարձան, ժողովեցին թշնամեաց բանակից շատ աւարներ. նոքա տկլորում էին վայր ընկածներին և ժողովում էին շատ ար-

ծաթ, ոսկի և քաջ տղամարդկերանց զէնքերը և ձիերի զարդարանքը։

Հայոց զօրքերը կրկին անգամ մեծ քաջութեամբ յարձակվեցին այն բերդերի և քաղաքների վերայ, որ Պարսիկները ունէին Աղվանից երկրում, քաջութեամբ կռվելով և նոցա գերի պահելու բերդերը այրելով, այն մոգերի բազմութիւնը, որ պատրաստ էին ապստամբացնել այն երկիրը, ինչ ամուր տեղերում գտանում էին՝ սրի բերանը տալով երկնքի թռչունների և գազանների կերակուր էին շինում։

Մեն տեղեր մաքրում էին կռապաշտութեան բոլոր պղծագործ զոհերից, և ազատում էին եկեղեցիները անտառների նեղութենից։

Աղվանից նախարարներից և գիւղականներից շատերը, որ Աստուծոյ անուան համար ցրվել և փռվել էին Կապկոհի ամրոցների մէջ, երբ տեսան այն գործի յաջողութիւնը, որ Աստուած կատարում էր Հայոց զօրքի ձեռքով, նոքա գալիս ժողովվում էին և խառնվելով նոցա զօրքի հետ՝ միաբան հաստատութեամբ մասնակից էին լինում նահատակութեան գործին։ Այնուհետև շտապեցին գընացին Հոնաց սահմանի վերայ, որին Պարսիկները բռնութեամբ տիրել էին, առան, քանդեցին պահակը և կոտորեցին այն զօրքերին, որոնք նորա մէջը կային, իսկ պահակի դուռը յանձնեցին Վահանին, որ Աղվանից թագաւորների ցեղից էր։ Այս բոլոր քաջագործութեան ժամանակը, նոցանից ոչ ոք չ՝վիրաւորվեցաւ, բացի մի երանելուց, որ նահատակվեցաւ մեծ պատերազմի մէջ։

Այն միջոցին այն մարդին, որին յանձնել էին դուռը պահպանելու, դէսպան ուղարկեցին Հունաց աշխարհը և միւս բարբարոս ազգերի մօտ, որոնք դաշնակից էին Հունաց հետ, դաշը հաստատելու նոցա հետ և անքակտելի պահպանելու միաբանութեան դաշը։ Երբ որ նոքա այս բոլորը լսեցին, շուտով գնացին պատերազմի տեղը և տեսանելով յաղթութեան գործը, առանց ուշացնելու երդումով ուխտ դրին իւրեանց օրէնքի համեմատ, ընդունեցին և քրիստոնէից երդումը, որով նոքա խոստանում էին հաստատ պահելու նոցա հետ միաբանութիւնը։

Երբ որ նոքա այսպէս ուխտ դնելով և հաստատութիւն կազմելով տակաւին հանգիստ իւրեանց տեղերումն էին՝ մի բօթաբեր հասաւ Հունաց երկրից իւր գլուխը ծեծելով և շորերը պատառելով Վասակի ապստամբութեան համար։ Պատմեց որ Վասակը հեռանալով քրիստոնէից միաբանութենից, աւերեց Հայոց աշխարհումը շատ գաւառներ, մանաւանդ թագաւորական ձմերոցները, որ զօրքի կենալու տեղերն էին, նոյնպէս աւերեց Գարնին, Երամայիս Դրասխանակերտ մեծ գիւղաքաղաքը, Վարդանաշատը և Օշական բերդը, Փառաստատը, Արդեանը, Զողակերտ աւանը, Արմաւիր բերդը, Կուաշ աւանը, Արուճը։ Աշնակը և բոլոր Արագածոտն նահանգը, Արտաշատ քաղաքը իւր նահանգով և բոլոր գիւղերը և գիւղաքաղաքները, որ նորա շուրջը կային, առնելով, աւերելով և կրակ տալով, բոլորի ընտանիքներին փախցրեց և հեռացրեց իւրեանց բնակութենից։ Քանդեց եկե-

ղեցիքը, կողոպտեց եկեղեցու սեղանի սուրբ զարդերը, գերի տարաւ քահանայից ընտանիքը, իսկ նոցա հրամայեց կապել և բանդ դնել և ինքը ձիաւոր զօրք ուղարկեց բոլոր երկիրը կողոպտելու։ Իսկ այն զօրաբաժինը, որ գտնվում էր Ատրպատական աշխարհումը չ'կարողացան այն միջոցին օգնութիւն հասանել։ Եւ այն զօրքերը, որոնք այն տեղ մնացել էին փախչելով անօրէն Վասակից՝ հեռացան Իւրեանց աշխարհի միւս ծայրը և տակաւին հաստատ պահում էին Քրիստոսի սիրոյ միաբանութեան դաշը, որ կապել էին մեզ հետ։ Իսկ որոնք նորա հետ էին, նոցանից ոմանք փախան Իւրեանց տեղերը, իսկ ոմանք մոլորվեցան նորա ամբարշտութեան հետ։ Հայոց զօրքերը լսելով այս բանը այն տեղից ճանապարհ ընկան և շտապով յետ դարձան Հայոց աշխարհը մեծ աւարով, անչափ մեծութեամբ և անտրտում ուրախութեամբ այսպէս երգելով։ «Խոստովանեցէք Աստծոյն, որովհետև նա բարի է, նորա ողորմութիւնը յաւիտենական է, նա ջարդեց զօրաւոր ազգերին և սպանեց բոլոր իշխաններին, որովհետև նա բարի է և նորա ողորմութիւնը յաւիտենական է». այս սաղմոսը երգելով մինչև վերջը և աղօթելով փառաբանում էին սուրբ երրորդութիւնը։ Հայոց զօրավարը հոգալով զօրքի բոլոր հարկաւորութիւնները, զօրքը բաժանեց առաջնապահ, վերջապահ և կողմնապահ և երեսուն օրումը ողջ և առողջ հասցրեց Հայոց աշխարհի սահմանները։

Վասակը և նորա հետի իշխանները լսելով Վարդանի զօրքի քաջագործութիւնը Աղվանից երկ-

ռումը և Հունաց միաբանութիւնը՝ տակաւին քրիստոնէից զօրքին չ՚հանդիպած, մի գիշեր այնպէս շտապով փախաւ մնաւ իւր աշխարհի ամրոցները, որ այն գերիների և աւարների հետ որ վերցրել էր Արարատեան գաւառից, ակամայ իւրեանը ևս թողեց։

Որովհետև ձմեռը վերայ էր հասել և թշնամիքը զօրքի պաշարը խլել էին, այս պատճառով Վարդանը չ՚էր կարողանում բոլոր զօրքը միասին կերակրել, այլ սիռում տարածում՚էր աշխարհի բոլոր գաւառները, ձմեռը անցկացնելու համար, պատուիրելով նոցա, որ պատրաստ լինին գարնան ժամանակը։ Իսկ ինքը գլխաւոր նախարարների զօրքերից փոքր ինչ իւր հետ պահելով քաջութիւններ էր գործում, տիրելով թագաւորական տեղերին։ Եւ մի քանի զօրաբաժին ուղարկելով Սիւնեաց աշխարհը, առնում և աւերում՚էր շատ գաւառներ և այնպիսի նեղութեան մէջ էր ձգում Վասակին և նորա բոլոր զօրքին, որ նոքա սովի շատ սաստկութիւնից առանց նայել ուտում էին սատակած էշերի և ձիերի միսը։ Հայոց զօրքը շատ ջարդ էր տալի ուրացածներին, մինչև որ սուրբ եպիսկոպոսները և բոլոր հոգևորականների միաբանութիւնը գառը արտասուք էին թափում շարչարվողների վերայ։ Տղամարդիկը, փոքրուկ մեծացած կանայքը ստիպված էին թողել իւրեանց բնակութիւնները և բոլորովին փախչել. այս միջոցին շատ երեխաներ քարին խփելով սպանում՚էին և ձգում ճանապարհի վերայ։

Երբ որ քրիստոնեայքը այսպիսի յաջողու-

թիւններ էին անում, բոլոր եպիսկոպոսները և էրէցները պատուիրեցին աշխարհին, ամբողջ քաղաց ամիսը պաս պահելով աղօթք առնեն Աստծոյն և յաղթութեան պատերազմի տօնը խառնեն Քրիստոսի յարութեան սուրբ տօնի հետ, որ այս մեծ յիշատակը անխափան մնայ Աստուածային արանց տօնի հետ։ Սուրբ եպիսկոպոսները գրեցին Աստուծոյ այս բոլոր օգնականութիւնը, որ Հայոց աշխարհումը փառաւորապէս երևեցաւ և ուղարկեցին Յունաց մայրաքաղաքը եկեղեցու սուրբ միաբանութեան մօտ, որ նոքա ևս աղօթելով խնդրեն Աստուծուց, որ ինչպէս սկսեցին, նոյնպէս և վերջացնեն իւրեանց հաւատոյ գործը։

Պարսից երևելի գերիներից մինին բանդից արձակելով բերին նախարարների առաջև, որոնք նորա հետ խօսելով ցոյց էին տալի այն բոլոր եղած վնասները, թէ աշխարհների աւերվելը, թէ թագաւորական զօրքի ջարդվելը և թէ այն ամեն բանը, որ յետոյ պէտք է լինի։ Երբ որ այս ամենը նորան ցոյց տվեցին, պատմեցին նմանապէս իւրեանց վերկենալը և ուրացողների գործքերը։ Յայտնեցին թէ ինչպէս թագաւորը 'ի զուր ստիպեց նոցա թողել հայրենական կրօնը, պատմեցին ապստամբ Վասակի խաբէութիւնը, թէ ինչպէս նա խաբեց թագաւորին, ասելով, թէ Հայերը յանձն են առնում մոգութեան օրէնքը, այն ինչ Հայերից ոչ ոք նորան խօսք չ'էր տվել։

Նախարարները երբ այս բոլորը լսվին պատմեցին, նորան դէսպան ուղարկեցին թագաւորի մօտ, որ գուցէ տակաւին մի հնարք գտնեն իւրեանց

եղբայրակիցները նեղութենից ազատել։ Բայց անօրէն Վասակի բօթատարները արդէն առաջուց հասել, պատմել էին բոլոր անյաջողութիւնները, որ պատահել էր թագաւորական զօրքերի հետ։ Վասակը բոլոր վնասի պատճառը եկեղեցու սուրբ միաբանութեան վերայ էր ձգել։ Որովհետև անօրէնը կամենում էր, որ եպիսկոպոսների միաբանութիւնը քանդելով՝ բաժանի նախարարներից, բայց տակաւին չ'էր իմանում, որ հոգին և մարմինը կարող են առժամանակ բաժանվել միմեանցից բնութեան օրէնքով. բայց որ Աստուծոյ սիրովը ուխտ է դրել, նորան անկարելի է բաժանել։

Լրատարը հասանելով թագաւորի ձմերոցը, պատմեց նորան այս բոլորը, նա սաստիկ սարսափեց և զօրութեամբ թուլացաւ, մանաւանդ որ արևելեան պատերազմիցը անյաջող էր յետ դարձել և ոչ յաղթութեամբ։ Երբ որ այս լուրը հաստատապէս իմացաւ վերջի լրաբերիցը, իւր գործի բոլոր վնասները իւր խորհրդակիցների վերայ էր դնում։ Շուտով հովացաւ իւր բարկութեան կրակոտ բոցիցը, որովհետև լուվեցին նորա չար խրատ տվողները, որ անդադար յորդորում էին նորան այդ չարութեան գործը կատարելու։ Խոնարհեցաւ իւր բարձր հպարտութենից, իւր վայրենացած սիրտը փոխեց դէպի մարդկային բնութիւն, նայեց և տեսաւ, որ ինքը տկար է, լաւ իմացաւ որ չէ կարող կատարել այն բոլորը, ինչ որ կամենում է, այս պատճառով դադարեց իւր յարձակմունքիցը և լռեցրեց իւր կատաղի գոռալը։

Եւ նա որ բարձր ձայնով որոտում էր և սաստիկ

հրամաններովը մերձաւորներին և հեռաւորներին դողացնում էր, սկսեց քաղցր և կակուղ խօսքերով խօսել բոլորի հետ և ասել ։ «Ես ի՞նչ վնաս եմ տալել, կամ ի՞նչ մեղք եմ գործել թէ դէպի ապրելը, թէ դէպի ցեղերը և թէ դէպի իւրաքանչիւր անձը։ Ո՛չ ապաքէն մեր արեաց երկրումը շատ ուսումներ կան, և բոլորի կրօնները յայտնի են, ով է արդեօք երբ և ինչէ նեղացրել և աշխատել դարձնել դէպի մոգութեան օրէնքը, մանաւանդ քրիստոնեաներին, որ այսպէս աւելի պինդ և հաստատ մնալով իւրեանց օրէնքի մէջ, նոցա կրօնը բոլոր կրօնների մէջ առաջինն է եղել մեզ մօտ։ Ոչ ոք չ'է կարող կեղտ կպցնել նոցա ընտրած օրէնքի վերայ, ես նոցա օրէնքը հաւասար եմ համարում մեր մազդիզանց օրէնքին, ինչպէս նոցա յարգում էին մեր նախնիքը ևս որ ես միտս եմ բերում իմ հօր ժամանակը, որ նստում էր այս մեծ գահի վերայ»։

Երբ որ նա սկսեց քննել և զննել բոլոր ուսումները հաստատապէս տեղեկացաւ, որ քրիստոնէից օրէնքը ամենից վեր է, այս պատճառով քրիստոնեայք մեծ պատվի և յարգանքի մէջ էին թագաւորի մօտ, և նորանից առատ պարգևներ ստանալով՝ ուրախ և համարձակ շրջում էին մեր բոլոր երկրի վերայ։ Նաև քրիստոնէից գլխաւորներին, որոնց եպիսկոպոս են անվանում, մեծ պարգևներ և ընծաներ էր տալի, ինչպէս հաւատարիմ վերակացուների։ Ցանձնում էր նոցա հեռաւոր երկիրները, նոքա ոչ մի ժամանակ չ'էին սխալվում արքունական մեծ գործերի մէջ։ Բայց դուք նոցանից

մինը երբէք չ՝յիշեցիք, այլ խլացրեցիք միշտ իմ ականջները, պատմելով նոցա վերայ ամեն կերպի չարութիւններ։ Տեսնում էք ահա, ինձ ստիպեցիք առնել այն, ինչոր չ՝էի կամենում, և մեծամեծ վնասներ պատճառեցիք մեր սահմաններում երկուանհաշտ թշնամեաց մէջը։ Ես արևելեան պատերազմում տակաւին ոչ մի գործ գլուխ չ՝բերած, դուք այս տեղ իմ տան մէջ պատերազմ վերկացրիք, որի վերջը աւելի վատ է լիներլու քան արտաքին թշնամեաց պատերազմը։

Թագաւորը բացի այս խօսքերից, միւս շատ բաներ ևս խօսեց բոլոր խորհրդականների հետ՝ բոլոր վնասը ձգելով մոգպետի և մոգերի վերայ։ Նորա բոլոր վազիրները և առաջին նախարարները, որ ատենում նստած լսում էին նորա յեղյեղուկ խօսքերը, ամօթից գլուխները խոնարհացրած ցած էին նայում և չէին կարողանում գլուխները վերև բարձրացնել։

Այդ նոցանից ոմանք հաճոյանալ կամենալով՝ ասում էին. «Այո՛, թագաւոր, ճշմարիտ է, ինչ որ ասացիր, այժմ ևս կարող ես ամենին ուղղութեամբ տիրել, ոչ ոք չէ կարող քո հրամանին ընդդիմանալ, որովհետև ասուածները քեզ տվել են այնպիսի զօրութիւն, որ ինչ կամենաս, կարող ես կատարել։ Ուրեմն մի նեղանալ և մի կոտրիլ մեր բոլորի սիրտը, կարելի է գործը յաջողութեամբ վերջանայ։ Երկայնամիտ կացիր, և համբերութեամբ թող տուր քրիստոնէից կրկին իրենց հաւատը պաշտել, այս կերպով կարող ես ապստամբներին հնազանդեցնել։

Այս խօսքերը թագաւորին հաճոյ թվեցան, շուտով կանչեց իւր մօտ բոլոր քրիստոնեայ ազգերին, որոնք նորա զօրքի մէջն էին և որոնց բռնութեամբ արգելել էին, որ ոչ ոք չ'համարձակվի յայտնի պաշտել Աստծոյն, որովհետև, որոնք ընդդիմացել էին շարչարեց և արգելեց յայտնի Աստված պաշտելու համար, իսկ ումանց ստիպեց ակամայ երկրպագութիւն տալ արեգակին և տրտմութեան սգի մէջ ձգեց բոլոր զօրականներին։ Այն օրը կրկին հրամայեց իւրեանց առաջվայ սովորութեան պէս հաստատուն մնալ քրիստոնէութեան հաւատի մէջ։ Իսկ նոցա, որոնք իւրեանց անձը մեղաւոր էին համարում և չ'էին կամենում շուտով առանց մեծ ապաշխարութեան գալ խառնվիլ քրիստոնէից կարգի մէջ, թագաւորը հրամայում էր զօռով բռնել և իւրեանց եկեղեցին տանել։ Եւ հոգևորականներին իշխանութիւն էր տալի իւրեանց օրէնքի համեմատ, ինչպէս իմանում են՝ այնպէս առնեն։ Եւ իւրաքանչիւրի ռոճիկները, որ արգելված էին, կրկին նշանակեց և նոցանից բանդը դրածներին հրամայեց արձակել և իւր մօտ բերել։ Նոցա թոյլ էր տալի միշտ իւր մօտ գալ առանց արգելանքի և ամեն բան, ինչ որ յառաջուց կարգադրել էին այնպէս և յորինում էր։ Նոցա հետ խոնարհութեամբ խօսում էր առաջվայ սովորութեան պէս։ Երբ որ այս ամեն բաներ կատարեց և կարգեց, նոցա աչքի առաջև թողութեան հրամարտակ ուղարկեց իւր իշխանութեան տակ գտնված բոլոր եկեղեցիները քրիստոնէից համար։

«Եթէ քրիստոնեայք բանդարկված լինին,

թագաւորի հրամանով արձակվին. և եթէ ում և ինչ կայքը յափշտակված լինի, յետ դարձնեն։ Նմանապէս և բոլոր երկիրները, որ խլվել են, թէ հայրենական, թէ պարգևած, թէ փողով առած, հրամայում ենք յետ դարձնել»։

Երբ բոլորին յայտնեց այս բանը, թագաւորը Հայերից խնդրում էր հաւատարմութեան վկայութիւն, և երդվելով պայման էր կապում նոցա հետ իւր բոլոր մեծամեծ խորհրդականների վկայութեամբ, թէ բոլորովին չեմ յիշել վրէժխնդիր լինելու։ Ինչպէս մինչև այժմ ունէիք ձեր մշմարիտ օրէնքը, այսուհետև ևս աւելի պինդ պահեցէք, բայց միայն մեր հպատակութենից մի՛ դուրս գալ։

Այս բոլորը գրում էր և ցոյց էր տալի Հայոց երկրին և միւս շատ կողմեր, որոնք ունէին քրիստոնէական հաւատ, իսկ ինքը խորամանկութեամբ շուտով ծածուկ դեսպան ուղարկեց Յունաց Մարկիանոս կայսրի մօտ։ Եւ ինչ ժամանակ նորանից ստոյգ իմացաւ, որ Յոյները հրաժարվեցին օգնութիւն տալ Հայերին զօրքով և այլ բաներով, կրկին իւր առաջվայ մոլորութեան մտքի մէջ ընկաւ։ Որովհետև կարծում էր թէ իւր պաշտօնեաների ձեռքով յաջողութիւն կ՚գտնէ և այնպէս էր մտածում թէ անմեն բան կ՚կատարէ իւր առաջվայ կարծեաց պէս։

Այց Հայերը, թէպէտ ընդունեցին թագաւորի խաբեբայ աղաչանաց գիրը, որ գրիչը ունէր կենաց բարի աւետիք, իսկ ներսիցը մահի դատնութիւն, զարմանալով նորա անհաստատ խորհուրդների վերայ, ասում էին միմեանց, թէ ինչ-

քան լիրբէ նորա խորամանկ խաբէութիւնը, որովհետև երկու երեք անգամ այսպիսի հնարներ գործ դնելով՝ խաբվելէ և չէ ամանչում։ Տեղեկանալով մեր անքակտելի միաբանութեանը, տակաւին լսբանում է մեր յետևիցն ընկնել և մեզ թուլացնել։ Մի՞թէ կարող ենք հաւատալ նորա անհաստատ հրամանին, ի՞նչ բարեգործութիւն ցոյց տրվեց այն բոլոր եկեղեցիներին, որոնք գտանվում են Պարսից երկրումը։ Ա՛հա՝ որ ինքը ըստ ինքեան չար է, այլոց համար չէ կարող բարի լինել և որ ինքը գնում է դէպի խաւարը, այլոց չի առաջնորդիլ դէպի ճշմարտութեան լոյսը. ինչպէս չ՚կայ անիրաւութեան մէջ արդարութիւն, այնպէս չ՚կայ ստութեան մէջ ճշմարտութիւն և կամ սատանայի մտքիցը խաղաղութեան ակնկալութիւն։

Այլ մենք, որ ազատվել ենք Աստուծոյ զօրութեամբը և հաւատով հաստատվել ենք Քրիստոսի յոյսի մէջ, որ եկաւ և առաւ մարդկային մարմին ուրբ կոյսիցը և միացնելով անբաժանելի աստվածութեան հետ, ընդունեց մեր մեղքերի շարչարանքը իւր մարմնի վերայ, և նորանով խաչվեց, և յարութիւն առնելից յետոյ՝ շատերին յայտնվեց և աշակերտների առաջև վերացաւ իւր հօր մօտ և նստեց նորա զօրութեան աջ կողմումը, նորան ենք հաւատում ճշմարիտ Աստված և նորան ենք սպասում, որ իւր հօր փառքովը և զօրութեանովը պէտք է գայ յարութիւն տալու և նորոգելու արարածների հնութիւնը և հատուցանել արդարներին և մեղաւորներին իւրաքանչիւր գործերին համեմատ։

Մենք չենք ծուլել ինչպէս երեխայ, չենք մոլորվել ինչպէս անտեղեակ և չենք խաբվել ինչպէս տգետ, այլ պատրաստ ենք ամենայն փորձութեան համբերելու։

Աղաչում ենք Աստծուն և խնդրում նորա մեծ ողորմութենից, որ ինչպէս սկսեցինք, այնպէս և՛ քաջութեամբ վերջացնենք և ոչ վատութեամբ։ Այժմ արևմուտքը և արևելքը իմացան, որ դուք Աստուծոյ դէմ էք կռվում և մեզ՝ի զուր տեղը ըսպանում մեր բոլոր աշխատանքի փոխարէն։ Վկայ է մեզ երկինքը երկնաւորներովը և երկիրը երկրաւորներովը, որ մեր մտքումը անգամ յանցաւորութիւն չենք մտածել, դուք փոխանակ վարձադրելու և բարութիւն առնելու, կամենում էք զրկել մեզ ճշմարիտ կեանքից, որ անհնար է և երբէք չէ կարելի։

Այժմ հաւատանք նորա անարժան բերանին, որ յառաջ մեզ չարչարելով ստիպում էր ուրանալ, իսկ այժմ առանց որ և իցէ բարութիւն առնելու՝ աւետեաց քարոզիչ կլինի։ Այն մարդոյ ակամայ խոստովանութեանը չենք կարող հաւատալ շուտով, որ հայհոյում էր Քրիստոսին և հաւատացեալներին ուրացնում էր նորանից։ Դա, որ երդվում էր իւր մոլորութեան տուտ կրօնովը ամենայն կերպի չարչարանք տալ եկեղեցու պաշտօնեաներին, այժմ գողի պէս ներս մտնելով շնորհակալութիւն է անում և կամենում է այսպիսով իւր բոլոր չարութիւնը թափել մեզ վերայ։ Ոչ դորան կ՝հաւատանք և ոչ քո տուտ հրամանը կ՝կատարենք։

Բայց թագաւորը, երբ տեսաւ, որ չէ կարող քանդել միաբանվածների հաստատութիւնը՝ կանչեց իւր մօտ մի դաւնութեամբ լի ծէր մարդ, որի մէջ սատանան բոյն էր դրել իւր բոլոր զօրութեամբ։ Դա շատ արիւնհեղութիւններ էր արել որի կամքին իւր մանկութենից կերակուր էին դարձել սրբերի անարատ մարմինները և նորա ծարաւութիւնը զովացնելու ըմբելի անմեղների արիւնը. թագաւորը նորա չարութեան վերայ յաւելացնում էր և իւր մահաբեր հրամանը, բոլոր կողմերից զօրքեր էր հաւաքում նմանապէս շատ փղեր և ուղարկում էր նորա հետ միասին Հայոց երկիրը։ Դա հասանելով Հայոց սահմանը՝ մտաւ Փայտակարան քաղաքը և բոլոր զօրքը սփռեց քաղաքի չորս կողմը, իւր չար խորհուրդը գործելու կատարելու համար։ Այսպէս չարաթոյն հին վիշապը մտնելով ամուր որջի մէջ զանազան կեղծաւորութեամբ իրեան աներկիւղ ցոյց տալով հեռաւորներին սատանում էր ահագին ձայնով, իսկ մերձաւորների վերայ թոյն էր փչում օձի պէս սողալով։ Սա էր Պարսից բոլոր տէրութեան գլխաւոր հրամանատարը Միհրներսեհ անունով։ Ո՞ր չ՝էր համարձակվում նորա հրամանի տակից դուրս գալ. և ոչ թէ միայն մեծերը և փոքրերը, այլև նոյն իսկ թագաւորը նորա հրամանը կատարում էր։ Քրիստոնէից վերայ այսպէս չար հալածմունք վերկացնելու միտքը ևս սա էր տվել թագաւորին։

Գ. ԳԼՈՒԽ

ԱՒՆԵԱՑ ԻՇԽԱՆՒ ԵՒ ԻՒՐ ԸՆԿԵՐՆԵՐԻ ԵՐԿՊԱՌԱԿՈՒԹԻՒՆԸ։

Ասենք այս տեղ եւ բոլորովին չէի վա-
խում պատմել մեր ազգի շարչարանքները, որոնք
ճշմարտութեան արտաքին թշնամիներից շարու-
թեամբ թափվեցան մեր վերայ, որոնք փոքր ջար-
դեցին մեզ, բայց շատ ջարդվեցան մեզանից, որով-
հետեւ տակաւին միաբան եւ հաւասար էինք։ Թէ-
պէտ ոմանք ներսոյ թշնամութիւն ունէին
ծածուկ իւրեանց սրտումը, բայց թշնամեաց աչ-
քին ահաւոր էր երեւում մեր միաբանութիւնը,
ինչպէս այս բանը երեւեցաւ նորանով, որ երկու
եւ երեք տեղ թշնամիքը չկարողացան կանգնել մեր
առաջը։ Բայց այսուհետեւ, ուր երկպառակու-
թիւնը լրոյ թեամբ ներս է մտանում եւ քանդում
միաբանութիւնը, երկնաւոր առաքինութիւնը հե-
ռանում է եւ երբ թագաւորում է անձնասիրութիւ-

նը, լացը և կոծը շատանում է։ Որովհետև այն անդամները, որոնք յառաջ պատկանում էին այս սուրբ մարմնոյն, երբ մարդ տեսանում է կտրված և ցամաքած իւր աչքի առաջև՝ արտասուք է թափում։ Մարդ աւելի է լցվում դառնութեամբ նորա համար, որի հոգին և մարմինը միասին են մեռանում։ Եթէ մի անձի համար այսպէս է, ո՞րքան ևս աւելի մի ամբողջ ազգի համար։

Բայց այստեղ մեր ողբը ոչ թէ մի ազգի վերայ է, այլ շատ ազգերի և ուշխարհների, որոնց վերայ կ՚խօսիմ կարգով, թէպէտ տրտմութեամբ։ Ահա ակամայ պատմում եմ շատերի մասին, որոնք զրկվեցին իւրեանց ճշմարիտ կեանքից և պատճառ դարձան շատերի կորչելուն, ումանց զրկելով միայն երևելի կեանքի բարութիւնից, իսկ ումանց երևելուցը և աներևութից միասին։ Բայց աւելի՝ մեծ տարաբաղդութիւնը այն է, որ այն կորստեան դուռը՝ որ բաց արին նոքա, միայն Աստուած կարող է փակել, որովհետև մարդկային կարողութիւնից վեր է նորա փակելը։

Այս անօրէն Միհրներսեհը, որովհետև առաջուց ևս ատելի էր Վասակի անօրէնութիւնը, այս պատճառով այժմ ևս մարդ ուղարկեց և նորան իւր մօտ հրաւիրեց։ Եւ որովհետև Վասակը արդէն առաջուց ջոկվել, հեռացել էր Հայոց միաբանութիւնից, վասն որոյ իսկոյն եկաւ նորա մօտ, և սկսեց ցոյց տալ նորան իւր հաւատարմութիւնը և Հայերի անիրաւ ապստամբութիւնը։ Իւրեանից ևս յաւելացնելով առաւելութեամբ պատմեց այն՝ ինչ որ Հայերը չ՚էին արել.

նա այսպիսի հնարներով աշխատում էր հաճոյանալ անօրէնին։

Մինրնեսեհը թէպէտ սրտանց շատ վատաբանում էր նորան, բայց արտաքուստ նորան պատվելով երկրաւոր մեծամեծ պարգևներ տվեց նորան։ Խոստացաւ նորան տալ աւելի մեծ իշխանութիւն, քան ինչքան ունէր ինքը և այնպիսի սուտ կարծիքներով լցրեց նորա գլուխը, որոնք իւր իշխանութենից վեր էին։ Նա ասում էր իբր թէ Վասակը կարող է հանանել մինչև թագաւորական աստիճանի, եթէ մի հնար գտնի Հայոց ուխտի միաբանութիւնը քանդելու և թագաւորի հրամանը կատարել տալու նոցա։

Երբ որ Վասակը յանձն առաւ այս բոլոր բաները կատարել նորա կամքին համաձայն, այն ժամանակը Մինրնեսեհը տեսանելով, որ նա թուլացել, ցնորվել և քանդվել է քրիստոնէից միաբանութեան հաստատութենից շատ ուրախացաւ իւր մէջ և կարծեց թէ ամենին ևս կարող է այսպէս անդառնալի կորստի մէջ ձգել։ Նա կարծում էր թէ Վասակի ուրացութեան պատճառը իւր հնարագիտութիւնն է, բայց չէր իմանում, որ նա իւր կամքովնէ բաժանվել սուրբ եկեղեցուցը և հեռացել, օտարացել Քրիստոսի սիրուցը։

Որովհետև նա մոռացաւ Աստուծոյ որդոյ զարմանը, չյիշեց սուրբ աւետարանի քարոզութիւնը, չվախեցաւ յաւիտենական տանջանքից, մինթարվեց բարի համբաւներից։ Ուրացաւ այն աւաղանը, որ նորան յղացաւ և չյիշեց սուրբ հոգուն, որ ծնեց նորան։ Անարգեց Քրիստոսի պատ-

վական մարմինը, որով սրբվեցաւ և ոտի տակ տրվեց այն կենդանի արիւնը, որով իւր մեղքերից ազատվեց։ Ջնջեց որդէգրութեան գիրը և իւր ձեռքով կոտրեց խորհրդաւոր մատանց հաստատուն կնիքը, դուրս եկաւ երանելեաց թվիցը և շատերին ապստամբեցրեց իւր հետ։

Կամակորութեամբը զիւ ապաշտութեան որդեգիր դառնալով՝ շարի ման դարձաւ. սատանան լցրեց նորա մէջ ամէն խորամանկութիւն։ Իւր ձեռն առաւ նորան ինչպէս վահան, փաթաթեց նորան ինչպէս զէնք և եղաւ նորա կամակատար զինվոր։ Նա կռվեց հնարքներով իմաստունների հետ և շատ խորամանկութեամբ գիտունների հետ, յայտնի անմեղների հետ և ծածուկ խորհրդականների հետ. ձեռք ձգեց, հանեց շատերին Քրիստոսի զօրքից և խառնեց գևերի զօրքերի հետ։ Գողի պէս սողալով, օձի պէս ներս մտաւ շատ շատ տեղեր, ուր ամբացրել էին հաւատացեալները փորելով նոցա հիմքը՝ առաւ, յափշտակեց և յայտնի գուրս հանեց շատ ազնուականների, աւելի շատ գիւղականների և մի քանի քահանաների։ Նորա կամակիցների անունները սոքա են. Ռըշտունեաց իշխանը Արտակ անունով. Խորխոռունեաց իշխանը Գաղիշոյ անունով, Վահեունեաց իշխանը Գետ անունով. Բագրատունեաց իշխանը Տիրոց անունով, Ապահունեաց իշխանը Մանէճ անունով, Գարեղէնից իշխանը Արտէն անունով, Ակէոյ իշխանը Ընջուղ անունով, Ուրծայ իշխանը Ներսէհ անունով, Գաղունեաց միւս իշխանը Վարազշապուհ անունով, Ամատունեաց իշխանը Մանէն անունով և այլ շատ

ազատ մարդիկ թագաւորական ցեղից, որոնց աստիկան են կոչում։

Վասակը իւր աշխարհի ոչ միայն բոլոր աշխարհականներին այլ և շատ հոգևորականներին դէպի ուրացութիւն դարձրեց, որոնց մէջ էին Զանգակ և Պետրոս սուտ քահանայքը և Սահակ սարգաւագը, որոնց ուղարկում էր նա անմեղ մարդկերանց մօտ խաբելու և մոլորեցնելու. սոքա սուրբ աւետարանովը երդում էին ուտում և ասում էին «Թագաւորը ամենիդ թոյլ կըտայ քրիստոնէութիւն պաշտելու»։ Այսպիսի խոստմանկութեամբ շատերին հեռացնում էին քրիստոնէից սուրբ միաբանութիւնից և տանում, խառնում էին ուրացողների բանակի հետ։

Եւ բոլոր ուրացողներին ժողովելով Վասակը մեծ զօրք կազմեց, շատերի մասին անուն անուն գրեց և ցոյց տվեց մեծ հազարապետին, մեծապէս պարծենալով իւր քաջութեան վերայ, թէ ի՞նչպէս շատերին խաբելոյ մոլորութեան հետևող շինեց, և ի՞նչպէս ճեղքեց և բաժանեց Հայոց զօրքը երկու հակառակ մասը։

Երբ նորա այս բոլոր չարութիւնները յաջողութիւն գտան, այն ժամանակը քանդեց Վրաց միաբանութիւնը Հայոց հետ, Աղուանների թոյլ չըտվեց յառաջ գնալ. Աղձնեաց աշխարհը ևս ճեղքեց մի և նոյն միաբանութիւնից։ Հրամարտակ գրեց Յունաստան Վասակ անունով մի մարդի մօտ, որ այն Վամիկոնեաց ցեղից էր, որոնք գտանվում էին Յունաց ծառայութեան մէջ և ցոյց տվեց նոցա բոլոր բանը վայր 'ի վերոյ ստութեամբ։ Այն թշվա-

ռութեան միջոցին այս Վասակը, որ չարագործ մարդ էր ստորին Հայաստանի մէջ զօրաւոր էր և հաւատարիմ Յունաց զօրքին, որ գտանվում էին Պարսից սահմանումը։ Այս Վասակը գտաւ միւս Վասակին գործակից իւր չարութիւնները կատարելու համար։

Սիւնեաց Վասակը միշտ գրում և ցոյց էր տալի միւս Վասակին, իբր թէ բոլոր Հայերը իւր հետ միաբանվել են. իսկ նա այդ գիրը մեծ զգուշութեամբ ուղարկում էր Թագաւորանիստ քաղաքը կայսերի մօտ, մինչև որ սուրբ եպիսկոպոսների միտքը ևս փոխեց Հայերիցը և բոլոր Յունական զօրքը երկրայութեան մէջ ձգեց։ Մանաւանդ որ ստոտ քահանաներին իւր համար զէնք առած՝ խրատում էր նոցա և ցոյց էր տալի այս քահանաներին իբրև ճշմարիտ մարդիկ, խաչով և աւետարանով ուղարկում էր նոցա և տարածում իւր ստոտանայական բոլոր ստութիւնները. Իւրեան և բոլոր ուրացողներին ցոյց էր տալի աւելի հաստատ քրիստոնէութեան մէջ, քան Հայոց բոլոր զօրքերը, երդումով հաստատում էր և ցոյց էր տալի կառավարութեան կողմից թողութեան բոլոր հրամանները։

Յոյները ևս այս էին ցանկանում, և ուրախութեամբ էին լսում այդ բաները։ Վասակի շնորհքը նոքա ևս մտքերը փոխելով՝ յետ քարշվեցին։

Վասակը այսպէս վարվում էր միւս բնակիչների հետ, որոնք բնակվում էին ամուր տեղերում, որք են Տմորացիք, Կորդուացիք, Արցախացիք, Աղուանք Վրացիք և Խաղտեացիք նոցա մօտ մարդ էր ու-

ղարկում և ստիպում էր, որ քրիստոնէից միաբանութենից ոչ ոքի իւրեանց մէջը չ՚ընդունեն։

Այն ժամանակը և սուելի էր յաջողում նորա չարութիւնը, որովհետև Հայոց զօրքը ոչ մի տեղից արտաքին օգնութիւն չ՚գտաւ, բացի այն Հոներից, որոնք դաշնակից էին եղել։ Բայց Վասակը նոցա համար և շատ ձիաւոր զօրք ժողովեց Պարսկաստանից և նորանով փակեց և արգելեց նոցա դուրս գալու ճանապարհը, որովհետև անդադար գրում էր Պարսից թագաւորին, մարդ էր ուղարկում նորա մօտ և շատ զօրքեր էր բերել տալի ճորայ անց.քը պահելու։ Նմանապէս ուղարկում էր այն տեղ այն բոլոր զօրքերը, որոնք գըտանվում էին Վրաստանումը, նոյնպէս Լմինաց, ճղբաց, Վատ, Գաւ, Գղվաթ, Խրսան, Հեճմատակ, Փասխ, Փոսխ և Փիւք աշխարհների, նոյնպէս Թաւասպարանի բոլոր զօրքերը թէ դաշտային և թէ լեռնային։ Ոմանց իւր կողմն էր քարշում կաշառքներով, պարգևներով և թագաւորական գանձերով, իսկ ոմանց թագաւորի սաստիկ հրամանովն էր վախեցնում։

Երբ այս բոլորը կատարեց և պատրաստեց թագաւորի հրամանին համեմատ, օրէցօր գրում և ցոյց էր տալի Պարսից մեծ Հազարապետին, որ ծածկվել, թագ էր կացել Փայտակարան քաղաքում։ Այնուհետև նա և սկսեց ներգործել շատ ազգերի դէմ, ոմանց աՀ տալով, իսկ ոմանց սիրով պարգևներ ընծայելով։ Կանչում էր իւր մօտ Վասակին և նորա հետի բոլոր իշխաններին, շատ պարգևներ էր տալի տէրութեան կողմից նոցա և այն զօրքե-

րին, որոնք նոցա կողմն էին։ Վասակը ուրացեալ քահանաներին տանում էր նորա առաջ, ցոյց էր տալի և յայտնում էր, թէ սոցանով կ՚քանդեմ և կ՚ցրեմ նոցա միաբանութեան ուխտը։ Հաղարապետը երբ որ այս բանը լսում էր, շատ շնորհակալութիւն էր առնում նոցա և մեծ յոյս էր տալի ասելով. «Եթէ յաղթութիւնը մեր կողմն լինի դոցա միւս քահանաների վերայ գլխաւոր կ՚կարգեմ և դոցա մեծ աշխատութիւնը թագաւորին ցոյց կ՚տամ»։

Այսպէս շարժեց Վասակը և շփոթեց Հայոց աշխարհը, մինչև անգամ բաժանեց շատ հարազատ եղբայրների միմեանցից, հայրերի միաբանութիւնը քանդեց և խաղաղութեան մէջը խռովութիւն ձգեց։

Այն իսկ իւր երկրումը կային նորա եղբօր որդիքներից երկուսը, որոնք միաբան էին քրիստոնէից սուրբ ուխտի հետ։ Վասակը նոցա համար գրեց և ցոյց տվեց տէրութեանը և իշխանութիւն ստանալով նոցա վերայ, հանեց և աքսորեց իւրեանց երկրիցը դէպի անդարձ աքսորանք։ Զարշարեց և փախցրեց այն տեղի բոլոր վարդապետներին, որոնք հանդիմանում էին անզեղջ ամբարշտութիւնը։ Ամենայն կերպի չարութիւն գործ դրեց ճշմարտութեան դէմ, և ինչ որ անօրէն հեթանոսները չէին իմանում, նա ցոյց էր տալի նոցա. թէ ի՞նչ հնարքով արդեօք կարող է ջնջել քրիստոնէութեան ուխտը Հայոց երկրիցը։

Երբ որ Միհրներսեհը տեսաւ այսքան չարութիւն Վասակի մէջ, նորա վերայ աւելի յոյս դրեց,

քան իւրեանց։ Նա հարցանում և ստուգիւ իմանում էր, թէ քանի մարդ կայ Հայոց աշխարհումը Վարդանի զօրքի մէջ։ Ինչ ժամանակ իմացաւ նորանից, որ վաթսուն հազարից աւելի են, տեղեկութիւն խնդրեց նմանապէս իւրաքանչիւր մարդոյ քաջութեան մասին, հարցրեց նաև թէ քանիսն են սպառազինված և քանիսը առանց զէնքի միայն աղեղնաւոր, նմանապէս հարցրեց հետևակ վահանաւոր զօրքի համարը։

Ինչ ժամանակ Միհրներսեհ իմացաւ բոլոր զօրքի թիւը և համարը, աւելի կամեցաւ տեղեկանալ և թէ քանիսներն աւելի գլխաւոր քաջնահատակները, որ նոցանից իւրաքանչիւրի դէմ երեք քաջ մարդ պատրաստի, բացի միւս զօրքերը։ Նմանապէս տեղեկանում էր քանի դրօշակ ունին, զօրքը քանի՛ գունդ կ՚բաժանեն, և որոնք նոցանից զօրագլուխ կ՚կարգվին, օ՛ր զօրավարը, ի՞նչ կողմից պատերազմ կ՚մտնի, ի՞նչ են նոցա նիզակակիցների անունները, քանի պատերազմական փող կ՚հնչեն կռվի ժամանակը։ Բանակի տեղը կ՚պնդացնեն արդեօք, թէ արձակ բանակ կ՚դնեն։ Իւրաքանչիւրը իւր յանդիպակաց զօրքի դէմ կ՚պատերազմի՞ արդեօք, թէ բոլորը մի տեղի վերայ կ՚յարձակվեն, Ո՞վքեր են արդեօք նոցանից թուլամիտ և որոնք մինչև 'ի մահ պատերազմող։

Երբ որ այս բոլորը նոցանից տեղեկացաւ, կանչեց իւր բոլոր զօրավարներին, բոլորին պատվիրեց Վասակի ներկայութեամբը, որ ամենը նորա հրամանը կատարեն։ Եւ բոլոր զօրքերը իւրեանց զօրագլխներովը յանձնեց մի իշխան մարդոյ, որի ա-

նունն էր Մուշկան Նիւսալաւուրտ։ Իսկ ինքը յետ դառնալով՝ գնաց կրկին դէպի արևելեան աշխարհը և ներկայանալով թագաւորին, պատմեց գործի բոլոր իրողութիւնը, իւր խնամատուն հնարքը և Զաւակի խաբելոյ խորամանկութիւնը, թէ ի՞նչպէս նա կամենալով ծածկել մեղանից իւր առաջվայ ամբարշտութիւնը, երկպառակեցրեց Հայոց զօրքը։

Երբ որ թագաւորը այս ամենը լսեց մեծ հազարապետիցը, շատ նեղացաւ և անուտ երդում ուտելով՝ ասեց, եթէ այն անօրէնը՝ կենդանի յետ դառնայ մեծ պատերազմիցը՝ մեծ անարգանքով նորան մահվան դառը բաժակը կ՝խմացնեմ։

Ե. ԳԼՈՒԽ

ԱՐԵՒԵԼԵԱՆ ԱԶԳԵՐՒ ՑԱՐՁԱԿՎԻԼԸ։

Աստուծոց սէրը մեծ է քան բոլոր երկրաւոր մեծութիւնները։ Դա մարդկերանցը այնպէս է աներկիւղ շինում, ինչպէս անմարմին հրեշտակների զօրքը, որի ապացոյց մարդ կարող է տեսանել նոյն իսկ սկզբից շատ անգամ, շատ տեղեր։ Այն մարդիկը, որ Աստուծոյ սիրովը, ինչպէս զէնքով վառվելէին, ոչինչ չ'նենգեցին երկնչելով ինչպէս տրկար երկչոտներ։ Մահը, կայքի յափշտակութիւնը, սիրելիների սպանվիլը, ընտանեաց գերութիւնը, հայրենեաց երկրից դուրս հալածվիլը և օտար երկիր աքսորվիլը. այս բոլոր չարչարանքները արհամարհեցին, որ միմիայն միարան մնան Աստուծոյ հետ, որ միայն նորանից չաքսորվին և միայն նորան համարեցին բոլոր երևելի մեծութիւնը։ Ու-

բացու թիւնը համարում էին մեռելու թիւն, իսկ մահը Աստուծոյ համար՝ անանցանելի կենդանու թիւն, երկրումը ծառայելը իւրեանց կեանքի ազատու թիւն համարեցին և զէպի օտարու թիւն աքսորվելը Աստուծոյ հետ ապրիլ։

Ինչպէս այժմ՝ տեսանք մեր աչքովը, որ մի և նոյն նահատակու թիւնը կատարեց մեր Հայոց աշխարհը։

Երբ մեծ Վարդանը տեսաւ իւր աշխարհի երկճեղքիլը, բոլորովին չ՝վախեց թերահաւատու թեամբ։ Թէպէտ ստուգիւ իմացաւ միւս շատերի երկմտու թիւնը ևս, որոնք տակաւին նորա հետ միաբանված էին, բայց առանց երկնչելու քաջալերեց իւր անձը և բոլոր զօրքը, որովհետև քաջու թեամբ տիրել էր արդէն թագաւորանիստ տեղերին այն նախարարների միաբանու թեամբ, որոնք չը բաժանվեցան տուրբ ուխտի միաբանու թենից։ Հրաման տվեց բոլոր զօրքին ժողովվիլ Արտաշատ քաղաքը և այն իշխանների փոխանակ, որոնք նորանից բաժանվելով գնացին Սիւնեաց իշխանի կողմը, կարգեց իւր եղբայրներին, որդկերանցը կամ եղբօրորդկերանցը և իւրաքանչիւրին զօրք յանձնեց, որովհետև տակաւին ինքն էր կառավարում բոլոր աշխարհը։

Սոքա ամենը շուտով իւրեանց զօրքերով և բոլոր պատրաստու թեամբ եկան, հասան պատերազմի տեղը, նմանապէս եկան նոքա, որոնք հաստատ էին մնացել քրիստոնէից ուխտի մէջ. որք են՝ Դ,երշապուհ Արծրունի, Խորէն Խորխորունի, ինքը սպարապետ Վարդանը, Արտակ Պալունի, Վահան Ա-

մատունի, Վահանանաց գունդը, Թաթոլ Դիմաքսեան, Արշաւիր Արշարունի, Շմաւոն Անձաւացի, Ջաճատ Գնթունի, Ադոմ Գնունի. Խոսրով Գաբեղեան, Կարէն Սահեռունի, Հմայեակ Դիմաքսեան և միւս Գաղբիկ Դիմաքսեան, Ներսէհ Քաջբերունի, Փարսման Մանդակունի, Արսէն Ընձայացի, Այրուկ Սկկունի, Վրէն Տաշրացի, Ապրսամ Արծրունեաց. Շահ-թագաւորական ախոռապետը, Խուրս Սրուանձտեաց, Քաղեանք, Ակէացիք, Տրպատունիք, Ռըշտունեաց զօրքը և թագաւորի բոլոր գործակատարները իւրեանց զօրքերովը։

Այդպա բոլորը միասին ժողովված՝ գնացին, հասան Արտազու պատերազմի դաշտը։ Բոլոր զօրքի թիւը հնծելագունդ և հետեւակ էր վաթսուն և վեց հազար։

Նոցա հետ եկան և տուրը Յովսէփ Եպիսկոպոսը, Ղևոնդ էրէցը, միւս շատ քահանայք և այլ հոգևորականք։ Որովհետև նոքա ևս բոլորովին չվախեցան պատերազմ դուրս գալ, պատճառը որ այս կռիւը ոչ թէ մարմնական էին համարում, այլ հոգևոր առաքինութիւն, վասն որոյ ցանկանում էին մասնակից լինել քաջ նահատակներին։

Ա արդան սպարապետը նախարարների միաբանութեամբ սկսեց այսպէս խօսել։

«Դուս և դուք միասին շատ պատերազմ ենք տրվել, երբեմն մենք ենք քաջութեամբ յաղթել թշնամեացը, իսկ երբեմն նոքա են յաղթել մեզ, և շատ անգամ յաղթել ենք, քան թէ յաղթվել։ Բայց այն բոլոր յաղթութիւնները մարմնոյ պար-

ծանք էին, որովհետև անցաւոր թագաւորի հրամանովն էինք պատերազմում։ Նա՝ որ պատերազմից փախչում էր, վատամարդի էր երևում աշխարհումը և անողորմ մահ էր ստանում թագաւորից։ Իսկ նա՝ որ քաջութեամբ յառաջ էր գնում, քաջ անուն էր ժառանգում և մեծամեծ պարգևներ էր ստանում անցաւոր և մահկանացու թագաւորից։ Եւ ամեն մինը մեզանից ունի իւր մարմնոյ վերայ շատ վերքեր և սպիք, որոնց համար ստացել է մեծամեծ պարգևներ։ Այս բոլոր քաջութիւնները անարգ և անօգուտ եմ համարում, և բոլոր պարգևները ունայն բաներ, որովհետև ամենը անցաւոր են։

Ուրեմն եթէ մահկանացու թագաւորի համար այնպիսի քաջութիւններ էինք գործում, ո՞րքան աւելի պէտք է գործենք մեր անմահ թագաւորի համար, որ տէր է կենդանիների և մեռեալների և գտնում է ամեն մարդոյ իւր գործքերին համեմատ։ Եթէ մենք խորը ծերութեան ևս հասնենք, այնուամենայնիւ մահու բաժին պէտք է լինինք։ Ուրեմն շտապենք կենդանի Աստուծոյ մօտ, որից բոլորովին չենք բաժանվիլ։

«Այժմ աղաչում եմ ձեզ, ով իմ քաջ նիզակակիցներ, մանաւանդ որ ձեզանից շատերը քաջութեամբ առաւել է՛ք ինձանից և ազգաւ երևելի, քան ես, բայց որովհետև դուք ձեր յօժար կամքովը ինձ ընտրեցիք ձեզ առաջնորդ և զօրապետ, վասն որոյ մեծամեծներդ և փոքրիներդ բաղցրութեամբ լսեցէ՛ք իմ խօսքերը։ Չ՝երկնչինք հեթանոսների շատութիւնից և չ՝դարձնենք մեր թիկուն-

քը մահկանացու մարդոյ սրի առաջև։ Եթէ Աստուած մեզ յաղթութիւն տայ, ջարդենք նոցա զօրութիւնը, որ բարձրանայ ճշմարտութեան կողմը, իսկ եթէ հասել է ժամանակը սրբութեամբ մեռնելու այս պատերազմի մէջ, ընդունենք սրտի ուրախութեամբ, բայց միայն մեր առաքինի քաջութեան մեջ վատութիւն չ'խառնենք։

«Անաւանդ որ ես տակաւին չ'եմ մոռացել իմ և ձեր ոմանց գործքը, որ անօրէն իշխանին խաբեցինք ինչպէս մի անպիտան երեխայ, նորա ամբարշտութեան կամքը առերես կատարեցինք, բայց Տէրը ինքը իմանում է, թէ մեր սրտումը ինչպէս նորանից անբակտելի էինք մնացել։

Այս բանը ձեզ ինքներիդ յայտնի է, որ մենք հընարք էինք գտնում մեր սիրելիները մեծ նեղութիւնից ազատելու, որ նոցա հետ միասին կռվենք անօրէն իշխանի հետ, մեր հայրենական աստուածատուր օրէնքի համար, բայց երբ նոցա չ'կարողանանք օգնել, անկարելի է որ մարմնաւոր սիրոյ համար՝ Աստուծոյն մարդկերանց հետ փոխենք։

«Երկու և երեք կռվի մէջ Տէրը ինքը մեծ զօրութեամբ օգնեց մեզ, այնպէս որ քաջութեան անուն ստացանք, թագաւորի զօրքը ջարդուփշուր արինք, մոգերին անողորմ սատակեցրինք, կռապաշտութեան պղծութիւնը զանազան տեղերից արրեցինք, թագաւորի անօրէն հրամանը անարգեցինք, ծովի կատաղութիւնը հանդարտացրինք, սարացած ալիքները ցած իջան, բարձրագնդ փրփուրը անհետացաւ, գազանական կատաղութիւնը դադարեց։ Նա՝ որ ամպերի վերայ էր գտնում, ցած

իջանելով աւելի քան սովորական ընութիւնը, խոնարհեցաւ մեզ հետ խօսելու։ Դա՝ որ կամենում էր իւր հրամանի զօրութեամբը կատարել իւր շարութիւնը եկեղեցու դէմ, այժմ աղեղով, նիզակով և սրով է կռվում։ Դա՝ որ կարծում էր, թէ մենք շորի պէս ենք հագել քրիստոնէութիւնը, այժըմ ինչպէս մեր մարմնոյ գոյնը, չէ կարողանում փոխել և չէ կարող մինչև վերջը, որովհետև սորա հիմը դրած է անշարժ քարի վերայ, ոչ թէ երկրումը, այլ վերև երկնքումը, ուր ոչ անձրև է գալի և ոչ քամիներ են փչում և հեղեղներ են վերկացնում։ Մենք էս թէպէտ մարմնով երկրումն ենք, բայց հաւատով երկնքումը ենք հաստատված, որ տեղ ոչ ոք չէ կարող հասնել Քրիստոսի անձեռագործ շինուածքին։

«Հաստատ կացէք մեր ճշմարիտ զօրավարի վերայ, որ երբէք չի մոռանալ ձեր նահատակութեան գործը։ Ո՞վ քաջեր, այս մի մեծ ողորմութիւն է Աստուածանից, որ նա ցոյց է տալի իւր զօրութիւնը մեզ։ Եթէ այլոց կոտորելով Աստուածային օրէնքի համար, մեծ պարծանք ստացանք և մեր ազգի քաջանունը թողեցինք եկեղեցու մէջ, սորա վարձատրութիւնը Աստուածանից է, որ նա պահում է մեր իրաքանչիւրի համար, մեր սրտի յօժարութեան և գործքերի արժանաւորութեան համեմատ. ինչ քան աւելի կ'լինի, եթէ մենք ինքներս մեռանենք մեր Տէր Յիսուս Քրիստոսի վկայութեան համար, որին երկնաւորներն անգամ կըցանկանային, եթէ հնար լինէր։ Այս պարգևները ամենի համար չէ նշանակած, այլ ում կամ-

նում է բարերար Տէրը և այս պարգևները ոչ թէ մեր արդար գործքերի վարձն է, այլ աննախանձ Աստուծոյ բարութենիցը, ինչպէս գրած է տուրը կոտակարանումը «Որ տեղ շատացան մեղքերը, այն տեղ շատացաւ նոյնպէս Աստուծոյ ողորմութիւնը»։

Այս բանը շատ յարմարութիւն ունի մեզ հետ, ինչպէս մենք մարդկերանց առաջև երևեցանք ամբարիշտներ, նոյնպէս կրկնապատիկ կերևանք արդար մարդկերանց, հրեշտակների և ամենի Հօր առաջև։ Որովհետև երբ լսեցին մարդիկ, թէ ուրացել ենք մեր կրօնը, շատ արտասուք թափեցին մեր վերայ, մանաւանդ մեր սիրելիքը. նաև մեր ընկերները բարկացած, սրերով էին սպառնում մեզ և կամենում էին դառը մահվան բաժակը մեզ խմացնել և մեր ծառայքը մեզանից օտարացած՝ յետ էին փախչում։ Իսկ օտարները, որոնք լսել է ն մեր քրիստոնէութեան անունը, որովհետև չէին իմանում մեր ներքին խորհուրդը, ողբալով՝ լաց էին լինում մեզ վերայ և չիմանալով՝ շատ հայհոյում էին մեզ։ Բայց աւելի մեծն ասեմ, ոչ միայն մարդիկ երկրումը, այլ նոյն իսկ հրեշտակները երկրնքումը իւրեանց երեսները դարձրեցին մեզանից, որ տխուր դէմքով չնայեն մեզ վերայ։

Այժմ ահա, եկաւ, հասաւ ժամանակը, որ մեր անվան կեղտը հեռացնենք մեզանից։ Այն ժամանակը ինչպէս նեղացած սգաւոր, հոգով և մարմնով էինք տրտմած, այսօր զվարթ հոգով և մարմնով ենք պայծառացած՝ որովհետև տեսնում ենք բարերար Աստուն, որ առաջնորդում է մեզ, մեր ղօրավարը մարդ չէ, այլ բոլոր մարտիրոսների զո-

բազմութիւն։ Երկիւղը թերահաւատութեան նշան է, մենք վաղենք հեռացրել մեզանից թերահաւատութիւնը. նորա հետ և երկիւղը կ՝հեռանայ, և կանհետանայ մեր մռքերիցը և խորհուրդներիցը»։

Ադաբինի զօրավարը այս ամենը խօսեց բոլոր բազմութեան հետ, բայց առանձին առանձին և ծածուկ քաջալերում էր և սրտապնդում և նոցա պակասութիւնը լրացնում։ Ինչ որ զօրքին պակաս էր իւրեանից և ընկերներից էր տալի, ով զէնք չունէր, զէնք էր պատրաստում նորա համար, ով շոր չունէր, շորեր էր հագցնում և ով ձի չունէր, ձի էր տալի։ Եւ առատ ռոճիկով ուրախացնում էր ամենին և ինքն ուրախ էր իրեւում ամենի առաջև։ Եւ պատերազմական քաջ մարդկերանց պատմութիւնը միշտ կրկնում էր նոցա, որովհետև նա իւր մանկութենից տեղեակ էր Աստուածաշունչ գրքին, այս պատճառով իւր ձեռին բռնած Մակաբայեցւոց քաջութեան նկարագրութիւնը, բարձրը ձայնով կարդում էր ամենի առաջև. իւր առատ խօսքերովը նոցա միտքը բացադրում էր, թէ ինչպէս նոքա ընդդիմանալով կռվեցին Անտիոքացւոց թագաւորի դէմ՝ աստուածատուր օրէնքների համար։ Որոնք թէպէտ նոյն բանի համար մեռան, բայց նոցա քաջութեան հաւիրաւը անմահ հաստատեցին մեր օրը, ոչ միայն երկրումը, այլև անմոռանալի է երկնքումը։ Դմանապէս ցոյց տվեց զօրքին, թէ ինչպէս Մաղաթիայի ազգատոհմները քանդվեցին, բաժանվեցին նորա միաբանութիւնից, կատարեցին թագաւորի հրամանը, շինեցին կռատուններ, պրոշձուութեան զոհ մատուցին, մոլորվեցան Աստվածա-

նից և մահվան պատիժ ընդունեցին սուրբ միարանութենից։ Բայց Մաղաթիան և նորա ընկերները ամենևին չվախեցան, չվթարեցան, այլ աւելի պնդվեցան և երկար ժամանակ պատերազմ տվին։ Զարդանը այս խօսելից յետոյ, պատերազմի դաշտի մէջ կանգնած, զօրքը կարգաւորեց և բոլոր կողմերումը հեծելազունդ կարգեց։

Նաւականի ժամանակից յետոյ Պարսից զօրագլուխը բոլոր հեթանոսական բազմութեան հետ միասին, եկաւ, հասաւ Հայոց աշխարհը, Հէր և Զաւանդ գաւառները և այն տեղ մնալով բանակ դրեց, փոսեր փորեց, մարտկոցներ շինեց, պատէշներ կանգնեցրեց և բոլոր բանակատեղը ամեն պատրաստութենով քաղաքի նման պնդացրեց։ Մի մեծ զօրաբաժին ուղարկեց շրջել բոլոր կողմերը և թալանել բոլոր գաւառները։ Երբ որ Հայոց զօրքերը այս բանը լսեցին, ընտրեցին բոլոր զօրականներից մի քաջ և խնամատուն իշխան Ամատունեաց ազգից Առանձար անունով և ուղարկեցին նոցա դէմ։ Առանձար իշխանը յարձակվեցաւ նոցա վերայ երկու հազար զօրքով, ջարդուփշուր արեց թշնամեաց բազմութիւնը, իսկ սաղ մնացածներին յետ փախցրեց իւրեանց բանակի մէջ և ինքը այն տեղից առողջութեամբ յետ դարձաւ։ Այն օրը Հայոց զօրքերը մեծ ուրախութեան հանդէս կատարեցին։

Բայց ուրացեալ Վասակը կրկին անգամ իւր առաջվայ կեղծաւորութեան պէս հնարներ էր պրտրտում։ Նա մեն եկաւ այն սուտ քահանաների հետ, որոնց վերայ խօսեցինք. Թադաւորի հրամա-

նոքը նոցա պատգամաւոր էր ուղարկում զանազան տեղեր, որոնք երդումով հաստատում էին, թէ կրկին անգամ իւրեանց քրիստոնէութիւնը կ՚ունենան։

Երկար ժամանակ այսպիսի հնարներ գործ դրելով՝ չկարողացաւ Հայոց միաբանութիւնը քանդել, մանաւանդ հոգևորականներին, որոնք չէին հեռացել զօրականներից։ Երանելի Ղևոնդ էրէց հրաման ստանալով իւր սուրբ ընկերներից, Յովսէփ մեծ եպիսկոպոսից, բոլոր իշխաններից, քահանաներից և զօրավարներից, բացեց իւր բերանը և բարձր ձայնով այս հետևեալ քարոզը կարդաց բոլոր զօրքի առաջև։

«Ձեր միտը բերէք ամենեքեան, այն նախահայրերին, որոնք կային զանազան ժամանակներում Աստուծոյ Որդու աշխարհ գալից յառաջ։ Երբ շար սատանան հանեց, հեռացրեց մեզ աստուածատուն դրախտից, մենք ընկանք ողորմ դատաստանի տակ, մեր մեղքի համար, որ մեր ազատ կամքովը անարժանութեամբ գործեցինք և Աստուծոյ արարչական զօրութիւնը շարժեցինք մեր վերայ բարկութեամբ։ և ողորմած դատաւորին ստիպեցինք վրէժխնդիր լինել արարածներից, մինչև որ հրաման տվեց երկնային ծովին թափվելու մեր վերայ և երկրի պինդ յատակը ծակվելով դուրս թափեց իւր ծոցից հեղեղներ։ Այսպէս երկրային ջրերը մեզ համար տանջանքի գործիք դարձան մեզանից վրէժ առնելու առանց բարեխօսի։

Մինչև արդարոյ կատարեալ գտնվեցաւ մարդկային ազգի մէջ, որ մեղմացրեց տէրունական բար-

կութեան սաստկութիւնը և դարձաւ նոր սկիզբը մարդկային ազգի բազմանալուն։ Նմանապէս Աբրահամը իւր փորձութեան մէջ առաքինի երևեցաւ, և Աստուծուց ընդունած պարգևը կրկին իւր ձեռքովը Աստուծոյն նվիրեց, որանով Աստուած նշան տվեց Քրիստոսի համար, որովհետև նորա մէջ տպաւորված տեսնվումէր Աստուծոյ որդւոյ անեղութեան գաղուստը, անրմբռնվելու ըմբռնվելը և անմահի զենվելը, որ իւր մահովը խափանեց մահվան իշխանութիւնը։ Եթէ մահը մեռնումէ մահով, ուրեմն չվախենք մասնակից լինելու Քրիստոսի մահին, որովհետև, ում հետ մեռնենք նորա հետ և կ'կենդանանանք։

Վաչեր, ձեր միտը բերէք մեծ Մովսէսին, որ տակաւին չ'հասած այրութեան հասակին, նահատակութեան սուրը խորհուրդը երևեցաւ նորա տղայական հասակին մէջ։ Եգիպտացւոց թագաւորի տունը ծառայումէր նորան և ակամայ տայնկութեամբ մեծացնումէր նորան։ Նա ժողովուրդը նեղութենից փրկելու ժամանակը, միջնորդ դարձաւ երկնքի և երկրի մէջ, նաև Եգիպտացւոց Աստված անվանվեցաւ։ Որովհետև երբ զօրանումէր սուրբ խորհուրդը, նա իւր ձեռովը վրէժխնդիր էր լինումէ Եգիպտացիներից, իսկ երբ աստվածային ՀՊՅՏՆՈՒԹԻՆԸ երևումէր նորա վերայ՝ նա իւր գաւազանով մեծամեծ հրաշքներ էր գործումէ։ Եւ սուրբ նախանձից շարժվելով՝ սպանեց Եգիպտացուն և աւազի մէջը թաղեց. այս պատճառով Աստված նորան մեծ անուն էր տալի և կարգումէր ժողովրդի առաջնորդ։ Բայց զարմանալին այն է, որ

արիւն թափելով արդարացաւ և անմահացաւ մեծ քան բոլոր մարգարէքը, ոչ միայն արտաքին թըշնամիներին կոտորելով, այլ իւր ազգատոհմը ևս, որոնք անապատումը Աստուծոյն փոխեցին որթի հետ։

Եթէ Մովսէսը այնքան հեռու ժամանակից այնպէս վրէժխնդիր էր լինում Աստուծոյ որդու գալըստեան համար, մենք, որ աչքով տեսանք և վայելեցինք նորա երկնաւոր առատ պարգևները, աւելի պէտք է վրէժխնդիր լինինք այս մօտակայ ճշմարտութեան համար, որ իւր անձը մահով վերջացրեց մեր մեղքերի պատճառով և արդարացրեց մեզ անտանելի դատապարտութենից, ուրեմն մենք ևս մահով վերջացնենք մեր անձը անմահ զօրութեան համար, որ առաջվայ վրէժխնդրողներից պակաս չ՝գտանվինք։

«Ձեր միտը բերէք Փենեհէզ մեծ քահանան, որ իւր եղբայրներին սպանելով՝ արեց պղծութիւնը պատերազմի ժամանակը և երդումով հաստատեց քահանայութիւնը։ Մի՛ք մոռանալ և Եղիա ստրը մարգարէին, որ չ՝կարողանալով հանդարտութեամբ նայել Աքաբ՝ կռապաշտութեան վերայ՝ արդար նախանձովը վառված ուր հարիւր մարդ սպանեց իւր սուրական ձեռքովը. իսկ հարիւրին կրակի լոցի կերակուր շինեց։ Այսպէս ասուած՝ այն վրէժը պահանջելով՝ անարիւնելի հրեղէն կառքովը երկրից երկինք վերացաւ։ Բայց ձեզ համար աւելի մեծ երանութիւն է պատրաստված, ձեզ համար Աստված կառք չէ ուղարկել երկինքը վերանալու. այլ նոյն իսկ ինքը կառքերի և ձիերի Տէ-

ը իւր հզօր զօրութիւնովը և սուրբ հրեշտակներովը ձեր առաջ գալով՝ ամենից համար թեւեր կըբուսացնէ, որ ճանապարհորդակից և քաղաքակից լինինք նորան։

«Արեան ինչի՞ միւս անգամ կրկնեմ ձեր քաջ նահատակութեան առաջև, զուք ինձանից աւելի տեղեակ և հմուտ է.ք աստուածային գրքերին։ Դաւիթը իւր մանկութեան ժամանակ քարով կործանեց մեղէն մեծ բլուրը և բոլորովին չ՝վախեց հաստատանգամ Գողիադի ահագին սրից։ Յրեց թըշնամեաց բանակը, ազատեց Իսրայելացւոց զօրքը մահից և ժողովուրդը գերութենից, դարձաւ Իսրայելացւոց թագաւորների մեծը և անվանվեցաւ Աստուծոյ որդոյ հայր։ Քրիստոս Դաւթի որդի անվանվեցաւ այն ժամանակի պիտոյքին համեմատ, բայց զուք ճշմարտապէս ծնվելով սուրբ Հոգուցը՝ Աստուծոյ որդիք է.ք և Քրիստոսի ժառանգակիցներ։ Ո՛չ ոք ձեր ժառանգութեան բաժինը թող չ՝խլէ ձեզանից և ձեզ օտար և խորթ շինելով՝ անբաժին թողէ։

«Ձեր միտը բերէ.ք Իսրայելացւոց առաջվայ բոլոր զօրավարներին, Յեսուին, Գեդէօնին, Եփթային և միւս բոլորին, որոնք ճշմարիտ հաւատով կոտորեցին հեթանոսների զօրքերը և երկիրը մաքրեցին պիղծ կռապաշտութենից։ Նոցա հաստատ արդարագործութեան համար, որոնք ո՛չ մի երկմտութիւն չ՝ցոյց տվին իւրեանց խորհուրդների մէջ, արեգակը և լուսինը առանց ականջի լսեցին և կատարեցին նորա հրամանը։ Ծովը և գետերը բնութեան կարգերից դուրս՝ ճանապարհ բացարին նո-

ցա առաջ։ Երիքով քաղաքի բարձր պարիսպները լոկ ձայնով քանդվեցին և կործանվեցին արդար օրէնքների վրէժխնդրութեան համար։ Եւ միւս բոլոր մարդիկը, որոնք հաւատի համար քաջագործութիւններ արին զանազան ժամանակներում, զոհութիւն ստացան մարդկերանցից և արդարացան Աստուածանից։

«Մի և նոյն տէրն է, որ սկզբից մինչև այսօր կայ և պետք է լինի ապագայում մինչև յաւիտեան և յաւիտենից առաւել։ Նա չէ նորոգվում, որովհետև չէ հնանում, չէ մանկանում, որովհետև չէ ծերանում։ Նորա անփոփոխելի բնութիւնը չէ փոխվում, ինչպէս ինքը ասում էր սուրբ մարգարէից բերանովը։ «Ես եմ, ես նոյն եմ սկզբից մինչև յաւիտեան, իմ փառքը ուրիշի չեմ տալ և ոչ իմ քաջութիւնը կուռքերին։

«Եղբարք, այս բաները իմանալով, թուլութեամբ չվախենք, այլ պինդ սրտով և հաստատ հաւատով, յոժարութեամբ յարձակվինք թշնամեաց վերայ, որ վեր են կացել մեզ վերայ։ Մեր յոյսը կրկնապատիկ է, եթէ մեռնենք կեանք է մեզ համար, եթէ մեռցնենք նոյնպէս կեանք է սպասում մեզ։ Մեր միտը բերե՛նք Առաքելոց այն խօսքը, որ ասում է «Այնուրախութեանփոխանակ, որ պատրաստած էր նորա համար, յանձն առաւ մահվան համբերութիւնը և խաչի շարչարանքը. այս պատճառով Աստուած նորան աւելի բարձրացրեց և տվեց նորան այնպիսի անուն, որ բարձր է քան ամեն անուն, որովհետև Յիսուսի Քրիստոսի անունովը են ծունր կրկնում բոլոր երկնաւորները, երկ-

բաւորները և սանդարամետականները։

՝Նա՝ որ ճշմարտութեամբ միացել է Աստուծոյ որդոյ հետ՝ հոգու աչքով տեսնում է իմանալի արեգական ճառագայթների անսրեցեալ մաքուր լոյսը, որ ամեն ժամանակ և ամեն օր իւր բարձրութեան մէջ ծագելով՝ երևում է ամենին և զէպի ինքն է ձգում մաքուր, սրբատեսիլ, անպղտոր զէմքերը և թափանցնելով երկնքիցը՝ մօտեցնում է անմերձենալի լուսին, որ երկրպագութիւն մատուցանեն միացած զօրութեան երրորդութեանը։ Ով որ բարձրացել է մտքով աստուածեղէն սանդուղղների վերայ, հասել է նորա արքայութեան մէջ և տեսել է նորա բոլոր մեծութիւնը, նա միայն կ՝ժառանգէ անանցանելի ուրախութիւնը և անտրտմելի մխիթարութիւնը։

«Եմ պատվական պարոնայք, այս չափ բարձրանալից յետոյ՝ չ՝գլորվենք այս տեղից կրկին ստորին երկիրը, այլ այն բարձրութեան մէջը հաստատ մնանք. թէպէտև նայելով այս աշխարհի վերայ, ամեն տեղ տեսնենք ապականութիւն և պղծութիւն։ Որովհետև ինչ տարակուսութեան դառնութիւն ասես, որ չ՝են գործվում երկրային ցաւագար արարածների մէջ, աղքատների թշվառութիւններ, անթիւ չարչարանքներ, հարկահանների դառը ծանրութիւնները, զզվանքներ և զրկողութիւններ բրոնաւոր մարդկերանցից, քաղց և ծարաւ մեր կարօտ բնութեան համար։ Ամերային սառնութիւնները և ամառնային ջերմութիւնները, անպատեհ հիւանդութիւնները և մահաբեր ցաւերը միշտ տանջում են մարդկերանցը. արտաքին թշնամեաց երկիւղը և

ներքին թշնամեաց ահը անդադար մարդոց վերայ են յարձակվում։ Ոմանք նախքան իրենց ժամանակը ցանկանում են մահ, բայց չ՝են գտանում, իսկ շատերը աշխատում են, որոնում են նորան և երբ նա երևում է ուրախութեամբ ընդունում են։ Բայց նոքա, որոնք կարծում են մեծ յաջողութեան մէջ, ուրախութեամբ զվարճանում են այս անցաւոր կեանքումը և մեծամտելով հպարտանում են աշխարհի զանազան մասներումը, կուրացած են ճըշմարիտ կեանքիցը։ Ի՞նչպիսի չարութիւն ասես, որ նոցա մէջը չէ գործվում, մեծութեան հետ խառնըվում է աղքատների կայքի յափշտակութիւնը, սուրբ ամուսնութեան հետ՝ անառակ պղծութիւնը։ Նոքա ճշմարիտ կեանքիցը մոլորված՝ իրենց վայելչութեան առարկաներին երկրպագութիւն են տալի ինչպէս Աստուծոյն։

«Ա՛չ ապաքէն բոլոր աշխարհը Արարիչն է ըստեղծել, նոքա ինչ որ պաշտում և պատվում են այս աշխարհի մի մասն է, ուրեմն նշանակում է մասները մասներին են պաշտում։ Եթէ աշխարհի մի մասը ապականացու է, պէտք է բոլոր մասները և նորա հետ միասին ապականվին։ Դաև մասների մէջը պէտք է ընտրութիւն առնել. ինչ որ լաւ մասն է յայտնի է ամենին, և որ ունի իմացականութիւն նա է այդ մասներից լաւը։ Եթէ այդ այդպէս է, ուրեմն հեթանոսների բոլոր պաշտելի և երկրպագանելի նիւթերիցը երկրպագութիւն տվողները աւելի վեր են քան այն անբան արարածները և տարրերքները, որոնց նոքա չարաչար ծառայում են և չ՝են պաշտում այն Աստուծոյն, որ մարդացաւ, նո-

ցա մեղքերի համար թողութիւն չկայ արդար գատաստանի առաջև։

«Արեմն, հեռացնենք մեզանից մոլորվածների խաւարային խորհուրդները, համարենք նոցա բոլոր մարդկերանցիցը թշվառ և ողորմելի, մանաւանդ որ իւրեանց կամքովն են կուրացել և ոչ ստիպող հանգամանքից. այս պատճառով և երբէք չեն գտնիլ նոքա ճշմարտութեան ճանապարհը։

«Դայց մեզ, որ բաց աչքով տեսանք երկնաւոր լոյսը, թող չհանդիպի դժոխային խաւարը։ Պատճառ, որոնք խաւարի մէջն էին՝ ճշմարիտ լոյս ծագեց նոցա վերայ. կուրացածները մոլորվեցան կեանքիցը, իսկ դուք որոնք հաւատով ընդունեցիք, հարազատ որդիք էք և ոչ խորթ օտարական, սիրելիք էք, և ոչ թշնամիք, բաժանորդներ և ժառանգորդներ վերին իմանալի քաղաքին։

«Այն տեղ է մեր փրկութեան առաջնորդը, նա այս տեղ քաջութեամբ նահատակվեց և սովորցրեց իւր բոլոր գործակից Առաքեալներին իւրեան նմանելու, որից և դուք էք այսօր յառաջ գալի օրհնված հաւատով աներևոյթ թշնամու դէմ և պատնեշէն զրահներով սատանայի գործակիցների դէմ։ Թէ այսպէս և թէ այնպէս երկու կողմին ևս կ՚յաղթէք, ինչպէս ինքը Տէրը յաղթեց աշխարհին, թուեցաւ թէ նա մեռաւ, բայց նա նոյն ժամանակը տարաւ առաքինի նահատակութեան կատարեալ յաղթութիւնը։ Ախոյեանին վայր ձրգեց, պատերազմ տվեց, թշնամեացը ցրեց, աւարները ժողովեց, գերիներին յետ դարձրեց և

պարգևներ ընծայեց իւր ամենասիրելիներին իւրեանց առաքինութեան համեմատ։

«Ձեզ բոլորիդ յայտնի է, որ առաջվայ ժամանակները, երբ պատերազմ էիք դուրս գալի, սովորութիւն ունէիք քահանաներ վերցնել բանակի մէջ և կռվի միջոցին մի պինդ տեղ թողել նոցա ձեզ համար աղօթելու, բայց այսօր եպիսկոպոսները և սարգաւագները, սաղմոսերգուները և գիրք կարդացողները ամենը իւր տեղը կանոնով կարգված ինչպէս զրահաւորված և պատրաստված զինուորական մարդիկ, կամենում են ձեզ հետ միասին յարձակվիլ և ջարդել ճշմարտութեան թշնամիներին, եթէ նոցանից ոմանց մահ ևս հասանի, նոքա բոլորովին չ'են վախենալու, որովհետև աւելի լաւ են համարում մեռնել, քան մեռցնել։

«Նոքա մտաւորական և մարմնաւոր աչքեր ունելով կամենում են հաւատոյ աչքով մարգարէից քարկոծվիլը տեսնել, իսկ մարմնոյ աչքով ձեր նահատակութեան քաջութիւնը։ Վանաւանդ մենք երկուսը ևս միասին տեսնում ենք ձեր մէջ, որովհետև դուք ևս հոգւոյ աչքով տեսանում էք սուրբ Առաքելոցների շարչարանքները և բոլոր մարտիրոսների սպանումը, որոնց մահվանը հաստատվեցաւ սուրբ եկեղեցին և նոցա արիւնի թափվիլը պարծանք դարձաւ երկնայիններին և երկրայիններին համար։ Եւ այսպէս մինչև Քրիստոսի երկրորդ գալուստը նոյն նահատակութիւնները պէտք է կատարվին առաքինի և ընտրեալ նահատակների շարչարանքներովը, որոնց մէջ և դուք այսօր հանդէս էք դուրս եկել և հրաւիրվել էք ձեր սուրբ լուսա-

ուրիշներիցը մոռնելու նոցա գնդի մէջը և ժառանգորդ լինելու Յիսուսի Քրիստոսի խոստացած անանց բարութիւններին, որ օրհնված է յաւիտեանս յաւիտենից։

Սուրբ Ղևոնդ էրէցը այսքան խօսելից յետոյ փառք տվեց և վերջացրեց ասելով Ամէն։ Յետոյ սեղան կազմելով ամենասուրբ խորհուրդը կատարեցին. շինեցին նմանապէս աւաղան, և եթէ զօրքի բազմութեան մէջ առանց մկրտվելու մարդ կար, բոլոր գիշերը մկրտեցին նոցա առաւօտը լոյսը բացվելիս հաղորդվեցին և այնպէս լուսազգեստ դարձան, ինչպէս տէրունական մեծ զատկին։

Բոլոր զօրքը ուրախութեամբ և զվարճութեամբ ձայն տվեց։ «Թող Հաւասարի Աստուած մեր մահը արդարների մահվան հետ և մեր արեան թափվելը՝ մարտիրոսների արեան հետ. թող հաճոյ թվի մեր կամաւորապատարագը Աստուծոյն, որ չըտայ իւր եկեղեցին հեթանոսների ձեռքը։

Ջ. ԳԼՈՒԽ

ՄԻՍ ԱՆԳԱՄ ՊԱՏԵՐԱԶՄՈՎ ԸՆԴԴԻՄԱ-ՆԱԼԸ ՊԱՐՍԻՑ ԹԱԳԱՒՈՐԻՆ։

Երբ Պարսից զօրավարը տեսաւ որ պատգամաւորները չ՝կարողացան խաբել Հայերին և հաստատ իւր ակնկալութեան յոյսը նոցա ցրելու անքակտելի միաբանութիւնը, այն ժամանակը կոչեց իւր մօտ անօրէն Վասակին և այն բոլոր ուրացեալ իշխաններին, որոնք նորա հետ էին Հայոց աշխարհումը. խորհուրդ էր հարցանում և տվրում էր նորանից յաղթութեան հնարներ։ Երբ նա տեղեկացաւ իւրաքանչիւր մարդոյ քաջութեանը, կանչեց նոյնպէս այն զօրավարներից շատերին, որոնք իւր ձեռի տակն էին և հրամայեց բերել իւր մօտ փղերի երամը և զունդ զունդ բաժանելով նոցա՝ իւրաքանչիւր փղի մօտ կարգում էր երեք հազար զինվոր, բացի միւս բոլոր զօրքերը։

Այս խօսում էր իշխաններին հետ թագաւորի հրամանովը ասելով. «Ձեր միտը բերէք ամենդ մեծ թագաւորի պատվէրը և պատերազմեցէք քաջութեամբ. լաւ համարեցէք մահը, քան վատ կեանքը։ Մինք մոռանալ իւղը, պսակը, մուրճերը և առատ պարգևները, որ պարգևում է ձեզ թագաւորը։ Ամենդ գաւառների տէր էք և ունիք շատ իշխանութիւն, զուք ինքներդ փորձով ճանաչում էք Հայոց աշխարհի քաջութիւնը և իւրաքանչիւր մարդու արի նահատակութիւնը, զուցէ զուք յաղթվելով ձեր կենդանութեան ժամանակը զբրկվիք այն մեծ իշխանութենից, որ ունիք։ Յիշեցէք ձեր կանայքը և որդիքը, յիշեցէք ձեր սիրելի բարեկամները. կարելի է ոտնակոխ լինիք արտաքին թշնամիներից և ողբալի դառնաք մերձաւոր սիրելիներից։

Այսև նոցա միտն էր բերում նոցա ընկերներից շատերին, որոնք թէպէտ պատերազմից փախչելով ազատվել էին, բայց մահ էին ստացել, իսկ իւրեանց որդիքը, զաւակները և բոլոր ընտանիքը աքսորվել էին, իսկ բոլոր Հայրենական երկրները խլվել նոցանից։

Այս ասելով՝ աւելի սաստկացնում էր թագաւորի հրամանը։ Նա կարգում և սարքում էր իւր զօրքը դէպի պատերազմ, մեծ դաշտի վերայ։ Իւրաքանչիւր փղի շուրջը կարգում էր երկք հազար զինվորված մարդիկ և ընտիր քաջերին իւր շուրջն էր ժողովում. այսպէս պնդացնում էր մատեան գունդը ինչպէս մի հզօր աշտարակ կամ անմերձենալի բերդ։ Դրշաններ էր տալի, դրօշակներ էր

բարձրացնում և հրամայում էր պատրաստ լինել պատերազմական մեծ փողը փչելու ժամանակը։ Բայց Ապարհացի, Կատշաց, Հոնաց և Գեղաց զօրքերը և բոլոր զօրքի միւս ընտիր մարդկերանցը մի տեղ էր ժողովում և հրամայում էր նոցա իւր զօրքի աջ կողմումը կանգնել Հայոց զօրավարի հանդէպը։

Աջ Վարդանը իւր կողմից իւր իշխանների միաբանութեամբ բոլոր զօրքի վերայ զօրագլուխներ կարգեց։ Առաջի զօրաբաժինը յանձնեց Արծրունեաց իշխանին և նորան նշանակեց օգնական Մոկաց մեծ իշխանին և նոցա միւս բոլոր նախարարներին իւրեանց զօրքերովը։ Նոցա երկու թեւը ամրացրեց միւս զօրքերով։ Երկրորդ զօրաբաժինը յանձնեց Խորխորունեաց իշխան Խորենին և նորան օգնական նշանակեց Ընծայենին և Ներսէհ Քաջերունին։ Երրորդ զօրաբաժինը յանձնեց Թաթուլ Վանանդեցուն և նորան օգնական տվեց Տաճատ Գնթունին և միւս շատ քաջ մարդկերանցով նոցա զօրքի թեւերը պնդացրեց։

Չորրորդ զօրաբաժինը վերցրեց ինքը և իւրեան օգնական նշանակեց Դաջ Արշաւիրին և իւր հարազատ եղբայր Համազասպեանին։ Այսպէս կարգեց և սարգեց բոլոր զօրքը դաշտի վերայ, պարսից զօրքի հանդէպը Տղմուտ գետի ափումը։ Երբոր այսպէս պատրաստվեցան՝ երկու կողմիցը և՛ մեծ բարկութեամբ սաստկացան և գազանական զօրութեամբ յարձակվեցան միմեանց վերայ, երկու կողմի աղաղակների կոչումը նմանում էր կայծակի, որ խառնված ամպերի մէջը ճայթմունքներ է գոր-

ծում. իսկ ձայների հնչիւնը շարժում էր սարերի այրերը։ Բազմաթիւ սաղաւարդների և մեռելոց զրահների փայլմունքները տարածվում էին, ինչպէս արեգակի ճառագայթների նշոյլներ։ Բազմաթիւ սրերի շողշողալը, բազմախառը նիզակների շարժվելը ներկայացնում էին մի երկնային ահագին հրաձգութիւն։ Ո՞վ է կարող պատմել ահաւոր ձայների սրտապատառ սարսափները, որ տեղ վահանների միմեանց դիպչելու կոփիւնները, աղեղնալարների ձայները, առհասարակ բոլորի ականջները խլացնում էին։

Երկու կողմից էլ յանդուգն յարձակմամբ միմեանց ջարդելով՝ ներկայացնում էին մեծ սրտադողութեան և անչափ տարակուսութեան կակիծ. որովհետև թանձրամիտները սարսափում էին, թուլասիրտները դողում, քաջերը յառաջ էին վազում, իսկ նահատակները ձայն տալի։ Եւ բոլոր բազմութիւնը միասին ժողովվելով գետի երկու կողմը շարվեցին։ Պարսից զօրքը գետը անցկենալու դժուարութիւնից վախելով՝ տեղը կանգնեց։ Հայոց զօրաբաժինը մտնելով գետին՝ ձիաւորված անցկացաւ և մեծ սաստկութեամբ յարձակվեց նոցա վերայ։ Սաստկութեամբ միմեանց դիպչելով, երկու կողմից էլ շատ վիրաւորներ դիաթաւալ փռվեցին գետնի վերայ։

Ա.յն մեծասարսափ միջոցին վերև նայեց քաջ Վարդանը և տեսնելով որ Պարսից զօրքի ընտիր և քաջ նահատակները Հայոց զօրքի ձախ կողմը շարժեցին՝ սաստիկ քաջութեամբ յարձակվեց նոցա վերայ և Պարսից զօրքի աջ թևը ջարդուփշուր

առնելով, փախցրեց փղերի քամակը, և կոտորելով հասաւ մինչև նոյն տեղը։ Այնպիսի սարսափ ձգեց նոցա վերայ, մինչև Մատեան գունդը ցրելով քանդեց պատերազմական կարգը. նաև նոցանից ոմանք թիկունքները յետ դարձրին։

Մուշկան Նիւսալաւուրտը տեսանելով, որ ոմանք անջատվելով Հայոց զօրքերից՝ յետ էին մնացել դաշտերի վերայ, բարձր ձայնով քաջալերեց իւր զօրքերին, որոնք պնդութեամբ կանգնած էին Վարդանի զօրաբաժնի հանդէպը։ Երկու կողմը ևս իւրեանց յաղթված էին համարում. ըսպանված մարմինները իւրեանց թանձր թափվելովը երևում էին ինչպէս քարակոյտներ։ Երբ Մուշկան Նիւսալաւուրտը տեսաւ այս բանը, սպասում էր փղերի առաջնորդ Արտաշրին, որ նստած նոցա վերայ շինած բարձր դիտանոցի մէջ, ինչպէս քաղաքաբերդի։ պատերազմական մեծ փողերի ձայնովը քաջալերում էր իւր գնդերը. նա իւր առաջնամարտիկ զօրքերովը շրջապատեց Հայոց զօրավարին, բայց քաջ Վարդանը իւր քաջ ընկերներովը մեծ կոտորածք առնելով՝ արժանացաւ նոյն տեղումը ընդունելու կատարեալ նահատակութիւնը։

Պատերազմը տևեց մինչև երեկոյ, գիշերը վերայ հասնելով՝ վախճան դրեց կռվին։ Շատերը իւրեանց կեանքը վայր դրեցին։ Դիակները միմեանց մօտ խիտ առ խիտ վայր թափած՝ նմանում էին անտառի կոտորած ծառերին։

Այն տեղ տեսանվում էին կոտրտված նիզակներ, և ջարդուփշուր եղած աղեղներ. սպանվածների մարմինները երկուկոյ մէջ ևս այնպիսի տակն

և վերայ էին եղած, որ նոքա չէին կարողանում ճշտութեամբ ճանաչել երանելեաց սուրբ մարմինները։ Իսկ կենդանի մնացածները ամուր ձորերի և սարագաշտերի մէջ ցրված, երբ միմեանց պատահում էին կրկին անգամ իրեար ջարդում էին։ Այսպէս դառը պատերազմը անդադար շարունակվում էր մինչև արեգակի մայր մտնելը։

Որովհետև գարնանային ժամանակ էր, ծաղկալից դաշտերը ներկվում էին յորդահոս արիւններով։ Մարդոյ սիրտ կոտրվում էր և աղէքները տրորվում էին, երբ տեսնում էր անթիւ դիակները փռված, երբ լսում էր խոցվածների մեչալը, ջարդվածների մռնչիւնը, երբ տեսնում էր վիրաւորների թաւալագլոր շարժվելը և սողալը, վախկոտների փախչելը, սրտապատառների թագկենալը, տկար մարդկերանց սրտի բաբախումը, կանանց աղաղակը, սիրելեաց ողբալը, ազգականների լացը բարեկամների վայ ու կոծը։ Որովհետև ո՛չ թէ մի կողմը յաղթեց, իսկ միւս կողմը յաղթվեց, այլ քաջերը քաջերին պատահելով՝ երկու կողմը ևս պարտութիւն խոստովանեց։

Որովհետև Հայոց զօրավարը պատերազմի սաստիկ ժամանակը սպանվել էր, այս պատճառով ոչ ոք գլխաւոր չ'կար, որի մօտ ժողովէին Հայոց մնացեալ զօրքերը։ Եւ թէպէտ սաղ մնացածները ըսպանվածներից շատ էին, սակայն ցան և ցիր լինելով՝ մնան աշխարհի զանազան ամուր տեղերը և տիրեցին շատ գաւառների և բերդերի, որոնց թշնամին չէր կարողանում առնել։

Ահա այն քաջ նահատակների անունները, որոնք այս պատերազմումը իւրեանց կեանքը վայր դրին։

Մամիկոնեան ազգից քաջ Վարդանը հարիւր երեսուն և երեք մարդով, Խորխոռունեաց ազգիցը կորովի Խորէնը տասն և ինը մարդով. Պալունեաց ազգիցը քաջ Արտակը յիսուն և եօթը մարդով, Գնթունեաց ազգիցը զարմանալի Տաճատը տասն և ինը մարդով, Դեմաքսենեաց ազգիցը խմաստուն Հըմայեակը քսան և երկու մարդով, Քաջբերունեաց ազգիցը հրաշակերտ Ներսէհը եօթը մարդով, Գընունեաց ազգիցը Վահան Մանուկը երեք մարդով, Ընծայնոց ազգիցը արդար Արսէնը եօթը մարդով, Սրուանձտայ ազգիցը յաւաջադէմ Գարեգինը երկու հարաղատ եղբայրներովը և տասնութ մարդով։

Այս երկու հարիւր ութսուն և եօթը նահատակեները ինը մեծամեծ նախարարների հետ միասին այն տեղ վայր դրեցին իւրեանց կեանքը։ Բացի այս երկու հարիւր ութսուն և եօթը մարդը, այս մի և նոյն օրը մեծ պատերազմի մէջ իւրեանց անունները գրեցին արքայութեան մատենումը այլ ևս եօթը հարիւր քառասուն մարդ Արծրունեաց, թագաւորական և միւս նախարարների ցեղիցը։ Բոլոր նահատակների թիւը միասին լինում է հազար երեսուն և վեց։

Ուրացեալների կողմիցը այն օրը սպանվեցան երեք հազար հինգ հարիւր քառասուն և չորս մարդ։ Նոցանից ինը հոգի մեծ և պատվաւոր մարդկերանցից էին, այս պատճառով շատ սաստիկ վիրաւոր-

վեցաւ Մուշկան Նիւսալաւուրտի սիրտը, մանաւանդ երբ տեսաւ, որ իւր զօրքերիցը եօթնապատիկ աւելի են ջարդվել այս մեծ պատերազմի մէջ քան Հայոց զօրքերից՝ նորա զօրութեան ոյժը հատաւ, սիրտը չ'էր հանգստանում, որովհետև պատերազմը այնպէս չ'վերջացաւ ինչպէս նա էր կարծում։ Երբ նա տեսնում էր իւր կողմից սպանվածների բազմութիւնը, հաշիւ էր անում և իմանալով, որ իւր զօրքի վիրավածները աւելի շատ են, քան Հայոց զօրքի, մեծ սրտնեղութեան մէջ էր ընկնում, մանաւանդ այն երևելի մարդկերանց համար, որոնց թագաւորը անուն անուն ճանաչում էր։ Նա վախենում էր այս բոլորը գրել և թագաւորին ցոյց տալ, իսկ ծածկել չ'էր կարող, որովհետև այնպիսի մեծ կռիւը չ'էր ծածկվիլ։

Մինչդեռ նա այս մտածման մէջը շարշարվում էր, ուրացեալ Վասակը, որ իւր անձը փղերի մէջը թագ կացնելով ազատել էր, մխիթարում էր վախեցածներին և խորամանկութեան հնարքներ էր սովորցնում Մուշկան Նիւսալաւուրտին, թէ ինչպէս պէտք է խաբէութեամբ կռվել ամրոցների դէմ։ Նա թագաւորի անունով և իւր վկայութեամբ երդում էր անում իւր հետի սուտ էրէցների միջնորդութեամբ։ Այդ էրէցներին նա պատգամաւոր էր ուղարկում նոցա մօտ և ցոյց էր տալի թէ այս ապստամբութիւնը ներվում է, եկեղեցի կրկին անգամ բարեզարդելու և բոլոր կարգերը ներս բերելու համար առաջվայ սովորութեան պէս։ Թէպէտ թագաւորի հրամանը ճշմարիտ էր, որովհետև նո-

բա զօրութիւնը սաստիկ ջարդվել էր երկու կողմու-
մը և ս, բայց Հայոց զօրքերը ճանաչելով Վասակի
սուտ նենգութիւնը, որ շատ անգամ տեսել էին,
չ'էին կարողանում շուտով հաւատալ Թագաւորի
հրամանին ։

Է. ԳԼՈՒԽ

ՈՐԻ ՄԷՋԸ ՆԿԱՐԱԳՐՎՈՒՄ Է ՀԱՑՈՑ ԱՌԱՔԻՆՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԱՒԵԼԻ ՎԱՏԹԱՐ Է ԵՐԵՒՈՒՄ ՎԱՍԱԿԻ ԱՆՕՐԷՆՈՒԹԻՒՆԸ։

ՎԱՍԱԿԸ կրկին անգամ դրդելով Մուշկան Նիւսալաւուրտին և Պարսից բոլոր իշխաններին, զօրք առաւ և հասաւ մի ամրոցի վերայ, որի մէջ մտել էր Հայոց մի զօրաբաժին տուրը քահանաների հետ միասին։ Նոքա բերդի շորս կողմից յարձակմունքներ առնելով՝ կռվում էին։ Երբ որ ոչինչ չը-կարողացան առնել Հայոց զօրաբաժնին, կրկին անգամ յոյսերը դրին երդումի վերայ, որ պայման կապելով՝ դուրս բերեն նոցա առանց վնասելու. այս պատճառով երկու երեք անգամ աւետարանը ուղարկեցին նոցա մօտ։ Թէպէտ Հայոց քահանաները յանձն էին առնում դուրս գալ ամրոցիցը,

բայց զօրականները շատերից չէին կարողանում հաւատալ Վասակի սուտ խոստումին, որովհետև Մուշկան Նիւսալաւուրտը սկսել էր Վասակի շար խրատներին հետևել։

Հայոց քաջ զօրավարներից մինը Բակ անունով, որ փախչելով մտել էր բերդի մէջը՝ բարձրանալով պարսպի վերայ ամբաստանում էր անօրէն Վասակին և Պարսից զօրավարի միտն էր բերում այն բոլոր չարութիւնները, որ գործել էր Վասակը Հայոց աշխարհում։ Այս բանը երբ լսեցին, շատերը ոչ միայն Հայոց կողմի մարդկերանցից, այլ աւելի Պարսից զօրքերից արդարացնում էին նորա ամբաստանութիւնը։ Այս մի և նոյն մարդը նոյն գիշերը եօթը հարիւր մարդով դուրս եկաւ բերդից և գնաց, թշնամիքը չկարողացան ձեռք ձգել նորան։

Իսկ այն Հայերը՝ որոնք ամրոցի մէջն էին մընացել թէպէտ իսկապէս իմանում էին Վասակեանց խաբեբայ երդումը, բայց պաշարը հատել էր, այս պատճառով երբ նոցա ակամայ անձնատուր եղան, Վասակը հրամայեց սպանել նոցանից երկու հարիւր տասն և երեք մարդ, որոնք սպանվելու ժամանակը միասին աղաղակելով ասում էին, «Շնորհակալ ենք քեզանից Տէր Աստուած, որ մեզ արժանի արեցիր քո երկնաւոր կոչումին, քանի որ տակաւին եկեղեցիքը աւերված չեն, վկայարանները քանդված չեն և քանի որ եկեղեցու սուրբ ուխտը միաբան է տակաւին առաքինութեան մէջ։ Թող հաստատվի մեր մահը քաջ նահատակների մահվան հետ և խառնվի մեր արիւնը պատերազ-

մումը ընկած վիրաւորների արեան հետ. թող հաճելի լինին Աստուծոյն իւր եկեղեցիքը այն զվարակների զոհվելու համար, որոնք յօժարութեամբ բարձրանում են սուրբ սեղանի վերայ»։ Այսպէս աղօթելով երկու հարիւր տասն և երեք հոգիք միասին նահատակվեցին դահճի սրի տակ։

Այց սուրբ քահանայքը երանելի Յովսէփ եպիսկոպոսը և Ղևոնդ էրէցը իւրեանց ընկերակիցների հետ միասին իւրեանց վիզները մեկնեցին դահճապետի սրի առաջև, կրկնելով այն մի և նոյն խօսքերը, որ ասել էին երկու հարիւր տասն և երեքը։ Որովհետև երանելիքը ոչ թէ մարմնաւոր կեանքի ակնկալութեամբ, այլ որովհետև կամենում էին ամբողջ աշխարհի խաղաղութեան հնարքը իմաստութեամբ գտնել՝ այս պատճառով ընդունեցին դէպի կառավարութիւնը, բոլոր ամբաստանութիւնը ձգելով Վասակի վերայ։ Երբ Մուշկան դիւսալաւորը այս բանը լսեց, չ՝համարձակվեցաւ նոցա սպանել տալ, այլ Յովսէփին և Ղևոնդին ծեծելով հրամայեց զգուշութեամբ պահել, իսկ միւս քահանաներին ուղարկեց իւրեանց տեղերը, հրամայելով նոցա, որ աշխարհը խաղաղացնեն և կարգի բերեն։

Այց միւս մարդիկը, որոնք իմանում էին թագաւորի և չարիմաց Վասակի հրամանների անհաստատութիւնը, բոլորովին չ՝էին հաւատում նոցա սուտ թողութեանը, այլ միմեանց քաջալերելով ասում էին։ «Ինչի՞ համար է մեզ այս աշխարհի անցաւոր կեանքը կամ ի՞նչ հարկաւոր է մեզ արև տեսանել մեր սիրելիների մահից յետոյ։ Որովհե-

տև, եթէ մեր քաջ նահատակները սպանվեցին մեծ պատերազմի մէջ, եթէ մեր վիրաւորները գըլորվեցին դաշտի արեան վտակների մէջ, եթէ բոլորի մարմինները կերակուր դարձան թռչունների և գազանների, եթէ մեր պատվական նախարարները հասան անարգ թշվառութեան, զրկվեցին իւրեանց իշխանութենից և մատնվեցին չարաչար հալածանքների, եթէ Հայոց բոլոր աշխարհ վայելչութիւնը ընկաւ անպատմելի ապականութեան և վտանգաւոր ցաւի մէջ, ուրեմն սորանից յետոյ ի՞նչպէս հաւատանք քո խաբերայ հրամանին և ի՞նչպէս կամենանք ընկնել ձեր անօրէն իշխանների ձեռքը»։ Այնուհետև բոլորը թողեցին իւրեանց գիւղերը, գիւղաքաղաքները, կալվածները և արտերը։ Հարները դուրս եկան վարագուրի տակից, նորափեսայքը սենեակներից, վայր եկան ծերերը աթոռից և երեխայքը մայրերի գոգից. այսպէս երիտասարդները և աղջկերքը, տղամարդկանց և կանանց բազմութիւնը գնացին մտան ամուր անապատների և պինդ սարերի մէջ։ Լաւ էին համարում աստվածպաշտութեամբ ապրել գազանի պէս քարերի մէջ, քան ուրացութեամբ վայելչութիւն քաշել իւրեանց տներում։ Ղոքա առանց տրտընջալու ուտում էին վայրենի խոտերէն կերակուրներ և բոլորովին չէին յիշում իւրեանց սովորական կերակուրները։ Քարանձաւների ծացկոցները համարում էին բարձր շինութեան յարկեր, գետնանկողինները նկարազարդ սենեակներ։ Ղոցա մխիթարական երգերը սաղմոսներն էին և կատարեալ ուրախութիւնները սուրբ գրերի կարդալը։ Իրա-

քանչիւր մարդ իւր անձը համարում էր եկեղեցի և քահանայ, իւր մարմինը՝ սուրբ սեղան, իսկ հոգին՝ ընդունելի պատարագ։ Նոցանից ոչ ոք յուսահատութեամբ չ'էր լաց լինում սրով սպանվածների վերայ և ոչ ոք չ'էր ողբում իւր մերձաւոր սիրելիների վերայ։ Ուրախութեամբ համբերում էին իւրեանց բազմաթիւ կայքերի յափշտակութեանը և չ'էին մտածում երբէ՛ք, թէ կայք են ունեցել։ Համբերութեամբ շարչարվում էին և մեծ առաքինութեամբ ընդունում էին քաջնահատակութիւնը։ Եթէ նոցա բաց աչքով չ'տեսնէին ուրախալից յոյսը, չ'էին կարող կատարել այնպիսի մեծ առաքինութիւնը։

Որովհետև նոցանից շատերը էին մեծ նախարարների ազգից, նոցա եղբայրները, որդիքը և աղջկերքը, որոնք իւրեանց բոլոր սիրելիների հետ միասին գնացել էին ամուր տեղեր, ոմանք Խաղտեաց անլոյս երկիրը, շատերը հարաւային կողմերում Տմորեաց անմերձենալի ամրոցները, միւսները Արցախի թանձրախիտ անտառները. իսկ ոմանք նոյն երկրի մէջ տիրելով շատ ամրոցների՝ մնացին այն տեղ։ Սոքա բոլորը մեծ համբերութեամբ կրում էին այսքան նեղութիւնները Աստուծոյ յուսոյ համար, աղաչելով և խնդրելով նորանից, որ չ'տեսնեն սուրբ եկեղեցիների աւերվելը։

Բայց ուրացեալ Վասակը, որի չարութիւնները շատ անգամ ցոյց տվինք, յորդորում և ստիպում էր Պարսից զօրքերին թէ թագաւորի հրամանովը, օգնական զօրք կ'հասցնեն նոցա մերձակայ կողմերից։

Շ՝ուտով բազմաթիւ հեծելազօրք գալով ըսպանվածների տեղը բռնեց և զօրքի թիւը առաջվանին հաւասարվեց։ Նոքա յառաջ գնալով դէպի Հայաստանի միջին երկիրները՝ պատերազմ էին տալի Կապպոտ սարի ամրոցների դէմ։ Բայց այն Հայերը, որոնք այս ամրոցների մէջ պնդացել էին, քաջութեամբ պատերազմելով Պարսից զօրքից շատերին ջարդեցին և մնացեալներին փախցրին իւրեանց բանակի մէջ։ Բայց նոքա կրկին անգամ աղաչելով կամենում էին խաբէութեամբ հնազանդեցնել։

Երբ ոչ ոք չ՝հաւատալով նոցա խօսքերին չէր դուրս գալի բերդերից, որ թշնամեաց չարչարանքի տակը չընկնի, մի քահանայ Արշէն անունով երդումից ստիպած՝ դուրս եկաւ նոցա մօտ։ Նա ընտաներար աղաչում էր նոցա և ցոյց էր տալի անմեղների փախչելու անվնասակարութիւնը։ Աշխատում էր՝ի գութ շարժելու ուրացեալ Վասակին և խնդրելով՝ յիշեցնում էր նորան քրիստոնէից ուխտի առաջվայ կարգը, որ գուցէ զորանով նա փոքր ինչ քաղցրանայ իւր սաստիկ դառնութիւնից, բայց նա բոլորովին ուշադրութիւն չդարձնելով նորա խօսքերին՝ հրամայեց կապել երանելուն իւր բոլոր ընկերների հետ միասին, որոնք նորա հետ դուրս էին եկել և տանել իւր հետ։

Այնուանդ երբ տեսաւ Վասակը, թէ Պարսից զօրավարը լսում է նորա խրատը, սկսեց այնուհետև ապստամբարարներ ուղարկել շատ տեղեր, որոնք գտնում էին ամրոցներից դուրս մարդիկ, գերի էին տանում և ջահերը ձեռներին բռնած կրակ էին

տալի շատ տեղեր։ Նոքա, որոնք գտանվում էին Տմորեայ ամրոցներումը, երբ տեսան այն բոլոր թշվառութիւնները, որ գործում էին թագաւորական զօրքերը, անօգուտ համարեցին աւելի մնալու ամրոցների մէջ, այլ քաջութեամբ դուրս եկան ամրոցներից, տեղի բնակիչների օգնութեամբ հասան Պարսից մօտակայ երկիրները, յարձակվեցան նոցա վերայ, անխնայ կոտորեցին բնակիչներին արիւնաշաղախ կռիւների մէջ, իսկ մնացեալներին գերի առնելով ամրոցների մէջն էին ձգում և ջահները ձեռքներն առած բոլոր շինութիւնները կրակի կերակուր էին շինում։

Իսկ նոքա, որոնք Խաղտեաց սարերումն էին, երբ տեսան, որ Պարսկաց զօրքերը յանդգնաբար աներկիւղ յարձակվում են Հայոց ամրոցների վերայ, նոքա ևս մեծ զօրութեամբ յարձակվեցին Հայոց ծորագաւառի վերայ, ուր գտնվում էին շատ թագաւորական զօրքեր, որ կամենում էին գերի առնել տեղի բնակիչներին. նոքա կարծում էին նրմանապէս թէ Հայոց նախարարների գանձերը այն տեղ են պահած, վասն որոյ անխնայ պտրտում էին այն տեղերը։ Երբ Հայերը նոյնպէս տեսան երկուզիւղի եկեղեցիքը այրած, աւելի սաստիկ բարկութեամբ դէպի նախանձ շարժվեցին։ Յարձակվեցին նոցա վերայ, զարկվեցին միմեանց, յաղթեցին, ջարդեցին Պարսկային գունդը և շատերին կոտորելով մնացեալներին փախցրին այն աշխարհից։ Այս սաստիկ յարձակման միջոցին, միայն Հայոց սպարապետ Վարդանի եղբայր Համազասպը անձնազոհ քաջութեամբ կռվելով՝ ստացաւ նահատակու-

թեան պատկը սուրբ ուխտի միաբանութիւնը պաշտպանելու համար։ Իսկ մնացեալները առողջ մնալով՝ հալածում էին փախստականներին։

Երբ գործը այսպէս վերջացաւ, թագաւորական զօրքերը դադարեցին առանց ընդդրութեան յարձակվելու ամենայն տեղերի վերայ, մանաւանդ եկեղեցիների, թագաւորական վճռին համաձայն։ Եւ այն Հայերը, որոնք փախել և թաց էին կացել Արցախի անտառներումը, առանց գործունէութեան չ'էին մնում, այլ միշտ դեսպան էին ուղարկում Հոնաց աշխարհը, շարժում և յորդորում էին նոցա զօրքին, նոցա միտն էին բերում այն դաշը՝ որ նոքա դրել էին Հայոց հետ և անտուտ երդումով հաստատել։ Նոցանից շատերը մեծ հաճութեամբ և քաղցրութեամբ լսում էին Հայերի խօսքերը։ Հայերը նոյնպէս նոցա մեղադրում էին, թէ ինչի՞ առաջվայ կռվումը օգնութիւն չ'հասաք։ Նոքա առաջվայ կռվի մասին չ'կարողանալով իրեանց արդարացնել՝ յետոյ մեծ զօրք ժողովեցին և յարձակվեցին Պարսից տէրութեան սահմանների վերայ, շատ գաւառներ աւերելով, աւելի շատերին գերի տարան իրեանց աշխարհը և յայտնի ցոյց տվեցին թագաւորին այն միաբանութիւնը, որ ունէին Հայոց զօրքի հետ։

Երբ այս ամեն բանը հասաւ Պարսից զօրավարի ականջը, նա սաստիկ նեղացաւ և մեծ բարկութեամբ բոլոր վնասը անօրէնաց ասակի վերայ ձգեց, իբր թէ նա է այն բոլոր կոտորված թշվառութիւնների սկիզբը և առաջնորդը։ Նա այնուհետև քոչեց, գնաց, հասաւ Պարսից աշխարհը, բոլոր բանը

ճշտութեամբ գրեց և ցոյց տվեց թագաւորութեանը, գործի բոլոր անյաջողութիւնը ուրացեալ Վասակի վերայ դնելով։

Երբ թագաւորը իմացաւ աշխարհի բոլոր աւերմունքները և իսկութեամբ տեղեկացաւ մեծ պատերազմի բոլոր իրողութիւնները, սիրտը կոտրվեց, իւր մեծ հպարտութենից ցածրացաւ և լռելով դադարեց իւր շարունակ և խաբերայ խորհուրդներից. քննում, զննում էր անխելք գործի սըխալմունքը, և կամենալով իմանալ թէ ով է նորա պատճառը, ասում էր. «Ո՞վ է կարող այդ բաների մասին ինձ ճշմարիտ տեղեկութիւն տալ»։ Իսկոյն Միհրներսեհ Հազարապետը, որ թագաւորի մօտ էր և որին յայտնի էր այդ անօրէն գործը, յառաջ գալով ասեց թագաւորին։ Այդ բանը ես կ՚պատմեմ քեզ, քաջ թագաւոր, եթէ կամենում ես ստուգութեամբ լսել ճշմարտութիւնը, կոչիր այս տեղ Հայաստանի քրիստոնէաների գլխաւորներին, նոքա յօժարութեամբ կ՚գան և բոլորը արդարութեամբ կ՚պատմեն։

Այն ժամանակը թագաւորը գրեց աւագ նախարարներից մէկին Ատրորմիզդ անունով, որ Հայաստանում իշխանակից էր Մուշկան Նիւսալաւորտին և գործակից մեծ պատերազմի մէջ, և յանձնեց նորան Հայաստանի մարզպանութիւնը, իսկ Մուշկան Նիւսալաւորտին հրամայեց մնացեալ բոլոր զօրքի հետ միասին գնալ Աղվանից, Լփնաց, Ճղբաց, Հեճմատակաց, Թաւասպարաց և Խիրիովան աշխարհները և բոլոր այն ամրոցները, որ հոները աւերել էին իբրև Հայոց դաշնակիցներ։ Թագաւորը շատ սաստիկ տրտում էր ոչ այնքան աշ-

խարհների աւերվելու և զօրքի ջարդվելու համար, այլ աւելի պահակի համար, որ շատ երկար միջոցում հաղիւ կարողացել էին շինել. բայց նոքա այդ ժամանակը այնպէս հեշտութեամբ տիրելով քանդեցին, որ յոյս չ'կար կրկին շինելու։ Իսկ Վասակին գլխաւոր քրիստոնեաների հետ միասին հրամայեց կոչել իւր մօտ։

Ասորոմիզդ մարզպանը սիրով և խաղաղութեամբ հասաւ Հայաստան։ Թագաւորի հրամանով կոչեց իւր մօտ սուրբ Սահակ Ռըշտունեաց եպիսկոպոսին նորանից տեղեկանալու ամբաստանութեան պատճառը։ Թէպէտ Սահակ եպիսկոպոսը աւերել էր մի կրակատուն և շատ չարչարանքներ տվել կրակի պաշտօնեաներին, բայց չ'վախեցաւ հրապարակական ատեան գալու։ Արծրունեայց ազգից մի բարեպաշտօն քահանայ Մուշէ անունով, որ առաջնորդ էր Արծրունեաց երկրումը այրել էր մի կրակատուն, իսկ մոգերին կապել և շատ չարչարանքներ տվել, սա ևս առանց երկիւղի եկաւ ներկայացաւ Մարզպանին։ Նմանապէս երկու այլ երանելի քահանայք, որոնք անվանվում էին Սամուէլ և Աբրահամ, Արտաշատումը քանդել էին մի արեգակի տաճար. ուրացեալ Վասակը առաջուց արդէն սոցա կապել էր. սոցա ևս տարան իւրեանց առաքինի ընկերների մօտ։ Կոչեցին այն տեղ նմանապէս Յովսէփի մեծին, Ղևոնդին, Քաջաջին և Արշէնին։ Երբ մարզպանը քննեց և ամենայն ըստ ղեկացաւ, բոլորը ճշմարտութեամբ գրեց և յայտնեց թագաւորին այնպէս՝ ինչպէս լսել էր նոցանից։

Թէպէտ Վասակը արդէն յառաջուց հասնելով

թագաւորի մօտ, բոլորը ստութեամբ էր պատմում նորան, բայց չ՚էր կարողանում թագաւորի առաջևը իւրեան արդարացնել։ Թագաւորը նորան պատասխանեց, երբ քրիստոնեայքը ևս կ՚գան, այն ժամանակ ատեանի մէջը բոլորիդ կ՚լսեմ։

Որովհետև տուրք քահանաներին կապանքներով էին տանում, այս պատճառով երկու ամսից և քսան օրից յետոյ հասան թագաւորի ձմերոցը։ Երբ մեծ հազարապետը իմացաւ նոցա քաղաք մտնելը, ինքը գնաց և նոցա տեսաւ։ Թէպէտ Մի՛հրներսեհը բոլոր անց.քը մանրամասնաբար տեղեկանում էր նորանցից, բայց չ՚էր համարձակվում նոցա չարչարել, որովհետև Հայոց նախարարներից շատերը տակաւին քաջութեամբ տիրած ունէին շատ ամրոցներ և մարզպանը տակաւին երկիւղի մէջ էր։ Այս պատճառով հրամայեց սրբերին զգուշութեամբ պահել և աշխարհին սիրով տիրապետել, ինքը ևս ման էր գալի, ժողովում էր և բոլորը կարգադրում էր հաստատ պայմաններով։

Եպիսկոպոսներին հրամայեց կրկին ամենը իւր իշխանութիւնը վարել, առաջվայ պէս յայտնի պաշտել քրիստոնէութիւնը, և աւելի համարձակ դուրս գալ հրապարակ, նաև առաջվայ պէս ընծաներ և պարգևներ էր տալի։ Եւ որովհետև զօրքերը շատ գաւառների տիրելով՝ աւերել էին, այս պատճառով աշխարհը հարկից ազատեց և թագաւորական զօրքերը առ ժամանակ թէթևացրեց։ Հրամայեց, որ այն բոլոր միայնակիցները, որոնք փախել և հեռացել էին, գան և իւրաքանչիւրը իւրեանց տեղերը ստանան։ Ասեց որ այժմ ևս աստվածպաշտու-

թեան բոլոր կարգերը այնպէս կատարեն, ինչպէս կատարում էին առաջ իւրեանց նախնեաց ժամանակը։ Մարդպան ասում էր, ով որ գնացել է հեռու երկիր, թէ աղատ, թէ գիւղական, թէ եկեղեցական, թագաւորիցը իշանութիւն ունիմ պաշտպանելու նոցա, որ գան ստանան իւրեանց թողած բոլոր կայքը և կալվածքը։ Այս խօսքերը նա երդումով հաստատում էր և ուղարկում զանազան կողմեր։ Այս լսելով շատերը եկան ժողովվեցին և ստացան իւրեանց կալվածները։

Ամենից զարմանալին այն է, որ թագաւորը հրովարտակներ էր ուղարկում, որ այն մարդիկը, որոնք բռնութենից ստիպված ակամայ ընդունել են մոգութիւնը, կրկին քրիստոնէութիւնը ընդունեն։ Դա իւր պալատականների առաջև այսպէս էր խօսում։ «Նոքա՝ որոնք յօժարութեամբ և սիրով չեն ընդունում Դենիմազդէզը նոցա վերայ աստվածները ես բարկանում են, և ես բոլորովին շնորհակալ չեմ դորա վերայ։ Այսօր ես հրաման եմ տալի ամենին իւր կամքին և իւր մտքին թողնելով, ով ինչ կամենում է պաշտել՝ թող պաշտի։ Նոքա բոլորը իմ հպատակներն են։ Այս խօսածը հրովարտակով յայտնում էր բոլոր աշխարհին։

Հատերը, որոնք ցան և ցիր էին եղել հեռաւոր երկիրներ, երբ այս բանը լսեցին և հաստատիմացան եկան և ստացան իւրեանց կալվածները։ Այն նախարարները, որոնք Հայաստանի ամրոցներումն էին կամ հեռաւոր օտարութեան մէջ, երբ տեսան երկրի շինութիւնը, մանաւանդ եկեղեցւոյ հաստատութիւնը, նոքա ևս քաջալերվեցին և հա-

մարձակութիւն ստացան թագաւորին ներկայանալու։ Այս պատճառով պատգամ ուղարկեցին մարզպանին, որ իւրեանց միտքը թագաւորին յայտնէ։ Մարզպանը իսկոյն թագաւորի հրամանով տէրութեան կողմից աղաչանքի և հաստատ դաշնադրութեան թուղթ ուղարկեց նոցա մօտ։ Թէպէտ նոքա իմանում էին, տէրութեան խորամանկութիւնը և ստութիւնը, բայց այնուամենայնիւ կամենում էին չարչարակից լինել սրբերին, որ եթէ մահ ևս հասանէ նոցա, բոլորովին չ'վախեն։

Երբ թագաւորը այս բանը լսեց, հրամայեց նոցա իւր մօտ կոչել ոչ կապանքներով, այլ արձակ ոտներով և արձակ ձեռներով։ Նախարարները շուտով իւրեանց կանայքը, որդիքը և կայքը յանձնելով Մարզպանին, շտապով գնացին թագաւորի ճամբոցը։

Մինչդեռ թագաւորը ճամբոցումն էր, հրամայեց քննութեան ատեան բանալ նոցա համար։ Հազարապետը նստեց ատենի մէջ, որ երկու կողմին ևս լսէ։ Երբ ամբաստանութիւնը շատ օրեր շարունակվեց, Վասակի կողմը յաղթվեցաւ. որովհետև նախարարները ցոյց էին տալի այն թղթերը, որ Վասակը և իւր բոլոր ընկերները տվել էին ապրստամբութեան մէջը նորա հետ միաբան լինելու համար. մի թուղթ Վրաց աշխարհից, մի թուղթ Աղուանից աշխարհից, նոյնպէս մի թուղթ Աղձնեաց աշխարհը, մի հրովարտակ դէպի Յունաց թագաւորը և մի թուղթ դէպի Անտիոքոս մեծ ըստարապետը։ Այս բոլոր թղթերը վաւերացրած և դրոշմված էին Վասակի մատանովը։ Վասակը

նմանապէս մասնակից էր մոգերի սպանելուն Զարեհաւանի մէջ։ Ցոյց տվին նմանապէս նորա թղթերը և հրամանները, որոնցով նա հրամայել էր տիրելու պարսկական շատ բերդերի։

Նմանապէս Գնունեաց ազգիցը մի նախարար Ատոմ անունով, որին Վասակը դեսպան էր ուղարկել Ցոյների մօտ, մեծ ատեանի մէջ յանդիմանում էր Վասակին այն հրովարտակովը, ուր նա տվել էր նորան իւր մատանովը կնքած։ Մուշկան Նիւսալաւուրտը մէջ բերելով նորա ամբաստանութիւնը ցոյց էր տալի իւր պատերազմակից ընկերակիցներովը, որ պատերազմը վերջանալից յետոյ և, Վասակը շատ արիւն թափել տվեց, ցոյց տվեց թէ ինչպէս նա սուտ երդումներով թագաւորի ծառաներին և աղախիններին խաբելով ամրոցներիցը հանում էր, ումանց սպանում էր և ումանց գերի տանում և. բացի այս բոլոր վնասները, նա գողացել էր և այն հարկից, որ տէրութեանը պէտք է հասանէր։

Նա և նորա ուրացեալ ընկերներիցը շատերը յայտնեցին նորա այն վնասները, որ նա հասցրել էր Հայոց աշխարհին։ Բերին ատեան նմանապէս այն մոգերին և կրակատուն պահողներին, որոնք կապանքի մէջ ապրել էին և հարցրեցին Վասակի մասին, ասելով դուք տեղեակ էք արդեօք սորա չարութեանը։ Նոքա պատասխանեցին։ «Այն բոլոր չարչարանքները, որ մեզ տվին, բոլոր կոտորվածքը, որ հասան թագաւորական զօրքերին, Հայոց աշխարհի աւերմունքը և գերութիւնը, թագաւորական հարկի կորչելը, բոլոր այս չարութիւնների սկիզբը և պատճառը այդ մարդը եղաւ։

Մինչդեռ երկար ժամանակ այս բոլոր ամբաստանութիւնները լինում էին նորա վերայ, այն ժամանակը նորա ազգականները, որոնք առաջուց գանգատվել էին նորանից եկան Թագաւորի առաջև, սկսեցին կարգով ցոյց տալ և յայտնել, թէ ինչպէս նա բարեկամացել էր Հեռանայ Հոնի հետ բաղասական Թագաւորի միաբանութեամբը, այն ժամանակը, երբ կոտորեց Պարսից զօրքերը Աղվանից երկրումը և թալանելով հասաւ մինչև Ցունաց երկիրը. շատ աւար առաւ Հոռոմներից, Հայերից, Վրացիներից և Աղվաններից. այնպէս որ ինքը Թագաւորը իմանալով նոցա խորհուրդը սպանեց Բաղասական Թագաւորին։ Վասակը այն միջոցին մարզպան էր Հայաստանումը, բայց խորհրդակից էր Թագաւորի թշնամիներին։ Որովհետև նորա ազգականները լաւ տեղեակ էին և իմանում էին նորա չար խորհուրդները, այս պատճառով յայտնում և պատմում էին Թագաւորին, նոյնպէս նորա միւս բազմաթիւ խարդախութիւնները։ Պատմում էին թէ ինչպէս նա ստութեան մէջ էր անցկացնում իւր կեանքը, թէ ինչպէս նա խաբում էր ոչ միայն իւր ընկերակիցներին, այլ նաև նոյն իսկ Թագաւորին. որովհետև նա իւր մանկութենից սկսած երբէք արդարութեամբ չէր աշխատել։

Այն ժամանակը Թագաւորը հրամայեց հազարապետին ատեան կոչել նոյնպէս այն կապեալներին, որոնք բանդի մէջն էին։ Կապանքիցը արձակեցին Ուրշտունեաց Սահակ եպիսկոպոսին, սուրբ Յովսէփին և Ղևոնդ էրեցին։ Երբ ատենի բոլոր իրողութիւնը յայտնեցին նոցա, Սահակ եպիսկո-

պոսը պատասխանեց «Նոքա, որոնք յայտնի ուրացել են ճշմարիտ Աստծուն, չեն իմանում, թէ ի՞նչ են գործում, կամ ի՞նչ են խօսում. որովհետև նոցա խորհուրդները խաւարված են, իւրեանց տէրերին ծառայում են սուտ պատճառներով և ընկերների հետ պայման են կապում ստութեամբ։ Նոքա սատանայի մեքենաներն են, որոնցով սատանան կատարում է իւր չարութիւնը, ինչպէս այս բանը երևում է ահա Վասակի մէջը։ Որովհետև քանի որ սա ունէր իւր վերայ քրիստոնէութեան անունը, կարծում էր առ երես ծածկել և թաղցնել իւր բոլոր չարութիւնները ձեր անգէտ տէրութեան առաջև. և այս բոլոր նենգութիւնները նա ծածկում էր քրիստոնէութեամբը։ Այս պատճառով դուք հաւատարիմ կարծելով՝ նորան իւր արժանաւորութենից աւելի մեծ պատիւ տվէք։ Բրաստանը դորան հաւատացիք, հարցրեցէք նոցանից, տեսէք շնորհակալ են դորանից։ Տվեցէք դորան Սիւնեաց տէրութիւնը, լսեցէք դորա ազգականներից, թէ ինչեր են պատմում դորա վերայ։ Դորան մարզպան կարգեցէք Հայաստանումը, որ ձեր նախնիքը մեծ աշխատութեամբ ձեռք էին բերել և դա մի տարումը բոլոր երկիրը կորցրեց։ Տեսա՞ք, թէ ինչպէս երբ դորանից վերացաւ Աստուծոյ պատվական անունը, որ ստութեամբ ունէր իւր վերայ, իսկոյն դորա բոլոր չարագործութիւնները ցոյց տվեցին իւրեանց կերպարանքը։ Եթէ դա իւր Աստուծոյ մօտ սուտ երևեցաւ, ի՞նչ մահկանացուի մօտ կարող է պատեղ արդար երևալ։

Դորա այն բոլոր չարութիւնները, որ այժմ

յայտնվեցան, մի՞թէ ձեզ առաջուց արդէն յայտնի չէին, բայց թէ ինչի՞ համար էնք ծածկում, այդ դուք ինքներդ լաւ էք իմանում։ Ես այսպէս եմ կարծում թէ դա սուտ յոյսերով ձեզ ուրախացրեց։ Բայց ո՛չ դա և ո՛չ նոքա, որոնք ձեզանից յետոյ պէտք է լինին մեր մէջ չեն կարող տեսնել այդպիսի բան։ Այժմ ինչպէս կամենում էք, այնպէս վարվեցէ՛ք դորա հետ, մեզ ինչի՞ էք հարցանում»։

Այս բոլորը լսելուցը յետոյ մեծ հազարապետը իւր մտքումը զարմացաւ, որովհետև քննելով ատենի բոլոր խօսքերը, տեղեկացաւ, որ Վասակը յիրաւի դատապարտվեցաւ իւր անարժան գործքերին համեմատ։ Նա ատենի բոլոր բանը յայտնեց թագաւորին։ Երբ թագաւորը հազարապետիցը լսեց և տեսաւ Վասակի մեղաւորութիւնը, շատ բարկացաւ և սիրտը շատ նեղացաւ, բայց կամեցաւ համբերութեամբ մեծ անարգութիւն հասցնել նորան։ Նա տասներկու օր լուռ կացաւ, մինչև ամբաստանութեան բոլոր հարցուփորձը վերջացաւ։

Մի երևելի օր թագաւորը ճաշի հրաւիրեց բոլոր երևելի և պատվական մարդկերանցը։ Նմանապէս հրաւիրեցին Վասակին, նա թագաւորական առաջվայ կարգերին համեմատ հագաւ իւր պատվական վերնաշորը, որ պարգև էր ստացել թագաւորիցը, կապեց իւր գլխազարդը, նորա վերայ դրեց ոսկեայ խոյրը (գլխարկը), կապեց իւր մէջքին մարգարիտներով և պատվական ակներով զարդարած ոսկէ գօտին. հագաւ ականջի օղերը, մանեակը կախեց վզիցը, սամուրը ձգեց թիկունքի վերայ և

բոլոր օրինաւոր պատվանշանները իւր վերայ հագ-
նելով՝ գնաց պալատը։ Նա բազմութեան առաջն
երևում էր ամենից շքեղ և երևելի։

Բոլոր նախարարներին, որոնք իւրեանց յօժա-
րութեամբը անձնատուր էին եղել կեանքի բոլոր
վտանգներին և այն տուրը քահանաներին, որոնք
արդէն առաջուց եկել, հասել էին. կապանքների
մէջ պահում էին Թագաւորի գուան առաջն։ Երբ
նոքա տեսան Վասակին շքեղութեամբ զարդար-
ված և բազմաթիւ ծառաներով շրջապատած գա-
լիս էր Թագաւորի պալատը, իւրեանց մտքումը նո-
րան անարգելով՝ ասում էին։ «Ո՞վ անմիտ վաճա-
ռական, անմահ և անանց պատիւը տվեցիր և ան-
ցաւորը գնեցիր, որից շուտով զրկվելու ես»։

Վասակը մոտ ներսի դահլիճները, որ մեծ
իշխանների հրապարակն էր, և նստեց։ Այս միջո-
ցին Թագաւորի սենեակապետը դուրս եկաւ Թա-
գաւորի մօտից, մօտեցաւ նորան և ասեց։ «Թա-
գաւորը, որից դու ստացել ես այդ պատվական պա-
տիւը, քեզ ուղարկեց քեզանից հարցանելու, ինչ
ասա՛ շուտով, արդեօք որ արդար աշխատութեանդ
համար ես ստացել։ Պատմեց նորան ամենի բոլոր
ամբաստանութիւնները, որով նորան դատապար-
տել էին, նմանապէս յաւելացրեց և այնպիսի բա-
ներ որ չէին խօսել ամենի մէջ։ Ասեց որ նա ապօ-
րինի կերպով տիրեց Սիւնեաց աշխարհին, խորա-
մանկութեամբ և ստութեամբ ստանալ տվեց իւր
եղբայր Վաղինակին և ինքը ստացաւ տէրութիւնը
իբրև Թագաւորական պաշտօնեայ։ Նորան դատա-
պարտեցին նաև այլ շատ բաներով, որոնց բոլոր

մեծամեծները վկայ էին։ Ղասակը պապանձվեցաւ, ոչ մի ճշմարիտ բան չերևեցաւ Նորա բերանումը։ Երբ երկու և երեք անգամ բոլորը թագաւորին ցոյց տվեցին, Նորան մահու վճիռ տվին։

Ղահճապետը եկաւ բոլոր իշխանների առաջև, մնտեցաւ Նորան, հանեց Նորանից այն պատվանշանը, որ ստացել էր թագաւորից և հագցրեց մահապարտի շոր։ Ոտները և ձեռները կապեցին և կնոջ նման նստեցրին էգ ձիու վերայ և տարան ձրգեցին այն բանդը, ուր գտանվում էին բոլոր մահապարտները։

Եվ էպէտ Հայոց նախարարները և սուրբ եպիսկոպոսները քահանաների հետ միասին մեծ նեղութեան մէջ էին, բայց բոլորովին չէին յիշում իրենց նեղութիւնները, որ կրել էին և որ պէտք է կրէին, այլ զարմացել էին այն մեծ հրաշքի վերայ, որ Աստուած ցոյց տվեց։ Նոքա միմեանց մխիթարում էին ասելով «Քաջութեամբ պատերազմեցինք, աւելի համբերութեամբ ճգնինք։ Մենք լսել ենք մեր սուրբ հայրերից, թէ ամեն առաքինութեան գլուխը համբերութիւն է և երկնաւոր իմաստութիւնը, կատարեալ աստուածպաշտութիւն է, այս բանը ոչ ոք չէ կարող ձեռք բերել առանց չարչարանքների։ Երբ չարչարանքները երկար են տևում այն ժամանակը շատանում է վարձադրութեան պարգևը։

Ուրեմն աղաչենք Աստուած, որ մեզ տայ կարողութիւն ամեն փորձութիւններին համբերելու. և ինքը մի հնարք գտնի մեր փրկութեան համար։ Մենք լսել ենք քառասուն զինվորների դատաստա-

նը, որոնք շատ տանջանքների հարվածներ տա-
ցան։ Նոցանից մինը շտապեց, մտաւ բաղանիքը և
զրկվեց պսակիցը, իսկ երեսուն և մին համբերու-
թեամբ մեռան և հասան այն աւետեացը, որին
ցանկանում էին։ Մեր ընկերակիցը ահա, որ առա-
ջուց մեզանից ջոկվեցաւ, այժմ սատանայի գործա-
կից դարձաւ։ Քանի որ շունչը բերանումն է, նա
ընդունեց դժոխքի տանջանքների գրաւականը, որին
ոչ միայն սրբերն են ողբում, այլև ամենայն գազա-
նարարոյ մարդիկ։

Այս ասելով՝ շատ արտասուք էին թափում
նորա վերայ և հեգևոր երգեր էին ասում այսպէս։
«Լաւ է յուսալ Տէրին, քան յուսալ մարդկերան-
ցը, լաւ է յուսալ Աստուծոյն, քան յուսալ իշ-
խաններին։ Բոլոր ազգերը ինձ շրջապատեցին,
բայց Աստուծոյ անունովը նոցա յաղթեցի»։ Մի-
մեանց քաջալերում էին ասելով՝ «Եղբայրներ, այս
բանը իմանալով՝ չերկնչինք այս անաստված հե-
թանոսաց ազգիցը, որոնք բարկանալիս մեզնից ա-
ւելի սաստիկ են կատաղում. բայց նոցա բարկա-
նալը ևս իւրեանց մահվան պատճառ կդառնայ,
բայց մենք Աստուծոյ անունը կոչելով՝ կյաղթենք
ամենին»։

Ուրացեալ Վասակը նայում էր տուրբ կապեալ-
ների միայրանութեան վերայ, որոնք մեծ ուրախու-
թեամբ ընդունում էին չարչարանքները և զվարթ
և ուրախ էին երևում, ինչպէս առաջ թագաւորա-
կան պալատների մէջ։ Վասակը նայում էր նոցա
վերայ և կարօտում էր նոցա զրութեանը, բայց ոչ
ոք չխառնեց նորան նոցա հետ, այլ առանձին իւր

կապանքի մէջ էին պահում։ Եւ իւրաքանչիւր օր բերում էին ինչպէս անշունչ մարմին ձգում հրապարակի մէջը, ցոյց էին տալի բոլոր զօրքին, ծաղր էին առնում և ծիծաղում էին վրան։ Կողոպտեցին և հանեցին նորանից այն ամէն բանը, ինչ որ ունէր իւր հետ. այնպես ձաղրելի աղքատութեան մէջ ձգեցին, որ իւր ծառայքը հաց էին հաւաքում և նորան տալի։ Եւ այնպէս սաստիկ պարտքեր գըրեցին նորա տան վերայ գողացած հարկի փոխանակ, մինչև որ նա իւր նախահայրերի, պապերի և իւր կայքը նմանապէս կանանց զարդերը ևս տվեց, բայց չկարողացաւ վճարել թագաւորական պարտքերը։ Այն աստիճանի հասցրին նորան, մինչև որ հարցանում էր, թէ կայ արդեօք իւր նախնեաց գերեզմանների մէջ ոսկի կամ արծաթ և եթէ գտնէր կհանէր և կտար իւր և իւր ընտանեաց տուգանքը վճարելու համար, որովհետև շատ մարդկերանց վերցրեցին պարտքի փոխանակ։

Երբ Վասակը այսպէս ամէն կողմից անարգվեց, բանդումը կապանքների մէջ դժնդակ ցաւի մէջ ընկաւ։ Նորա փորը տաքութիւնից տապակվեց, նորա գոգը տրորվեց և մաշվեց և քամվելով մըղվեց նորա թանձրամնութիւնը։ Որդերը եռացին նորա աչքերի վերայ և ներքև տողացին նորա քթի ծակերից. խլացան նորա ականջները և չարաչար ծակոտվեցին նորա պռոշները, հոտեցին նորա կըռների ջլերը և դէպի յետ կռացան նորա ոտի կրունկները։ Փչեց նորանից մահվան հոտ. փախան, հեռացան նորանից իւր հաւատարիմ ծառայքը. միայն լեզուն էր կենդանի իւր բերանումը, բայց խոս-

տոխանութիւնը չեր դուրս գալի նորա պառոշներից։ Ճաշակեց խեղդամահի բաժակը և իջաւ դժոխքի մէջ անպատմելի դառնութեամբ։ Ոտի տակ տվին նորան իւր բոլոր սիրելիքը և չկշտացան սաստիկ հարվածներովը իւր բոլոր թշնամիքը։

Ներևեցաւ այն մարդոց գերեզմանի տեղը, որ կամենում էր մեղքով թագաւորել Հայոց աշխարհի վերայ, որովհետև շան պէս սատակեց և գեշի պէս քարշ տվուեցաւ։ Չյիշվեց նորա անունը սրբերի մէջը և չմերձեցաւ նորա յիշատակը եկեղեցու սուրբ սեղանին։ Նա իւր կեանքումը ոչ մի շարութիւն չըթողեց, որ չգործեց և ոչ մի չարչարանք չմնաց, որ չհասաւ նորան, իւր մահվան ժամանակը։

Այս յիշատակարանը գրվեցաւ նորա համար, որ մարդիկ անարգեն նորա մեղքերը, որովհետև ամենայն ոք, որ այս իմանայ, կնզովի նորան և չի ցանկանալ նորա գործքերը։

Ը. ԳԼՈՒԽ

ՆՈՑՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՍՍԻՐԻ ՔԱՀԱՆԱՆԵՐԻ ՀԱՐՀԱՐԱՆՔԸ։

Յաջկերտը իւր թագաւորելու տասն և վեց երրորդ տարումը, կրկին անգամ մեծ բարկութեամբ պատերազմ գնաց Քուշանաց վերայ։ Նա անցկենալով Վրկանիցը գնաց Ապար աշխարհը և հրամայեց քահանաներին և նախարարներին մի և նոյն կապանքով պահել Նիշապուհ քաղաքի բերդի մէջ, միայն երանելի կապեալներից երկուսին իւր հետ վերցրեց։ Նա որտեղից անց էր կենում, ահ էր ձգում այն տեղի քրիստոնեաների վերայ։ Մի հոն, Խայլանդրայ աշխարհի թագաւորական ազգից Բէլ անունով, որ որ իւր յօժարութեամբը անձնատուր էր եղել թագաւորին, ծածուկ ցոյց էր

տալի իւր կարեկցութիւնը քրիստոնեաներին և սիրով յօժարութեամբ սովորում էր նոցանից ճշմարտութիւնը, նա շատ նեղանում էր իւր մէջ, երբ տեսանում էր սրբերի չարչարվելը։ Նա երբ չկարողացաւ ոչինչ օգնութիւն առնել նոցա, փախաւ գնաց Քուշանաց թագաւորի մօտ և պատմեց նորան այն բոլոր չարչարանքները, որ Յաղկերտը հասցրեց Հայոց աշխարհին. յայտնեց նորան նմանապէս Հունաց պահակի աւերելը, զօրքի երկու մասը ճեղքվելը, շատ ազգերի Յաղկերտի բարեկամութենից հեռանալը. յայտնեց նմանապէս Պարսկաստանի աղմուկը։

Երբ Քուշանաց թագաւորը այս բանը լսեց, նորա սիրտը բոլորովին չերկմտեց լուսերի խօսքերի ճշմարտութեան վերայ և նորան լուտես չհամարեց։ Որովհետև նա արդէն փոքր ինչ յառաջ լսել էր, բայց երբ կրկին ստոյգը իմացաւ այն Բէլ անունով մարդից, թէ թագաւորը պատերազմ է գալի Քուշանաց աշխարհի վերայ, շտապեց շուտով զօրք գժողվել, կարգադրել և մեծ զօրութեամբ դուրս մտալ նորա դէմ։ Թէպէտ նա չկարողացաւ յանդիվան պատերազմ տալ նորա հետ, բայց յարձակելով վերջնապահ զօրքի վերայ, մեծ ջարդ էր տալի թագաւորի զօրքերին։ Եւ այնպիսի նեղ դրութեան մէջ ձգեց, որ խառնուփնդորութեան մէջ հարվածներ տալով՝ այն տեղից յետ դարձրեց նորա զօրքը և ինքը հալածելով քշեց և աւերեց շատ թագաւորական գաւառներ և ինքը առողջութեամբ յետ դարձաւ իւր երկիրը։

Երբ Յաղկերտը տեսաւ, որ անարգութեամբ

և վատթարութեամբ յետ դարձաւ պատերազմիցը, փոքր ինչ չափ դրեց իւր հպարտութեանը և իմացաւ, որ զօրքի երկու մասը ճեղքվելը եղաւ բոլոր ծախորդութեան պատճառը։ Նա իւր սրտի կսկիծելուց չէր իմանում, թէ ում վերայ թափէ իւր դառը թոյնը։ Մեծ հազարապետը շատ մեծ երկիւղի մէջ էր, որովհետև ինքն էր այս բոլոր թշվառութիւնների պատճառը։ Նա մոգերին և մոգպետին հնարք սովորցրեց, որոնք թագաւորին ներկայանալով ասեցին։ «Քաջ թագաւոր, մեր կրօնը ցոյց է տալի մեզ, որ մարդկերանցից ոչ ոք չէ կարող դիմանալ քո մեծ զօրութեանը. բայց աստվածները մեզ վերայ բարկացել են քրիստոնէից համար, որոնք մեր օրէնքներին ընդդէմ են, որ մինչև այսօր նոցա կենդանի թողեցիր». և յաւելացնում էին թէ քրիստոնեայքը ինչպէս անիծում են թագաւորին բանտի մէջ։ Նմանապէս այլ շատ զրպարտութիւններ էին խօսում սրբերի վերայ, թագաւորին աչքում նոցա ատելի էին շինում, նորան մինչև այն աստիճան բարկութեան հասցրին, որ շտապեց շուտով թափելու անմեղների արիւնը։

Թագաւորը հրամայեց այն երկուսին, որ իւր զօրքի հետ վերցրել էր Սամուէլին և Աբրահամին ծածուկ կորցնեն։ Իսկ նոքա, որոնք գտանվում էին Նիշապուհ քաղաքի բերդի մէջ, հեռու էին բանակից տան և հինգ իջևանով (մանզիլով)։

Յազկերտը հրամայեց և իրաւունք տվեց զօրքի պաշարապետին Դենշապուհ անունով, որ Իրանից յառաջ գնայ Նիշապուհ քաղաքը, ուր էին Աստուծոյ սուրբ քահանայքը, զանազան տան-

ջանքներով չարչարի նոցա, հարց ու փորձ առնի, դատապարտի և սրով սպանի։

Բայց այն մոգպետը, որին յանձնել էին սրբերին, առաջուց արդէն շատ անգամ թագաւորի հրամանից աւելի էր չարչարել նոցա, որովհետև նա մի և նոյն ժամանակը կառավարիչ էր Ապար աշխարհումը և աւելի տաք մոգութեան մէջ, շատ գիտուններից աւելի տեղեակ էր Զրադաշտական օրէնքին. նաև նամակդին պատվանուն ունէր, որ նոցա մոլորութեան կարգովը մեծ պարծանք էր համարվում։ Իմանում էր Ամիարտքաղը, սովորել էր Բոզբայիտը, գիտէր Պահլաւիկը և Պարսկադինը, որովհետև այս հինգ աղանդներն են (կեշտ), որոնք իւրեանց մէջ բովանդակում են մոգութեան բոլոր օրէնքները։ Բացի սոցանից կայ և վեցերրորդը, որ մոգպետ է կոչվում։

Նա կարծում էր թէ ամեն գիտութեան մէջ կատարելագործվել է, նայում էր երանելեաց վերայ և կարծում էր թէ տգիտութեամբ մոլորվել են իւրեանց մեծ գիտութենից։ Նորա մէջ ծնվեց մի սրտոտի կարծիք նոցա անդադար չարչարելու, որ գուցէ նոքա չկարողանալով դիմանալ տանջանքներին՝ աղաչեն նորան։ Այս պատճառով ջոկեց քահանաներին նախարարներից, հեռացրեց նոցանից և ձգեց մի խոնաւ և խաւար ներքնատուն։ Եւ հրամայեց վեց մարդկերանց համար իւրաքանչիւր անգամ տանել երկու գարեհաց և դորակուկէս ջուր, հրամայեց նոյնպէս, որ ոչ ոք չմօտենայ բանտի դռանը։

Նրա այսպէս քառասուն օր նոցա նեղացնելով

ոչ մի թուլութեան խօսք չլսեց նոցանից, կարծեց թէ իւր ծառաներից մինը կերակուր է ճարում և ծածուկ տալիս նոցա։ Այս պատճառով ինքը գնում կնքում էր բանտի պատուհանը և դուռը և նոցա նշանակեալ կերակուրը տալիս էր իւր հաւատարիմ ծառաներին, որ տանեն նոցա տան. այս շարունակվեց տասն և հինգ օր։ Բայց երանելիքը բոլորովին չէին նեղանում, այլ մեծ համբերութեամբ տանում էին այս չարչարանքը և անդադար սաղմոս երգելով աղօթում էին և աղօթքը վերջանալիցը յետոյ զուարթ դեմքով, շնորհակալ լինելով Աստուծուց, փոքր ինչ հանգստանում էին չոր գետնի վերայ։

Այն պահապանները, որ կարգված էին նոցա վերայ, երբ անդադար լսում էին նոցա աղօթելու ձայնը, շատ զարմանում էին նոցա առողջութեան վերայ։ Այս պատճառով պատմեցին մոգպետին, թէ այն մարդիկ միայնակ և առանց մեծ զօրութեան չեն, որովհետև եթէ նոքա ունենային պըղընձի մարմիններ, մինչև այժմ փտած կլինէին այս խոնաւութենից։ Շատ ժամանակ է, որ մենք բանտի պահապան ենք, բայց մեր միտը չէ, որ այդ տան մէջը կապվածներից մի մարդ մի ամբողջ ամիս ապրած լինի։ Այժմ մենք քեզ յայտնում ենք, եթէ հրաման ունիս նոցա սպանելու և կամենում ես սպանել, այն դու գիտես, իսկ եթէ յանձնել են քեզ պահպանելու և ոչ դատապարտելու, շատ փոանգի մէջ է նոցա կեանքը։ Մենք շատ վախենում ենք, երբ տեսնում ենք այնպիսի անտանելի նեղութիւնները։

Երբ մոգպետը լսեց այս խօսքերը, ինքը գնաց կէս գիշերին բանտի պատուհանի մօտ։ Գիշերվայ մութը ժամանակը, նայեց բանտի մէջը այն միջոցին, երբ նոքա աղօթելից յետոյ՝ քնել էին և տեսաւ, որ բոլոր կապեալների անձը անհանգչելի կանթեղի նման վառված՝ լուսաւորվում էր։ Շատ վախեց և իւր մտքումը ասեց, այս ի՞նչ մեծ հրաշք է, ուրեմն մեր աստվածները եկել, իջել են բանտի մէջ և նոցա փառաւորութիւնը լուսաւորված վառվում է։ Որովհետև եթէ նոքա չմօտենան սոցա, լոկ մարդին անկարելի է այսպէս պայծառ լուսաւորվիլ։ Ես արդէն լսել էի այս աղանդի համար, թէ շատ յիմարութենով մոլորված, ստութեամբ այսպէս են ձևանում՝ տգէտ մարդկերանց առաջը, կարելի է այս հրաշքը ևս այնպիսի մի բան լինի, բայց բոլորովին չէր կարողանում հասկանալ այս երևոյթի պատճառը։

Մինչդեռ նա այս մտածութեան մէջն էր, սրբերը կրկին անգամ իւրեանց տեղիցը վերկացան և սկսեցին իւրեանց սովորական աղօթքը ասել։ Այն ժամանակը մոգպետը ճշմարտապէս իմացաւ, որ իւր տեսած երևոյթը սուտ բան չէ, այլ նոցանից էր փայլում այն լուսաւորութիւնը։ Նա կրկին անգամ սարսափելով ասեց«Բանդարկվածներիցը ո՞ւմ է պատահել այսպիսի հրաշք, ես ոչ մինը չեմ իմանում և երբէք չեմ լսել իմ նախնիքներիցը այսպիսի բան։ Որովհետև մոգպետը շատ վախեցաւ այս մեծ հրաշքներից և դող ընկաւ նորա մարմնի մէջ, այս պատճառով թուլացած, կիսամեռ այր ընկաւ պատուհանի մօտ մինչև առաւօտը, իսկ

լոյսը բացվելիս, երկար ժամանակվայ հիւանդի պէս վերկացաւ, գնաց իւր բնակարանը և չհամարձակվեց ոչ ոքի պատմել իւր տեսածը։

Նա կանչեց իւր մօտ բանտի պահապաններին և ասեց «Գնացէ՛ք, հանեցե՛ք կապածներին, տարէ՛ք մի ցամաք վերնատուն և այն տեղ զգուշութեամբ պահեցէ՛ք ինչպէս ուզում էիք։ Դահիճներից մինը երբ լսեց մոգպետի հրամանը, շտապեց շուտով նոցա մօտ այս մեծ աւետիքը յայտնելու, ասելով։ «Մոգպետը հրամայեց, որ դուրս գաք մի ցամաք վերնատուն, շտապեցե՛ք ուրեմն և մի ուշանաք, որովհետև մենք ինքներս խնդրեցինք ձեզ համար։

Սուրբ Յովսէփը սկսեց խոնարհութեամբ խօսել դահճապետի հետ և ասել, «Գնա՛, ասա՛ ձեր յիսար առաջնորդին, թէ դու չես լսել մեր Տիրոջ միւս անգամ գալուստը կամ մեր հրաշալի շինվածքների մասին, որ 'ի սկզբանէ մեզ համար պատրաստված՝ մնում են, այս պատճառով հեշտութեամբ կհամբերենք այս նեղութիւններին, այն յուսոյ համար, որ տեսնում ենք։ Դու լա՛ւ արեցիր, որ խղճացիր մեր մարմնոյ մեծ նեղութիւնների վերայ. բայց մենք բոլորովին չենք զգում ինչպէս անաստված մարդիկ որոնց մտքի մէջ ոչ մի յոյս չկայ, բացի երևելի բաներից։ Մենք Քրիստոսի սիրոյ համար շատ ուրախ ենք այս նեղութեան վերայ և կատարեալ պարգև ենք համարում սորան, որովհետև այս ժամանակաւոր ցաւերովը յաւիտենական երանութիւն կժառանգենք։

Եթէ շինվածների ենք ցանկանում, մենք շին-

վածներ ունինք երկնքումը պատրաստած առանց մարմնաւոր ձեռագործի, որոնց մօտ ձեր պալատները ոչինչ են։ Նմանապէս եթէ մէկը կամենայ ձեզ պատմել շորերի, փառքի և յաւիտենական կերակուրների մասին, տկարութիւնը չէ կարող լսել, որովհետև կուրութեան հնութեամբը ոչ տեսնում է.ք, ոչ լսում և ոչ իմանում, այս պատճառով և մեզ 'ի զուր և անիրաւութեամբ, առանց մեղաւորութեան, անողորմաբար դատապարտում է.ք. բայց մեր թագաւորը առատ է և բարերար, նորա թագաւորութեանդուռը բաց է. եթէ որ կամենայ մտնել, թող մտնէ համարձակ, որովհետև ապաշխարութեամբ իւր մեղքերից՝ յետ դառնողներին նա երբէ.ք չէ նախանձում։

Բայց այն թերթևութիւնը, որ դու կամենում ես մեզ առնել, մենք ազատ էինք մեր աշխարհումը և կարող էինք չընկնել թագաւորի ձեռքը, ինչպէս և միւսները, որոնք ազատվեցին այսպիսի փորձութիւններից։ Այլ երբ մեր կամքովը և յոժարութեամբը եկանք, համարեա թէ իմանում էինք այս նեղութեան ցաւերը, բայց չվախեցինք այսպիսի նեղութիւններից, նմանապէս և այժմ կամենում ենք, որ աւելի ծանրացնես մեր չարչարանքը, մինչև քո սրտի չարութիւնը կշտանայ մեզանով։ Որովհետև եթէ մեր Աստուածը, որ երկնքի և երկրի և ամեն երևելի և աներևոյթ արարածների ստեղծողն է, իւր բարերարութեան սիրոյ համար խոնարհեցաւ դէպի մարդկային ազգը չարչարվող մարմին հագաւ, առաքինութեան բոլոր ատիճանները անցկացաւ, կատարեց տնտեսութեան բոլոր գործ-

.քերը, իւր կամքովը մատնվեց խաչհանողների ձեռ-
.քը, մեռաւ մահով և գերեզմանի մէջ դրվեց, իւր
աստուածային զօրութեամբը յարութիւն առնե-
լով երևեցաւ աշակերտներին և միւս շատերին,
վերացաւ երկինքը, իւր հօր մօտ, նստեց իւր հայ-
րենական աթոռի աջ կողմումը, մեզ երկնաւոր
զօրութիւն պարգևեց, որ նորա անմահութեան
համեմատ, մենք ևս մեր մահկանացու մարմնովը
կարողանանք չարչարակից լինել նորա անմահ մե-
ծութեանը. նա մեր մահը մահկանացու չէ համա-
րում, այլ մեզ հատուցանում է մեր աշխատու-
թեան վարձը, ինչպէս անմահների, այժմ մենք
փոքր ենք համարում այս չարչարանքը նորա այն
սիրոյ փոխանակ, որ ցոյց տվեց մարդկային ազգին։

Երբ մոգպետը այս բոլորը լսեց դահճապետիցը
սաստիկ վախեցաւ, միտքը պղտորվեց և աչքերի
քունը փախաւ շատ գիշերներ։ Մի օր երեկոյեան
ժամանակին վերկացաւ, գնաց նոցա մօտ լուռ,
միայնակ, և ծառաներիցը ոչ ոքի չվերցրեց իւր
հետ։ Երբ հասաւ տան դուռը, մի ծակով ներս
նայեց և տեսաւ առաջվայ հրաշքը, բայց նոքա
խաղաղ քնած էին։ Նա հանդարտութեամբ կան-
չեց եպիսկոպոսին, նորա անունը տալով, որովհե-
տև եպիսկոպոսը պարսկերէն լաւ էր իմանում, ե-
կաւ դուռը մօտեցաւ և ասեց։ «Դու ո՞վ ես»։ Նա
պատասխանեց ես ինքս եմ, կամենում եմ ներս
մտնել և ձեզ տեսնել։

Երբ մոգպետը մտաւ սրբերի մօտ, այն հրաշքը
չէր երևում նորան։ Նա նոցա պատմեց այն հրաշ-
քի երեք անգամ երևիլը։ Ղևոնդ երէցը պատաս-

խանեց։ «Այն Աստուածը, որ կամեցաւ խաւարի մէջ լոյս ծագել, ծագեց և իմաստութեամբ լուսաւորեց աներևոյթ արարածներին, մի և նոյն զօրութիւնը և այսօր ծագեց քո խաւարած մտքի մէջը, բացվեցան հոգոյդ կուրացած աչքերը և տեսար Աստուծոյ շնորհաց անհանգչելի լոյսը. շտապիր, ուրեմն մի ուշանար, կարելի է կրկին անգամ կուրանալով դէպի խաւարը գնաս»։ Երբ այս ասեց, բոլորը կանգնեցին ասելով քառասուն և երրորդ սաղմոսը։ «Տէր ուղարկիր քո լոյսը և ճշմարտութիւնը, որ նոքա մեզ առաջնորդեն և տանեն քո սուրբ սարը և քո ծածկոցի տակը։ Տէր ճշմարտութեամբ առաջնորդեցիր և բերիր այս մոլորեալին քո անանց ուրախութեան և անմերժելի հանգստութեան մէջ։ Այս օրը նման է քո սուրբ չարչարանաց օրին, ինչպէս ազատեցիր մահապարտ աւազակին երկրորդ մահից և նորանով բաց արիր դըրախտի փակած դուռը, նոյնպէս գտար այսօր այս կորածին։ Նորան, որ շատերի մահվան պատճառ էր դարձել, այսօր շինեցիր մեր և իւր կեանքի պատճառ։ Շնորհակալ ենք քեզանից Տէր, շնորհակալութիւն ենք մատուցանում քեզ ասելով՝ սուրբ մարգարէի հետ «Տէր, ո՛չ մեզ, ո՛չ մեզ, այլ քո անունը փառաւորիր քո ողորմութեան և ճշմարտութեան համար, որ հեթանոսները չասեն երբէք թէ ո՞ւր է նոցա Աստուածը. ինչպէս և այսօր յայտնվեց քո մեծ զօրութիւնը այս անսանձ խաւար ազգի մէջը։

Այց մոգպետը, որ ձրի ընդունեց աստուածային շնորհքը, սկսեց առանձին ասել «Աստված է

իմ յոյսը և կեանքը, ես ուժից կվախեմ։ Ասուած է իմ օգնականը, ես ուժից կդողամ, որովհետև իսկապէս իմանում եմ, որ այսուհետև շատ թշնամիք ունիմ, որոնք կամենում են մօտենալ և ուտել իմ մարմինը, բայց դու ամենի Տէր, եկար ամենին կեանք տալու համար, որ զղջան դառնան դէպի քո մարդասիրութիւնը և ապրեն։ Ինձ մի ջոկիր այս սուրբ գառներից, որոնց հետ խառնվել եմ, որ չլինի թէ քո փարախից դուրս գալով չար գազանը կըրկին անգամ ինձ պատառի։ Տէր, մի նայիր իմ շատ տարվայ անիրաւութիւնների վերայ, որ չմոլորվիմ ճշմարիտ կեանքից և կրկին շատերին դէպի կորուստ տանեմ, այլ որոնց մահվան պատճառ եղայ, նոցա կեանքի պատճառ դառնամ։ Այն սատանան, որ ինձանով ուրախացած պարծենում էր մեր կորըստականների մէջը, այժմ ես թող ինձանով դատապարտված ամաչի իւր աշակերտների մէջը։

Այս ասելից յետոյ՝ աղօթքը վերջացրին և նոր քրիստոնէի հետ միասին հանգստացան մինչև երրորդ ժամը, յետոյ խաղաղութեամբ քուն մըտան ամենը մինչև առաւօտը. բայց նա չէր կամենում քնել, այլ ոտի վերայ կանգնած, ձեռները դէպի վերև տարածած աղօթում էր։ Եւ մինչդեռ աչքը ձգած պատուհանովը նայում էր երկնքին, յանկարծ տունը լուսով լցվեց և նորան երևեցաւ լուսաւոր սանդուղ, որի մի ծայրը երկնքումն էր, իսկ միւսը երկրումը և գունդ գունդ զօրքերը վերև էին գնում։ Նոցա ամենի դէմքը նոր, գեղեցիկ, ահաւոր, սքանչելի և հրեշտակի դէմքի նման էր։ Նա իւր միտն էր պահել նաև իւրաքանչիւր զօրա-

բաժիններին թիւը, կային հազարաւոր. երեսուն երեք. երկու հարիւր տասն և երեք, և այնքան մօտեցաւ մինչև ճանաչեց նոցանից երեքին, այսինքն Վարդանին, Արտակին և Խորէնին։ Նոքա իններ պսակ իւրեանց ձեռքումը բռնած՝ խօսում էին միմեանց հետ և ասում։ «Ահա եկաւ, մօտեցաւ ժամանակը, որ սոքա ևս խառնվին մեր զօրքի մէջ, որովհետև մենք ևս սոցա պատվի պսակները ձեռներիս բռնած՝ սոցա էինք սպասում։ Որին մենք չէինք սպասում նա ևս եկաւ, երևաց, խառնվեց մեզ հետ և դարձաւ Քրիստոսի զինվորներից մինը։

Այս տեսիլը երեք անգամ երևեցաւ այն երանելի մարդին։ Նա սրբերին քնից զարթեցրեց և բոլոր տեսիլը կարգով պատմեց նոցա։ Նոքա վերկացան և սկսեցին աղօթք անել և ասել։ «Տէր Աստուած մեր, ինչպէս սքանչելի է քո անունը ամեն երկրի վերայ, քո մեծ վայելչութիւնը երկնքից աւելի բարձրացաւ. մանուկ երեխաների և ծծկերների բերանով հաստատեցիր քո օրհնութիւնը, որ դատապարտվի թշնամին և հակառակորդը։ Որովհետև պէտք չէ ասել, թէ կտեսնեմ երկինքը քո ձեռքի գործը, այլ թէ կտեսնեմ քեզ երկնի և երկրի տէր, ինչպէս և այսօր երևեցար քո զօրականների յայտնութեամբը այս հեռաւոր օտարին, որ յոյս չունէր իւր կեանքը գտնելու։

«Դու Տէր, քո ողորմութեամբը պսակեցիր քո սիրելիներին և քո գթութեամբը եկար այս մոլորվածին գտնելու, յետ դարձրիր և խառնեցիր քո սրբերի դասի մէջը։ Սա տեսաւ ոչ միայն երկինքը, որ քո ձեռքի գործն է, այլև նորա բնակիչնե-

րին. սա քանի որ երկրիս վերայ է խառնվեց քո երկնային հազարաւոր հրեշտակների գնդերի մէջ։ Սա տեսաւ քո նահատակված արդարների հոգիները, տեսաւ պատրաստած աներևոյթ փառքի նրմանութիւնը, տեսաւ նոցա ձեռքի անմահական պսակը, որ պատրաստ սպասում է ճարտարապետի ձեռքումը։ Երանի՜ սորան այս սուրբ տեսիլքի համար և երանի՜ մեզ սորա մեզ մօտ լինելու համար, որովհետև սորանով հաստատ իմացանք, թէ սա, որին այսպիսի հրաշքներ են յայտնվում, մեծ բաժին ընդունեց քո անսպառելի բարութիւններից։ Տէր, քո պարգևները անհատնելի են և առանց խնդրելու տալիս ես ում կամենում ես քո լի և անանխանձ առատութեամբը։ Տէր, եթէ խնդրողներին չես արգելում, ուրեմն բաց արա մեզ համար քո ողորմութեան դուռը, որին մեր մանկութեան օրից ցանկացել ենք քո սրբերի բարեմասնութեանովը։ Քո նորաշէն ձեռագործը բարեխօս ենք շինում մեր անձանց համար, որ մեր հաւատի նաւը չթաղվի մեղքի ալէկոծված ծովի մէջը »։

Այսպէս երկար աղօթք առնելով, նոքա առատ և յորդ արտասունքով թաց էին անում իւրեանց անձը։ Խնդրում էին բարերար Աստծուցը, որ ընդունի նոցա աղաչանքը, որ կարողանան հաստատութեամբ համբերել դժվարակիր ցաւերին, և չզրկվին այն ցանկալի պսակներից, որ սրբերը բռնած էին իւրեանց ձեռքերումը, ինչպէս Հոգին սուրբը յայտնել էր նոցա, որովհետև իւրեանց կոչման ժամանակը մօտեցել էր. որ նոքա գնան և աներկիւղութեամբ հանդիստանան այն կասկածելի

ակնկալութիւնները, որին համբերում էին մեծ նեղութիւններ կրելով, որ այս փոքր գրաւականը հասանեն այն երկնաւոր մեծութեանը, որին վաղուց արդէն ցանկացել էին։

Որովհետև մոգպետը կառավարիչ էր այն աշխարհումը և քաղաքի կապեալները նորան էին յանձնել, այս պատճառով առաւօտը համարձակ հանեց կապեալներին բանդից և տարաւ իւր պալատը։ Նոցա մարմինը իւր ձեռովը լվաց, սրբեց բանդի կեղտոտութիւններից. և նոցա լվացած ջուրը ածեց իւր վերայ։ Իւր տան մէջ աւազան շինեց, ընդունեց նոցանից սուրբ մկրտութիւնը, հաղորդվեց մեր Տէր Յիսուս Քրիստոսի կենդանարար մարմնովը և քաւիչ արիւնովը, այս խօսքերը ասելով։ «Այս մկրտութիւնը թող լվանայ ինձ իմ բոլոր մեղքերից և կրկին նորոգութեամբ վերածնի Հոգւոյն սրբոյ շնորհքովը. իսկ անմահ խորհրդի հաղորդութիւնը ինձ շինի երկնային որդեգրութեան ժառանգ։ Յետոյ մարմնաւոր սեղան պատրաստեց նոցա համար նմանապէս միխիթարութեան բաժակ և ինքը ևս նոցա հետ կերաւ։

Իսկապէս ինքը մոգպետը հասաւ երկնային բարիքներին և աներկիւղ էր մարդկային տանջանքներից, բայց իւր ընտանեաց համար շատ էր կասկածում, որ ինչպէս թագաւորութեանը վնասակար անձինք տանջանք չստանան։ Այս պատճառով նա զգոյշ վարվեց։ Գիշերը ծածուկ կանչեց իւր մօտ այն բոլոր նախարարներին, որոնք այն քաղաքումն բերդի մէջ էին և մեծ ծախս արեց նոցա վերայ։ Նոքա բոլորը մեծ ուրախութեան մէջ էին այն հրաշքի

համար, որ յայտնվեց նոցա։ Նոքա բոլորովին չէին յիշում թէ նեղութիւններ են կրել։

Խնջոյքի ժամանակը սրբերի միտքը կարծիք ընկաւ մի երէցի մասին, որ նոցա հետ բանդարկված էր, որովհետև նա հասարակ մարդկերանց մէջ էր մեծացել և շատ տեղեակ չէր սուրբ գրքերին, այս պատճառով առաջին տեղը նորան առաջարկեցին նստելու։ Երանելի երէցը պատասխանեց։ «Այդ ի՞նչ է նշանակում ձեր արածը, կամ ի՞նչ է.ք ինձանից թաքցնում ձեր ծածուկ խորհուրդը, ես ձեր ամենափոքրիցը փոքրն եմ և ձեր ամենափոքր աշակերտիցը տգէտ եմ, ի՞նչպէս կարող եմ այդ բանը յանձն առնել։ Այն ևս ինձ համար շատ է, որ ձեր սուրբ կապանքներին մասնակից եմ եղել այսօր։ Եթէ ինձ արժան է.ք համարում ձեր սեղանին, դուք ամենդ ընդունեցէ.ք ձեր յարմարաւոր տեղերը և ինձ հրամայեցէ.ք իմ տեղը նստել։ Բայց սուրբ եպիսկոպոսը բոլոր սրբերի համաձայնութեամբը ստիպեց նորան ամենից վերև նստելու։

Երբ բոլորը կարգով նստեցին և հացը կերան, սուրբ Յովսէփը վերկացաւ, ոտի վերայ կանգնեց և սկսեց ուրախութեան երգ ասել այսպէս։ «Ուրախացէ.ք ամենդ Քրիստոսովը, որովհետև էգուց այս ժամանակը մենք բոլորս մոռացած կլինինք այս բոլոր նեղութիւնները և չարչարանքները, որ քաշեցինք։ Եւ մեր փոքր աշխատութեանց փոխանակ ընդունենք բազմապատիկ հանգիստ և խաւար բանդի մթութեան փոխանակ կմտնենք երկնքի լուսաւոր քաղաքի մէջ, որի քաղաքապետ Քրիստոսը հանգիսապետ է այն հանդիսումը, որի աս-

պարիզի մէջը նախ՝ ինքը առաքինացաւ յաղթութեան նշանը ընդունելով։ Այսօր ևս նոյն տէրն է, որ յաջողում է մեզ ընդունելու մի և նոյն նշանը մեր անձանց փրկութեան, և սուրբ և մեծափառ եկեղեցու պարծանքի համար։ Ինչպէս տեսնում է.ք դուք այս եղբօրը մեր ամենից վերև նստած, այնպէս ևս սա էգուց ամենիցը առաջ է ընդունելու յաղթութեան պսակը իւր նահատակվելովը։ Որովհետև ահա եկաւ, մօտեցաւ մեզ մեր կեանքի թշնամին և Քրիստոսի ծառաներիս սուրբ շարչարանքների պսակողը։

Երբ Ցոմսէփը այս խօսքերը ասեց, այն ժամանակը այն երէցը ցոյց տալով իւր հաւատոյ պընդութիւնը միսիթարեց նոցա ասելով։ «Ձեր սուրբ աղօթքովը թող այդպէս առնէ ինձ Քրիստոս և վերջացնի իմ կեանքը աշխարհիցը այնպէս, ինչպէս ասեցիր։ Քո այդ ասելու ժամանակը մի բան ազդեց իմ հոգւոյ վերայ և ես յիշեցի Քրիստոսի մարդասիրութիւնը, որ մեր մեղքերի համար եկաւ աշխարհ։ Թող նա խղջայ ինձ վերայ, ինչպէս խղջաց աւազակի վերայ իւր խաչվելու ժամանակը։ Ինչպէս այն աւազակովը դրախտի փակված դռները բացվեցան և նա կարապետ դարձաւ նոցա, որոնք պէտք է վերադառնային նոյն ուրախութեան տեղը, այնպէս և այսօր թող սպասաւոր շինէ ինձ Տէր Յիսուս Քրիստոսը ձեր մեծափառ գնդին։

Եթէ մի մեղաւոր դառնում է դէպի ապաշխարութիւն, այն ժամանակը անչափելի է լինում երկնքի հրեշտակների ուրախութիւնը, որովհետև նոքա իմանալով իւրեանց տիրոջ կամքը, որ եկաւ

մի կորած ոչխարը գտնելու։ Այս պատճառով և նոքա ուրախակից են լինում նորան մի դէպի ապաշխարութիւն դարձողի համար։ Կարելի է Հայոց մեծ զօրավարը ինձ համար էր եկել իւր բաղմաթիւ սուրը ընկերակիցների հետ. նա պսակը ձեզ համար էր բերել, բայց ուրախութեան աւետիքը ամենին էր տալի։ Նոքա աւելի ինձ վերայ էին զարմացել, որովհետև իւրեանց կենդանութեան ժամանակը ինձ չէին ճանաչում, բայց իւրեանց մեռած ժամանակը կամենում էին, որ ես ևս մասնակից լինիմ երանելեաց հետ։

Աղաչում եմ ձեզ, իմ պարոններ և հայրեր, աղօթք արէք իմ անարժանիս համար, որ արժանանամ հասնելու այն մեծ երանութիւններին, որ ձեր անուտ բերանովը պատմեցիք ինձ։ Այժմ ըշտապում եմ տեսանել այն օրը և ժամը, որին ըսպասում էինք։ Երբ գուրս կգամ այս նեղսակիր մարմնից, երբ կտեսնեմ քեզ, Տէր Յիսուս, երբ կլինի, որ չվախեմ մահից, երբ կլինի, որ իմ տգիտութիւնը փոխվի կատարեալ գիտութիւն։ Օգնիր ինձ, Տէր, օգնիր ինձ և մեկնիր քո ամենազօր ձեռքը ինձ օգնելու, որ իմ ասած խօսքերը արդիւնաւոր գործ դառնան և փառաւորվի մեր Տէր Յիսուս Քրիստոսի անունը իմ մեղաւորիս մէջը։

Երբ երանելին իւր խօսքը վերջացրեց, բոլոր նստածները ոտի վերայ կանգնեցին և Աստուածանից գոհանալով ասում էին «Փառք քեզ Տէր, փառք քեզ Թագաւոր, որ տվիր մեզ ուրախութեան կերակուր, լցրու մեզ քո սուրբ Հոգւոյ շնորքովը, որ հաճոյ լինինք քո առաջը և համա-

չենք, որովհետև դու վարձադրում ես ամենին իւրեանց գործքերին համեմատ։

Այն միջոցին նոքա մեծ խորհուրդ արին, թէ ինչ կերպով ազատեն մոգպետին, որ այս համբաւը չտարածվի տէրութեան մէջ և թագաւորի բարկութիւնը կրակի պէս չվառվի մնացեալների վերայ։ Երբ այս միջոցին չկարացին այս բանը վրձռել, միասին աղօթք առնելով՝ այն հաւատացեալ մոգպետի կեանքը Աստուծոյ խնամքին յանձնեցին։

Բայց նախարարները յորդառատ արտասունք թափելով էին հրաժարվում սրբերիցը և ողբալից ուրախութեամբ նոցա ոտները ընկած մեծ պաղատանքով աղաչում էին, որ նոցա յանձնեն տուրը հոգւոյն, որ նոցանից ոչոք չթուլանայ և դուրս գալով հաւասար միաբանութենից՝ կերակուր չդառնայ չար գազանին։

Բայց երանելի քահանայքը միասին քաջալերում էին նոցա ասելով։ «Քաջացէք, եղբարք և մխիթարվեցէք Աստուծոյ մարդասիրութեամբը, որ ձեզ որը չի թողում և իւր ողորմութիւնը չէ հեռացնում մեզանից, Քրիստոսի հաւատովը։ Այն շատ բարեխօսների միջնորդութեամբը, որ ունինք նորա մօտ, չեն հանգչիլ ձեր վառած ջահերը և չի ուրախանալ ձեր կեանքի խաւարասէր թշնամին, Մի և նոյն տէրն է, որ զօրացրեց առաջվայ նահատակներին և խառնեց նոցա իւր հրեշտակների ժողովի մէջ, նոցա տուրբ հոգիքը և բոլոր արդարների դասը ձեր համբերութեանը օգնութիւն կհասցնեն, որ նոցա հետ միասին նոցա պսակին արժանանանք։

Ա յսպէս խօսելով նոցա հետ բոլոր գիշերը սաղմոս ասելով անցկացրին. իսկ առաւօտը լոյսը բացվելիս ասում էին միաբան։ «Տէր, ծագիր քո ողորմութիւնը նոցա վերայ, որոնք ճանաչում են քեզ և քո արդարութիւնը, որոնց սրտերը ուղիղ են։ Թող հպարտ մարդկերանց ոտները մեզ չկոխեն և մեղաւորների ձեռները մեզ չդողացնեն. այն տեղ գլորվին ամենը, որոնք անօրէնութիւն են գործում, փշրվին և չկարողանան կրկին հաստատվել։

Ա յն միջոցին իսկոյն դահիճները մօտեցան բանդի դռանը ներս մտան և տեսան որ այն մարդը, որ առաջ մոգպետ էր և նորան էր յանձնած բանդարկվածների պահպանութիւնը, նոցա հետ նըստած լսում էր նոցա, նաև քաջալերում էր, որ մահից չվախեն։ Երբ դահիճները տեսան այս մեծ հրաշքը, շատ զարմացան, բայց չհամարձակվեցին բան հարցանել նորանից, այլ գնացին պատմեցին Դենշապուհին, որին յանձնած էր սրբերի չարչարելը։ Նա երբ թագաւորական դահիճներից լսեց այս բանը, շատ վախեցաւ որ չլինի թէ մոգպետը ևս նոցա մէջը լինի, որովհետև շատ ծանօթ էր նորան։ Նա հրամայեց հանել բոլորին բանդից կապած և հեռացնել քաղաքից տասներկու պարսկական հրասախ։ Ինքը ծածուկ ասեց մոգպետին թէ ի՞նչ է նորա կապվելու պատճառը. նա պատասխանեց. «Ինձ հետ ծածուկ մի՛ խօսիր, և մի՛ լսել լուսի խորհուրդը խաւարի մէջ, որովհետև այժմ իմ աչքերը բացվեցան, պատճառ որ տեսան երկնաւոր լոյսը։ Եթէ կամենում ես մասնակից

լինել կեանքին, հարցրու ինձանից բարձրաձայն, ես կպատմեմ քեզ, որովհետև ես տեսայ Աստուծոյ հրաշքները»։

Երբ Դենշապուհը բոլորը լսեց Նորանից և իմանալով Նորա միաբանութիւնը, տեղեկացաւ, որ նա չի բաժանվիլ սրբերի մոքերիցը, չհամարձակվեց ձեռք տալ Նորան, թէպէտ հրաման ունէր թագաւորիցը, այլ ինքը շտապեց թագաւորի մօտ և անձամբ ծածուկ պատմեց Նորան բոլորը, ինչ որ Նորանից լսեց։

Թագաւորը պատասխան տվեց Դենշապուհին։ «Ոչ ոքի չպատմես այդ բանը, մանաւանդ այն մեծ տեսիլքը, որ երևացել է Նորան, որ չլինի թէ տրգէտ մարդիկը լսելով հեռանան մեր հաստատ օրէնքիցը։ Մինչդեռ մենք կամենում էինք ուրիշներին հնազանդեցնել, որ Նոքա իւրեանց հոգին գրտնեն. Նոցա չկարողանալով ոչինչ առնել, մեր օրէնքների վարդապետները ևս Նոցա մոլորութեան հետ մոլորվեցան։

Դայց ամենից աւելի ցաւն այն է, որ մի շնչին մարդ չմոլորվեցաւ մեր օրէնքից, այլ մի համակդեն, որ երևելի էր բոլոր աշխարհի երեսին։ Եթէ Նորա հետ վէճ բանանք, նա մեր աշխարհի բոլոր գիտուններից աւելի տեղեակ է, կարելի է մեր օրէնքը հիմն 'ի վեր քանդի։ Եթէ պատժենք Նորան միւս չարագործների հետ միասին, այն ժամանակը Նորա քրիստոնէութեան համբաւը այնպէս կտարածվի, որ մեծ անարգանք կգայ մեր կրօնի վերայ։ Իսկ եթէ սրով սպանենք, շատ քրիստոնեայք կան մեր բանակի մէջ, Նոքա բոլոր երկրումը կտարածեն Նորա

ոսկրները։ Առանց դորա ևս բաւականի անարգանք էր մեզ համար, որ նոքա պատվում և պաշտում էին նազովրեցւոյ ոսկրները, իսկ այժմ եթէ մի և նոյն պատիւը տան մոգերին և մոգպետներին ևս, այն ժամանակը մենք ինքներս կլինինք մեր օրէնքների քանդողը։

Այժմ ես երդում եմ տալի քեզ անմահ աստվածների անունով, կանչիր քեզ մօտ այն յանդուգը ծերին, եթէ նա սիրով կլսէ և զղջալով կուրանայ նոցա կախարդութիւնը, այն ժամանակը նորան առաջվայ պէս սիրով և պատվով մեծարիր, ոչ ոք բոլորովին չիմանայ նորա չարութիւնները։ Իսկ եթէ չհնազանդի և չկամենայ լսել իմ խօսքերը, այն ժամանակը նորա վերայ մեծ ամբաստանութիւն վերկացրու այն աշխարհիցը, որ նա անհարազատ երևայ թագաւորական գործքերի մէջ, բոլոր ժողովրդի մէջ դատապարտիր և քշիր նորան Կուրանի և Մակուրանի այն կողմը, ձգիր այն տեղ մի խոր փոսի մէջ, որ թշվառութեամբ մեռանի։ Իսկ այլադաւանների կեանքը շուտով վերջացրու այս աշխարհիցը, որ տակն 'ի վայր չառնեն մեր աշխարհի օրէնքները։ Որովհետև եթէ ճարտար մոգպետին այնպէս իւրեանց կողմը ձգեցին, տգէտ մարդիկը ի՞նչպէս կարող են ընդդէմ կենալ նոցա սուտ խալէութեանը։

Ղենշապուհը գնաց, ինչպէս պատմեցինք տասներկու հրասախ բանակիցը հեռու ատեան կազմեց և կոչելով մոգպետին իւր մօտ՝ ասեց իշխանութիւն եմ ստացել քո վերայ, ոչ միայն խօսքով հարցանել, այլ ամենայն կերպի տանջանքներ տալ։

քանի որ ձեռք չեմ տվել քեզ, ընդունիր իմ պատիները, արհամարհիր անարգանքները և խնայիր քո պատվական սպիտակ մազերին։ Թող այն քրիստոնէութիւնը, որ սկզբից չունէիր և կրկին դարձիր դէպի մոգութիւնը, ինչպէս առաջ շատերին առաջնորդում էիր։

Երանելին պատասխանեց։ «Աղաչում եմ քեզ տէր, որ երեկ ինձ երևում էիր ինչպէս հարազատ եղբայր, իսկ այսօր երևում ես ինչպէս կատարեալ թշնամի, առաջվայ սիրովը մի ողորմիլ ինձ, այլ կատարիր իմ վերայ ձեր չար թագաւորի հրամանը և ինչպէս իշխանութիւն ես առել իմ վերայ՝ այնպէս դատիր ինձ։

Երբ Դենշապուհը տեսաւ, որ նա թագաւորի սպառնալիքը արհամարհում է, նորա աղաչանքին ականջ չէ դնում, և բացի ծածուկ խօսելուց կամենում էր յայտնիւս խօսել, այն ժամանակը վարվեց նորա հետ թագաւորի հրամանին համաձայն։ Զգեց նորան հեռաւոր օտարութեան մէջ, ինչպէս թագաւորը պատուիրել էր։

Թագաւորը հրամայեց Դենշապուհին վերցնել իւր հետ աւագ գործակալներից երկու օգնական ընկերակից, Ջնիկանին, որ թագաւորական մարզպան էր և Մոմանին, որ հանդերձապետ էր կարգված մոմպետեան մոմպետից։

Այս երեքը իւրեանց սպասաւորներով վերցրեցին սրբերին այն անապատից և հեռացրեցին նոյն գիշերը նոյնպէս մի վատ տեղ։ Զօրքից ոչ ոքի չթողին տեսնել նոցա, ոչ Հայի, ոչ մի այլ քրիստոնէի և ոչ հեթանոսի։ Հրամայեցին նմանապէս

այն սպասաւորներին, որոնք նորան պահում էին քաղաքի մէջ, զգոյշ կենալ, որ ոչ ոք մարդկերանցից չիմանայ թէ ինչ տեղից պէտք է տանեն նոցա սպանելու տեղը։ Բայց թագաւորի զօրքիցը մի խուժիկ անունով մարդ, որ ինքը ծածուկ քրիստոնեայ էր և դահիճների դասումն էր կարգած օրապահ էր նշանակած չարչարանքների գործիքների վերայ։ Նա կէս գիշերին եկաւ և խառնվեցաւ նախարարների մէջը։ Դահիճների առաջի դասը համարում էր թէ նա երկրորդ դասից է, երկրորդ դասը կարծում էր թէ երրորդ դասից է և այսպէս երեք դասը և միմեանց դասից էին համարում նորան, վասն որոյ ոչ ոք, ոչ տէրերիցը ոչ ծառաներիցը չհարցրեց նորան, թէ դու ո՞վ ես։

Երբ նոքա հասան անապատ տեղ, ուր բոլորովին բնակութիւն չկար և այնպէս դժնեայ քարքարոտ տեղ էր, որ նստելու տեղ անգամ չկար, այն երեք նախարարները հեռու իջևանեցին և դահիճներին հրամայեցին կապել նոցա ձեռները և ոտները։ Դահիճները երկայն թոկերով կապեցին նոցա ոտները և երկու երկու լծվելով քարշովին նոցա։ Ապառաժ քարքարոտի վերայ քարշ ածելով՝ այնպէս ջղտոտեցին նոցա անձը, որ բոլորովին ամբողջ տեղ չմնաց երանելեաց մարմինների վերայ։ Ցեռոյ արձակեցին և տարան մի տեղ։

Նոքա այնպէս էին կարծում, թէ կակղեցրին սրբերի պնդութիւնը և հնազանդեցրին նոցա յանդուգն ապստամբութիւնը, ասում էին այժմ ինչ որ ասենք, կլսեն և կատարելով թագաւորի կամքը՝ կազատվին անտանելի չարչարանքիցը. բայց

նոքա չէին կարողանում հասկանալ թէ նոցա քաջ զինվորի պէս զինավորեցին, կրթութեան հանդիսում վարժեցին և սովորցրին վայրենի գազանի պէս իւրեանց արիւնը թափելու։ Եւ եթէ սրբերը փոքր ինչ կասկածանք ունէին առաջ, այժմ նայելով իւրեանց մարմնի չարաչար վերքերի վերայ, բոլոր երկիւղը մի կողմ ձգեցին։ Սկսեցին անզգայ հարբածների պէս մինը միւսից աւելի համարձակ պատասխանել. ծարաւ մարդկերանց նման շտապեցին դէպի աղբիւրը, կամենալով մինը միւսից աւելի առաջ թափել իւր արիւնը երկրի վերայ։

Մինչդեռ սրբերը այս պատրաստութեան մէջ էին, Դենշապուհը սկսեց խօսել նոցա հետ և ասել։ «Թագաւորը ինձ ուղարկեց ձեզ մօտ ասելու, որ Հայոց աշխարհի բոլոր աւերվածների, զօրքի ջարդվելու, և բոլոր միւս վնասների պատճառը դուք էք եղել, և շատ նախարարներ, որ այժմ չարաչար կապանքների մէջ են, այդ բոլորը ձեր կամակորութենից է եղել։ Բայց եթէ այժմ կամենում էք ինձ լսել, ասում եմ ձեզ, ինչպէս դուք բոլոր՝ մահվան չարչարանքների պատճառ եղաք, այսօր նոյնպէս եղէք ձեր կեանքի պատճառը։ Այն նախարարների արձակվելը, որոնք այժմ կապանքի մէջ են, ձեզանից է կախված. և ձեր աշխարհի աւերվելը ձեզանով կշինվի և շատերը որոնք գերի են գնացել յետ կդառնան։

Ահա այսօր դուք ձեր աչքովը տեսաք, թէ այն երևելի մարդը, որին ինքը թագաւորը ճանաչում էր իբրև մեր օրէնքին լաւ տեղեակ, որ կատարեալ իմանում էր մեր կրօնը, որ բոլոր իշխաններին սի-

րելի էր և համարեա թէ մեր բոլոր աշխարհը կախ-
ված էր նորանից, բայց որովհետև անարգեց Դենի
մագդէզը և խաբվեց ձեր տխմար գիտութենովը, այս
պատճառով թագաւորը բոլորովին չխնայեց նորա
մեծ պատվին, այլ ինչպէս մի հասարակ գերի քշել
տվեց նորան այնպիսի հեռաւոր օտարութեան մէջ,
որ մինչև անգամ գնալու ժամանակը չէ կարող հա-
սանել իւր պատժվելու տեղը։

Եթէ թագաւորը չխնայեց նորան պատվական
օրէնքներիցը մոլորվելու համար, ի՞նչքան աւելի
ձեզ օտարականներիդ չի խնայիլ, որ մահապարտ
էք թագաւորական գործքերի մէջ։ Ձեզ այլ ազատ-
վելու հնար չկայ, բացի արեգակին երկրպագու-
թիւն տալուց և թագաւորի հրամանը կատարելուց,
ինչպէս մեզ տվորցրել է մեծ Զրադաշտը։ Եթէ
այս բանը դուք կկատարէք, ոչ միայն կազատվէք
կապանքներիցը և կազատվէք մահիցը, այլև ձեզ
կուղարկենք ձեր աշխարհը մեծ պարգևներով և
պատվով։

Ղևոնդ երէցը յառաջ կանգնեց և իւր համար
թարգմանիչ վերցնելով Սահակ եպիսկոպոսին ա-
սեց, «Ի՞նչպէս լսենք քո երկմիտ հրամաններին,
ահա երկրպագութիւնը առաջ արեգակին տվիր,
իսկ երկրպագութիւնը կատարիլը թագաւորի կամ-
քին ձգեցիր արեգակին մեծացրիր յառաջ նորա
անունը տալով, բայց յետոյ թագաւորին մեծաց-
րեցիր արեգակիցը աւելի և յայտնեցիր թէ արե-
գակը առանց իւր կամքի է ծառայում արարածնե-
րին. իսկ թագաւորը իւր ազատ կամքովը, որին
կամենում է աստվածացնում է, իսկ որին կամենում

է ծառայեցնում է, բայց ինքը տակաւին չէ ճանաչում ճշմարտութիւնը։ Մեզ հետ մի խօսիր, ինչպէս երախաների հետ, որովհետև հասակով չափահաս ենք, իսկ գիտութեանով անտեղեակ չենք. ինչ տեղից դու սկսեցիր, այն տեղից ես քեզ կը-պատասխանեմ։

Դու մեզ ասում ես որ մենք ենք մեր աշխարհի աւերվելու և թագաւորական զօրքի ջարդվելու պատճառը. բայց մեր օրէնքը մեզ այդպէս չէ ուսուցանում, այլ հրամայում է շատ պատվել երկրաւոր թագաւորներին և սիրել նոցա մեր բոլոր զօրութեանով, նորան ճշմարտութեամբ ծառայել, ոչ ինչպէս մի ընչին մասնաւոր մարդոյ, այլ ինչպէս Աստուծոյ. եթէ երկրաւոր թագաւորները մեզ զրկեն՝ Աստուած խօստացաւ այդ զրկողութեան փոխարէն երկնաւոր արքայութիւնը տալ մեզ։ Մենք պէտք է ոչ թէ միայն հպարտութեամբ ծառայենք թագաւորներին, այլև մահվան չափ մեր անձը զոհենք նոցա սիրոյ համար։ Եւ ինչպէս չունինք իշխանութիւն փոխել մեր թագաւորին ոչ մի երկրաւոր իշխանի հետ, նմանապէս չունինք իշխանութիւն փոխելու մեր երկնային ճշմարիտ Աստուածը այլոց հետ, բացի որից այլ աստուած չկայ։

Ես կասեմ քեզ, որ փոքր ինչ տեղեակ ես։ Ո՞ր քաջ զինվորը ամենից յետոյ է պատերազմ մղում. եթէ քաջ զինվորը այսպիսի բան առնէ նա չի կոչվիլ քաջ, այլ շատ վախկոտ. կամ ո՞ր իմաստուն վաճառականը պատվական մարգարիտը կը-փոխի անարգ կտաւի հետ, նա պէտք է ձեր առաջնորդների պէս յիմար լինի, որ այդ բանը առնէ։

Դու մեզ բաժանեցիր մեր առաքինի շատ նա-
խարարներից և կամենում ես ծածկօրէն քանդել
մեր հաստատ խորհուրդները։ Մենք միայնակ չենք,
ինչպէս դու կարծում ես, չկայ ոչ մի տեղ, ուր չը-
լինի մեր թագաւոր Քրիստոսը։ Միայն նոքա են
զրկված նորանից, որոնք քո և քո չարագործ թա-
գաւորի պէս ուրացել են նորան։ Ահա և մեր աշ-
խարհի զինվորները, որոնց մենք սովորցրել էինք քրի-
ստոնէական հաւատը, ոտի տակ տվին ձեր թա-
գաւորի սաստիկ հրամանը, նորա մեծամեծ պար-
գևները անարգեցին, հայրենական տէրութենից
կամքով հրաժարվեցին, չխնայեցին ոչ իւրեանց
կանանց, ոչ որդկերանց, ոչ այս աշխարհի մարմ-
նաւոր գանձերին, նաև իւրեանց արիւնը անգամ
չխնայեցին Քրիստոսի սիրոյ համար։ Արեգակի
պաշտօնեաներին, որոնք ձեր վարդապետները էին,
չարաչար հարվածներ տալով սատակեցրին և մեծ
կոտորածք հասցրին ձեր զօրքին։ Նոցանից շատերը
սպանվեցան նոյն պատերազմի մէջը, միւսները գա-
նազան փորձութեանց մէջ ընկան, շատերը հեռա-
ւոր օտար երկիրներ քշվեցան և աւելի շատերը
գերի տարվեցան։ Նոքա բոլորը մեզանից շուտով
գնացին Աստուծոյ արքայութիւնը և խառնվելով
երկնային հրեշտակների զօրքերի մէջը, ցնծում են
պատրաստված ուրախութեան մէջ, որոնց հետ
խառնվեցաւ նոյնպէս և այն երանելի մոգպետը, որի
համար դու ասում ես թէ քշեցիր հեռու երկիր։
Երանի՜ եմ տալի նորան և այն երկրին, որտեղից
նա պէտք է անցկենայ, և այն տեղին, ուր նա պէտք
է մեռնի. որովհետև այն տեղը իւր պատվականու-

թեամբը գերազանց է ոչ միայն ձեր թագաւորական պալատներից, այլև այն երկնային լուսաւոր մարմիններից, որոնց դուք երկրպագութիւն էք տալիս։

Ոսման հանդերձապետը նորան պատասխանեց. «Աստուածները բարերար են, իւրեանց համբերութեամբը աշխատում են, որ մարդիկը իմանան և ճանաչեն իւրեանց փոքրութիւնը և նոցա մեծութիւնը և վայելեն այս աշխարհի պարգևները, որոնք յանձնած են թագաւորի իշխանութեանը։ Թագաւորների բերանից է դուրս գալիս կեանքի և մահվան հրամանը։ Դուք իրաւունք չունիք այդպէս ընդդիմանալ նոցա կամքին և երկրպագութիւն չըտալ արեգակին, որ իւր ճառագայթներով լուսաւորում է բոլոր տիեզերքը և ջերմութեամբը պատրաստում է կերակուր մարդկերանց և անասունների համար։ Նա իւր ամենապարգև առատութեան և անաչառ պարգևապաշխութեան համար անվանվեցաւ Միհր աստված, որովհետև նորա մէջը չկայ ոչ ներողութիւն և ոչ անիմաստութիւն։ Այս պատճառով մենք ևս ներողամիտ ենք ձեր տգիտութեան վերայ, որովհետև մենք մարդատեաց չենք արիւնարբու և հումակեր գազանների պէս։ Խնայեցէ՛ք ձեր անձին և մեզ ակամայ մի՛ք շաղախիլ ձեր արեան մէջը։ Թողեցէ՛ք ձեր առաջվայ մեղաւորութիւնները և այսուհետև ուղղվեցէ՛ք, որ ձեր պատճառով միւսներին ևս ողորմի մեծ թագաւորը։

Այս խօսքերին Սահակ եպիսկոպոսը պատասխանեց. «Դու որպէս ուսեալ և շատ գիտուն լաւ հոգս ես քաշում աշխարհի շինութեան և թագա-

ւորի փառքի համար, բայց այդ շատ յիմարութիւն է, որ շատ աստվածներ ես ընդունում, և բոլորի կամքը զանազան։ Եթէ աստվածները միմեանց հետ կռվում են, մենք արարածներս ինչպէս կարող ենք հաւանել քո խօսքերին։ Միաբանեցրու ջուրը և կրակը, որ նոցանից խաղաղութիւն սովորենք։ Արեգակին տուն կանչիր ինչպէս կրակը, եթէ այդ բանը նորան անկարելի է, որ աշխարհը առանց լոյսի չմնայ, կրակին ուղարկիր նորա մօտ, որ նորանից անկարօտութիւն սովորի։

Եթէ քո աստվածների բնութիւնը մի է, նոքա միմեանց հաւասար կլինին և կրակը միշտ կմնար ինչպէս արեգակը առանց փայտ ածելու նորա մէջ և թագաւորի ծառայքը 'ի զուր թագաւորական ծախսը չէին շատացնիլ կրակին ծառայելով։ Ձեր աստվածներիցը մինը անկուշտ ուտում է, իսկ միւսը, որ չէ ուտում, առանց օդի նորա ճառագայթների լոյսը նվազում է. ձմեռը ցրտանում է և բոլոր կանաչեղէն խոտերը սառցնում է, ամառը ջերմանում է և այրում բոլոր կենդանիներին։ Այն բանը՝ որ միշտ փոփոխութեան մէջ է, չէ կարող ոչ ոքի հաստատ կեանք պարգևել։ Ես չեմ կարող մեղադրել քեզ, որովհետև ով որ մեծ թագաւորին չէ ճանաչում՝ նա իշխաններին է երկրպագութիւն տալի. բայց եթէ լաւ գիտնականներիցը մինը առնի այս բանը՝ իսկոյն մահով կպատժեն։

Եթէ կամենում ես արեգակի մասին իմանալ՝ ճշմարիտը քեզ պատմեմ։ «Դա աշխարհիս արարածների մի մասն է, միւս արարածները բաժանված են երկու մասը, կէսը նորա վերևն են, իսկ

կէսը ներքևը։ Նա առանձին խստակ և մաքուր լոյս չունէ, այլ Աստուծոյ հրամանովը օդի միջնորդութեամբ տարածում է իւր ճառագայթները և կրակային մասնովը տաքացնում է բոլոր արարածներին, որոնք գտանվում են նորա կայանի ներքև։ Բայց նորա վերևի արարածները ոչինչ մասը չունին նորա ճառագայթներից, որովհետև նորա լոյսը պարունակվում է նորա գնդի մէջ, ինչպէս ամանի մէջ, որի բաց բերանը ներքև է թափում լոյսը ներքին արարածների վայելչութեան համար։ Ինչպէս նաւը ծովի ահագին ջրի վերայ թռած գնում է և առանց բան հասկանալու կատարում է իւր ճանապարհորդութիւնը հմուտ և ճարտար նաւապետի միջնորդութեամբ, նոյնպէս և արեգակը իւր կառավարչի ձեռքովը կատարում է իւր տարաւոր շրջանի փոփոխութիւնները։

Ինչպէս աշխարհիս միւս մասները նշանակված են ապրելու համար, նոյնպէս արեգակին ևս նշանակել է Աստուած մեզ լուսով առաջնորդելու, ինչպէս և լուսինը, աստղերը, մշտաշարժ օդը և անձրևաբեր ամպերը։ Նոյնպէս երկնային մասներից ծովերը, գետերը, աղբիւրները և բոլոր պիտանի ջրերը և ցամաքային արարածները։ Սոցանից ոչ մինը արժանի չէ աստված անվանվելու։ Բայց ով որ յանդգնի նոցա աստված անվանել, նա իւր անձը տգիտաբար կկորցնի և աստված անվանելովը նոցա ոչինչ օգուտ չի տալ։ Մի իշխանութեան մէջ երկու թագաւոր չեն լինում, եթէ մարդիկը չեն յօժարվում այդ բանը առնել, ինչքան հեռի է աստվածային ընութեներից այդպիսի խառնուփնդոր կար-

գը։ Այժմ եթէ կամենում ես ճշմարտութիւն սովորել, քաղցրացրու քո սրտի դառնութիւնը, բաց արա մտքիդ աչքերը և լոյսը թողած՝ կոյրութեամբ դէպի խաւարը մի գնալ, դու ընկել ես փոսի մէջ, կամենում ես ամենին ևս քո մօտ քարշել։ Եթէ քո մերձաւորները չտեսանելով և չիմանալով հետեւում են քո մոլոր վարդապետութեանը, մեզ ևս նոցա նման մի կարծիլ, որովհետև մեր մտքի աչքերը բաց են և պարզ տեսնում ենք։ Մենք մարմնոյ աչքով տեսնում ենք արարածներին և ճանաչում ենք, որ այլ էակ է ստեղծել նոցա։ Սոքա բոլորը ապականացու են։

Բայց ամենի արարիչը մարմնաւոր աչքի չի երևում, նորա զօրութիւնը միայն մտքով է իմացվում։

Աստուած տեսաւ մեզ մեծ տգիտութեան մէջ, ողորմեցաւ մեր անուսումնութեան վերայ, երբ մենք ևս ձեզ պէս երևելի բաներին արարիչ էինք կարծում և ամենայն կերպի անառակութիւններ էինք գործում, այս պատճառով սիրուցը շարժված՝ եկաւ մարդկային մարմին ստացաւ և մեզ սովորցրեց իւր աներևոյթ աստուածութիւնը. ինքը բարձրացաւ խաչի վերայ և որովհետև մարդիկը լուսաւոր մարմինների հետևից մոլորվեցան, այս պատճառով խաւարեցրեց արեգակի ճառագայթները, որ խաւար սպասաւոր դառնայ նորա մարդկութեանը, որ ձեզ պէս անարժանները չտեսանեն իւրեանց կեանքը մեծ անարգութեան մէջ։ Ինչպէս և այսօր, ով որ խաչված Քրիստոսին Աստուած չի խոստովանում, նոյն խաւարը պատում է նորա հոգին և մարմինը, ինչպէս և քեզ որ մի և նոյն խաւարի մէջը

լինելով՝ մեզ չարչարում ես։ Մենք պատրաստ ենք մեռնելու մեր տիրոջ օրինակին հետևելով, դու ինչպէս կամենում ես, այնպէս կատարիր քո գառը կամքը։

Այն ժամանակը, երբ անօրէն Դենշապուհը նայեց նոցա վերայ և տեսաւ բոլորը զուարթ դէմքով մեծ ուրախութեան մէջ են, իմացաւ որ նոցա սպառնալը և աղաչելը անօգուտ է։ Հրամայեց աւելի փոքրերիցը մէկին Արշէն անունով յառաջ բերել, որից առաջ սրբերը կասկածում էին։ Կապեցին նորա ոտները և ձեռները և այնպէս սաստիկ ուժով հուպ տվին մինչև բոլոր ջլերը ջոթրտվեցին. այսպէս բաւականի ժամանակ մնաց այս անտանելի մզկոդութեան մէջը։

Սուրբը իւր բերանը բացեց ասելով։ «Ահա ինձ շրջապատեցին շատ շներ և չար մարդկերանց ժողովը ինձ շրջապատեց, ծակեցին իմ ոտները և ձեռները, և իմ բերանի փոխանակ աղաղակեցին իմ ոսկրները։ Լսիր ինձ Տէր, լսիր իմ ձայնը և ընդունիր իմ հոգին քո այն սուրբ զօրքերի ժողովի մէջ, որ երևեցաւ քո նորաշէն բնակարանին։ Քո ողորմութիւնը գթալով ինձ վերայ որ ամենիցը փոքրը եմ յառաջացրեց»։

Երբ որ այս բանը խօսեց սուրբ Արշէնը, այնուհետև չկարողացաւ բանալ իւր բերանը մանգանի անտանելի ճնշելուցը։ Նոյն միջոցին դահիճները հրաման ստանալով Պարսից երեք նախարարներիցը, սրով կտրեցին երանելու գլուխը և նորա մարմինը ձգեցին մի ցամաք փոսի մէջ։

Այն ժամանակը Դենշապուհը սկսեց եպիսկո-

պոսի հետ այսպէս խօսել։ «Երբ ես եկայ Հայոց աշխարհը մի տարի և վեց ամիս այն տեղ շրջեցի, բոլորովին չեմ յիշում ես, որ քեզ վերայ անրաւականութեան խօսք լսած լինիմ, նմանապէս և աւելի Յովսէփի վերայ, որովհետև դա իշխան էր բոլոր քրիստոնէից վերայ և հաւատարիմ թագաւորական բոլոր գործքերի մէջ։ Այնպէս նա՝ որ իմ գնալուց առաջ մարդպան էր եղել, շատ շնորհակալ էր այս մարդիցը և ես իմ սեփհական աչքերովը տեսայ, որ դա հաստատ հայր էր համարվում աշխարհի համար. դա անաչառութեամբ սիրում էր մեծերին և փոքրերին։

Այժմ ձեր ինձ աղաչելու փոխանակ՝ ես եմ աղաչում ձեզ, խնայեցե՛ք ձեր պատուական անձներին և չարաչար մահվան կերակուր մի՛ դառնաք առաջվանի պէս, որ դուք տեսաք ձեր աչքովը։ Որովհետև ես իմ մտքումը դրել եմ որ եթէ դուք այդ ծուռը մտքի մէջը հաստատ մնաք, ձեզ շատ չարչարանքներ տալով կտրեմ ձեր կենաց թէլը։ Եւ իմանում եմ, որ այդ Ղևոնդի խօսքերն են շողոքորթում ձեզ. դա ինքը մարմնով տկար է, բժիշկները չեն կարողացել առողջացնել դորան. հիւանդ կեանքը դորան ձանձրացրել է, դա այժմ մահը կեանքիցը նախապատիւ է համարում։

Սուրբ Յովսէփը այս խօսքին պատասխանեց։ «Այն գովութիւնը որ յառաջ տվիր Սահակ եպիսկոպոսին և ինձ, ճշմարիտ ասացիր և պատվեցիր մեր ալիքները, այդպէս և արժան էր. Աստուծոյ ճշմարիտ ծառաներին անվայել է ընդդէմ կենալ երկրաւոր իշխաններին և ժողովուրդներիցը ոչ ոքի

ներգացնել մարմնաւոր օգտածարաւութեան պատ-
ճառով, այլ պէտք է հեզութեամբ ուսուցանել
Աստուծոյ պատգիրանքները և առանց խարդախ
իմաստութեան խաղաղասէր լինել դէպի ամենը և
բոլորին անաչառութեամբ ուսուցանելով՝ առաջ-
նորդել դէպի բոլոր արարածների միակ Տէրը։ Բայց
որ ասացիր այր մարդու հրապուրելու մասին, այդ
ևս սուտ չասեցիր, այլ շատ ճշմարիտ։ Որովհետև
նա մեզ չէ հրապուրում ինչպէս օտարների և չէ
մոլորեցնում ինչպէս խաբեբայ, այլ շատ սիրում է
մեզ։ Որովհետև մեր մայրը-եկեղեցին մի է, որ մեզ
ծնեց. ինչի՞ համար պէտք է մի հօր և մի մօր որ-
դիքը երկպառակ լինին և ոչ միաբան։ Դու ինչ
բան որ կարծում ես հրապուրանք, այդ բանը ե-
ղել է մեր գիշերվայ և ցերեկվայ խորհուրդը, որ ան-
քանդելի պահենք մեր կենսական միաբանութիւ-
նը։ Իսկ եթէ սա ձանձրացել է և կամենում է այս
ախտալից մարմնիցը դուրս գալ, մենք ամենս աւելի
ևս ցանկանում ենք, որովհետև կանանց ծնունդի մէջ
չկայ մի մարդ, որի մարմինը առանց ցաւերի և շար-
չարանքների լինի։

Դենշապուհը պատասխանեց. «Դուք չէք հաս-
կանում թէ որքան ներող աչքով եմ նայում ես
ձեզ վերայ. այս թագաւորի հրամանովը չէ, որ ես
այսպէս երկարօրէն վիճում եմ ձեզ հետ, այլ ես
իմ քաղցրութիւնիցը շարժուած՝ թոյլ եմ տալի
ձեզ խօսել. որովհետև ես ձեզ պէս անողորմ չեմ,
պատճառ որ դուք ձեր անձանց համար ատելի էք,
իսկ այլոց թշնամի։ Որովհետև ես ձեր աշխարհի

աղուհացը կերել եմ, այս պատճառով սիրում եմ և խղճում եմ ձեր աշխարհին»։

Ղևոնդ երէցը պատասխանեց։ «Ով որ սէր և գութ ունի դէպի օտարները, նա կատարում է Աստուծոյ պատվիրանները, բայց պէտք է և իւր հոգոյն խնայել։ Մենք մեր անձանց տէրերը չենք, այլ է, որ պէտք է մեզանից հաշիւ և համար պահանջէ օտարների և մերձաւորների համար։ Բայց այն որ ասացիր, թէ իմ կամքովն եմ լսում ձեզ և ոչ թագաւորի հրամանովը, եթէ դուք սովոր էք չը-կատարել ձեր թագաւորի հրամանը, այդ լաւ էք առնում, որովհետև նա աշխարհաւեր է և անմեղ մարդկերանց սպանող, սատանայի բարեկամ և Աստուծոյ թշնամի։ Բայց մենք չենք կարող արհամարհել մեր թագաւորի հրամանը և անանց կեանքը փոխել աշարհի ապականված խաբէութեան հետ։

Բայց ինչ որ ինձ համար ասացիր, թէ ես բըժիշկներից առողջութիւն չգտնելով, սիրում եմ մահը կեանքից առաւել, այդ խօսքերը անպիսի մարդկերանց խօսքեր չեն, որոնք տեսնում են աշխարհի բոլոր չարչարանքները։ Աղէ, հանգստացրու քո կատաղի բարկութիւնը, լսիր իմ ճշմարիտ խօսքերը և կարգով նայիր աշխարհի բաների վերայ։ Մահկանացուներից ոչ ունի անցաւ կեանք, ոչ ապաքէն բոլորը ցաւով լի են, կամ ներսից կամ դրսից։ ցուրտով, շոքով, քաղցով, ծարաւով, և ամենայն չքաւորութեան կարօտութիւններով։ Դրսից կայ յափշտակութիւն, գէճ պըղծութիւն անառակ գործքերով։ Ներսից՝ ամբարշ-

տութիւն, ուրացութիւն, տգիտութիւն, անգարձ մոլորութիւն կամաւոր ապատութենից։

Բայց դու, որ բժիշկներին անարգեցիր, թէ ես նոցանից առողջութիւն չեմ ստացել, այդ զարմանալի բան չէ, որովհետև նոքա ևս մարդիկ են, կայ այնպիսի ցաւ, որի բժշկելու հնարը գտնում են, և կայ այնպիսի ցաւ որին նոցա հնարները չեն ներգործում, որովհետև բոլորը մահկանացու են, թէ բժշկվողները և թէ բժշկողները։ Բայց երանի թէ դուք ևս բժշկական արհեստի նմանութիւն ունենայիք, որովհետև նոցա բժշկութեան ճշմարտութիւնը փոքր չէ։ Պատճառ որ երբ նոքա տեսնում են մի մարդ հիւանդացած, չեն ծուլանում նոցա մօտ գնալու, այլ շտապով հնար են գտնում առողջացնելու։ Մանաւանդ եթէ թագաւորական պալատի մէջ թագաւորի սիրելիներիցը մինը հիւանդանայ, բժիշկը հասանելով մեծ հրապարակը տեսնի պատվաւոր մարդկերանց բազմութիւնը և գեղեցիկ երիտասարդների առողջութիւնը և աւելի ներս մտնելով թագաւորի սրահի մէջ տեսնի այն տեղ բոլոր սպասաւորների դէմքերը գեղեցիկ և ընտանելի, նա չի զարմանալ նոցա այդ հրաշալի դէմքի վերայ։ Դաւ եթէ ակնաշար և բոլորովին ոսկեղէն աթոռների վերայ լինի պարկած հիւանդը այդ բոլորը նորա համար ոչինչ են։ Դա կհրամայէ վերցնել ոսկեշար վերմակները և ձեռը ներս տանելով կզնի նորա բոլոր մարմինը իմանալու, թէ արդեօք մարմինը տաք է, սիրտը հանգարդէ, լեարդը կակուղ է կամ երակների շարժուածքը կանո-

նաւոր են, որ նոցա համեմատ բժշկութեան տեղ դնէ նորան առողջացնելու։

Ուրեմն եթէ մարդկային բժշկութիւնը այդպէս արհամարհելով ամենը և միայն իւր արհեստը յառաջ տանելով, կատարում է իւր գործը, որչափ աւելի ձեզ, որ բոլոր աշխարհը ունիք ձեր մեծ իշխանութեան տակը հարկաւոր էր նախ հոգալ ձեր հոգիքը բժշկելու աշխարհիս բոլոր ցաւալից մոլորութիւններից, այն ժամանակը բոլորը հնազանդութեամբ ձեզ կծառայէին մարմնով։ Որովհետև դուք տգիտացաք և ձեր անմահ հոգին մահկանացու շինեցիք գժոխքի անհանգչելի կրակումը, այժմ կամայ և ակամայ ձեր մարմինը ախտացրել է.ք անբժշկելի ցաւերով և մեզ նախատում է.ք մեր մարմնաւոր ցաւերի համար, որ մեր կամքիցը չէ, այլ իւրաքանչիւր մարդոյ մարմնոյ յատկութիւնից ինչպէս պատահում է։

Քրիստոս ինչպէս ճշմարիտ Աստուած կենդանի և կենդանացնող իւր բարերար կամքովը դարձաւ բժիշկ հոգիների և մարմինների համար և առաջ ինքը իւր շարչարանքի ցաւերովը բժշկեց մարդկային բոլոր ազգը։ Նա աւելի սիրով գթալով մեր վերայ, կրկին ծննդեամբ վերածնեց մեզ դէպի անցաւ և անվերջ առողջութիւն, սատանայի ծածուկ հարվածների ծակոտած տեղերը առողջացրեց և մեզ շինեց անցաւ հոգւով և մարմնով, անարատ, որ մենք բնակվենք երկնաւոր հրեշտակների հետ և մեր երկնաւոր թագաւորի զինվորներ դառնանք։ Դու այս բաները չես իմացել, չես վայելել Աստուծոյ երկնաւոր պարգևները և չես կա-

մենում սովորել մեզանից, այլ կամենում ես մեզ
ևս մոլորեցնել, այդ բանը անհնարին է, չի կարելի
և դու երբէք չես կարող կատարել։

Բայց իմ ցաւալից մարմնի մասին կարճառօտ
պատմեմ քեզ։ Ես ուրախանում եմ և զուարճա-
նում, երբ տեսնում եմ իմ մարմինը չարչարված,
որովհետև որ իմանում եմ, որ դորանով իմ հոգ-
ւոյ առողջութիւնը զօրանում է։ Մանաւանդ, որ
իբրև զրաւական աչքի առաջն ունիմ հեթանո-
սաց մեծ վարդապետին, որ իւր մարմնի ցաւերի
մէջը իւր անձը մխիթարում էր, և սատանայական
մարմնիցը չարչարվելու ժամանակը պարծենալով
ասում էր։ «Եթէ տնկակից եղանք նորա մահի նը-
մանութեանը, ի՞նչքան աւելի մասնակից կլինինք
նորա յարութեանը»։ Բայց դու՝ որ իշխանութիւն
ունիս մեզ վերայ, դատիր մեզ քո չարութեան
կամքին համեմատ։ Մենք բոլորովին չենք վախելու
անտանելի և ահաւոր սպառնալիքիցը և երբէք չենք
երկնչելու այն դառը մահիցը, որ պէտք է մեզ հաս-
ցնես։

Այն ժամանակը նա երանելիներին փոքր ինչ
միմեանցից հեռացնելով՝ ասեց սուրբ Սահակ ե-
պիսկոպոսին առանձին։ «Այն գովութիւնը, որ ես
յառաջ քեզ տվի, դու քեզ պատիւ չհամարե-
ցիր։ Ահա այժմ յիշեցնեմ քեզ այն քո գործած
չարութիւնները, որ դու ինքդ քո անձը մահապարտ
շինես։ Սա՛ ճշմարիտը, դո՞ւ քանզեցիր Ուրշտու-
նեաց երկրումը կրակատուները, կամ կրակը դո՞ւ
սպանեցիր։ Ես ինչպէս լսեցի և ստուգեցի, դու ես
չարչարել մոգերին և վերցրել մեր տաճարի բոլոր

պաշտօնարկութեան սպասնելը։ Եթէ ճշմարիտ է դու որ այս բանը արել ես այժմ պատմիր ինձ։

Սուրբ Սահակը պատասխանեց։ «Ա՞յժմ ես կամենում ինձանից տեղեկանալ այդ, թէ վաղուց գիտէիր։ Դենշապուհը պատասխանեց, այլ է համբաւը, այլ է ճշմարտութիւնը։ Սահակը ասեց, դու ինչպէս կարծում ես, այնպէս պատմիր ինձ։ Դենշապուհը պատասխանեց, ես լսեցի, թէ այն բոլոր վնասները, որ պատահել են Ռըշտունեաց երկրումը, դու ես արել։ Եպիսկոպոսը պատասխանեց, եթէ դու այդպէս հաւատի իմանում ես, կրկին ինչի՞ ես հարցանում ինձ։ Դենշապուհը ասեց, «Ես կամենում եմ քեզանից ճշմարիտը իմանալ»։ Եպիսկոպոսը պատասխանեց. «Դու չես կամենում ուսանիլ ինձանից քո կեանքի օգուտը, այլ ցանկանում ես իմ արիւնը»։ Դենշապուհը պատասխանեց. Ես արիւնարբու գազան չեմ, այլ աստուածների անարգութեան վրէժխնդիր»։

Եպիսկոպոսը պատասխանեց. «Անխօս տարերքը աստուած ես անվանում, իսկ քո պատկերակից մարդկերանցը կամենում ես սպանել։ Դու թագաւորի հետ միասին Աստուծոյ անաչառ դատաստանի առաջև վճարելու ես մեր վրէժը։ Դու ինչ որ քո չար կամքով կամենում ես ինձանից լսել ահա, քեզ պատմեմ։ Ճշմարիտ է, կրակատունը ես այրեցի, մոգերին ծեծեցի և այն պիղծ գահուկարասէրը որ այն տեղ կային, ծովի մէջն ածեցի։ Իսկ կրակը ո՞վ կարող է սպանել, որովհետև արարածների ամենիմաստ արարարիչը յառաջուց հոգս առնելով,

չորս նիւթերի բնութիւնը անմահ հաստատեց։ Ուրեմն սպանիր օդը, եթէ կարող ես, կամ ապա-կանիր հողը, որ կանաչեղէն չբուսացնի, մորթիր գետը, որ մեռնի։ Եթէ այդ երեքը կարող ես սպա-նել, այն ժամանակը և կրակը կարելի է սպանել։

Ա՛ռ ճարտարապետը այդ չորս տարերքը ան-քակ միարանեց միմեանց հետ. կրակի տաքութիւնը գտնվում է նմանապէս քարերի, երկաթների և բոլոր զննելի տարերքների մէջ. ուրեմն ինչի՞ ես ինձ զըպարտութեամբ մեղադրում, ասելով կրակը դու ես սպանել։ Ուրեմն դու սպանիր արեգակի տաքու-թիւնը, եթէ կարող ես որովհետև նա հրային մասը ունի, կամ հրաման տուր, որ երկաթից կրակ չը-դուրս գայ։ Այն բանը կարող է մեռանել, որ շունչ ունի, շարժվում է, գնում է, ուտում է և խմում է, Ե՞րբ ես տեսել դու կրակին գնալիս, խօսելիս, կամ բան հասկանալիս։ Ուրեմն ինչ բան դու կենդանի չես տեսել, ասում ես մեռել է։ Ինչքա՞ն աններելի է ձեր ամբարշտութիւնը բոլոր հեթանոսներից ա-ւելի, որոնք ձեզանից աւելի գիտուն են. պատճառ որ թէպէտ նոքա ճշմարիտ Աստծուց մոլորվել են, սակայն անխօս տարերքները աստված չեն ընդու-նում։ Այժմ եթէ դու անգիտութեամբ խօստվա-նես, թէ կրակի բնութիւնը ոչնչանալի է, միւս բոլոր արարածները անհամաձայն կլինեն քեզ հետ, որովհետև ամեն արարածի մէջ կայ ջերմու-թիւնը»։

Դենշապուհը պատասխանեց. «Ինձ անտեղի է քեզ հետ վէճ բանալ արարածների բնութիւնը քննելու մասին. դու ինձ ասա միայն, դո՞ւ հանգ-

ցըրիր կրակը թէ ոչ»։ Եպիսկոպոսը պատասխանեց, որովհետև չես կամենում ճշմարտութեան աշակերտ լինել, ասեմ քո հայր սատանայի կամքը։ «Ես ինքս մտայ ձեր կրակատունը, և տեսայ որ այն տեղ կային ձեր սուտ կրօնի անիրաւութեան ծառայքը, և կրակատունը կրակով լիքը նոցա առաջ վառված պրում էր։ Ես նոցա ոչ ծեծելով, այլ հանդարդ խօսքերով հարցրի, ի՞նչ է.ք համարում ձեր այս պաշտաման կրակը. նոքա պատասխանեցին, մենք ոչինչ չենք իմանում, միայն այս ենք իմանում, որ այս մեր նախնեաց սովորութիւնն է և թագաւորի սաստիկ հրամանը։

Կրկին անգամ հարցրի նոցանից ի՞նչ է.ք կարծում դորան արարիչ, թէ արարած։ բոլորը պատասխանեցին, մենք դորան արարիչ չենք կարծում և ոչ վաստակածներին հանգստացնող։ Մեր ձեռները կոշտացել են կացնից, մեր եղունկները մաշվել են փայտ կրելուց, մեր աչքերը խոնաւացել են դորա կծողական ծխի արտասուք հանելուցը և երեսներս մրոտվել են նոյն ծխի խոնաւ թանձրութենից։ Եթէ նորան շատ կերակուր ենք տալի, աւելի է սովում, եթէ բոլորովին չենք տալի՝ ամենևին հանգչում է. եթէ մօտենում ենք երկրպագութիւն տալու, մեղ պրում է, իսկ եթէ բոլորովին չենք մօտենում, մոխիր է դառնում։ Մենք այդպէս ենք ճանաչում դորա բնութիւնը։

Մի՞ւս անգամ հարցրի նոցանից. «Բայց իմանո՞ւմ է.ք, թէ ով է սովորցրել ձեզ այդպիսի մոլորութիւնը։ Նոքա պատասխանեցին, ինչի՞ ես մեզանից հարցանում, դու ինքդ տեսնում ես քո ա-

ռաջև, մեր օրէնսդիրները միայն հոգւոյ աչքով են կուրացել, բայց մեր Թագաւորը զրկված է մի մարմնաւոր աչքից, իսկ հոգևոր աչք բոլորովին չունի։

Ահա այս պատճառով, երբ ես լսեցի այս բանը մոգերից, շատ խղճացի նոցա վերայ, որովհետև իւրեանց տգիտութեամբը ուղիղը ասացին։ Փոքր ինչ նոցա ծեծեցի փայտով և հրամայեցի իւրեանց ձեռքով կրակը ջրի մէջն ածել և ասեցի. «Այն աստվածները, որ չեն ստեղծել երկինքը և երկիրը, թող ջնջվին երկրի վերայից։ Յետոյ մոգերին արձակեցի։

Երբ Դենշապուհը այս բոլորը լսեց սուրբ եպիսկոպոսի բերանից, սաստիկ սարսափեց Թագաւորին պարսաւելու և իւրեանց կրօնը անարգելու համար։ Այս պատճառով վախեցաւ նորան հարված տալով տանջել, որ մի գուցէ աւելի մեծ անարգանքներ խօսի Թագաւորի վերայ դատաւորների առաջև և այս բանը հասնելով Թագաւորի ականջը, բոլորի պատճառը իւրեան համարեն, որովհետև նա այնպէս երկար խօսակից եղաւ նոցա հետ։

Որովհետև Դենշապուհը սուրը վրէն կապած էր նստել ատենումը, ահ և երկիւղ ձգելով սրբերի վերայ, այս պատճառով զայրացած առիւծի նման բարկութեամբ կոչեց, և սուրը հանելով գազանի պէս յարձակվեց երանելեաց վերայ, խփեց, կըտրեց եպիսկոպոսի աջ ուսի թիկունքի հետ միասին ձեռը ներքև գլորեց։ Բայց նա ձախ կողմի վերայ վայր ընկնելով, կրկին հոգևորվեց, վերցրեց աջ ձեռը և աղաղակեց բարձր ձայնով։ «Տէր, ընդունիր

իմ կամաւոր պատարագը, որ ես ինքս ինձ քեզ նվիրեցի բոլորովին, և խառնիր ինձ քո սուրբ զինվորների գնդի մէջ »։

Նա կրկին անգամ իւր ընկերներին քաջալերում էր, ասելով. « Հապա, առաքինիք, հասաւ ձեր նահատակութեան ժամանակը, առժամանակ խփեցէք ձեր մարմնոյ աչքերը, իսկոյն կտեսնէք Յիսուս Քրիստոսին։ որ մեր յոյսն է։ Յետոյ շաղախվելով իւր մարմնոյ արեան մէջ, ասում էր. « Ամէն ժամանակ կօրհնեմ Տէրին, նորա օրհնութիւնը միշտ իմ բերանումը կլինի։ Տէրովը կպարծենայ իմ անձը, կլսեն հեզ մարդիկը և ուրախ կլինին. և այս սաղմոսը շարունակելով հասաւ մինչև այս տեղը, « Արդարների համար շատ նեղութիւնք կան, բայց Տէրը ամենից ազատում է նոցա և պահում է նոցա ոսկրները»։

Եւ մինչդեռ մարմնոյ ցաւը բոլորովին չէր վերացել, իւր աչքով նայեց տեսաւ շատ հրեշտակների բազմութիւն երկնքիցը իջած, և վեց պսակ հրեշտակապետի ձեռքին. և լսեց երկնքից մի ձայն, որ ասում էր։ « Քաջալերվեցէք իմ սիրելիք, ահա կմոռանաք ձեր ցաւալի կեանքը, կհասանէք այն երանելի պսակներին, որ ձեր ճարտարութեամբը պատրաստեցիք. առէք ահա, դրէք իւրաքանչիւրդ ձեր գլխին։ Որովհետև նորանց պատրաստութեան նիւթը դուք ճարեցիք, իսկ Քրիստոսի սուրբ ձեռները պատրաստեցին. ընդունեցէք հրեշտակների ձեռքիցը և Ստեփաննոսի հետ պսակակից եղէք»։ Սուրբ եպիսկոպոսը տեսնում էր, որ դեռ ևս սուրը շողշողում էր երանելեաց պարանոցների վերայ։

Երբ սուրբ Ղևոնդը տեսաւ, որ չեն կամենում աւելի առանձին առանձին հարցանել, այլ հրամայեցին բոլորովին միանգամայն սպանել, ասեց Երանելի Յովսէփին։ Գնա, առաջ դու մօտեցիր սրին, որովհետև դու աստիճանով ամենից բարձր ես։ Երբ այս խօսքերը վերջացրեց, բոլորը կարգով կանգնեցին. դահիճները շտապով և սաստիկ կատաղութեամբ կտրեցին բոլոր Երանելեաց գլուխները, սուրը եպիսկոպոսի աչքի առաջև, որ իւր վերջին շունչը տալիս, աղաղակեց ասելով. «Տէր Յիսո՛ւս, ընդունի՛ր մեր ամենիս հոգին և խառնի՛ր քո սիրելեաց ժողովի մէջ»։ Այսպէս բոլորը միասին նահատակվեցան այն տեղ։

Եթէ այն մոգպետին ևս որ Հաւատաց Քրիստոսին, նոցա հաշվի մէջը ձգենք, թուով կլինի եօթը, բացի այն երկուսը, որ Ղարդեստումը նահատակվեցան և բացի միւս եպիսկոպոսից, Թաթիկ անունով, որ Ասորեստանումը նահատակվեցաւ։ Բայց նոյն տեղումը վեցը նահատակվեցան, որոնց անունները սոքա են։ Սահակ եպիսկոպոս Ռըշտունեաց, Սուրբ Յովսէփը Վայոց ձորեցի Հողոցմանց գիւղից, Ղևոնդ երէցը Վանանդեցի, Իջևանից գիւղից, Մուշէ երէցը Յաղբակեցի, Արշէն երէցը Բագրևանդացի, Եղեգիկայ գիւղից, Քաջաղ սարգաւագ|Ռըշտունեաց երկրից։ Իսկ Երանելի մոգպետը Նիւշապուհ քաղաքից, Սամուէլ երէցը Այրարատից Արածոյ գիւղից, Աբրահամ սարկաւագը մի և նոյն գիւղից։

Ղենշապուհ մոգպետը, Ջնիկանը և Մայպետը այս վեց սուրբին անապատումը նահատակե-

լով, այն տեղ պահապան դրեցին իւրեանց ծառաներից և հրամայեցին պահել երանելեաց մարմինները տասը կամ աւելի օր, մինչև թագաւորական կարգաւանը անցկենայ, գնայ, որ քրիստոնեայք չըգան, վերցնեն նոցա ոսկրները և տարածեն բոլոր աշխարհի երեսին, որից մարդիկը յորդորված աւելի մոլորվին նաղովրեցու աղանդի ետևից։

Բայց խուժիկը, որին առաջ յիշեցինք, զէնքերի մօտ մնում էր պահապանների մէջ, ինչպէս նոցանից մինը, նա լինելով իմաստուն մարդ և աստուածային գիտութեամբ կատարեալ, սպասում և նայում էր, թէ ի՞նչ եղանակով կարելի էր մի հընար գտանել սրբերի ոսկրները նոցանից գողանալու։

Երեք օր անցկենալիցը յետոյ, ահ ընկաւ բոլորի վերայ, նոքա թմրած և կիսամեռ վայր ընկած էին երեք օր. իսկ չորրորդ օրումը պահապաններիցը երկուսը չարաչար դիւահարվեցան, իսկ գիշերվայ կէսին ներքնից հնչվում էին ահեղ ձայներ, թնդիւններ և որոտաձայնք, ինչպէս գետնաշարժի դղրդիւն, երկիրը գողում էր նոցա ոտների տակ և սուսերների շողալը փայլմունքներ էին տարածում նոցա չորս կողմը։ Նոքա տեսնում էին բոլոր դիակները կանգնած առենի մէջ, և բարձր ձայնով մի և նոյն խօսքերն էին ասում, մինչև որ պահապանները սաստիկ փախչելով, իրեար դիպչելով՝ միմեանց ըսպանում էին։ Եւ այնպէս էին երկիւղով պատած և ցնորված մինչև որ ոչ ոք չէր իմանում, թէ իւր ընկերը ո՞ւր է գնում։ Նոքա գնացին մեծ զարմանքով պատմեցին այն չարչարանքների բոլոր անց.քը, որ նոցա պատահեց։

Երեք նախարարները խորհուրդ նստեցին զարմացած միմեանց ասելով. Ի՞նչ անենք քրիստոնէից անքննելի ազանդի համար, որովհետև քանի որ նոքա կենդանի էին, նոցա կեանքը զարմանալի էր։ Ատում էին կայքը, ինչպէս անկարօտներ, սրբասէր էին՝ ինչպէս անմարմիններ, անաչառ էին ինչպէս արդարադատներ, աներկիւղ էին՝ ինչպէս անմահներ։ Եթէ ասենք այս բոլորը նոցա տգիտութիւնից և յանդգնութիւնից է, այն ինչի՞ց է, որ մեր բանակի բոլոր ցաւօտները նոցանով են առողջանում, կամ որ աւելի զարմանալին է, օր մարդց մեռած մարմինը կանգնեց և երևաց կենդանի մարդկերանցը կամ օվ մեռածներիցը խօսք խնց։

Մեր ծառայքը տուտ չեն ասում, մենք ինքներս արդէն իմանում ենք նոցա ճշմարտախօսութիւնը։ Եթէ սոքա կամենան մարմնաւոր ազահութեան ցանկանալ, կարող էին փոքր ինչ մերձաւորութիւն ցոյց տալ այն քրիստոնէից, որոնք մեր զօրքի մէջն են, և իրաքանչիւր նահատակի մարմնից չափովը ոսկի տանալ։ Նմանապէս այդ մարդիկը, որ գիւահարվեցան, մենք իմանում ենք, որ նոքա առաջուց ցաւոտ չէին։ սորանից երևում է, որ այսօր մեծ հրաշք է երևացել։ Եթէ լաւ կենանք, այս համբաւը կտարածվի և մենք թագաւորի հալածանքի տակը կընկնինք. իսկ եթէ պահապաններին տանենք թագաւորի մօտ, նա խնդրով զոցանից այն բոլոր հրաշքները, կարելի է մեր կրօնը քանդվի»։

Ազգեսը պատասխանեց։ «Ինչի՞ է այդքան նեղանում ձեր մէջ, միթէ ինձ չնշանակից գլխա-

ւոր ձեր երկուսիդ վերայ, դուք ձեր գործը կատարեցիք և թագաւորի հրամանը արիք։ Եթէ այդ համբաւները յայտնվին և թագաւորը հարց և փորձ առնի այդ մասին, այդ խնդիրը մեզ մոգերիս է վերաբերում, դուք անհոգ կացէք և ոչինչ կասկածանք մի՛ք ունենալ։ Իսկ եթէ դուք վախենաք, էգուց առաւօտը շուտով եկէ՛ք Դարիթիր, որովհետև իմաստուն Մոմպետեան Մոմպետը զոհ կըմատուցանէ և ձեր միտքը կհամոզի։

Բայց Խուժիկը երբ այս բոլորը լսեց և իմացաւ, որ նոքա այնուհետև հոգս չեն անում նահատակների մարմնի մասին, շտապեց, շուտով վերցրեց տասը մարդ, որոնց քրիստոնէութեան չափը ճանաչում էր և հասանելով այն տեղ, տեսաւ բոլորը իւրեանց տեղը։ Եւ որովհետև տակաւին կասկածում էր դահիճներից, այս պատճառով սրբերի մարմինները փոխեցին իւրեանց տեղից երկու մղոն հեռու։ Երբ այսպէս ապահովվեցան, սրբեցին պատրաստեցին սրբերի մարմինները և բերելով բանակի մէջ՝ ծածուկ պահում էին. յետոյ տակաւ առ տակաւ յայտնեցին նախ Հայոց զօրքին և յետոյ շատ քրիստոնեաների, որ զօրքի մէջն էին։ Ընծայի առաջին պտուղը տվեցին կապած նախարարներին։ Նոքա շուտով իւրեանց կապանքից ազատվեցան և մահու սպառնալիքը հեռացաւ նոցանից։ Թագաւորը թողութեան հրովարտակներ ուղարկեց Հայոց աշխարհը։

Այս երանելի Խուժիկը, որ արժանացաւ ծածուկ ծառայելու սրբերին, ինչ որ նոցա մահից մինչև այս տեղ ասվեցաւ, բոլոր դատաստանի վը-

ճիրը նա պատմեց մեզ կարգով, այն է՝ սրբերի չարաչար քարշածելը, դատաւորների հարց և փորձը, իւրաքանչիւրի պատասխանները, նոցա նահատակվելը, այն ահագին երկիւղը, որ պատեց պահապաններին, երեք նախարարների քննութիւնը. նա նոցա սուրբ մարմինները առանձին առանձին, առանց միմեանց խառնելու ժողովել էր վեց գերեզմանի մէջ և բոլորի անունները իմանալով, տապանի վերայ նշանակել էր։ Երկաթեայ կապանքները իւրաքանչիւրի մարմնի հետ էր դրել, որովհետև դահիճները դէն էին ձգել, նմանապէս նշանակել էր իւրաքանչիւրի շորերը։

Այս վեցը նահատակվեցան իւրեանց սուրբ և ցանկալի մահով Հրոտից ամսի 25ին, Ապար աշխարհի մեծ անապատումը, Նիւշապուհ քաղաքի սահմանումը։

ԴԱՐՁԵԱԼ ՆՈՑԱ ԽՈՍՏՈՎԱՆՈՂ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՀԱՄԱՐ։

Ընդեղեանց աշակերտները քաղաքումը կապանքի մէջ էին, մի թագաւորական դահճապետ եկաւ և նոցա գուրս հանեց քաղաքից։

Հանեց նմանապէս նոյն քաղաքիցը հինգ աստուածանցի քրիստոնեայք, որովհետև նոքա ևս կապանքի մէջ էին Քրիստոսի անվան համար։ Դահճապետը նոցա ծեծելով չարչարեց, բայց նոքա աւելի ևս հաստատվեցին իւրեանց մտքի մէջ։ Կորեց նոցա պատշները և ականջները և հրամայեց նոցա տանել Ասորեստան, որ թագաւորութեան համար մշակութիւն առնեն։ Նոքա գնում էին մեծ ուրախութեամբ, իբրև թէ թագաւորից մեծ պարգև են ստացել։ Նոյն դահճապետը կրկին անգամ եկաւ տուրբ նահատակների աշակերտաց մօտ, ընտրեց նոցանից երկուսին, որոնք աւելի համեստ էին միւսներից, հեռացրեց դէպի մի կողմը և ասեց, թէ նշ

են ձեր անունները։ Նոցանից մինը պատասխանեց իմ անունը դրել են Խորէն, իսկ դորանը Արրահամ, բայց շնորհատուր կարգովը մենք Քրիստոսի ծառաներ ենք և այն երանելեաց աշակերտները, որոնց սպանեցիք։

Դահճապետը պատասխանեց. «Այժմ ձեր գործը ի՞նչ է, կամ ո՞վ է ձեզ այս տեղ բերել»։ Արրահամը պատասխանեց. «Այդ բանը ձեզ արժան էր տվորել մեր վարդապետներից, որովհետև նոքա աննշան մարդիկ չէին, այլ ունէին իւրեանց հայրենական արժանաւորութեանը համեմատ-բաւականի ստացվածք, նմանապէս ունէին սպասաւորներ, ոմանք ինչպէս մենք, իսկ ոմանք մեզանից աւելի լաւ, որոնց դատխարակել և ուսումնէին տվել, մենք ևս նոցա հետ ենք եկել։ Որովհետև ատուածատուր օրէնքները մեզ պատվիրում են նոցա սիրել, ինչպէս սուրբ ծնողների և ծառայել նոցա ինչպէս սուրբ տէրերի։

Դահճապետը բարկանալով ասեց։ «Դու խոստովանես ինչպէս անխրատ և աներկիւղ ստամբակ։ Մինչդեռ ձեր աշխարհումն էիք և խաղաղութեան մէջ, լաւ էր ձեզ նոցա հետևել, բայց երբ նոքա յանցաւոր գտնվեցան թագաւորական գործքերումը և մահապարտ եղան իւրեանց գործքերին համեմատ, այն ժամանակը ձեզ արժան չէր բոլորովին նոցա մտանել։ Դուք չէ՞ք տեսնում մեծ կարաւանի մէջ, երբ պատվաւորներից մինը թագաւորի պատժի ներքոյ է լինում սպոյ շոր է հագնում և ջոկվելով բաժանվում է և հեռու նստում միայնակ և բոլորովին ոչ ոք չէ համարձակվում նոցա մտանալ։

Իսկ դու ինչպէս արդար մարդոյ աշակերտ պարծե-
նալով ես խօսում»։ Խորէնը պատասխանեց. «Ո՛չ
ձեր կարգն է անիրաւ և ո՛չ մեր կարգը սուտ։ Յան-
ցաւոր նախարարը, ումից պարգև էր ստացել պէտք
է նորան այնպէս հպատակութիւն ցոյց տար, որ
այն պատվի վերայ միւս մեծամեծ պարգևներ ևս
ստանար նորանից։ Բայց որովհետև այնպէս չի վար-
վեց, այս պատճառով ընդհակառակը ստացաւ։ Եթէ
մեր վարդապետները դէպի Աստուած յանցաւոր զը-
տանվէին, կամ դէպի թագաւորը մեղաւոր. նոցն
կերպով և մենք նոցա հետ կվարվէինք, ո՛չ մեր աշ-
խարհումը նոցա կմօտենայինք և ո՛չ նոցա ետևից
օտար աշխարհներ կերթայինք։ Բայց որովհետև
նոքա դէպի Աստուած և դէպի թագաւորը արդա-
րութեամբ են վարվել և դուք 'ի զո՛ւր և անմեղ ըս-
պանեցիք նոցա, այս պատճառով մենք այժմ ա-
ւելի կպատվենք նոցա սուրբ ոսկրները»։

Դահճապետը պատասխանեց. «Ես առաջուց
ևս ասացի, որ դու շատ յանդուգն ես, ահա այժմ
յայտնվեցաւ, որ դուք ևս մատնակից է.ք նոցա բո-
լոր վնասներին»։ Աբրահամը հարցրեց. «Ո՞ր վնաս-
ներին։ Դահճապետը պատասխանեց. «Յառաջ
մոգերի սպանելուն, յետոյ միւս այլ բոլոր վնաս-
ներին»։ Աբրահամը պատասխանեց. «Այդ միայն
մենք չենք անում, այդ բանը ձեր օրինացը ևս հա-
մեմատ է, թագաւորները ձեզ հրամայում են, իսկ
դուք ձեր սպասաւորների ձեռով է.ք կատարում
նոցա հրամանները»։

Դահճապետը պատասխանեց. «Երդվում եմ
Մի՛հր աստուծովը, որ դու աւելի սատիկ ես խո-

սում, քան քո վարպետները, երևում է որ դուք աւելի վնասակար մարդիկ էք։ Այժմ ձեզ մահվիցը ազատելու այլ հնարք չկայ, բացի արեգակին երկրապագութիւն տալուց և մեր օրէնքները կատարելուց»։ Խորէնը ասեց. «Մինչև այժմ չարախօսում էիր իբրև մարդ, իսկ այժմ հաչում ես իբրև անպիտան շուն։ Եթէ արեգակը ականջներ ունենար, կամաչէր քո խօսքերիցը, նա բնութեամբ անզգայ է, իսկ դու չարութեամբ նորանից աւելի ես անզգայ։ Ո՞րը տեսար մեզ աւելի պակաս, քան մեր հայրերը. մեզ խօսքերով մի՛ փորձիր, այլ թող հանդէս դուրս գայ քո չարութիւնը և մեր բարութիւնը, որ քո հայր սատանան ամաչի ուշ միայն մեզանից, որ աւելի կատարեալ ենք, այլ նոցանից, որ աւելի փոքր են թվում քեզ, նա սատանիկ կվերաւորի քո հոգին և մարմինը»։

Երբ դահճապետը այս բանը լսեց, սատանիկ բարկացաւ նոցա վերայ։ Հրամայեց քարշատալ առաջիններիցը աւելի. այն չափ սատանիկ քարշեցին, որ շատերը կարծեցին թէ նոքա մեռան։ Երեք ժամից յետոյ կրկին երկուսը ևս սկսեցին խօսել և ասել. «Մենք փոքր ենք համարում այս անարգանքները և ոչինչ ենք համարում մեր մարմնի ցաւերը Աստուծոյ մեծ սիրոյ համար, որով նահատակվեցան մեր հոգևոր հայրերը։ Ուրեմն մի՛ զարմացիր, այլ ինչ որ նոցա արեցիր, նոյնը և մեզ արա։ Եթէ նոցա գործքերը քեզ չար են թվում, մերը կրկնապատիկ համարիր, որովհետև նոքա մեզ խօսքով էին հրամայում, իսկ մենք գործքով էինք կատարում»։

Ընդ ժամանակը դահճապետը աւելի սաստիկ բարկացաւ Նոցա վերայ և հրամայեց մահաժեծ առնել։ Այսպէս Նոցա իւրաքանչիւրին ծեծելու համար վեց դահիճ փոխեցին։ Մինչդեռ Նոքա երկրի վերայ կիսամեռ ընկած էին, հրամայեց երկուսի ականջը տակիցը կտրել։ Իսկոյն այնպէս կտրեցին, որ կարծես բոլորովին ականջներ չեն ունեցել։ Նոքա սաստիկ ծեծիցը զարթեցան ինչպէս քնից, և սկսեցին աղաչելով խնդրել և ասել։ «Աղաչում ենք քեզ թագաւորի քաջ զինվոր, կամ մեզ մահով սպանիր ինչպէս մեր հայրերին կամ պատուհասիր մեզ այս վերջի տանջանքներովը։ Որովհետև մեր ականջները առողջացան երկնաւոր անախտաւորութեամբը, բայց հոտոտելիքներս տակաւին չարչարանաց մէջն են, մեզ կիսապարգև մի թողիր երկնքի բարութենիցը։ Մեր մարմինը մաքրեցիր քարշտալով և մեր լսելիքը կտրելով, մաքրիր և մեր քթերը կտրելով, որովհետև ինչքան մեզ տգեղացնում ես մարմնով, այնքան մեզ գեղեցկացնում ես հոգւով»։ Դահճապետը հանդարտութեամբ պատասխանեց ասելով. «Եթէ ես աւելի ուշանամ ձեզ մօտ. կարծեմ որ ինձ ևս ձեր մոլորութեան աշակերտ կշինէք։ Այժմ ահա թագաւորի խորհուրդը յայտնում եմ ձեզ։ Հրամայած էր այդքան պատիժ տալ ձեզ և յետոյ ուղարկել Ասորեստան, որ մշակութիւն առնէք տէրութեան համար, որովհետև ով որ ձեզ վերայ նայի, այդ մոլորութեան մէջ չի մնալ թագաւորի հրամանին ընդդէմ»։

Գրանելիքը նորան պատասխանեցին. «Դու մեր երկիրը կիսագործ թողեցիր, մենք կիսատ

մարմնով ի՞նչպէս մշակենք թագաւորի երկրում»։ Երբ գահճապետը այս բանը լսեց, աղաչեց զինվորներին, որ նոցա տանում էին և ասեց միայն այս տեղից դուք տարէ՛ք դոցա, հասցրէ՛ք Ասորեստան, իսկ այն տեղ թողէ՛ք իւրեանց կամքին ազատ շրջել, ուր կամենան»։

Սոքա են Հայոց խոստովանողները, որ նեղութիւնները և չարչարանքները ուրախութեամբ յանձն առան։ Որովհետև նոքա մահից ազատվել էին, այս պատճառով սգով և տրտմութեամբ էին զընում իւրեանց երկար ճանապարհը։ Նոցա ոտների և ձեռների կապանքները ծանր չէին թվում, նոքա ասում էին, ինչի՞ արժանի չեղանք քաջնահատակներին հաւասարվելու։ Ինչ ժամանակ տարան հասցրին նոցա Բաբելացւոց երկիրը, Շահուղ գաւառը, թէպէտ նոքա թագաւորական պատուհասի մէջ էին, բայց ծածուկ և յայտնի մեծ ընդունելութիւն էին գտնում երկրի բնակիչներից։ Երանելիքը այս պատճառով ևս շատ տրտում էին, ասելով, փոքր աշխատեցինք, բայց շատ ենք հանգստանում և միշտ նոյն զղջման մէջն էին լինում։ Նոքա շտապում էին տեսանելու նախարարների տուրը կապանքները և հոգալու նոցա մարմնաւոր պիտոյքը։ Նոքա այս միտքը յայտնեցին այն աշխարհի մեծամեծներին, որոնք քրիստոնէութեան տուրը ուխտի մէջ էին։ Ամեն մեծերը և փոքրերը հաւանեցին յայտնել բոլոր երկրին, որ ամենը յօժարանան մարմնաւոր պիտոյքներով մասնակից լինելու տուրը և հեռու օտարութեան մէջ կապեալներին։

Այսպէս տարեցտարի ժողովում էին ամեն մարդ

իւր կարողութեանը համեմատ, մինը շատ, միւսը փոքր, ով ինչքան կարողութիւն ունէր արծաթ կամ այլ բան տալու. պատրաստում էին և տալիս էին երանելեացը տանել կապած նախարարների մօտ։ Այսպէս նոքա ծառայում էին, մինչև իւրեանց ծառայութեան նշանակած տարը տարու լրանալը։

Որովհետև նոցա շատ սաստկութեամբ էին պահում ջերմ երկրումը և անդադար ճանապարհորդութեան մէջն էին լինում Շահուղումը, Մի-շոմեումը, Քաշկարումը և բոլոր Ասորեստանումը և խուժաստանումը, այս պատճառով սուրբ Խորէնը սաստիկ տօթահար լինելով տաքութենից մեռաւ։ Տեղի բնակիչները թաղեցին նորան սուրբ վկաների մօտ։

Իսկ երանելի Աբրահամը մնաց միշտ նոցն առաքինութեան մէջ. նա մնանէր գալի, ժողովում էր բոլոր հաւատացեալների սուրբերը, տանում էր մեծ հեռատանը և ինքը բաժանում էր նոցա իւրաքանչիւրի պէտքերին համեմատ։ Նա այսպէս շարունակեց իւր գործը մինչև պատժվածների 12 երրորդ տարին. բոլոր նախարարները միասին ապաշնորհեցին Աբրահամին գնալ Հայոց աշխարհը, որ Հայերը նորա մէջը տեսնեն այն քաջ նահատակներին, որոնք սրով սպանվել էին. նորա մէջը տեսնեն նմանապէս չարչարանաց սուրբ կապանքները։

Դրը մարտիրոսները, խոստովանողները և կապվածները նորանով երևան, այն ժամանակը նորանով կօրհնվի բոլոր աշխարհը, նորանով կօրհնվին և կաճեն նոցա որդիքը, նորանով կզգաստանան նոցա երիտասարդները սրբութեան մէջ։ Նորանով

կհամեստանան ծերերը իմաստութեան մէջ։ Նորանով կ՚սովորին նոցա իշխանները մարդասիրութիւն. Նորանով Աստուծոյ գութը կընկնի թագաւորի սիրտը, բոլոր աշխարհքը շինելու և խաղաղութիւն ձգելու նորա մէջ։ Նորանով եկեղեցիքը կպարծենան, ինչպէս քաջ և կատարեալ զինվոր. Նորանով վկայարանները կզարդարվին. Նորանով վկայքը ցնծալով կուրախանան։ Նորանով Աւարայրի դաշտը պայծառացած կծաղկի ոչ անձրևաբեր ամպերի ջրերովը, այլ վկաների սուրբ և արիւնաբուղխ ցանված և ցրված ոսկրների սպիտակութենովը։ Երբ խոստովանողի ամենավաստակ ոտները կկոխեն պատերազմի լայնատարած տեղերը, երբ կենդանի մարտիրոսը նորա մէջը մանկցայ, կենդանին կենդանու մօտ գնալով, այն ժամանակը բոլոր աշխարհին կլինի կրկնապատիկ կենդանութիւն։ «Գիտենք, ասում՚էին նոքա», երբ Հայոց աշխարհի բոլոր միայնակեացները սորան տեսանեն, սորանով կյիշեն պատերազմողների հոգևոր գունդերը, որոնք մեր փոխանակ իւրեանց մարմինը մահու մատնեցին և իւրեանց արիւնը թափեցին, իբրև պատարագ Աստուծոյ հաշտութեան համար։ Սորանով կյիշվին սուրբ քահանաները, որոնք մորթվեցին այս օտարութեան մէջ և ցածրացրին թագաւորի բարկութեան կատաղութիւնը։ Գուցէ սորանով յիշեն մեր կապանքները և աղօթելով Աստուծուց՝ խնդրեն, որ գերադարձ առնի մեզ կրկին մեր հայրենի երկիրը»։

«Որովհետև շատ ցանկանում ենք ոչ միայն մարմնաւոր կարօտութեամբ, այլ աւելի տեսանե-

լու եկեղեցիները և այն սրբասէր պաշտօնեաներին, որոնց հաստատեցինք այն եկեղեցիների մէջը։ Եթէ Աստված յաջողէ տրան գնալ և յայտնել մեր ցեղերի կարօտութիւնները, գիտենք որ այն ժամանակը Աստուած մեզ համար ևս կբանայ իւր ողորմութեան դուռը, որ գնանք նոյն ճանապարհը, որով պէտք է առաջնորդեն այս սրբի ոտները»։

Աստուածաշնորհ նախարարները այս խորհուրդը մտածելով՝ շատ ազաչանքներով համոզեցին խստասիրտներին։ Որովհետև սովորութիւն չկար բարի բանին ընդդիմանալու, այս պատճառով Աբրահամը իւր առաջվայ սովորութեան պէս, այս անգամ ևս շտապեց շուտով կատարելու աստուածային առաքինութեան մէջ միարան ճգնողների հրամանը։ Նա եկաւ, մտաւ Հայոց աշխարհը։

Շտապեցին, նորա առաջը դուրս եկան տղամարդիկը և կանայք, մեծերը և փոքրերը, ազնվականաց և գիւղականների բոլոր բազմութիւնը, որոնք ընկնում էին սուրբի առաջը, համբուրում էին նորա ոտները և ձեռները ասելով «Օրհնեալ է Տերը երկնքումը, որ երկնքից հրեշտակ ուղարկեց մեզ մօտ մեզ համար յարութեան աւետիք բերելու, որ արքայութեան ժառանգներ դառնանք։ Որովհետև ահա քո մէջը կերպարանված տեսնում ենք այն բոլորին, որոնք յարութեան յուսով հրաժարվել են և այն արձակվելու յուսով կապվածներին։ Քեզանում ենք տեսնում մեր աշխարհի խաղաղութեամբ շինվելը։ Քեզանով մեր եկեղեցիքը ցնծալով կզվարճանան և քեզանով մեր սուրբ վկայքը մեզ համար անդադար բարեխօս կլինին առ Աստ-

ված։ Օրհնիր մեզ, մեր սուրբ Հայր, դու ես նա-
հատակվածների բերանը, խօսիր մեզ հետ բացա-
յայտ օրհնութիւնով, որ ծածուկ մեր հոգու մէջը
լանիք սրբերի օրհնութիւնը։

Դու ճանապարհ բացեցիր նոցա համար, որոնք
ցանկանում էին գալ իւրեանց աշխարհը, խնդրիր
Աստուծուց, որ նոքա շուտով գան քո յետևից
սուրբ կարապետի յետևից։ Եւ ինչպէս բացարիր
երկրի արգելված ճանապարհը, բացարան նոյնպէս
երկնքումը մեր աղօթքների դուռը, որ մեր մեղա-
ւորներիս պաղատանքը ևս մտնեն Աստուծոյ առա-
ջև նոյն կապվածների բարեխօսութեան համար,
որ մինչդեռ այս անցաւոր մարմնի մէջն ենք, ինչ-
պէս տեսանք քո երանելի սրբութիւնը, նոյնպէս
տեսնենք մեր ցանկալի սիրելիներին, որոնք շատ
ժամանակ է հոգով և մարմնով նեղացած և պա-
շարված սպասում ենք։ Հաւատում ենք այն անուտ
յոյսին, որ ինչպէս կատարվեց քո մէջը քո սուրբ
սիրոմը քո տեսութիւնը, նոյնպէս սպասում ենք
շուտով տեսանել Քրիստոսի ճշմարիտ վկաներին,
որոնց երկնաւոր գեղեցկութեանը մեծ կարօտու-
թեամբ սպասում ենք։

Որպէս երանելի խոստովանողը այսպէս սիրով
ընդունվեցաւ բոլոր բնակիչներից, բայց չկամեցաւ
ամենևին ոչ զբի մնալով մարմնաւոր կարօտու-
թեամբ, այլ իւր համար մի առանձին տեղ ընտ-
րեց բոլոր բազմամիտների ժողովրդից հեռու և երեք
առաքինի եղբայրների հետ միասին վերջացրեց իւր
կեանքը մեծ ճգնութեամբ։

Ոչ զբ չէ կարող պատմել առանց դժվարութեան

նորա առաքինի վարքը։ Որովհետև եթէ նորա հրա-
կոյսութիւնը ասել, բոլոր գիշերները անհանգչելի
կանթեղի պէս էր անցկացնում, եթէ կերակուրի
սակաւութիւնը ասել, նորա կերակուրը հրեշտակ-
ների կերակուրին էր նմանում։ Եթէ նորա հեզու-
թեան խոնարհութիւնը ասել, կենդանիներից ոչ
ոքի չես կարող գտնել նորա նման։ Եթէ նորա ան-
ընչասիրութիւնը ասել, ինչպէս մեռելը չէ ցանկա-
նում կայքի, նոյն օրինակ երանելին չէր ցանկա-
նում։

Նա անդադար ձայնով պաշտմունքի մէջ էր լի-
նում և անդադար ձայնով միշտ Աստուծոյ հետ էր
խօսում երկնքումը։ Նա աղ դարձաւ անհամների
համար և զարթեցնող խթան բոլոր ծոյլերի հա-
մար։ Ագահութիւնը նորանով անարգվեց և որկրա-
մոլութիւնը աւելի սաստիկ ամաչեց։ Նա առողջ-
ութիւն դարձաւ Հայոց աշխարհի համար, և շատ
վիրաւորներ ծածուկ առողջութիւն ստացան նորա-
նով։ Նա կատարեալ վարդապետ դարձաւ իւր
վարդապետների համար և խրատ տվող սուրբ հայր,
իւր հայրերի համար։ Նորա համբաւը լսելիս տը-
գէտները խմաստնացան և նորան մօտիցը տեսնելիս՝
լկտիները զգուշացան։ Նա մարմնով բնակված էր
նեղ խուցի մէջ, բայց նորա սրբութեան ահը տա-
ռածվել էր հեռաւորների և մերձաւորների վերայ։
Դևերը վախեցան և փախան նորանից, հրեշտակ-
ները իջան երկնքից և բնակվեցին նորա մօտ։

Յոյները նորա պատճառով երանի տվին Հայոց
աշխարհին և շատ բարբարոսներ շտապեցին տես-
նել նորան մարմնով։ Նա սիրելի դարձաւ Ա-

տուծոյ սիրելիների համար և ճշմարտու թեան թշնամիներից շատերին համոզեց դէպի տուրը սէրը։ Իւր փոքր հասակիցը սկսեց առաքինու թիւնը և նոյն առաքինու թեամբը վերջացրեց իւր կեանքը։ Ինչպէս չմտաւ նա աշխարհի ամուսնու թեան տուրը լուծի տակը, նոյնպէս չմտաւ այս աշխարհի ապականացու բաների մարմնաւոր հարկաւորու թիւնների տակը։ Պարզ ասել, ինչպէս նա իւր մարմնաւոր հարկաւորու թիւնները փոխեց հոգևոր պիտանացու բաների հետ, այնպէս երկրիցը երկինք վերափոխվեց։

Այն նախարարների անունները, որոնք Քրիստոսի սէրոյ համար խրիատոս անյը թագաւորական իշխանների մատնեցին։

ՍԻՒՆԵԱՑ ազգիցը երկու եղբայրներ՝ Բարկէն և Բակուր. Արծրունեաց ազգիցը՝ Ներշապուհ, Շաւասպ, Շնգին, Մեհրուժան, Պարգև և Տաճատ. Մամիկոնէից ազգիցը՝ Համազասպեան, Համազասպ, Արտաւազդ և Մուշեղը. Կամսարականաց ազգիցը՝ Արշաւիր, Թաթիոլ, Վարձ, Ներսեհ և Աշոտ։ Ամատունեաց ազգիցը՝ Վահան, Առանձար և Առնակ։ Գնունեաց ազգիցը Ատոմ։ Դեմաքսենից ազգիցը՝ Թաթիոլ, Սատոյ երկու ընկերներով։ Անձևացեաց ազգիցը՝ Շմաւոն, Զուարէն և Առաւան։ Առաւեղենից ազգիցը՝ Փապակ, Վարազդէն և Դաղ. Արծրունեաց տոհմիցը Ապրատ։ Մանդակունեաց տոհմիցը Սահակ և Փարսման։ Տաշրացեաց ազգիցը Վրէն։ Հոռոմոնեան տանիցը՝ Բարիկ և Յուսնան։

Այս երեսուն և հինգ մարդիկներիցը ոմանք աւագ նախարարներիցն են, իսկ ոմանք կրտսեր-

ներկոյը։ Սոքա բոլորը ըստ մարմնոյ նախարարա-
զունքներ են, իսկ ըստ հոգևոր առաքինութեան
երկնային քաղաքացիք։ Նմանապէս միւս այլ շատ
ազատ մարդիկ, ոմանք թագաւորական տանէոյը և
ոմանք նոյն իսկ նախարարներն տներէոյ, որոնք օգ-
նական և պատերազմակից էին քաջ նահատակնե-
րին։ Սոքա ամենը իւրեանց կամքովը իւրեանց անձը
մատնեցին կապանքներու։

Մենք այժմ ոչ միայն նորա համար ենք զար-
մացել, որ նոքա իւրեանց կամքովը մտան փորձու-
թեան մէջ, այլ աւելի նորա վերայ ենք զարմացել,
որ նոցա պէս քնքուշ մարդիկը, որոնք ձիւնեղէն
սարերի ազատ բնակիչներ էին, գարձան տօթաբեր
դաշտերի բնակիչ։ Նոքա՝ որ ազատ երէցի պէս մեն
էին գալի ծաղկազարդ սարերի մէջ, քշվեցին ա-
ռևելեան աշխարհի բոցախորով երկիրը կապած
ձեռներով և կապած ոտներով։ Նեղութիւն էին
քաշում հայի մասին և կարօտում էին ջրի. ցերե-
կը խաւարով պատած, գիշերը՝ մթով, առանց
վերարկվի և առանց անկողնի գազանի պէս գետնի
վերայ պարկում էին իններ տարի և վեց ամիս. և
այնպէս մեծ ուրախութեամբ էին համբերում այս
նեղութեանը, որ ոչ ոք երբէք նոցա բերանէոյը չը-
լսեց տրտունջ, այլ առատ գոհացողութիւն այն
բարեկեցիկ մարդկերանց նման, որոնք ատոված-
պաշտութեան մէջ են։

Մինչև նոքա այնպիսի նեղութեան մէջ էին,
թագաւորը կարծելով՝ թէ նոքա սաստիկ նեղու-
թեանէոյը և իւրեանց դառը կեանքէոյը զզվել են, ու-
զարկեց նոցա մօտ իւր մեծ հազարապետին և ա-

սեց, զոնէ այսու հետև խնայեցէք ձեր անձանցը և մի մնաք նոյն մոլութեան մէջը. երկրպագութիւն տվէք արեգակին, որ արձակվիր չարաչար կապանքներից և կրկին ստանաք իւրաքանչիւրդ ձեր հայրենական ժառանգութիւնը։

Նրանելիքը պատասխանեցին. «Դու որդեօք մեզ փորձելու համար ես եկել հարցանում, թէ իսկապէս թագաւորը ուղարկեց քեզ»։ Հազարապետը երդվեց ասելով. «Ես նոյնութեամբ, առանց պակսեցնելու կամ յաւելացնելու պատմում եմ թագաւորի բերանից դուրս եկած խօսքերը։ Նոքա պատասխանեցին. «Այն մարդիկը, որոնք միանգամ ճշմարտութեան աշակերտ են դարձել, երբէք չեն հեռանում նորանից, այլ ինչպէս կայրն, այնպէս և մնում են։ Մի՞թէ մենք այն ժամանակը չիմանալով հաստատ մնացինք մեր մոքի վերայ, իսկ այսօր նեղութիւնը մեզ իմաստնացրեց. այդպէս չէ։ Մենք միայն զղջում ենք այն պատճառով, թէ ինչի առաջիններին հետ չվերջացրինք մեր կեանքը։ Բայց այժմ աղաչում ենք քեզ և քո միջնորդութեամբը ձեր թագաւորին. այդպիսի բաների համար միւս անգամ մեզ մի հարցանէք, այլ ինչոր մեզ համար ձեր մոքումը որոշել է, այն կատարեցէք։

Երբ մեծ հազարապետը այս բանը լսեց, իւր մոքումը շատ զովեց նոցա հաստատ պնդութիւնը և այնուհետև սկսեց սիրով վարվել նոցա հետ ինչպէս Աստուծոյ սիրելիների հետ և շատ աղաչանքներով թագաւորի միտրը համոզեց, որ արձակէ նոցա իւրեանց կապանքներից։ Թէպէտ նա թագաւորական հազարապետութեան պաշտօնից փոխ-

վեց, որովհետև շատ գործերի մէջ անհարազատ գտանվեց, Հայոց աշխարհի աւերման պատճառ եղաւ, որի համար մեծ անարգանքով ուղարկվեց իւր տունը. բայց մինչև իւր կեանքի վերջին օրը չկամեցաւ շարախօսութիւն առնել կապեալների վերայ։

Երանելիներից շատերը, որոնք աւելի պատանի էին, սովորեցին Հայրենական աշխարհի դպրութիւնը և այն դարձաւ նոցա համար հոգևոր կերակուր, որով իւրեանց անձը քաջալերում էին և ընկերներին մխիթարում։ Նոքա այնպէս ուրախացան հոգւով և մտքով, որ նոցանից աւելի ծերերը փափուկացան, ջահելացան և մանկացան։ Թէպէտ նոցա ուսանելու ժամանակը անցէր կացել, բայց շատ սաղմոսներ բերան առնելով՝ հոգևոր երգակից էին լինում ջահիլների մատաղ երամ բաղմութիւնը։

Նոքա այնպէս էին կատարում սրբութեան պաշտօնը մինչև որ դառը դահիճներից ոմանք շատ քաղցրութեամբ լսում էին նոցա երգերը և ինչքան հնարաւոր էր, թագաւորի հրամանին ընդդէմ հեշտացնում էին նոցա վիճակը։ Խնամատարութեան սէր էին ցոյց տալի բոլորին և շատ անգամ նոցա մարմնաւոր հարկաւորութիւնը լրացնում էին։ Մանաւանդ որ նոցա ձեռքովը Աստուած բժշկութեան նշաններ էր անում, այնպէս որ այն գիւաղարներից շատերը, որոնք գտանվում էին կապեալների բանդարկված քաղաքումը, սրբվում էին։ Եւ որովհետև նոցա մէջ ոչ մի քահանայ չըկար, այս պատճառով հիւանդները և ցաւատանջները գիմում էին նոցա մօտ և իւրեանց խրատան-

չիր ցաւերիցը առողջութիւն էին ստանում։

Եւ այն աշխարհի մեծ իշխանը Հարեշղում Շապուհ անունով, որին յանձնված էին բոլոր պատժվածները, շատ մեծ սէր էր ցոյց տալի նոցա ամենին։ Նոցանից ծերերին նա ընդունում էր ինչպէս հայր, իսկ ջահիլներին խնամում էր ինչպէս սիրելի որդկերանց։ Նա շատ անգամ գրում էր և ցոյց տալի կառավարութեանը կապեալների նեղութեան ցաւը. ցոյց էր տալի նոյնպէս իւրաքանչիւրի աղնվական բարքը, մեծ իշխանների առաջև զանազան հնարներով աշխատում էր, մինչև որ նոքա շատ բարեխնդիրներով թագաւորին համոզեցին։ Թագաւորը հրամայեց արձակել նոցա կապանքները, վերցնել նոցանից պատիժը և նախարարական շորեր հագցնել։ Նոցա համար ոռճիկ կարգեց և հրամայեց, որ նոցա սպառազինութեան պատրաստութիւնը տեղութիւնը. հոգայ։ Յետոյ գրեց և յանձնեց մեծ սպարապետին, որ նոքա թագաւորական զօրքի հետ պատերազմ գնան։

Երբ այս ամենը այսպէս կարգվեց և թագաւորի նոր հրամանը տարածվեց շատ տեղեր, այն ժամանակը Հայոց նախարարները և զօրքերը շատ տեղեր ուր և գնացին գերազանց գտանվեցան արիութեան մէջ, մինչև որ նոցա մասին զօրավարները գովութեան հրավարտակ ուղարկեցին կառավարութեանը։ Այս գործքերը այնպէս բաղ ցրացրին թագաւորին, որ նա հրամայեց ամենին իւր առաջը բերել։ Նոքա եկան և ներկայացան թագաւորաց թագաւոր Յազկերտին։ Նա գովարթութեամբ ընդունեց նոցա, խօսեց նոցա հետ խաղաղական խօսքեր

և խոստացաւ տալ նոցա իւրաքանչիւրի իշխանութիւնը իւրեանց հայրենական պատվի կարգին համեմատ և արձակել նոցա իւրեանց աշխարհը քրիստոնէութեան օրէնքով, որի համար այնքան շատ չարչարանքներ էին կրել։

Մինչդեռ նախարարները մեծ ուրախութեամբ զօրքի մէջը մտան էին գալի թագաւորի առաջև, նոյն միջոցին թագաւորը մեռաւ իւր թագաւորութեան տասն և իններորդ տարումը։ Նորա երկու որդիքը թագաւորական գահի համար միմեանց հակառակ պատերազմ վերկացնելով կռվում էին, դաւը պատերազմը շարունակվեց երկու տարի։

Մինչդեռ նոքա այսպէս միմեանց դէմ պատերազմում էին, ապստամբեց Աղվանից թագաւորը, որովհետև նա նոցա քրոջ որդին էր և հայրենական հաւատով առաջ քրիստոնեայ էր, բայց թագաւորաց թագաւոր Յաղկերտը բռնութեամբ նորան մոգ էր շինել։ Նա յարմար միջոց գտնելով պատշաճ համարեց իւր անձը վտանգի մէջ ձգել, մեռնել պատերազմի մէջը, քան ուրացութեամբ թագաւոր լինել։ Այս գարձաւ պատճառ, որ ուշացրեցին Հայոց նախարարներին գնալու իւրեանց երկիրը։

Յաղկերտի փոքր որդու գայեակը Ռահամ անունով Միհրան տոհմիցը, թէպէտ տեսաւ, որ Պարսից գունդը երկու մասն է ճեղքվել, սակայն կիսովը գազանի պէս յարձակվեց թագաւորի մեծ որդու վերայ, ջարդեց, կոտորեց նորա զօրքը և թագաւորի որդուն գերի բռնելով հրամայեց խակոյն նոյն տեղումը սպանել։ Իսկ մնացեալ զօրքերին

նվաճելով՝ խաղաղացրեց և միաբանութիւն ձգեց Պարսից բոլոր գնդի մէջ, թագաւոր դրեց իւր սա-նին, որի անունը Հերոդ էր։

Թէպէտ նա Պարսից երկրում այս կերպով մեծ խաղաղութիւն հաստատեց, բայց Աղվանից թա-գաւորը չկամենալով կրկին անգամ նվաճվիլ նոցա ծառայութեան տակը, ճեղքեց ճորայ պահակը և միւս կողմը անցկացրեց Մասքթաց զօրքերը։ Միա-բանեց տասն և մեկ լեռնաբնակ թագաւորներ և պատերազմ դուրս գալով Պարսից զօրքի դէմ, շատ վնասներ հասցրեց թագաւորական զօրքերին։ Թէ-պէտ Պարսից կառավարութիւնը երկու, երեք ան-գամ աղաչանաց հրովարտակ գրեց, բայց բոլորո-վին չկարողացաւ համոզել նորան։ Դա գրով և պատգամաւորների բերանովը նոցա յանդիմանում էր Հայոց աշխարհը՝ ի զուր աւերելու մասին։ Ցի-շեցնում էր նոցա նախարարների մահը և կապանք-ների չարչարանքները։ Ասում էր նոցա անչափ սի-րոյ և աշխատանքի համար, փոխանակ կեանք շը-նորհելու, նոցա կեանքը վերջացրիք։ Լաւ է ինձ համար նոցա պէս չարչարվել քան թողել քրիս-տոնէութիւնը։

Երբ Պարսիկները տեսան, որ ոչ բռնութեամբ և ոչ սիրով չկարողացան նորան նվաճել, այն ժա-մանակը մեծ զանձ ուղարկեցին Խայլանդրաց աշ-խարհը, բաց արին Ալանաց դռները և շատ զօրք հաւաքելով Հոներից, կռվեցին մի տարի Աղվանից թագաւորի հետ։ Թէպէտ Աղվանից թագաւորի զօր-քերը յետ քաշվեցին նորանից և ցրվեցին, բայց չկարողացան նորան հնազանդեցնել։ Այլ նոցա

մեծ կոտորվածք հասաւ կռվով և շարաչար ցաւով։ Զնայելով որ պատերազմը այս չափ երկար ժամանակ շարունակվեց և աշխարհի մեծ մասը աւերվեց, այնուամենայնիւ ոչ ոք երկմտութեամբ չբաժանվեց Աղվանից թագաւորից։

Պարսից թագաւորը կրկին անգամ մարդ ուղարկեց Նորա մօտ ասելով։ «Ուրդարկիր իմ քրոջը և իմ քրոջ որդուն, որովհետև դոքա առաջուց մոգեր էին, դու քրիստոնեայ շինեցիր. իսկ քո աշխարհը թող քեզ լինի։ Բայց այս զարմանալի մարդը ոչ թէ տէրութեան համար էր կռվում, այլ ատելածպաշտութեան համար։ Նա իր մօրը և կնոջը ուղարկեց Նորա մօտ, ինքը իր բոլոր աշխարհը թողեց, վերցրեց Աւետարանը և կամենում էր իր աշխարհից հեռանալ։

Երբ Պարսից թագաւորը այս բանը լսեց շատ զղջաց բոլոր վնասների պատճառը իր հօր վերայ դնելով։ Անուտ երդման գիր գրեց և ուղարկեց Նորա մօտ, ասելով։ «Միայն դու քո աշխարհից մի հեռանալ, ինչ որ ասես կկատարեմ։ Աղվանից թագաւորը խնդրեց Նորանից իր մանկութեան սեփհական հազար երդը, որ Նորա հայրը ընծայել էր Նորան տղայութեան հասակում։ Նա իր խնդրածը ստանալով Պարսից թագաւորից, բնակվեց Նորա մէջը վարդապետների հետ միասին։ Նա իր անձը այնպէս նվիրեց ատելածային պաշտամունքներին, որ չէր յիշում, թէ յառաջ թագաւոր է եղել։

Այս բոլոր խռովութիւնները, որոնք շարունակվեցին մինչև թագաւորաց թագաւոր Հերոդի

հինգերրորդ տարին, պատճառ դարձան Հայոց նա-
խարարների չարձակելուն։ Պարսից թագաւորը
նոցա համար սովորականից աւելի ոսկիկ կարգե-
լով՝ ընդունում էր իւր պալատի մէջ։ Եւ նոյն հին-
գերրորդ տարումը նոցանից շատերին իւրեանց կայ-
քերը շնորհեց և միւս մնացեալ բոլորին մեծ յոյս
տվեց յետևեալ վեցերրորդ տարումը կայքով և
պատվով արձակել։

Ինձ պէտք է տակաւին պատմել։ Ես չեմ կա-
րող հաշվել բոլոր Հայոց երանելի առաքինեաց,
կապեալների և պատերազմի մէջ սպանվածների
բոլոր կանանցը, որովհետև ինձ անծանօթները ա-
ւելի շատ են, քան թէ ծանօթները։ Հինգ հարիւրի
չափ անձամբ ճանաչում եմ, ոչ միայն մեծամեծնե-
րից, այլև աւելի փոքրերից շատերին։ Նոքա ա-
մենը միասին երկնաւոր նախանձով վառված, ոչին-
չով պակաս չմնացին նոցանից, որոնք աշխարհ չէ-
ին մտել։ Որովհետև մեծերը և փոքրերը մի հաւա-
ստ առաքինութեամբ զինվորվեցան. նոքա ամենե-
ւին չյիշեցին մայրենի աղատութեան փափկու-
թիւնը, այլ ինչպէս զիւղացի մարդիկ, որոնք սո-
վորեն փոքր հասակից չարչարանքներ և տանջանք-
ներ կրելով անցկացնել իւրեանց կեանքը. նոյն-
պէս և նոքա յանձն առան նոցանից աւելի ևս համ-
բերութեամբ դիմանալ ցաւերին։

Նոքա ոչ միայն իւրեանց հոգւոյ մէջը մխիթար-
վում էին յաւիտենական աներևոյթ յուսով, այլև
մարմնոյ նեղութիւններով աւելի ևս զէն ձգեցին
ծառայութեան բնոյթ։ Թէպէտ նոցանից իւրաքան-
չիւրը ունէր ձեռնատուն ապաստաններ, բայց բո-

լորովին չէր կարելի նշմարել, թէ ո՞րն է տիկինը և ո՞րը աղախինը. բոլորի շորերը մի և նոյն էին. երկուսը ևս միասին միապէս պարկում էին շոր խոտի վերայ։ Ոչ ոք ոչոմի համար անկողին չէր պատրաստում, որովհետև նոքա չէին ճանաչում խոտերը միմեանցից զանազանելու, պատճառոր բոլոր խոտերը միապէս թխագոյն էին, իսկ գլխի տակի բարձերը միապէս սև։

Ակային նոցա համար առանձին խոհարաններ անցշ կերակուր պատրաստելու և ոչ որոշած հացաթուխներ աղատների սովորութեանց համեմատ, այլ ամենի ուտելիքը մին էր։ Շաբաթամուտը անց էին կացնում այն միայնակեաց մարդկերանց պէս, որոնք բնակվում են անապատներում։ Ոչ ոք միւսի ձեռին ջուր չէր ածում և փոքրերը մեծերին երեսը չէին մատուցանում։ Սապուն չգիպաւ փարիկատուն կանանց ձեռներին և հոտաւէտ իւղ չգործ դրվեց նոցա գլխարթութեան համար։ Նոցա առաջնը չդրվեցին մաքուր ամաններ և գործ չդրվեցան ուրախութեան բաժակականեր. ոչ ոք չկանգնեց նոցա դռանը հիւրեր ընդունելու և նոցա հոյակապ տների դռները չբացվեցան պատվական հիւրերի առաջև. ոչ ոք նոցանից չմիշեց թէ ունեցել է մի ժամանակ բազկատունդ գայեակներ կամ սիրելի հարազատներ։

Փոշոտվեցին և ծխոտվեցին նորահարսների սենեակները և վարագոյրները և սարդի ոստայնգրվեցաւ նոցա հարսանիքի սենեակների մէջ։ Որն ծանվեցին նոցա տները զարդարող աթոռները և փչացան նոցա սեղանները զարդարող ամանները,

կործանվեցին և քանդվեցան նոցա հոյակապ տները և փուլեկան, աւերվեցան նոցա ապահովութեան ամրոցները։ Զորացան, աղանձվեցան նոցա ծաղկեալ բուրաստանները և արմատախիլ եղան այգիների գիներեր վազները։ Նոքա իւրեանց աչքովը տեսան իւրանց կայքի յափշտակութիւնը և իւրեանց ականջովը լսեցին իւրեանց սիրելեաց ցաւալից շարշարանքների հառաչանքները. նոցա գանձերը թագաւորական արեցին և երեսների զարդարանքները յափշտակեցին նոցանից։

Այոց աշխարհի փաւուկ մեծացած տիկինները, որոնք գրգված և գգված էին եղել իւրաքանչիւր բաստեռունների և գահաւորականների մէջ, միշտ բաց ոտով գնում էին եկեղեցի, ուրախութեամբ խնդրելով, որ կարողանան համբերել այն մեծ նեղութեանը։ Նոքա՝ որ իւրեանց մանկութենից մեծացել էին հորթերի ուղեղներովք և էրէների փափուկ մսերովը, վայրենիների պէս մեծ ուրախութեամբ ուտում էին խոտեղէն կերակուրները, և բոլորովին չէին յիշում իւրեանց սովորական փափկութիւնը։ Սև գոյնով ներկվեցան նոցա մարմնի մորթիքը, որովհետև ցերեկը արևախորով էին լինում, իսկ գիշերը գետնի վերայ պառկում։ Սաղմոսներն էին նոցա ամենօրվայ ցաւերը թեթևացնող երգերը, իսկ մարգարէից գրուածներն էին նոցա կատարեալ մխիթարութիւնները։ Նոքա երկու երկու միաբանվեցին, իրրև համահաւատար ջուխտ ընակիցներ ուզիղ տանելով ալքայութեան ակռը, որ առանց սխալվելու հասանին խաղաղութեան նաւահանգիստը։

Նոքա մուտացան կանայի տկարութիւնը և առաքինի տղամարդիկ դարձան հոգևոր պատերազմի մէջ, սաստկութեամբ կռվեցին մեղքերի դէմ, կըտրեցին, ջարդեցին և մի կողմ ձգեցին նորա մահաբեր արմատները։ Միամտութեամբ յաղթեցին խորամանկութեանը և սուրբ սիրով լվացին նախանձի կապոյտ ներկերը. կտրեցին ագահութեան արմատները, չորացրին նոցա ճիւղերի մահաբեր պտուղները։ Խոնարհութեամբ ջարդեցին ամբարտաւանութեանը և նոյն խոնարհութեամբը հասան երկնաւոր բարձրութեանը։ Ուրեանց աղօթքներով բացարին երկնքի փակված դռները և սուրբ խընդրվածքներովը իջեցրեցին հրեշտակներին փրկութեան համար։ Բարի համբաւ ըսեցին հեռուից և փառաւորեցին Աստծոյն երկնքումը։

Նոցա մէջը եղած այրի կանայքը կրկին առաքինութեան հարներ դարձան և մերժեցին իւրեանցից այրութեան նախատինքը։ Կանայքը յոժարութեամբ կապեցին իւրեանց մարմնաւոր ցանկութիւնները մատնակից լինելով սուրբ կապեալների չարչարանքներին։ Նոքա իւրեանց կեանքովը նմանեցին քաջ մահվամբ նահատակվածներին և հեռուից մխիթարիչ վարդապետներ դարձան բանդարկվածների համար։ Իւրեանց ձեռներովը աշխատեցին և կերակրվեցին իւրեանց նշանակված ռոճիկները տարէցտարի ուղարկելով կապածների մխիթարութեան համար։ Նոքա նմանեցին անարիւն ճպռուններին, որոնք քաղցրութեամբ երգելով ապրումեն առանց կերակուրի և կենդանի են

մեռամ միայն օդ ծծելով, անմարմիններին նմանելով։

Շատ ձմեռների սառուցները հալվեցին, հասաւ գարունը, եկան նոր ծիծեռնակներ, կենդանի մարդիկը տեսան նոցա և ուրախացան, բայց նոքա երբէք չկարողացան տեսնել իւրեանց սիրելիներին։ Գարնանային ծաղիկները Հայոց կանանց միտը բերեցին նոցա ծաղկազարդ ամուսիններին, բայց նոցա աչքերը կարօտացան տեսնելու նոցա երեսի ցանկալի գեղեցկութիւնը։ Վերջացան որսի բարակները (շները) և դադարեցին որսորդների արշաւանքները։ Բնագիրներով յիշատակվեցին նոքա և ոչ մի տարեկան տօն չբերեց նոցա հեռու երկրից. նոցա սեղանատան վերայ նայեցին և արտասուք թափեցին և ամեն առեանի մէջ յիշեցին նոցա անունները։ Շատ արձաններ կանգնեցրին նոցա անուններովը և նոցա իւրաքանչիւրի անունը նշանակեցին նոցա վերայ։

Երբ այնպէս ամեն կողմից նոցա մոքերը ալեկոծվում էին, այն ժամանակը նոքա բոլորովին չէին թուլանում և չէին հեռանում երկնաւոր առաքինութիւնից։ Դրսևից նոքա երևում էին ինչպէս սգաւոր և չարչարված պրիք, իսկ հոգով երևում էին զարդարված և մխիթարված երկնաւոր սիրովը։ Աւելի չէին հարցանում հեռաւոր տեղերից եկածներին, թէ ե՞րբ կարող ենք տեսանել մեր սիրելիներին, այլ նոցա առ Աստուած աղօթքներս գլխաւոր նպատակն այն էր, որ ինչպէս սկսեցին, նոյնպէս երկնաւոր սիրով լցված՝ քաջութեամբ մեռնեն։

Մենք և նոքա առհասարակ ժառանգենք բարեաց մայրաքաղաքը և մեր Տէր Յիսուս Քրիստոսի միջնորդութեամբը արժանանանք այն աւետեացը, որ խոստացել է Աստված իւր սիրելիներին։

ՎԵՐՋ։

ՆՈՅՆ ԵՂԻՇԷ ՎԱՐԴԱՊԵՏԻ ԽՐԱՏԸ ՄԻԱՆԶԱՆՑ (ՎԱՐԴԱՊԵՏՆԵՐԻ) ՀԱՄԱՐ։

Այն մարդիկը, որոնք կենդանի ժամանակը յօժարութեամբ իւրեանց անձը նվիրում են ասոյածպաշտութեան, մանկութեան ժամանակից մտածում են վշտատարութեան վերայ և կըրթվում են նորա մէջը. հեռանում են հայրենի բնակութենից և գնում են անշէն անապատ երկիրներ. նոքա գնում են ոչ թէ շար նախանձից ստիպված՝ փախչելով բազմաթիւ աղքատներից, այլ որովհետև տեսնում են աշխարհը լիքը բոլոր չարութիւններով, այս պատճառով հեռանում են և գընում են անապատ տեղերի անկիւնները և սարերի ստորոտները։ Ինչպէս տեսանում ենք շատ անգամ հարաւային կողմերում բազմաթիւ տղամարդկանց, որոնք առանց կանանց հետ միաբանութեան զանազան ազգերից մի տեղ ժողովվելով՝ բնակվում են երկու երկու, երեք երեք, կամ աւելի շատերը

միասին, ինչպէս իւրեանց հայրենական գաւառներում։ Շինում են միմեանցից բաժանված մանր խուցեր փոքր և բաւականի հաստ պատերով, ցրտից և արեգակից պահպանելու համար։ Նոցա յատակները առանց զարդարանքների են. բաւականանում են խոտեղէն անկողիններով։ Եւ որովհետև մարդոց մարմինը նուրբ է, սիրում է իւր մերկութիւնը ծածկելու, այս պատճառով նոքա պատրաստում են անզարդ և շատ հասարակ շորեր, ամարվայ վերարկուք և ձմեռվայ երկայնաթև ծածկոցներ. հագնում են նմանապէս երկայն փիլոններ։

Նոքա անդադար պաշտամունքի մէջ շրջան կապած՝ կարգով կանգնում են և զվարթ հոգով հոգևոր երգեր են ասում ամենի հօր Աստուծոյն։ Նոքա կանգնում են միմեանց հանդէպը աչքերը ներքև խոնարհեցրած՝ նայում են իւրեանց ոտի մատներին, կարծես թէ ամենը դէպի մի գէտ ուղղելով իւրեանց հայեացքը. աջ ձեռը ծնօթի վերայ դրած, իսկ ձախը՝ կուրծքի վերայ. ես կարծում եմ թէ նոքա այս բանը սովորել են բնական հայրերից։

Արմենոյ մէջը կան երկու աւելի պատվական մասներ, կենդանական և խոհական, որոնք միմեանց ծառայում են. կենդանական մասին հակառակ է բարկութիւնը, իսկ խոհականին արտասանելի խօսքերը։ Նոքա ձախու սանձը ձեռին բռնած՝ բարկութիւնն են սանձահարում, իսկ աջ ձեռը աջ ծնօտի վերայ դրած՝ խոհականին են ծառայում խօսքը արտասանելու դրան մօտ, որ ճշմարիտ փառաբանութեան մէջը այլ միտք չխառնվի։ Այս երկու

մասներովը կատարվում են բոլոր զգայութիւն-
ները. աչքերը ուղիղ տեսութեան մէջ, ականջ-
ները՝ զգաստ լսողութեան մէջ, միտքը սուրբ խոհա-
տութեան մէջ և միւս զգայարաններիցը իւրաքան-
չիւրը իւրեանց մասների մէջ։

Երբ նոքա այսպէս կարգվում և պատրաստ-
վում են, ամենը վեցթևեան սերովբէների նման բո-
լոր 'ի շուրջ կանգնած անհատ ձայներ են հնչում
դէպի վեր և եռաչափ օրհնութիւններ դէպի իւ-
րեանց արարչի միաբանութեան խորհուրդը։ Ցե-
ռեկը անդադար պարապում են քաղցր երգերով և
այսպէս յագենալով և զմայլելով երկնային կերա-
կուրներովը՝ հասանում են մինչև երեկոյեան ժա-
մանակը։ Որովհետև նոքա մեր զգայուն բնութեան
նման մարմին ունին, այս պատճառով ուտում են,
որ չ.քաղցենան և խմում են, որ չծարաւին։

Ասելով որ նոքա ուտում են, դու մի կարծիր,
թէ մեզ պէս են ուտում։ Նոցա կերակուրը ցամաք
հաց է և վայրենի բանջար, որ աղով են համովաց-
նում և խմածը խտակ ջուր, որ անձրևի կաթիլ-
ներիցն են ժողովում փոսերի մէջը։ Բայց նոքա այս
կերակուրը ևս ցերեկով չեն ուտում, այլ ամբողջ
ցերեկը միաբան ծոմ պահելով՝ սպասում են մին-
չև արեգակի մայր մտնելը. երեկոյեան ևս երկար
միջոց անց են կացնում, մինչև որ իւրաքանչիւր
աստղերը իւրեանց տեղումը պայծառանում են, յե-
տոյ շնորհակալութիւն են մատուցանում Աստու-
ծոյն ասելով. «Խաւար ժամանակումը մեր խաւա-
րային մարմնին խաւարային կերակուրներ տանք։

Այս ասելուց յետոյ բարձր ձայնով փառա-

բանում են սուրբ երրորդութեանը և խնդալից ուրախութեամբ բոլոր Ի շուրջ նստելով իւրաքանչիւրը իւր տեղումը, ինչպէս ասացինք, ուտում են հաց և խոտեղէն, և խմում են սառը ջուր։ Եւ որովհետև նոցա մէջ լինում են փափուկ պահպանութեան կարօտ ծերերը, այս պատճառով նոցա տալիս են տաք ջուր, որ անվանում են բարեխառն, բայց գինի կամ այլ այդպիսի զանազան բաներ բոլորովին չեն գտանվում նոցա սուրբ միայնանոցների մէջը։ Հասարակ ընթիրքը վերջացնելուց յետոյ, նոքա վեր են կենում և միաբանութեամբ ասում են. «Փառք քեզ Տէր, փառք քեզ, թագաւոր մեր, որովհետև դու տվիր մեզ ուրախութեան կերակուր. լցրու մեզ քո սուրբ հոգւովը, որ հաճելի լինինք քո առաջև և չի ամաչենք, պատճառը դու տալիս ես ամեն մարդոյ իւր գործքերին համեմատ»։ Եւ այսպէս երեսներին խաչ հանելով, փոքր ինչ քնում են, որ իւրեանց մարմնոյ զեղեցիկ կազմվածքը չխանգարվի և չաւերվի չմարսածկերակուրներովը։ Նաև քնած ժամանակը հոգեկան երազներ են տեսնում և յետոյ երազները մեկնում են ինչպէս մարգարէից սուրբ խօսքերը։

Երբ բոլորը զարթնում են, կրկին անգամ բոլոր Ի շուրջ կանգնում են միմեանց հակառակելով և ընդդիմութիւն չանելով այլ քաղցր հաւանութեամբ և հեզ համբերութեամբ։ Դասի առաջնորդները հնչեցնում են իւրեանց ձայնը, հոգևորական քաղցրաձայն երգեր ասելով, իսկ միւս աւելի փոքրերը նոցա ձայներին ականջ դնելով իւրաքանչիւրը իւրեան ձայնը խառնում է նոցա ձայնների

հետ յարմարեցնելով և կազմելով հնչման ներդաշնակութիւնը, այնպէս որ, կարծես թէ բոլոր ձայները մի բերանից են դուրս գալի։ Այսպէս ձայնաւոր պաշտօնը երկար կատարելով՝ ամենը ծունր են դնում, լռութեամբ աղօթք են անում և աղօթքի առաջնորդի ներկայութեամբը բոլորը միասին կանգնած՝ կատարում են փառաբանութիւնը։

Նոքա ցերեկվայ պաշտօնը կատարելուց յետոյ, լաւ են համարում գիշերները վաղ վերկենալ և մինչև առաւօտը աղօթք անել և սուրբ գրեանք կարդալ. իսկ որոնք վարդապետութեան շնորհք ունին, մեկնութիւններ են անում լսողներին մխիթարելու համար. պատմում են աշխարհի ոչընչից լինելը և կարգաւորվելը։ Բարի խրատներ են տալի ժողովրդին սուրբ գրքերի վկայութիւններով։ Եւ այնպէս են ուսուցանում, մինչև որ լսողները մոռանում են աշխարհական բոլոր բաները և չեն յիշում բոլորովին հարկաւոր ուտելիքները և խմելիքները։

Նոքա այնպէս են ուրախանում Աստուծոյ սիրովը, մինչև որ իրենց չեն համարում երկրումը, այլ երկնքումը, գիշերվայ երկարութիւնը հեշտութեամբ են անցկացնում մինչև առաւօտը, որովհետև նոքա մերկացել են երկիրը և հագել են երկինքը։ Մահը ամաչում է նոցա դռանը մօտենալու, իսկ գժոխքը տրտմում է նոցա մեռած ժամանակը։ Նոցա կենդանութիւնը աշխարհի աղօթքների դռներ են, իսկ նոցա ոսկրները գանձ են բոլոր յուսացողների համար։ Նոցա համբաւը յորդորիչ է բոլոր ծոյլերի համար և նոցա գործքները

ուսումն են բոլոր ցանկացողների համար։ Նոքա դասակից են հրեշտակներին և օթևաններ են սուրբ երրորդութեան համար։

Եղբայրք, այս բոլորը իմանալով պէտք է աշխատենք մի և նոյն սուրբ նախանձը մեր մէջը ցոյց տալու, նմանող լինինք այն բազմաթիւ աշխարհիցը հրաժարականներին, որոնք գիմում են դէպի այն վերին մայրաքաղաքը, որ ազատ է երկրաւոր ցաւերիցը. որովհետև նոքա ընկերակից են մեր բնութեանը, որ զօրացնում է մեր տկարութիւնները։ Միայն կամեցիր, հաւատով սկսիր, յուսա, սիրիր, այն ժամանակը կարող ես տեսանել նոյնպիսի նահատակութիւն։ Որովհետև ժամանակաւոր չարչարանքները ոչինչ համեմատութիւն չունին այն կեանքի հետ. որ պատրաստված է այնպէս ճգնողների համար։

Ես շատ վախում եմ մեր ծուլութեան մասին, զի թէ բոլորին տեսնում եմ թաղված երկրաւոր կայքի մէջ։ Մի՞ թէ իմ բնութիւնը ինձ չի՞ մեղադրիլ և չի՞ յանդիմանիլ արդեօք. եթէ ստեղծվեցի մերկ, եթէ դրվեցի դրախտի մէջ մերկ, եթէ այնտեղից դուրս եկայ մերկ, եթէ կրկին պէտք է դուրս գնամ աշխարհից մերկանգամ։ Ուրեմն եթէ այստեղից ոչինչ չենք կարող տանելու, ինչի՞ ենք աւելի թարթափում այս աշխարհի մէջը։

Ա՛վ միայնակեաց, մերկացիր, ամենայն բան հրաժարիր քեզանից թանձր ամրոցի նման ընդունակ մի դառնար ներգաւոր թշնամուն. կարելի է որ նա մնայցը որոգայթ լարելով, քո միջից քեզ վերայ յարձակվի կողոպտելու և խլելու քեզանից

երկնաւոր գանձերը։ Բաւական համարիր քեզ համար տէրունական պատվէրը թէ «Երկրաւորներիցը ոչ ոք չէ կարող երկու տէրի ծառայել», որ աւելի պարզ ցոյց է տալի առանց միջնորդի և մեկնութեան։ «Զէ՞ք կարող, ասում է, ծառայել Աստուծոյն և փողին։

Այս տեսնում եմ որ մեր աշխարհումը ոչ ոք ազատ չէ այսպիսի ցաւերից։ Գեղեցիկ գրվածները հակառակ կողմիցը կարդացինք, ուխտաւորութեան պատճառով մենք հեռացանք մեր սուրբ ծնողներից, բայց շինեցինք մեզ համար օտար հայրեր. որոնք պատվելու արժանի էին, նոցա անարգեցինք, և որոնց իշխանութիւն չունէինք մեծարելու նոցանով մեր չար կիրքը յագեցրինք։ Ազատվեցինք թագաւորական հարկերիցը, որոնց հատուցանելը առանց մեղքի էր և մտանք կալվածների հարկի տակը, որ լի է անառակ ագահութեանով։ Զմտանք սուրբ հարսանեաց անկողինը, բայց շինեցինք մեզ համար աւելի փառաւոր գահեր քան սովորականը։ Փարիսեկ քնում ենք յարմարաւոր անկողիններումը և մեր մտքերը ամբողջ գիշերը տարուբերվում են անտեղի խորհուրդների մէջը։

Մեր տների կօշիկները յանդիմանում են մեզ, թէ մեր ճանապարհները սուրբ չեն։ Մեր շորերը աղաղակում են մեր գործքերի մասին. թէ տկլոր ենք երկնաւոր շորերիցը։ Մեր ձիերը ցոյց են տալի մեզ, թէ չպետք է գիմենք դէպի Աստուած օդի միջովը։ Մեր պալատների շինութիւնները ցոյց են տալի, թէ մենք չունէինք երկնքումը անձեռագործ տաճար։ ուր մտնելու են այն բոլոր դասակարգնե-

ը, որոնք վախեցել են երկրաւոր ախտերից։ Մեր գաշտերի կալվածները մեզադրում են մեզ, թէ մենք բաժին չունինք երկնաւոր վիճակներից։

Այսպէս անպիտաններ եղանք ուտելումը և առանց չափի խմեցինք գինի, որ պղտորում է խորհուրդները և մտքերը։ Ամենս խոր քնի մէջ ենք, ճշմարտութիւնը մեզ երազ է թվում։ Մեր մտքի աչքերը փակվելով տեսական խորհուրդներից՝ անյարգ անտարակուսութեամբ նայում են աշխարհիս կեանքի վերայ։ Մենք մեր ականջները փակելով սուրբ ընթերցվածներից, լսում ենք մեր ոչխարների բառաչելը։ Մեզ վերայ անցյալ հոտ չեկաւ սուրբ Հոգուցը, որովհետև սիրեցինք այս ախտալից աշխարհի իւղը։ Մեր հոգւոյ քիմքը չճաշակեց երկնային կերակուրը, որովհետև մենք մեր մարմինները պարարտեցինք զանազան կերակուրներով։ Մեր գէմքի գոյնը մութն է, որովհետև մեր երեսները չզվարթացան սուրբ խորհուրդներով։ Ցաւերով լիքն են մեր մարմնոյ անդամները, որովհետև մեր մարմնից յառաջ մեր հոգին ախտացրեցինք։ Դրսից կոկած գերեզմանների նմանեցինք, որովհետև զրկված ենք սուրբ Հոգւոյ շնորհից։

Այս պատճառով ամեն թշվառութիւնները եկան, հասան մեր օրերում, մեր կենդանի աչքերովը տեսանք մեր անձանց դիակները։ Մեր քաջ նահատակները սպանվեցին պատերազմում և մեր սուրբ քահանաները մորթվեցին անօրէնների ձեռքով։ Մեր գեղեցիկ երիտասարդները սպանվելով զոհվեցին և շատ աղջիկներ գերի տարվեցին։ Քընքշաշ կանայքը պրիսթեան տատապանքի մէջ

ընկան և շատ որբեր գառն արտասուք թափեցին, Ազատ եկեղեցին հեթանոսների ծառայութեան տակն ընկաւ և նորա տուրք քահանայքը ծեծվեցին և շարչարվեցին անօրէն հարկահաններից։ Պղծութիւնը վերացել է աշխարհից և գութը հեռացել է իւրաքանչիւրի մտքից։ Երկինքը վերևից է բարկացել, իսկ երկիրը ներքևումը շարժողութեան մէջն է տարուբերվում։

Ո՞ր չինութիւնները գերեզման գարձան մեր դրակների համար, և մեր ձեռների աշխատութիւնները փուլ եկան մեր վերայ։ Ճեղքվեց և պատռվեց երկրի թանձրութիւնը և շատ մարդիկ ներքև գլորվեցին։ Հայրը չսպասեց որդուն, քոյրը չտեսաւ եղբօրը, և կանանց լացի ձայնը իւրեանց զաւակների համար չլսվեցին, որովհետև սովը փակեց նոցա բերանը։ Զօրավորները Խրատանու բարձրը եղևնեայ ծառերի պէս յանկարծ խորտակվեցին. բոլորը բարկութեան հնձան գարձան և խաղողի պէս ոտի տակին ջարդվեցին և գինու փոխանակ անմեղների արիւնով ներկվեցին մեր շորերը։ Վերակուրը լեղուցը աւելի գառնացաւ մեր բերանումը և քացախ գարձան մեր տուրը ըմբելքը։ Հոգով և մարմնով տրտմածների հետ տրտմեցինք և մեռելների հետ մահ ճաշակեցինք։ Այս բոլոր չարչարանքները մի՞թէ մեր ծուլութեան համար չթափվեցին մեր աշխարհի վերայ։ Օ՜ն անդր, հեռացիր այս աշխարհից, որ ցը առաջուց գուրս գալով՝ հեռացար տուա ցաւերից, թափ տուր և հեռացրու քեզանից այս ցաւալից աշխարհի փոշին։ Մերկացիր ինչպէս ըմբշամարտիկ, օծվիր Քրիստոսի

խղճմը, որ թշնամու ձեռները չկռվին քո դէմ։ Եթէ հեթանոսները, որոնք տեսական իմաստութեանից բռնվեցին, ոչ միայն կայքից ձեռք վեր կալան, այլև հրաժարվեցին օրինաւոր կերակուրներից. փոքր և պարզ խմիչքներով բաւականացան և վերջը առաքինի մահով մեռան, օրչափ աւելի մենք պէտք է նմանենք Քրիստոսի սիրելիներին, որոնք իւրեանց անձը հրեշտակակրօն շինեցին, խառնելով իւրեանց վերնային զօրքերի մէջը։

Ուրեմն, ով միայնակեացներ, եկէք մենք ևս թշնամու նման մանենք մեր կալվածքի մէջ ինչպէս օտար երկրի մէջ և թշնամու ծառատուկը արմատախիլ առնելով՝ ջարդուփշուր անենք. մեր կայքը ինչպէս գերի վերցրած աւար բաժանենք չքաւորներին, ոչ մեր աղգականներին տալու համար, այլ աղքատներին սիրելու համար, որոնք Քրիստոսի զօրականները և ճշմարիտ բարեխօսներ են։ Իսկ եթէ այս տեղ կապվես կայքերով, նշանակում է դու քեզ անդարձ գերութեան մէջ էս ձգում, որտեղից ազատվելու հնար չկայ։ Շտապիր եղբայր, շտապիր շուտով ազատվելու այնպիսի անողորմ դժոխքից, որ կարողանաս հասանել այն ամուր քաղաքը, որտեղ քեզ համար քանդվելու գերի տանվելու ոչ կասկածանք կայ և ոչ երկիւղ։

Եթէ դու հետևես տուրբ հայրերի գեղեցիկ վարդապետութեանը, վերևը պատմած տուրբ միայնակեացների վարքերին համեմատ, այն ժամանակը կարող ես առանց չարաչար ցաւերի մտքիդ աչքերը բանալ և տեսանել քեզ երկնքից աւելի բարձր։ Այն ժամանակը երանի կտաս քո անձին և քա-

ջուլթեամբ ազատվելով այս աշխարհի ցաւալից կեանքից, կխառնվիս միայնակեացների դասի մէջ, սուրբ արդարների գնդի մէջ, առաքեալների վիճակի մէջ, մարգարէից ժողովի մէջ, մարտիրոսների խմբի մէջ, հրեշտակների բանակի մէջ, անդրանիկների ժողովի մէջ, երկնքի մեծ քաղաքումը, Աբրահամի հիւրերի մօտ, երկնային կերակուրների և անկարօտ խմիչների մէջ։ Դու կլինիս այն ժամանակ այն մարգարէն, որ պատիւ չստանալով այս մարմնաւոր աշխարհումը, հանդստացար անանց ուրախութիւնների մէջը։

Եւ մենք վերջին գրիչներով աշխատողներս սուրբ ուխտի միաբանութեան հետ միասին վայելենք մեր Տէր Յիսուս Քրիստոսի միջնորդութեամբը. որին փառք յաւիտեանս ամէն։

024

ՍԽԱԼԱՑՊՈՒԹԻՒՆՔ.

Երես.	Տող.	Սխալ.	Ուղիղ.
33	26	Իսաալական.	Իսաղական.
36	11	անազատների	անապատների.
40	6	իշխելով.	խլելով.
54	25	երկուութիւն.	երկուութիւն.
61	6	մինչև եւ.	մենք.
68	12	ամուսը.	ամուսը.
113	26	մեխիթարվեց.	չմեխիթարվեց.
142	20	Իսկ.	և
152	28	հաստատվի.	հաստատվի.
155	11	նոցա.	նոքա.
158	27	կոտրված.	գործված.
170	19	մեզնից.	մեզուից.
180	5	տկարութիւնը.	ձեր տկարութիւնը.
188	30	իմանալով.	իմանումն.
198	17	հպարտութեամբ.	հպատակութեամբ.
206	7	այր.	այդ.
210	7	որ	—
216	3	բոլորովին.	բոլորին.
238	3	Հերոզ	Պերոզ.